1945-1950-ական թթ. հիմնականում աշխատանք ծավալվեց 1-7 դասարաններից դուրս մնացած երեխաներին դպրոցում ընդգրկելու համար: Նախ դպրոցից դուրս մնացածների մի մասը դպրոցում սովորելու համար հասակն անց էր, ուստի կազմակերպվում էին նրանց համար հատուկ դասարաններ: Դպրոցից դուրս մնացածների մի զգալի մասն էլ ընտանիքի միակ կերակրողն էին և նրանց ուսման մեջ ընդգրկելը նույնպես դժվարություն էր հարուցում: Ելնելով ետպատերազմյան առաջին տասնամյակներում երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և առաջընթացի պահանջներից, կրթական ոլորտում առանձնապես կարևորվում էր բանվոր և գյուղացի երիտասարդության ուսուցման կազմակերպման խնդիրը: Զգալի աշխատանքներ ծավալվեցին գյուղերում դպրոցների ցանցի ընդարձակման ուղղությամբ, որտեղ առանց արտադրությունից կտրվելու սովորում էին հազարավոր երիտասարդներ: Այդ դպրոցներում սովորողների շարքերը սկզբնական շրջանում համալրում էին Հայրենական մեծ պատերազմի պատճառով ժամանակավորապես իրենց ուսումը ընդհատած երիտասարդները: 1957-1958 ուս. տարում Հայաստանում գործում էին 82 բանվոր և 111 գյուղերիս դպրոցներ, մոտ 16000 սովորողներով:

1951 թ. արձանագրվում էր, որ 1950-1951 թթ. հանրապետության գյուղերը լիովին ապահովված էին յոթնամյա դպրոցների, իսկ քաղաքները՝ լրիվ միջնակարգ դպրոցների ցանցով:¹ Ժողովրդական կրթության նպատակների համար ամեն տարի հատկացվում էր հանրապետության բյուջեի 45%-ը:² Նմանօրինակ մոտեցման արդյունքում, ետպատերազմյան 1-ին հնգամյակի վերջում՝ 1950-1951 ուսումնական տարում հանրապետության հանրակրթական դպրոցներում սովո-

¹ ՀԱԱ, ֆ.122, ց.2, գ.232, թ.1:

² Նույն տեղում՝ գ.6, գ.55, էջ 5:

րողների թիվն հասավ նախապատերազմյան մակարդակին: Ետպատերազմյան ընդամենը վեց-յոթ տարիների ընթացքում հիմնականում լուծվեց պարտադիր յոթնամյա կրթության հարցը: 1956թ. հիմնականում իրականացվեց յոթնամյա ընդհանուր պարտադիր կրթությունը: Ձեռք բերված հաջողությունների շնորհիվ հետագոտվող ժամանակաշրջանում կրթության մատչելիության հենքի վրա գյուղաբնակ և քաղաքաբնակ սովորողների կրթության մակարդակը հավասարեցվեց:

1959 թ. ապրիլին «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և ՀՍՄՀ ժողովրդական կրթության համակարգի հետագա զարգացման մասին» ՀՍՄՀ Գերագույն խորհրդի ընդունած օրենքը սահմանեց դպրոցի նպատակներն ու խրնդիրները: Առաջադրվեց ընդհանուր և պոլիտեխնիկական կրթության մակարդակի բարձրացման, գիտության հիմունքները լավ իմացող, կրթված մարդկանց պատրաստման պահանջը: Ինչպես ութնամյա և միջնակարգ դպրոցներում, այնպես էլ պրոֆտեխկրթության համար նախատեսվում էր սկսել վերակառուցում 1959-1960 ուսումնական տարվանից և ավարտել 1963-1964թթ.:³ Համակարգի կառավարման օրենսդրական դաշտի առկայությունը, կրթության կառավարման բոլոր օղակներում հստակ լիազորությունների սահմանումը, հասարակության և պետության առջև դպրոցի պատասխանատվության և հաշվետու լինելու համեմատաբար բարձր աստիճանը, կրթության վերահսկման գործուն մեխանիզմների և մեթոդական օժանդակ ծառայությունների առկայությունը դարձան կրթության բարձր մակարդակի ապահովման անհրաժեշտ գործոններ, որոնք խթանեցին ոչ միայն կրթության առաջընթացն Հայաստանում, այլև լայն ճանաչում բերեցին խորհրդային հայկական դպրոցին:

1959 թ. մտցվեց 7-ից մինչև 15-16 տարեկանների 8-ամյա ընդհանուր պարտադիր կրթություն: Հատկանշական է, որ 1945-1980-ական թվականների բոլոր հնգամյակներում հանրապետության կրթական համակարգի զարգացման կարելի էր դրսևորումներից մեկը դպրոցաշինությունն էր: 1951-1955թթ. շարք մտան 80 դպրոցներ՝ 29,6 հազար տեղով: 1960-61 ուսումնական տարում հանրապետությունում գործում էին 1219 ցերեկային հանրակրթական դպրոցներ 319,1 հազար սովորողներով:

1964թ. հուլիսի 7-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն ընդունեց «Հայկական ՄՍՀ-ում դպրոցների շինարարության պլանի կատարման ապահովման միջոցառումների և վիճակի մասին» որոշումը: Արձագանքելով 1964թ. հունիսի 26-ի «Պրավդա» թերթում զետեղված՝ Հայաստանում դպրոցաշինության բնագավառում տեղ գտած քննադատությանը, ՀԿԿ ԿԿ բյուրոն նշում էր, որ 1964թ. առաջին կեսին դպրոցական շինարարության պլանը կատարվել է 59 տոկոսով, 5648 աշակերտական տեղերի փոխարեն շարք է մտել 1040-ը:⁴ Ընդգծվում էր այդ կապակցությամբ ոլորտում գոյություն ունեցող անտարբերության ու անպատասխանատվության մասին, որի հետևանքով դպրոցական նոր կառուցվող 9 շենքերից շահագործման էին հանձնվել միայն 2-ը: Մանր թերությունների պատճառով շարք չէին մտել դպրոցական շենքերը Աբովյանում, Մարտունու շրջանի Գետաշեն

³ Ա.Մ. Ղազարխեցյան, Հանրակրթական դպրոցը Սովետական Հայաստանում /1941-1970թթ./, Երևան, 1972, էջ 43-44:

⁴ ՀԱԱ, Ֆ.1, ց.44, գ.36, թ.22:

գյուղում, Էջմիածնում, Կրասնոսելսկի շրջանի Բաշգյուղ գյուղում և այլն:⁵ Քննադատությունը անհետևանք չմնաց և ձեռնարկվեցին համապատասխան քայլեր: Շուտով՝ 1970-1975թթ. բացվեցին ևս 132 դպրոցներ: 1980-1981 ուս. տարում հանրապետությունում գործում էին 1507 հանրակրթական դպրոցներ 599,6 հազար սովորողներով, ուր դասավանդում էին 45,9 հազար ուսուցիչներ:⁶ Ուսուցման ձևերին համապատասխան գործում էին ոչ միայն ցերեկային, այլ երեկոյան, գիշերօթիկ, երկարօրյա դպրոցներ, որոնք ամբողջացնում էին կրթության կազմակերպումը, նպաստում որպեսզի դպրոցական ուսուցումից դուրս մնացող չլինի: Երկարօրյա դպրոցների թիվը 1965 թ. 99-ից 1980թ. հասավ 902-ի, իսկ երեկոյան դպրոցների թիվն օրինաչափորեն կրճատվեց՝ 1965թ. 295-ից 1980թ. 146-ի:⁷ Հանրապետության արդյունաբերությունը որակյալ կադրերով ապահովելու և դպրոցականների մասնագիտական կողմնորոշման խթանման նպատակով, դեռևս 1960- ական թվականներից զգալի աշխատանքներ ծավալվեցին նոր տիպի դպրոցների՝ արտադրական ուսուցմամբ հանրակրթական աշխատանքային պոլիտեխնիկական միջնակարգ դպրոցների ցանց ստեղծելու ուղղությամբ: Այդ ժամանակ ավելի քան 250 միջնակարգ դպրոցներում կազմակերպվում էր արտադրական ուսուցում: Հետագա տարիներին նկատելիորեն աճեցին միջնակարգ և նվազեցին ինչպես տարրական, այնպես էլ ութամյա դպրոցների թիվը. ինչն էլ հնարավորություն ընձեռեց 1966-1967 ուս. տարվանից անցնելու ընդհանուր միջնակարգ կրթության: Չնայած բազմաքանակ դպրոցների առկայությանը, դրանց 45%-ը պարապմունքները վարում էին երկհերթ կամ երեք հերթով: Դա պայմանավորված էր աշակերտների համար պահանջվող առկա ուսումնական մակերեսների պակասով, որն հետևանք էր ազգաբնակչության բնական աճի, մասամբ նաև շարունակվող հայրենադարձության շնորհիվ սովորողների թվաքանակի ավելացման: Միաժամանակ, նկատելի էր նաև դպրոցական շինարարությանը հատկացվող միջոցների անբավարար օգտագործումը: Դպրոցական շենքերի շահագործման հանձնումը հիմնականում ժամանակին չէր ապահովվում:

Ետպատերազմյան դժվարությունների հաղթահարումը, հասարակական-տնտեսական և քաղաքական զարգացումները նորանոր պահանջներ էին առաջադրում կրթության ոլորտին: Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման, կրթության ոլորտում արագ և աննախընթաց ձեռքբերումները, 1966-1967 թթ. ուս. տարվանից ընդհանուր միջնակարգ կրթության անցումը, նոր պատասխանատու ինդիքներ դրեցին դպրոցի առջև: Այդ նպատակով անհարժեշտ էր առավել նպատակասլաց ձևով և եղանակներով կազմակերպել կրթության և ուսման գործը: Ուսումնական նոր ծրագրերով, մեթոդական ուղեցույցներով, նոր հրատարակված դասագրքերով ուսուցման կազմակերպումը, բնականաբար, անխուսափելի անհրաժեշտություն էր: Ուսման որակի և արդյունավետության բարձրացումը, սովորողների համակողմանի և խոր գիտելիքների հաղորդումը պայմանավորված էր նաև դպրոցների ուսումնա-տեխնիկական հաճեցվածությամբ: Տարեցտարի մեծացան դպրոցները սարքավորումներով, դիտակտիկ պարագաներով, նյութական-տեխնիկական միջոցներով հագեցնելուն, այն հարստացնելուն ուղղված

⁵ ՀԱՍ, Ֆ.1, ց.44, գ.36,թ.22:

⁶ Տե՛ս Народное хозяйство Армянской ССР в 1980г., статистический ежегодник. Ереван, 1981, стр.231.

⁷ Տե՛ս նույն տեղում, стр.233-234.

ծախսերը: Այսպես 1969-1970 ուս. տարում հանրապետության դպրոցներում կային 846 ֆիզիկայի, 615 քիմիայի, 322 կենսաբանության կաբինետ-լաբորատորիաներ, 1113 դպրոցական արհեստանոց:⁸ Բարձր դասարանների սովորողների աշխատանքային դաստիարակության, ուսուցման և մասնագիտական կողմնորոշման կարևոր օղակ դարձան միջդպրոցային ուսումնասիրտադրական կոմբինատները: 1976 թ. հիմնադրվեցին Երևանի Շենգավիթի /Լենինյան/, Արաբկիրի /26 կոմիսարների/ և Էրեբունու /Օրջոնիկիձեի/ շրջանների, 1978-ին՝ Վերին Արտաշատի ուսումնասիրտադրական կոմբինատները: 1985թ. հանրապետությունում գործում էին 19 ուսումնասիրտադրական կոմբինատ, որտեղ սովորում էին 21.862 հոգի: Հանրակրթական դպրոցներում ուսուցումը համակողմանի էր, համապարփակ ինչպես բովանդակային ու ծրագրային, այնպես էլ մեթոդների և ուսուցման ձևերի կիրառման տեսակետից: Չնայած, որ այդ ամենը սահմանափակված էր կոմունիստական գաղափարախոսության պարտադրանքով, այդուհանդերձ հայկական դպրոցը խորհրդային տարիներին ունեցավ անվիճելի նվաճումներ. այն կուտակել էր վիթխարի ուսանելի փորձ և անուրանալի դեր է կատարել թե մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության և թե հանրապետության հասարակական ու տնտեսական կյանքի բոլոր բնագավառները անհրաժեշտ գիտելիքների պաշարով զինված շարունակական հերթափոխի պատրաստման առումներով: Խնդրո առարկա ժամանակահատվածում խորհրդահայ դպրոցական կրթության անառարկելի նվաճումներից էին դասագրքերի, ուսումնական գրականության, գրենական պիտույքների մատչելիությունը, գիտամանկավարժական տարաբնույթ պարբերականների առկայությունը: Դպրոցներն աչքի էին զարնում համեմատաբար դիտակտիկ պարագաներով լավ հագեցվածությամբ, տեխնիկական զինվածությամբ: Խորհրդահայ դպրոցի ուսումնակրթական աշխատանքների արդյունավետության գրավակները դպրոցական պարապմունքների անընդհատության ապահովումը, կայուն ռեժիմի և դասացուցակի առկայությունն էր, ինչպես նաև արտադասարանական և արտադպրոցական կրթության ու դաստիարակության հնարավորությունը, այդ ամենի հետևանքով աշակերտներին հիմնարար գիտելիքներ տալու դպրոցի կարողությունը:

1985-1986 ուս. տարում գործում էր 1479 հանրակրթական դպրոց, այդ թվում 1367 ցերեկային (573,2 հազար սովորող), 112 երեկոյան հերթափոխային (29 հազար սովորող), 1033 երկարօրյա (143,4 հազար սովորող): 988 դպրոցներում իրականացվում էր աշխատանքային ուսուցում, այդ թվում 430 քաղաքային և 588 գյուղական վայրերում: Լուրջ ուշադրություն էր դարձվում դպրոցականների ֆիզիկական, գեղագիտական, մշակութային դաստիարակությանը: Այդ նպատակին էին ծառայում դպրոցներում գործող տարաբնույթ սպորտային, երաժշտական, թատերական, պարային խմբակները, արտադասարանական և ֆակուլտատիվ պարապմունքները, արտադպրոցական սպորտային ակումբները, հանրապետության և մայրաքաղաքի գրեթե բոլոր շրջաններում գործող պիոներների և դպրոցականների պալատները, մշակույթի տները և այլն: Այլ խոսքով ստեղծված էին անհրաժեշտ պայմաններ ու հնարավորություններ արտադասարանային ու արտադպրոցական կրթության ու դաստիարակության համար: 1960-1970-ական թվականներին գիտատեխնիկական առաջընթացը ենթադրում էր բանվոր դասա-

⁸ Հայկական Սովետական հանրագիտարան, Սովետական Հայաստան, Երևան 1987, էջ 446:

կարգի քանակական և որակական աճ նաև Հայաստանում: Բանվորական որակյալ կադրերի պատրաստման կարևոր կրթական օղակ էին պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունները: Արդեն 1965 թ. հանրապետությունում գործում էին 34 պրոֆտեխնիկական ուսումնարան 10,9 հազար սովորողներով, 1971 թ. դրանց թիվը հասավ 56-ի 20,1 հազար սովորողներով: Ընդ որում 11 պրոֆտեխ ուսումնարաններում սովորողները մասնագիտության հետ միասին ստանում էին նաև ընդհանուր միջնակարգ կրթություն: Գնալով ընդլայնվում էր մասնագիտությունների թիվը. 1975 թ. պրոֆտեխ ուսումնարանների թիվը 80 էր 36.0 հազար սովորողներով, իսկ 1980 թ. 100 և 53,1 հազար սովորողներով:⁹ Մակայն քանակական այս ցուցանիշները միշտ չէ, որ համարժեք էին պրոֆտեխ կրթության որակին: Կրթական այս օղակը միշտ չէ, որ ծառայում էր իր բուն նպատակին. զգալի էր ցուցադրական կողմը, այն երբեմն դիտվում էր իբրև զինվորական ծառայությունից տարկետում ձեռք բերելու կամ բարձր գնահատականներով միջնակարգ կրթության ատեստատ ձեռք բերելու միջոց:

Կրթության զարգացման և առաջընթացի գլխավոր նախապայմաններից մեկն էլ մանկավարժական կադրերի պատրաստման, նրանց որակական բարելավման խնդիրն է: Պատերազմից հետո մի քանի տարիների ընթացքում ուսուցչության կազմը զգալի փոփոխության ենթարկվեց: Երկար ժամանակ մանկավարժական գործունեությունն ընդհատած ուսուցիչների հետ անհրաժեշտ էր մեծ աշխատանք տանել՝ նրանց մասնագիտական ու մեթոդական գիտելիքները թարմացնելու և լրացնելու համար: Միաժամանակ կարևոր խնդիր էր դառնում մանկավարժական գիտության դերի և մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացումը:

Ետպատերազմյան տասնամյակներում մեծ ծավալի աշխատանք կատարվեց դպրոցները մանկավարժական բարձրորակ կադրերով ապահովելու համար: Ելնելով 1966թ. նոյեմբերի 10-ի ԽՍՀՄ Կենտկոմի և Մինիստրների խորհրդի ընդունած «Հանրակրթական միջնակարգ դպրոցի աշխատանքների բարելավման մասին» որոշումից, 1967թ. սեպտեմբերի 8-ին ՀԿԿ Կենտկոմն ու Մինիստրների խորհուրդն ընդունեցին «Հանրապետությունում ուսուցչական կադրերի որակավորման բարձրացման և վերապատրաստման միջոցառումների մասին» որոշումը,¹⁰ որով նախատեսվում էր 1967-71թթ. 29 հազ. ուսուցիչների և ժողկրթության ոլորտի այլ աշխատակիցների ընդգրկել վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներում:¹¹ Հանգամանալից ու հստակ սահմանվում էին այն բոլոր ուղիները, ձևերը, եղանակներն ու միջոցները որոնք ուղղվում էին առաջադրված խնդրի լուծմանը: Մանկավարժական կադրերի պատրաստման պատասխանատու գործին լծվեցին հանրապետության մի շարք բուհեր, ուսումնարաններ: Մանկավարժական կադրերի որակավորման բարձրացման ուղղությամբ զգալի աշխատանք կատարեցին ուսուցիչների կատարելագործման հանրապետական, Երևանի քաղաքային, Գյումրիի (Լենինական) և Վանաձորի (Կիրովական) միջրջանային ինստիտուտները: Դպրոցների տնօրենների, ուսմասավարների, դպրոցական տեսուչների ու մեթոդիստների կատարելագործման

⁹ Ст' у Труд в Армянской ССр /стат. сборник/, Ереван, 1986, ст. 241.

¹⁰ ՀՍՍ, ֆ.1, ց.47, գ.19, թ.56:

¹¹ ՀՍՍ, ֆ.1, ց.47, գ.19, թ.11:

ֆակուլտետներ գործում էին Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Ուսուցչական կադրերի որակավորման բարձրացմանը նպաստում էին մանկավարժական գիտությունների ԳՀԻ-ն, ՀԽՍՀ մանկավարժական ընկերությունը, ՀԽՍՀ լուսավորության մինիստրության տեխնիկական միջոցների ուսուցման հանրապետական կաբինետը, մանկավարժական մամուլը: 1985-1986 ուս. տարում ցերեկային հանրակրթական դպրոցներում աշխատում էին 46,1 հազար ուսուցիչ շուրջ 82% բարձրագույն կրթությամբ:

Խորհրդային երկրում, այդ թվում Հայաստանում ուսուցիչն ուներ հասարակական բարձր դիրք և վարկանիշ, կարևոր տեղ էր զբաղեցնում հասարակության սոցիալական սանդղակում, ուներ նյութական բավականաչափ բարվոք վիճակ: Մանկավարժական կադրերը հիմնականում պետության հոգածության կենտրոնում էին, թե իրենց մասնագիտական որակավորման բարձրացման և թե սոցիալ-կենցաղային տեսանկյունից: Ուսուցիչը, մանկավարժը Խորհրդային Հայաստանում վայելում էր մեծ հասարակական հարգանք և հեղինակություն, պաշտպանված էր սոցիալապես: Նրանցից շատերը նվիրյալներ էին, օժտված էին մանկավարժական բարձր արհեստավարժությամբ, մատաղ սերնդի դաստիարակության մեծ վարպետությամբ և պատասխանատվությամբ, ունեին հարուստ փորձ և խորը գիտելիքներ՝ տոգորված մեծ սիրով առ դպրոցն ու աշակերտը: Դրա հետևանքով բարձր էր դպրոցների կադրային ապահովվածությունը: Հայաստանի դպրոցներում զգալի էր տղամարդ ուսուցիչների առկայությունը և քաղաքային դպրոցներում ուսուցիչ աշխատելու համար տարիներ շարունակ հերթազրկվածների մեծ թվաքանակը: Մանկավարժական համակարգի քանակական աճին զուգորդված որակական բարելավումն ու կատարելագործումն աստիճանաբար թանձրացնում էր ազգային մտածողությունն ու մտակեցվածքը: Տակավին 1960-ական թվականների կեսին առարկայական, գործնական տեսք ստացան Խորհրդային Հայաստանի դպրոցների և Սփյուռքի կրթօջախների միջև կապերը: Փորձի փոխանակման, ձևավորված կապերի ամրապնդման, խորհրդահայ դպրոցի նվաճումները սփյուռքահայ աշակերտներին մատուցելու նպատակով ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1964-1966թթ. ընդունեց մի քանի որոշումներ սփյուռքահայ ուսուցիչների խմբեր Հայաստան հրավիրելու մասին:¹² Սփյուռքահայ աշակերտների համար Հայաստանում ստեղծվում և առաքվում էին դասագրքեր: Միաժամանակ սփյուռքահայ կրթօջախների բազմաթիվ սաներ իրենց ամառային հանգիստն անցկացնում էին հայրենիքում՝ դպրոցականների ճամբարներում: 1980-ական թվականների կեսերից հայկական դպրոցի կազմակերպման գործում նկատելի է դառնում ուսուցման նոր ձևերի սաղմնավորումը, այլընտրանքային կրթօջախների կազմակերպումը /Մ. Սեբաստացի կրթահամալիր/:

Այդուհանդերձ խորհրդային հայկական կրթական համակարգն ու դպրոցն ունեին մի շարք էական հիմնախնդիրներ և բացթողումներ: Իրական կյանքի ու դպրոցի միջև անընդհատ խորացող խզումը, հակասությունները արմատավորում էին ձևամոլությունը, գործունեության ցուցանիշների տոկոսամոլությունը, դոգմատիզմը, միօրինակությունը և այլն: Պետության կողմից կրթության ֆինանսավորման գործում առկա էր միջոցների անհամամասնական, երբեմն անարդար բաշխում: Դպրոցների մի մասը չունեին շենքային բավարար պայմաններ, թույլ

¹² ՀԱՍ, ֆ.1, ց.45, գ.6, թ.59-60, ց.47, գ.10, թ.117 և այլն:

եր նյութատեխնիկական զինվածությունը, հատկապես համակարգչային տեխնիկայի առումով:

Մանկավարժական համակազմի առումով արդեն 1970-ական թվականների վերջերին մասամբ առաջացել էր ավելցուկ: Բոլոր մանկավարժները չէ, որ ապահովված էին անհրաժեշտ ծանրաբեռնվածությամբ: Հատկապես մայրաքաղաքում ու քաղաքամերձ շրջաններում մանկավարժական համակազմի աշխատանքի տեղավորման խնդիրը կապված էր մեծ դժվարությունների հետ: Մյուս կողմից, կադրերի մի մասը զանազան պատճառաբանություններով, միջոցներով և ճանապարհներով խուսափում էր հանրապետության հեռավոր շրջաններում աշխատելուց: Այդ իսկ պատճառով մեծ էր կադրերի հոսունությունը:

Նկատելի էր ևս մի անցանկալի երևույթ. 1980-ականների սկզբից դպրոցներում տղամարդ ուսուցիչների թվաքանակը նվազում էր: Վերջինս լուրջ խնդիր է նաև մեր օրերում դպրոցում բնականոն և հավասարակշռված սոցիալ հոգեբանական մթնոլորտի ձևավորման, դպրոցականների լիարժեք ու համակողմանի դաստիարակության, ինչպես նաև նրանց կամային հատկանիշների ձևավորման, տեսակետից:

Հայկական դպրոցի ինքնուրույնությունը խորհրդային տարիներին սահմանափակված էր կառավարման ծայրահեղ կենտրոնացմամբ, ուսումնական գործընթացի բովանդակ կանոնակարգմամբ, վարչահրամայական մեթոդների կիրառմամբ, որի հետևանքով արմատավորվում էր միօրինակությունը, բացառելով բազմազանությունն ու բազմակարծությունը: Վերջիններս էական նշանակություն ունեին հատկապես կրթության կազմակերպման գործընթացում առանցքային դեր ունեցող դասագրքերի հրատարակման, ուսումնական ծրագրերի նորացման և արդիականացման առնչությամբ: Դասագրքերը, որոնցով դասավանդում էին դպրոցներում հիմնականում հաջողված էին, շարադրված էին մատչելի, համակարգված, առկա էր տրամաբանական կապը ամբողջ շարադրանքում: Մակայն դրանք երկար ժամանակ հիմնականում մնում էին նույնը, չէին թարմացվում: Բացակայում էին մրցույթային դասագրքերը: Այս հանգամանքն ինչպես ուսուցչին, այնպես էլ աշակերտներին մղում էին մտածողության քարացածության, զրկում դինամիզմից, հարուցում աշակերտների մոտ ինքնուրույն դատողության ձևավորման արգելքներ: Դպրոցական ծրագրերից ու դասագրքերից իսպառ դուրս էին մղված հայոց եկեղեցու, կրոնի և կրոնական բնույթի հոգևոր արժեքների հիմախնդիրների արծարծումը: Սահմանափակ էին ազգային առանձնահատկություններին համապատասխան, ազգային բնավորություն ձևավորող ուսումնական նյութի մեթոդների կիրառումները:

Լեզուների դասավանդման դրվածքի և ուսուցման տարաբնույթ մեթոդների կիրառումը միշտ չէ, որ բավարարում էր ներկայացվող պահանջները: Լեզուների դասավանդումն իրականացվում էր 10-12 հոգանոց խմբերով, որն, անշուշտ, դրական էր, սակայն որակական բարելավման տեղաշարժերը նվազ նկատելի էին: Ռուսաց լեզվի դրվածքը հայկական դպրոցում բարելավելու նպատակով բացվում էին նորանոր ռուսական դպրոցներ, որոնք իրենց նյութատեխնիկական զինվածությամբ, շենքային պայմաններով առավել նպաստավոր պայմաններում էին:

Այսպիսով, վերոհիշյալ թերություններով հանդերձ հայկական դպրոցը խորհրդային ժամանակաշրջանում արձանագրել է անվիճելիորեն ուսանելի ձեռքբերումներ, որոնք այսօր հաջողությամբ ընդօրինակվում են արտասահմանյան մի շարք զարգացած երկրներում:

Эдуард Зограбян - *Армянская школа в советском период е(1960-80-е годы)*

– Статья посвящена истории армянской школы в послевоенный период с 1960 по 1980-ые годы. В статье рассматриваются такие вопросы как строительство школ, преподавательский состав школ, оборудование школ учебными материалами, организация методических работ и другие вопросы. В то же время, показаны и недостатки, которые ограничивают национальное образования и самостоятельность.

Eduard Zohrabyan-*Armenian school in the Soviet period (1960-80s years)* -The article devoted to the history of armenian schools after war in 1960-80s years. There are discussed school building, strength school with teaching staff, educational case management, logistics base of school, pupils orientation in career and other issues. There are outlined undeniable achievements and high level of development of Soviet Armenian schools.Meantime are shown shortcomings limit promotion of national education and independence.

**ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՈՒՂՐՈ ՎԻԼՍՈՆԻ «14 ԿԵՏԵՐԸ»**

ԿԱՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

1918 թ. հունվարի 8-ին Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնը ուղերձով դիմեց Միացյալ Նահանգների Կոնգրեսին և ներկայացրեց «խաղաղության ծրագիրն»՝ առավել հայտնի «Վուդրո Վիլսոնի 14 կետեր» անվանմամբ: Այդ կետերի օգնությամբ նախագահ Վիլսոնը շարադրեց Միացյալ Նահանգների դիրքորոշումը հետպատերազմյան խաղաղ կարգավորման և նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացում:

Այս ճանապարհին միմյանց ուղիղ հակադրվեցին ամերիկյան և եվրոպական արտաքին քաղաքական հայեցակարգերը, որի արդյունքում Միացյալ Նահանգները հրաժարվեց Անտանտի ռազմական նպատակներից և մշակեց աշխարհում ամերիկյան «կարգ ու կանոն» հաստատելու իր սեփական առաջարկը, որը ձևակերպվեց «14 կետերով»:

Բանալի բաներ. Համընդհանուր խաղաղություն, Վուդրո Վիլսոն, «14 կետեր», Առաջին աշխարհամարտ, Հետպատերազմյան աշխարհակարգ, Ազգերի Լիգա, Հետազոտական մարմին՝ «The Inquiry», «միակ հնարավոր ծրագիր», միջնորդ դատարան, խաղաղ կարգավորում, փոքր ազգերին տրվող երաշխիքներ, միջազգային կազմակերպություն, ազգերի ինքնորոշում, ուժերի հավասարակշռում, ուժերի միավորում, հավաքական անվտանգություն:

Միացյալ Նահանգները մտավ Առաջին աշխարհամարտի մեջ դրա բռնկվելուց 32 ամիս անց: Դա հնարավոր և մոտալուտ դարձրեց դաշնակիցների հաղթանակը: Այս քայլով նախագահ Վիլսոնը փորձեց շտկել գոյություն ունեցող նախորդ մինչպատերազմյան աշխարհակարգը, որի համապատկերում անդրօվկիանոսյան պետությանը վերապահված էր լոկ էրկրորդական դերակատարություն: Միացյալ Նահանգները, մտնելով եվրոպական հակամարտության մեջ, դարձավ այն երկիրը, որի հետ կապվեց խաղաղության հաստատման հույսը: Միացյալ Նահանգները ձեռնամուխ եղավ նաև խաղաղության հաստատման ամբողջական ծրագրի մշակմանը, որը հայտնի դարձավ Վուդրո Վիլսոնի «14 կետեր» անվամբ: Որոնց միջոցով նախագահ Վիլսոնը շարադրեց ամերիկյան պատկերացումները հետպատերազմյան աշխարհակարգի հաստատվող խաղաղության վերաբերյալ:

«14 կետերը», որպես խաղաղության հաստատման «միակ հնարավոր ծրագիր»: 1917 թ. ամռանը Վուդրո Վիլսոնի կարգադրությամբ ստեղծեց Հետազոտական մարմին՝ «The Inquiry», գնդապետ Հաուզի գլխավորությամբ, որին հանձնարարվեց մշակել ապագա խաղաղության ծրագրի նախագիծ:

1918 թ. հունվարի 3-ին հետազոտական մարմինը ներկայացրեց նախագահ Վիլսոնին «Առաջարկներ խաղաղ նպատակների վերաբերյալ» վերնագրով հուշագիրը, որի հիման վրա կազմվեց «Պատերազմի նպատակները և հաշտության պայմանները» ծրագիրը: 1918 թ. հունվարի 8-ին նախագահ Վիլսոնը ուղեր-

ձով դիմեց Միացյալ Նահանգների Կոնգրեսին, և ներկայացրեց 14 սկզբունքներից բաղկացած այդ «խաղաղության ծրագիրը» առավել հայտնի «Վուդրո Վիլսոնի 14 կետեր» անվանմամբ:

Այդ կետերի օգնությամբ նախագահ Վիլսոնը շարադրեց իր պատկերացումները հետպատերազմյան աշխարհակարգի վերաբերյալ: Այն կտրուկ տարբերվում էր «Մոնրոյի դոկտրինայի» և Թեոդոր Ռուզվելտի «Մեծ Մահակի» քաղաքականությունից: Նա քաջ գիտակցում էր, որ նախագահ Մոնրոյի կառավարումից (1817-1825 թթ.) հետո իրավիճակն աշխարհում արմատապես փոխվել է, և դա առանձնապես ակնառու դրսևորվեց 20-րդ դարասկզբին: Միացյալ Նահանգները վերածվեց տնտեսապես հզոր և զարգացած երկրի, որը պատերազմի տարիներին դարձավ եվրոպական ազդեցիկ տերությունների հիմնական վարկատուն: Հասունացել էր պահը, և Միացյալ Նահանգները պետք է աշխարհին ներկայացներ «աշխարհի կառուցման» իր հարացույցը և այդ պայքարի առաջնորդությունը ստանձնեց նախագահ Վիլսոնը՝ ներկայացնելով իր «14 կետերը» որպես «նոր աշխարհի» կառուցման կաղապար:

«14 կետերի» հրապարակումը, մեր կարծիքով, Միացյալ Նահանգների կառավարության դիվանագիտության փայլուն դրսևորումներից էր: Այն իր մեջ ներառում էր Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական նպատակների մեկտեղում: Նախ՝ Միացյալ Նահանգները հայտարարում էր համաշխարհային խաղաղության հաստատման իր պատրաստակամության մասին, երկրորդ՝ նա առաջարկում էր այդ խաղաղության իր ծրագիրը և հայտարարում, որ դա «**միակ հնարավոր ծրագիրն է**»: Առաջարկելով իր ծրագիրը՝ Միացյալ Նահանգները մեխանիկորեն ստանձնում էր խաղաղության հաստատման գործընթացում առաջատարի դերը: Սա վերջինիս կապահովեր թելադրողի կարգավիճակ նաև հետպատերազմյան «նոր աշխարհակարգի» հաստատման գործում: Բացի այդ՝ «14 կետերի» հրապարակումով Միացյալ Նահանգները փորձում էր Գերմանիային հասկացնել, որ ինքը պատրաստ է խաղաղության, և վերջինս ընդունելով իր ծրագիրը՝ «14 կետերի» տեսքով, կարող է դիմել Ամերիկային խաղաղության խնդրանքով:

Այն, որ Միացյալ Նահանգները պատրաստ էր խաղաղության՝ միայն համաձայն «14 կետերում» առաջ քաշած իր սկզբունքների, արտահայտվում է նաև նախագահ Վիլսոնի ելույթում՝ ի պատասխան Հռոմի Բենեդիկտոս (Benedictus) XV պապի խաղաղության կոչի: 1917 թ. օգոստոսին 27-ին Հռոմի պապն իր ելույթում կոչ արեց պատերազմող երկու կողմերին փոխադարձ զիջումների հիման վրա դադարեցնել պատերազմը: Ըստ այդ առաջարկի՝ խաղաղության հիմք պետք է հանդիսանար երկկողմ փոխհատուցման պահանջների փոխզիջումային բավարարումը և բռնագրավված տարածքների խաղաղ վերադարձը:

Այս առաջարկը բնականաբար առաջացրեց դաշնակիցների, ինչպես նաև Միացյալ Նահանգների դժգոհությունը: Նախագահ Վիլսոնն արձագանքեց Պապի օգոստոսյան ելույթին, նշելով. «Համաձայնության գալ Գերմանիայի հետ Նորին Սրբազնություն Պապի առաջարկի հիման վրա, կնշանակի կայսերապաշտական Գերմանիայի հզորության և քաղաքականության վերականգնում... Առանց ապառազմականացման, միջնորդ դատարանի հիմնման, տարածքային հարցերի խա-

ղաղ կարգավորման և փոքր ազգերի վերակազմավորման երաշխիքների՝ ոչ ոք և ոչ մի պետություն Գերմանիայի հետ համաձայնության չի գա»:

Իր ելույթում, շարադրելով «14 կետերում» առաջարկվող սկզբունքներից մի քանիսը, նախագահ Վիլսոնն այս անգամ արդեն ուղղակի հայտարարեց Գերմանիային, որ վերջինս խաղաղության հաստատման համար այլընտրանք չունի, քան ընդունելու ամերիկյան ծրագիրը և սկզբունքները:

Շարունակելով իր միտքը՝ նախագահ Վիլսոնը նշում էր. «...Այդ սկզբունքները, պատահական շարադրված բառեր չեն և դրանք կարող են նախնական խաղաղության հաստատման հիմք ծառայել: Միացյալ Նահանգները չի լքի պատերազմն այնքան ժամանակ, քանի դեռ իրականացված չէ այն առաքելությունը, հանուն որի մենք ներգրավվել ենք պատերազմի մեջ, իսկ Բրիտանիան և Ֆրանսիան իրենց հաստատակամությամբ պատրաստ են օգնել մեզ ...»:

Արդյո՞ք Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան պատրաստ էին օգնելու Ամերիկային վերջինիս «առաքելության» իրականացման գործում: Արդյո՞ք նույնն էին հետպատերազմյան խաղաղության վերաբերյալ վերջիններիս պատկերացումները:

Խոսելով հետպատերազմյան խաղաղության հաստատման մասին պետք է նշել, որ նախքան Միացյալ Նահանգների պատերազմի մեջ մտնելը, այդ հարցը արդեն շոշափվում էր դաշնակից երկրների առաջնորդների կողմից: Հետպատերազմյան խաղաղ կարգավորման իրավական հիմքի մշակումը օրակարգային քննարկման առարկա էր ապագա հաղթող երկրների կառավարություններում: Այդ կապակցությամբ վերջիններս սկսեցին մշակել իրենց առաջարկները:

Դեռևս 1916 թ. դեկտեմբերին Անտանտի երկրները (Մեծ Բրիտանիայի վարչապետ Դևիդ Լլոյդ Ջորջ, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսո (Georges Clemenceau) և Իտալիայի վարչապետ Վիտտորիո Օռլանդո (Vittorio Orlando)) հավաքվեցին Լոնդոնում քննարկելու համար պատերազմը դադարեցնելու հնարավոր պայմանները: 1917 թ. հունվարին դրանք հրապարակվեցին և տրամադրվեցին ինչպես հակառակորդին, այնպես էլ ամերիկյան կողմին:

Միաժամանակ հանդիպման մասնակիցները Միացյալ Նահանգների նախագահին ներկայացրեցին հայտագիր, որում նշվում էր, որ ապագա խաղաղությունը, միջազգային իրավունքը և թշնամական միջոցառումների կանխարգելման ու սահմանափակման պայմանագրերով հաստատվող կարգն այս կամ այն չափով հիմնված լինեն որոշ միջազգային պատժամիջոցների վրա, որոնք կստիպեն խորհել նույնիսկ ամենավճռական ազդեցորդին:

Ակնհայտ է, որ այս վերջինը հնարավոր էր իրականացնել միայն բավականին լայն հնարավորություններով օժտված միաջազգային կազմակերպության հիմնումով, որի մասին խոսվում էր «14 կետերի» վերջին՝ 14-րդ կետում*:

Այսպիսով՝ արդեն 1917 թ. դաշնակիցներին պարզ էր, որ ապագայում հաղթող և խաղաղության նոր պայմանագրի շուրջ համախմբված երկրները պետք է պարտավորվածություն ստանձնեն իրենց իսկ կողմից սահմանված միջազգային իրավունքի և արդարության նորմերի պահպանման համար:

Նշենք, որ Վուդրո Վիլսոնի ելույթից երեք օր առաջ՝ 1918 թ. հունվարի 5-ին Լլոյդ Ջորջը հանդես եկավ ապագա խաղաղության պայմանագրի բովանդակության վերաբերյալ իր առաջարկով: Մեծ Բրիտանիայի վարչապետի ելույթն իր

մեջ որևիցե նոր առաջարկ չէր պարունակում, այն ուղղակի մանրամասն ներկայացնում էր Անտանտի նպատակները՝ ձևակերպված Լոնդոնում 1916 թ. դեկտեմբերին: Նա ևս մեկ անգամ փաստեց ապագա միջազգային կազմակերպության իրավական հիմքի ստեղծման անհրաժեշտությունը՝ դրա հետ մեկտեղ ընդգծելով, որ նախատեսվող Լիգան ոչ մի կերպ չպետք է սահմանափակի իր անդամների ինքնավարությունը: Նման մոտեցումը միանգամայն հասկանալի է: Ակնհայտ էր, որ եվրոպական տերությունները չէին ցանկանում փոխել հաստատված ավանդույթները և պատերազմի ժամանակ ունեցած իրենց նվաճումները կիսել ինչ-որ մեկի հետ: Բացի դրանից Մեծ Բրիտանիան վախենում էր, որ ռազմականապես և քաղաքականապես օր օրի հզորացող Միացյալ Նահանգները կարող է հարցականի տակ դնել իր ծովային գերիշխանությունը: Փաստորեն այդ մտավախությունը 3 օր անց իրականացավ, երբ նախագահ Վիլսոնը առաջ քաշեց ծովերի ազատության իր դրույթը*, որից որ նա ոչ մի կերպ չէր ցանկանում հրաժարվել խաղաղ կարգավորման բանակցությունների ողջ ընթացքում:

Միացյալ Նահանգների նախագահի խորհրդական, գնդապետ Հաուզի կարծիքով, «14 կետերի» հրապարակումով Վուդրո Վիլսոնը փորձում էր հասկացնել Անտանտի երկրներին իրենց ռազմական նպատակների վերանայման անհրաժեշտության մասին:

«14 կետերից» շատերը ոչ միայն կոնկրետացնում էին տվյալ նպատակային ձևակերպումը, այլ նաև դրսևորում էին դրա գաղափարական ուղղվածությունը: Օրինակ՝ Վուդրո Վիլսոնի բաց դիվանագիտության կոչն ուղղված էր Անտանտի երկրների բոլոր գաղտնի համաձայնագրերից հրաժարվելուն: «Ազգերի ինքնորոշման» սկզբունքի փաստացի հռչակումը հարցականի տակ էր դնում մի շարք նոր տարածքներ իրենց վերահսկողության տակ անցկացնելու դաշնակիցների ձգտումները: Կոչ անելով պահպանել արդարություն բոլոր ազգերի և երկրների հանդեպ՝ նախագահ Վիլսոնը հաստատում էր իր ծրագիրը, որը նախատեսում էր խաղաղության հաստատում առանց որևէ բռնազավթման, ռազմատուգանքի և պատժիչ փոխհատուցումների:

Խոսելով առաջարկված ծրագրի 14-րդ կետի մասին՝ պետք է նշել, որ դեռևս 1915 թ. օգոստոսի 10-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյը, Վաշինգտոն ուղարկած իր նամակում գրում էր. «Գերագույն նպատակի «մարգարիտը կլինեի մի ինչ-որ Լիգայի ստեղծումը, որին կարելի էր վստահել ցանկացած երկու պետության միջև վեճերը կարգավորելու ժամանակ...»: Հետամուտ լինելով իր նպատակին՝ 1915 թ. սեպտեմբերի 22-ին Էդուարդ Գրեյը հարցնում էր գնդապետ Հաուզին. «Արդյո՞ք նախագահ Վիլսոնը չի ենթադրում Ազգերի լիգայի ստեղծում, որը կստանձնի կնքված համաձայնագրերը, ծովային ու ցամաքային պատերազմի վարման սահմանված կանոնները խախտած պետության դեմ գործածելու պատասխանատվություն, ինչպես նաև հանդես կգա ընդդեմ այն պետությունների, որոնք միջպետական վեճերի կարգավորման համար որպես միակ հնարավոր միջոց կընտրեն պատերազմը...»:

Այսպիսով, Էդուարդ Գրեյի մեկնաբանմամբ, քաղաքական շրջանառության մեջ մտավ «Ազգերի լիգա» եզրը՝ արդյունքում նախագահ Վիլսոնի համար դառնալով «նոր աշխարհակարգի» ստեղծման հիմնաքար:

Ակնհայտ է, որ այդ գաղափարին հանգեցնող օբյեկտիվ գործոնը համընդ-
հանուր հակամարտության ներքո աշխարհում հաստատված քաղաքական իրա-
վիճակն էր: Մթոքթոն Էքսոնը (Stockton Axson)՝ նախագահ Վիլսոնի առաջին
կնոջ եղբայրը, նշում էր, որ դեռևս 1914 թ. Վուդրո Վիլսոնը նկարաբերել է իր «նոր
աշխարհակարգի» ուրվագծերը: Մթոքթոն Էքսոնի հետ ունեցած իր զրույցում նա
ընդգծել էր, որ հավասարակշռման չի կարելի հասնել զենքի ուժով: Հետպատե-
րազմյան միջազգային հարաբերությունների առաջարկվող սկզբունքների մեջ
նախագահ Վիլսոնը թվարկել էր մի շարք գաղափարներ, որոնք հետագայում
պաշտոնապես ընդգրկվեցին համաշխարհային խաղաղության ամերիկյան
ծրագրում: Դրանք են՝ մեծ և փոքր ազգերի հավասարություն, ցանկացած տեսա-
կի տարածքային բռնազավթման բացառում, սպառազինության վերահսկում կա-
ռավարությունների կողմից, ազգերի ընկերակցության ստեղծում, որն ի վիճակի
կլինի երաշխավորել յուրաքանչյուր պետության տարածքային ամբողջականու-
թյունը:

Ինչպես տեսնում ենք, կարգավորող գործառույթ ունեցող միջազգային
կազմակերպության գաղափարը կարևոր դեր էր զբաղեցնում նախագահ Վիլսոնի
արտաքին քաղաքական ռազմավարության մեջ դեռևս պատերազմի սկզբին: Սա-
կայն նման կազմակերպություն ստեղծելու համար նախ անհրաժեշտ էր դադա-
րեցնել եվրոպական ընդհարումը: Ահա այս խնդրի լուծմանն էլ ձեռնամուխ եղավ
նախագահին իր «14 կետերի» հրապարակումով:

«14 կետերի» եվրոպական արձագանքները: Կասկած չկար, որ նախագահ
Վիլսոնը հասկանում էր իր քայլի համարձակությունը: Նա միանշանակ կանխա-
տեսում էր ընդդիմադիր դիրքորոշում և՛ հակառակորդի, և՛ դաշնակիցների կող-
մից: Նրա առաջ քաշած սկզբունքները դրական արձագանքի արժանացան եվրո-
պական հասարակության կողմից, որն իր վրա էր կրում պատերազմի հետևանք-
ների ողջ ծանրությունը: Դրա վառ ապացույցն էր այն դրական ընդունելությունը,
որին արժանացավ նախագահ Վիլսոնը Ֆրանսիայում և Իտալիայում 1918 թ.
Վերջին:

Սակայն այլ էր վերաբերմունքը եվրոպական կառավարող շրջանների
մոտ: Այստեղ մոտեցումը երկակի էր: Առաջին հայացքից նախագահ Վիլսոնի «14
կետերում» փաստացի ոչինչ չէր ասվում Միացյալ Նահանգների համաշխարհա-
յին առաջատարության մասին: Նրանք նաև հասկանում էին, որ Միացյալ Նա-
հանգների նախագահի նախաձեռնությունը հանգեցնում է պատերազմի հաղթա-
կան ավարտին: Իսկ մյուս կողմից նրանց անհանգստացնում էր այն գաղափարը,
որ ամերիկյան ծրագիրը նախագահ Վիլսոնը դիտարկում էր որպես «հնարավոր
միակ ծրագիր»: Նման հայտարարությամբ Միացյալ Նահանգները կարծես մեր-
ժում էր դաշնակիցների առաջարկները և հորդորում պատերազմող երկրներին
հետևել Ամերիկային, որպես «համընդհանուր խաղաղության հաստատման»
միակ ջատագովի: Սակայն դաշնակից երկրների կառավարության ներկայացու-
ցիչներն ամերիկյան ծրագրի միայն գաղափարական կողմը չէ, որ դիտարկում
էին: Քաղաքական տեսանկյունից նայելով՝ նրանք չէին կարող չնկատել տարա-
ձայնություններն իրենց նպատակների և Վուդրո Վիլսոնի առաջարկած «ապո-
կալիպսիսի»* (այսպես է անվանել «14 կետերը» բրիտանական դիվանագետ Հա-
րոլդ Նիքոլսոնը (Harold Nicolson)) միջև: Այս երկրների առաջնորդների պատկե-

րացումները հետպատերազմյան խաղաղության հաստատման պայմանների վերաբերյալ միանգամայն տարբերվում էին միմյանցից: Դա պայմանավորված էր և՛ նրանց մարդկային որակներով, և՛ նրանց քաղաքական կենսագրությամբ, և՛ պատերազմի ընթացքում նրանց պետությունների ունեցած դերակատարմամբ, և՛ դիվանագիտական ավանդույթների տարբերությամբ:

Ֆրանսիան համարվում էր պատերազմական գործողություններից տնտեսապես և նյութապես առավել շատ վնասներ կրած երկիր: Վարչապետ Ժորժ Կլեմանսոյի մոտ, որը պատկանում էր Ֆրանսիայի քաղաքական գործիչների ավագ սերնդին, դեռևս թարմ էին 1870-1871 թթ. ֆրանս-պրուսական պատերազմի հիշողությունները: Ֆրանսիական հասարակության զգալի մասը նույնպես համակված էր փոխհատուցման գաղափարով, և դա չէր կարող իր ազդեցությունը չունենալ կառավարության դիրքորոշման վրա: Այդ իսկ պատճառով Ֆրանսիայի ծրագրերի մեջ չէր մտնում միջազգային իրավահարաբերությունների արմատական բարեփոխումը: Նրա պահանջները շատ հստակ էին և իրատեսական՝ վերադարձնել այն ամենը, ինչ Գերմանիան վերցրել էր պատերազմի արդյունքում, հասնել ռազմատուգանքների վճարմանը, չեզոքացնել գերմանական ռազմական մեքենան և մեկընդմիջո՞ւ բացառել վերջինիս վերականգնումը:

Իտալիայում դժգոհության առիթ հանդիսացան 9, 10 կետերը*, որոնք չէին համապատասխանում իրենց տարածքային նկրտումներին:

Գերմանիան հանդես եկավ պատասխանով, որն ընդգրկվեց կանցլեր Գեորգ ֆոն Հերթլինգի (Georg von Hertling) Ռայխստագի հունվարի 24-ի ելույթում: Այն հանդիսանում էր «14 կետերի» գերմանական մեկնաբանությունը, որով Գերմանիայի կանցլերը հստակ արտահայտեց գերմանական դիրքորոշումը խաղաղության հաստատման վերաբերյալ, որը լուրջ հակասություններ չուներ վիստնյան կետերի հետ: Կանցլերի ելույթից հստակ երևում էր, որ գերմանական կողմը փորձում է խուսափել նախնական խաղաղ կարգավորման հարցերում ուղիղ առճակատումից՝ առաջարկելով որոշ վիճելի հարցեր քննարկել բանակցությունների ժամանակ:

Մեծ Բրիտանիային, ինչպես վերը նշվեց, ավելի անհանգստացնում էր ծովերում իր տիրապետության պահպանումը: Մայրցամաքային խնդիրները Բրիտանիայի համար երկրորդական էին, չնայած նա նույնպես շահագրգռված չէր ուժեղ Գերմանիայի պահպանումով, ինչը կարող էր սպառնալ իր անվտանգությանը: Միևնույն ժամանակ Բրիտանիայի վարչապետը լավ հասկանում էր միջազգային հարաբերություններն իրավական հարթություն տեղափոխելու անհրաժեշտությունը: Սակայն բրիտանական կառավարող շրջանակները անհանգստացած էին իրենց գաղութային կայսրության հնարավոր փլուզմամբ և պատրաստ չէին ամբողջությամբ հրաժարվել գաղտնի դիվանագիտությունից: Շատ դեպքերում սրանով է բացատրվում որոշ հարցերում Բրիտանիայի տատանողական դիրքորոշումը: Արտահայտվելով «14 կետերի» մասին՝ վարչապետ Լյոյդ Ջորջը նշում էր, որ բացառությամբ ծովերի ազատության սկզբունքից այդ կետերում չկա ոչինչ, որ չհամատեղվի այն ռազմական նպատակների հետ, որոնք արդեն հայտարարվել էին բրիտանական և ֆրանսիական կառավարությունների կողմից: Սակայն նա գտնում էր, որ նպատակահարմար չէր նախա-

պես որոշել հաշտության բոլոր պայմանները, դրանք պետք է մշակվելին համաժողովի ժամանակ, որտեղ ներկա կլինեն բոլոր դաշնակից և միավորված պետությունները:

Սակայն Նախագահ Վիլսոնը վճռական էր տրամադրված ամերիկյան ծրագրի կիրառման գործում: Մեպտեմբերի 27-ին նա ելույթ ունեցավ Նյու-Յորքի «Մետրոպոլիտեն» օպերային թատրոնում կոչ արեց դաշնակից երկրներին մոտ ապագայում հստակ շարադրել իրենց պատկերացումները խաղաղության հաստատման գործում և արտահայտել իրենց կարծիքն ամերիկյան պայմանների վերաբերյալ:

Նախագահի մետրոպոլիտենյան ելույթն առանձնանում էր իր կտրուկ երանգով, որով նախագահ Վիլսոնը փորձում էր հասկացնել թե՛ դաշնակիցներին, թե՛ հակառակորդ կողմին, որ չկա խաղաղության հաստատման առավել իրատեսական տարբերակ, քան «14 կետերը», և ավելորդ են այդ հարցի շուրջ բոլոր տեսակի տատանումներն ու ձգձգումները:

Անտանտի երկրների ղեկավարները, կարծես այդ շեշտադրումը հասկանալով, չարձագանքեցին Միացյալ Նահանգների նախահի կոչին՝ դրանով իսկ հրաժարվելով խաղաղ կարգավորման իրենց ծրագրերը փոփոխելուց:

Թվում էր, թե նախագահ Վիլսոնը կանգնել էր փակուղու առջև ամերիկյան սկզբունքների կիրառման հարցում: Սակայն Հոկտեմբերի 3-ին գերմանական կառավարությունը հայտագիր ներկայացրեց Միացյալ Նահանգներին, որով պատրաստակամություն հայտնեց դադարեցնել ռազմական գործողությունները և սկսել խաղաղ բանակցություններ՝ համաձայն «14 կետերի»: Ինչո՞ւ Գերմանիան խաղաղության հաստատման առաջարկով դիմեց Վաշինգտոնին, ոչ թե Փարիզին կամ Լոնդոնին: Այս կապակցությամբ ուշագրավ է գերմանական գեներալ-գնդապետ Էրիխ Լյուդենդորֆի (Erich Ludendorff) հայտարարությունը. «Որքանով էս գիտեմ Կլեմանտյին և Լյոյդ Ջորջին, պետք է պատրաստվել ավելի վատին: Իսկ Վիլսոնը Անգլիայի և Ֆրանսիայի առջև կարող է պնդել իր պայմանները, որոնց նա չափազանց կապված է»:

Ստանալով գերմանական հայտագիրը՝ նախագահ Վիլսոնն անմիջապես ձեռնամուխ եղավ պատասխանի պատրաստմանը: Հայտնվելով զինադադարի հաստատման գերմանա-ամերիկյան առանձին քննարկումների փաստի առջև՝ Անտանտի երկրները փորձեցին Միացյալ Նահանգներին զրկել նախաձեռնությունից հետագա բանակցություններում: Հոկտեմբերի 9-ին նրանք հայտարարեցին, որ զինադադարի պայմանները կարող են որոշվել միայն համաժողովի ժամանակ, որտեղ ներկա կլինեն բոլոր դաշնակից և միավորված պետությունները:

Համաժողովը կայացավ 1918 թ. հոկտեմբերի 29-ին Փարիզում: Քննարկումներն ընթանում էին բավականին թեժ մթնոլորտում, քանզի դաշնակիցներն ամեն կերպ փորձում էին տալ «սրբազան գրվածքի» (այսպես է անվանել Լյոյդ Ջորջը նախագահ Վիլսոնի «14 կետերը») իրենց մեկնաբանումը:

Ի վերջո երկար բանակցություններից հետո հանձնաժողովը նոյեմբերի 4-ին եկավ ընդհանուր հայտարարի և համաձայնեց ընդունել «14 կետերը»՝ որպես նախնական հաշտության հիմք, սակայն երկու կարևոր վերապահումներով, դրանք են՝ ծովերի ազատության հարցը քննարկելու իրավունքը և ռազմատուգանքների սահմանումը: Հայտագիրը ներկայացվեց նախագահ Վիլսոնին: Վեր-

ջինս այն արժանացրեց հավանության և ներկայացրեց գերմանական կողմին, որի հիման վրա Կոմպիենյան անտառում կնքվեց զինադադար*:

«14 կետերի» հրապարակմամբ նախագահ Վիլսոնը փորձեց Միացյալ Նահանգների դերակատարությանը հետպատերազմյան աշխարհակարգի հաստատման գործին նոր որակ հաղորդել՝ ուժերի հավասարակշռության եվրոպական մեխանիզմները համադրելով ուժերի միավորման սկզբունքին:

Այս ճանապարհին միմյանց ուղիղ հակադրվեցին ամերիկյան և եվրոպական արտաքին քաղաքական հայեցակարգերը, որի արդյունքում Միացյալ Նահանգները հրաժարվեց Անտանտի ռազմական նպատակներից և մշակեց աշխարհում ամերիկյան «կարգ ու կանոն» հաստատելու իր սեփական առաջարկը, որը ձևակերպվեց «14 կետերով», որը ինչպես ինքն էր նշում. «...համայն մարդկության սկզբունքներն են և պետք է հաղթանակ տանեն»:

Карен Гаспарян - *Поствоенный мир и „14 пунктов” Вудро Вильсона* -18 января 1918 года в конгрессе Соединенных Штатов президент В. Вильсон выступил с обращением и представил „мирную программу”, известную как „14 пунктов Вудро Вильсона”. С помощью этих пунктов В. Вильсон изложил позицию Соединенных Штатов в процессе поствоенного мирного урегулирования и формирования нового мироустройства. На пути к этому американская и европейская концепции внешней политики противоречили друг другу, вследствие чего Соединенные Штаты отказались от военных целей Антанты и выработали собственное американское предложение установления „порядка” в мире, сформулированное в „14 пунктах”.

Karen Gasparyan - *The post-war peace and Woodrow Wilson’s “14 points”* - On January 8, 1918, United States President Woodrow Wilson addressed to the US Congress and presented the “peace plan” well-known as Woodrow Wilson’s “14 points”. In this way president Wilson layed down the United States position on the future peace and the post-war worldorder establishment process.

On this way directly opposed to each other American and European foreign policy concepts. The United States refused from Entente military objectives and developed own suggestion of “American order”, which was formulate by “14 points”.

ԿԱՐԻՆԻ «ԱԼԻՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ (1914 թ.)

ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«Ալիք» պարբերականը լույս է տեսել Կարին քաղաքում 1914 թվականին: Այն Կարինի «Հայ երիտասարդաց միության» օրգանն էր: Թերթն ուներ դաշնակցական ուղղվածություն: Իր հողվածներում անդրադառնում էր թուրքական պետական ապարատի անարդարություններին, արևմտահայերին մտահոգող հիմնախնդիրներին, ազգային կրթության հարցերին և արդեն իսկ սկսված հայկական ջարդերին: «Ալիքը», սակայն, չէր պատկերացնում, որ թուրքական պետությունը ոչ միայն իրականացնելու էր հայ ժողովրդի ցեղասպանություն իր պատմական բնօրրանում, այլև նրան գրկելու էր սեփական հայրենիքից:

Բանալի բառեր. «Հառաջ», «Երկիր», «Ալիք», Շավարշ Միսաքյան, ՀՅԴ, Կարինի «Հայ երիտասարդաց միություն»:

1909 թ. մայիսի 31-ի մինչև 1914 թ. մարտի 20-ը Կարինում լույս է տեսել ՀՅԴ ուղղվածություն ունեցող «Հառաջ» եռօրյա պարբերականը նախ՝ որպես շաբաթաթերթ, հետո՝ որպես երկօրյա, ապա՝ որպես եռօրյա թերթ:¹

«Հառաջը» Կարինի «Հայ երիտասարդաց միության» օրգանն էր:² Այդ մշակութային կազմակերպությունը «հիմնուած էր դաշնակցականներու կողմէ» ՀՅԴ հայտնի գործիչ Արամ Ատրունու նախաձեռնությամբ:³ 1914 թ. հիշյալ կազմակերպությունն ուներ 800 անդամ: Հիմնական նպատակն էր հնարավոր բոլոր միջոցներով նպաստել հայ ժողովրդի մշակութային առաջընթացին, բարձրացնել նրա մտավոր, հոգեկան ու բարոյական կարողությունները: «Լոյս տալ անլոյսին, նոր խօսք այդ խօսքին կարօտ մեր գիւղացուն ու գաւառացուն», - գրում էր Մարալը:⁴

«Հառաջն» ունեցել է 4 խմբագիր: Նրանք բոլորը ՀՅԴ անվանի դեմքեր էին՝ Եղիշե Թովչյան(1909 թ. մայիս-սեպտեմբեր), Փիլոս Փափախյան (1909 թ. հոկտեմբեր-նոյեմբեր), Միմոն Վրացյան (1909 թ. նոյեմբեր-1911 թ.) և Շավարշ Միսաքյան (1911-1914 թթ.):⁵

1909-1914 թթ. «Հառաջի» արտոնատերը Արամ Ատրունին էր, իսկ պատասխանատու տնօրեններն էին հաջորդաբար՝ Վահե Թոքաճյանն ու Շավարշ Միսաքյանը:

1909 թ. մայիսի 31-ի անդրանիկ համարի խմբագրականում ներկայացվում էին «Հառաջի» հետապնդած նպատակները: «Յառաջ հրապարակ է գալիս իբրև մի համեստ գործօն, որ պիտի ծառայէ ընդհանուր հայրենիքի վերաշինութեանն

¹ *Տէր Նաչատուրեան Ա.*, «Հայ մամուլի մատենագիտական գործեր», Պէրոյթ, 2014, էջ 627

² «Ալիք», Կարին, 1914, թիվ 3, *Պողոսեան Ե.*, «Մշակութային կեանքը Կարնոյ մէջ», Պէրոյթ, 1957, էջ 300-332

³ *Տէր Նաչատուրեան Ա.*, նշվ. աշխ., էջ 626, Թեոդիկ, «Յուշարձան Ապրիլ Տասնըմէկի», Կ.Պոլիս, 1919, էջ 64

⁴ «Ալիք», Կարին, 1914, թիվ 3

⁵ *Տէր Նաչատուրեան Ա.*, նշվ. աշխ., էջ 627, *Վրացեան Միմոն*, «Կեանքի ուղիներով», Պէրոյթ, 1960, հ. 2, էջ 158

ու բոլոր ճնշումների պաշտպանութեանը՝ առանց ազգի ու կրօնի խտրութեանը», - գրում էր պարբերականը⁶:

«Հառաջի» խմբագրությունը և տպարանը սկզբնապես գտնվել են Կարինի Չամուր փողոցում, առաջնորդարանից ոչ շատ հեռու՝ շատ շուտով տեղափոխվելով «Կանայ ճամբու վրայ»⁷:

«Հառաջը» 1914թ. փակվել է թուրքական իշխանությունների կողմից և որպես երկօրյա շաբաթաթերթ հրատարակվել է նախ՝ «Երկիր», ապա՝ «Ալիք» անուններով:

«Ալիքի» խմբագիրը ՀՅԴ անվանի գործիչ Շավարշ Միսաքյանն էր:

Շավարշ Միսաքյանը ծնվել է 1884 թ. Մեքսատիայի Զիմառա գյուղում: Ավարտել է Կ. Պոլսի կեդրոնական վարժարանը: 16 տարեկանից թղթակցել է տարբեր թերթերի: 1908 թ. խմբագրել է Կ. Պոլսի «Ազդակ» շաբաթաթերթը, 1911-1914 թթ.՝ Կարինի «Հառաջ» թերթը, աշխատակցել է Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթին: 1915 թ. ձերբակալվել է և ենթարկվել է չարչարանքների: 1918 թ. Մուղղոսի զինադադարից հետո Հ. Սիրունու հետ դարձել է Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի խմբագիրը: 1919թ. մասնակցել է ՀՅԴ Երևանի 9-րդ Ընդհանուր ժողովին: 1922 թ. տեղափոխվել է բնակվելու Սոֆիայում, իսկ 1924 թ.՝ Փարիզում, որտեղ հիմնել է «Հառաջ» օրաթերթը: ՀՅԴ 10-րդ Ընդհանուր ժողովում ընտրվել է ՀՅԴ Բյուրոյի անդամ: 1925-1933 թթ. եղել է «Դրոշակի» խմբագրակազմում:

Շ.Միսաքյանը մահացել է 1957 թ.:⁸

«Ալիքը» հրատարակվել է որպես դատական քաջքշուկի մեջ հայտնված «Երկիր» թերթի իրավահաջորդ: «Նոր չէ, որ կառավարությունը կը հետևի մեր թերթերուն, անոնց բովանդակութեանն ու ուղղութեանը», - գրված էր «Նոր մեթոդը» խմբագրականում:⁹ «Ալիքը» որևէ թերթ փակելը համարում էր պետության իրավունքը, եթե դա պատճառաբանված էր պետական շահով: Այնինչ Թուրքիայում 1914 թ. կրկին սկսել էին հետապնդել հայկական թերթերին՝ պարզապես հայ ժողովրդի իրավունքների մասին գրելու պատճառով: Նույնը կատարվել է նաև «Ալիքի» հետ: Թերթի պատասխանատու տնօրեն Հրայր Լուսպարոնյանին դատի էին տվել ապակենտրոնացման մասին վերլուծական հոդված տպագրելու պատճառով:¹⁰ Ընդհանուր դատախազությունը «Ալիքի» 1914թ. առաջին համարում տպագրված՝ ապակենտրոն և կենտրոնացված պետական կառավարման համակարգերին նվիրված հոդվածի առնչությամբ էր դատի տվել Լուսպարոնյանին: Նախադատ ատյանը նրան դատապարտել էր մեկ ամիս տնտրությամբ բանտարկության և գանձել էր 20 ոսկի տուգանք: «Ալիքի» պատասխանատու տնօրենն իր հերթին դիմել էր վերաքննիչ ատյան:¹¹ «Ալիքը» հարց էր տալիս, թե ինչո՞վ էին «վտանգավոր» թուրք պաշտոնյայի զեղծարարությունների և անարդարությունների մասին գրված «Հառաջի» նյութերը:¹² Թերթի «դեմ արձակված վճիռն

⁶ «Յառաջ», Էրզրում, 1909, էիվ 1

⁷ *Վրացեան Մ.*, նշվ. աշխ., էջ 158-164

⁸ *Հովսեփյան Մ.*, «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.)», Երևան, 2009, էջ 170-171, Միսաքյան Շ., «Օրեր և ժամեր», Փարիզ, 1958, էջ IX- XII

⁹ «Ալիք», Կարին, 1914, թիվ 3

¹⁰ Նույն տեղում, թիվ 12

¹¹ Նույն տեղում

¹² Նույն տեղում, թիվ 4

ալ» տրամաբանական կլիներ այն ժամանակ, երբ ապացուցված կլիներ տպագրված փաստերի անճշտությունը:¹³

Անդրադառնալով «Երկիր» թերթի դադարեցման խնդրին՝ «Ալիքը» հռետորական հարցադրումով էր հանդես գալիս. «Մի թե այս դժբախտ երկրին մեջ յանցանք է մինչև իսկ արդարադատութեան հաւատալը»:¹⁴ Չէ՞ որ պետական համակարգի անարդարությունների մասին գրելով՝ պարբերականը «ամենէն առաջ հայրենասիրական գործ մը կատարած կ'ըլլայ, օգնելով կառավարութեան, յարուցած խնդիրներու մանրամասնութեանց իրազէկ ըլլալուն մէջ»:¹⁵ «Երկիրին» մեղադրում էին, թէ իբր սուտ տեղեկատվություն էր տարածել առ այն, որ Հղձաձոր գյուղում ծագած վիճաբանության ժամանակ թուրքերը նախահարձակ չէին եղել և չէին վիրավորել 9 հայ գյուղացու, (ընդ որում, այս միջադեպի համար ոչ մի թուրք չէր պատժվել, իսկ վիճաբանությանը մասնակից բոլոր հայերին բանտարկել էին):¹⁶ «Երկիրը» դադարեցվել էր նաև այն պատճառով, որ մեղադրել էր կառավարությանը Բաղէշում քրդերի սարքած հայկական ջարդի պատասխանատուներին և իրականացնողներին չպատժելու համար: «Ալիքի» խմբագրությունը պնդում էր, որ «Երկիրը» ճիշտ էր վարվել՝ օբյեկտիվորեն լուսաբանելով ու վերլուծելով Բաղէշում ծավալված իրադարձությունները: Մի թե հանցանք էր երկրի թերությունների մասին գրելը՝ դրանց վրա հրավիրելով պետության և հասարակության ուշադրությունը: Եթե պետությունը նույնիսկ փոքր ցանկություն ունենար, ապա կճնշեր Բաղէշում սկսված քրդական մարդասպան շարժումը, և չէին լինի տասնյակ գոհերը:¹⁷

«Ալիքի» խմբագրությունը անդրադարձել է «Հառաջ» և «Երկիր» թերթերի հրատարակության դադարեցման պատճառներին: Դրանց հողվածները «պաշտօնական շրջանակներու մօտ նկատուեր են վնասակար և այն ալ մանաւանդ հայրենիքի շահերուն տեսակէտէն: Այսօր, եթէ մեր պաշտօնական շրջանակները այն կանխակալ կարծիքը չունենային թէ՛ պաշտօնական շրջանակներու տեսակէտները չի բաժնող մէկը հայրենասէր չէ, եթէ ընդունել կարողանային, որ տիրող մտայնութիւններուն ու ուղղութիւններուն դէմ եղող մէկը, այնուամենայնիւ կրնայ շատ աւելի ջերմ հայրենասէր ըլլալ, քան իրենք, ապահովաբար վնասակար չէին նկատուիր այն գրածքները, որոնք նկատուեր են, և դադարման չէին դատապարտուիր այն թերթերը, որոնք դադարեցուցեցան»:¹⁸ «Ալիքի» կարծիքով՝ սրանք էին «Հառաջի» և «Երկիրի» դադարեցման հիմնական պատճառները:¹⁹

Պարբերականը վկայում էր, որ շրջակա գյուղերից «ստանում էին նամակներ, որոնցում բարձր էր գնահատվում «Հառաջի» գործունեությունը: Բարբերում «Ալիքի» թղթակից Պարույրը գրում էր, որ թերթի փակվելուց հետո «բոլոր խաւերու կողմէ անխտիր զգացեցաւ անոր պակասը, պետքը գաւառաթերթի մը, որ եղած էր գաւառացիներու ցաւերուն և ուրախութեանց թարգմանը: «Երկիր»ի առա-

¹³ Նույն տեղում

¹⁴ Նույն տեղում

¹⁵ Նույն տեղում

¹⁶ Նույն տեղում

¹⁷ Նույն տեղում, թիվ 5

¹⁸ Նույն տեղում, թիվ 6

¹⁹ Նույն տեղում, թիվ 5

ջին թիւերն իսկ յուսալ կուտան, թէ անիկա պիտի հետևի «Յառաջ»ի ուղղութեան, միշտ թարգմանը պիտի լինի թուրք, քուրդ և հայ աշխատաւորութեան տառապանքին, ի վեր պիտի հանէ գործած գեղծումներն ու անիրաւութիւնները՝ որ կողմէն ալ գան և պիտի լինի անողոք քննադատը գեղծանող պաշտօնէութեանց, անխիղճ վաշխառուներուն, վերջապէս խթանը երկրին յառաջդիմութեանը»:²⁰ Մեկ այլ թղթակից (Թաթուլը) Ալաշկերտից գրում էր, որ «Յառաջի» փակումը զըրկանք էր բոլորի համար, որովհետև «գոցած էին այդպէսով բոլորիս աչքերը»:²¹ Այնինչ «Հառաջն» ընթանում էր ճշմարտության ճանապարհով և արձագանքում էր ժողովրդի հառաչներին:²²

Երբ թերթում ենք «Հառաջի» իրավահաջորդ «Ալիք» թերթի համարները, համոզվում ենք, որ պարբերականը անմասն չի մնացել ժողովրդին մտահոգող խնդիրներին, լուսաբանել է դրանք և ներկայացրել է առաջարկներ ազգային կառույցներին ու պետական համապատասխան մարմիններին իր կողմից ներկայացվող խնդիրների համար լուծումներ գտնելու գործին աջակցելու առումով: Հիմնական հիմնահարցերը, որոնց անդրադարձել է «Ալիքը», վերաբերում էին կրթական ոլորտին, ազգային դպրոցներին, արևմտահայ կյանքը խաթարող պետական քաղաքականությանը, ընթերցողներին քաղաքականապէս վերազինելու և թարմ տեղեկատվությամբ նրանց ապահովելու խնդիրներին: Ըստ «Ալիքի» հրապարակումների՝ Էրզրումի նահանգում աճող սերունդը հիմնականում ստանում էր ժամանակի ոգուն համապատասխան կրթություն:²³ Ուշադրություն էր դարձվում նաև նրանց ֆիզիկական պատրաստվածությանը՝ առաջնորդվելով «Առողջ միտքը առողջ մարմնի մէջ պետք է փնտրել» կարգախոսով:²⁴ Այդ սկզբունքներով էին կրթվում ու դաստիարակվում, օրինակ՝ Կարինի Ազարյան, Մարյան, Գավաֆյան, Արծնյան վարժարանների և մանկապարտեզների աշակերտներն ու սաները:²⁵ Պարբերականը տեղեկացնում էր, որ Բաբերդում կրթասեր առաջնորդ Անանիա ծայրագույն վարդապետ Հազարապետյանի գորակցությամբ և տեղի պատանիների ջանքերով հիմնվել էր «Մահակ-Մեսրոպ» միությունը:²⁶ Նպատակն էր նպաստել երկսեռ պատանիների ֆիզիկական, մտավոր ու բարոյական վիճակի բարելավմանը, հայթայթել չքավոր պատանիների համար գրենական պիտույքներ և աջակցել բարձրագույն վարժարանների մեջ նրանց տեղավորելու գործին, բացել գրադարան-ընթերցարաններ, կազմել մարմնամարզական ու դերասանական խմբակներ:²⁷ ՀՅԴ Բաբերդի տեղական կոմիտեի ուժերով Լսինք հայկական գյուղում բացվել էր ընթերցարան-գրադարան. այս մասին տեղեկացնում էր Ա. Խալտունին:²⁸ Օրինակելի էր Կարինի Կարմիր վանքի «Ժառանգավորաց» վարժարանը: 1914 թ. ունեցել էր 40 աշակերտ, իսկ 1915 թ. ու-

²⁰ Նույն տեղում

²¹ Նույն տեղում, թիվ 3

²² Նույն տեղում

²³ Նույն տեղում, թիվ 6

²⁴ Նույն տեղում4

²⁵ Նույն տեղում

²⁶ Նույն տեղում, թիվ 2

²⁷ Նույն տեղում

²⁸ Նույն տեղում

սումնական տարվա համար որոշել էին այստեղ բացել 6-րդ դասարան: Վարժարանի ուսուցչական ժողովը պատրաստել էր ուսումնական նոր ծրագիր, որը համապատասխանում էր տեղի պայմաններին և հետապնդում էր 2 նպատակ.

- պատրաստել գյուղական ուսուցիչներ,
- պատրաստել աշակերտներին այնպես, որ նրանք հեշտությամբ կարողանային ընդունվել միջնակարգ դպրոցի 4-րդ կամ 5-րդ դասարան:²⁹

«Ալիքի» թղթակիցների լուրերից ու թղթակցություններից մինևույն ժամանակ պարզվում էր, որ Բաբերդի և Ալաշկերտի մի շարք գյուղերում բարձիթողի վիճակում էին գտնվում հայկական դպրոցները: Պարույրը կարծիք էր հայտնում, որ թեև Բուլանուխը հայաշատ գավառ էր, սակայն կրթական բարեփոխումների տեսանկյունից հետ էր մնացել մյուս հայաշատ գավառներից:³⁰ «Կրթական հաստատությունները եղած են գոմ-դպրոցներ, ուր կը փճանայ մատաղ սերունդը թե՛ ֆիզիքասպես և թե՛ բարոյապես: Շէնքը այնքան կարևոր է, որչափ ատողջ դաստիարակությունը», - գրում էր «Ալիքի» թղթակիցը:³¹ Ալաշկերտից էլ Թաթույրը հաղորդում էր, որ այդ գավառի դպրոցների ընդհանուր տեսուչ Բաբաջանյանը պարզել էր, թե ինչպես էին ողջ ուսումնական տարվա ընթացքում ժամավաճառությամբ զբաղվել Ալաշկերտի երկսեռ վարժարանի տնօրեն-ուսուցիչ Մանուկ Գույումջյանը և նրա ուսուցչուհի կինը:³² Որպես ասվածի ապացույց հիշատակում էր մի քանի փաստ: Տիկին Գույումջյանը մեկ տարվա կտրվածքով հայոց պատմությունից անցկացրել էր ընդամենը 4 դաս: Նա 40 դաս էր հատկացրել ձեռագործի ուսուցմանը, մի առարկա, որն ամենակարևորն էր արևմտահայ գավառի համար:³³ «Ալիքի» խմբագրությունն իրավիճակը շտկելու գործում կարևորում էր ծնողների դերը և նրանց համագործակցությունը կրթօջախների հետ: «Շատ քիչ ծնողներ եղած են, որ այցելած են դպրոց և հազվագիտ ծնողներ, որ հետաքրքրված են իրենց գաւակի դաստիարակութեան և յառաջդիմութեան գործով, իսկ հասարակութեան և ծնողներու հսկայ մեծամասնութիւնը մնացեր է անտարբեր և անհետաքրքիր», - գրում էր պարբերականը:³⁴ Այնինչ, ըստ «Ալիքի», աճող սերունդը մեր ժողովրդի հույսն ու ապավենն էր:³⁵ Ազգային կրթական ոլորտում նկատվող բացերը շտկելու կոչված ազգային մարմիններն իրենց հերթին ընդունում էին որոշումներ, որոնցով խորացնում էին առկա խնդիրները: Կարինի՝ կրթական ոլորտի համար պատասխանատու ազգային վարչությունը կրճատել էր կրթական բյուջեն: Մարալը «բաց հարցումներով» էր դիմում այդ մարմնի անդամներին, թե արդյոք ազգային սահմանադրությունը նրանց իրավունք տալի՞ս էր կրթական բյուջեն կրճատելու համար: «Մտածե՛ր էք արդէօք, թէ ձեր այդ քայլով ու ր կ'առաջնորդէք մեր ժողովուրդը, յե՛տ, թէ առաջ, ի՞նչ, կուզէք որ քաղաքական ստրկութեան շղթաներուն հետ կուլտուրական ստրկութեան շղթանե՛րը անցունէք մեր վզին», -

²⁹ Նույն տեղում, թիվ 7

³⁰ Նույն տեղում, թիվ 12

³¹ Նույն տեղում

³² Նույն տեղում, թիվ 4

³³ Նույն տեղում

³⁴ Նույն տեղում, թիվ 6

³⁵ Նույն տեղում

հարց էր տալիս հողվածագիրը:³⁶ «Ալիքը» համոզված էր, որ ազգային ներքին կյանքում առաջնորդվում էին «դեպի ետ կարգախոսով»: Սկսած կեդրոնէն մինչև յետին գաւառը, նոյն կարգախոսն է, որ կը տիրէ, կը թագաւորէ... Ամեն կերպ աշխատանք թափուցաւ, որ խեղդի այն կենսաբեր շունչը, որ գաւառէն ծագում կ'առնէր, որ կամաց-կամաց ժողովրդին ինքնագիտակցութեան, արժանաւորութեան ու արժանապատուութեան շիտակ ըմբռնողութիւն կը ներարկէր», - կարդում ենք Գ. Կոմսիի վերլուծական հոդվածում:³⁷ Թերթն անհրաժեշտ է համարում այն, որ ազգային մարմինները, որոնց շարքում առաջին հերթին ուսումնական խորհուրդները, իրենց գործունեությամբ դառնային դեպի գյուղերն ու անտեսված գավառները՝ «փրկելու համար ժողովրդական կրթութիւնը այն տարբերու ձեռքէն, որոնք ոչ միայն ոչինչ չեն հասկնար դպրոցէն ու դպրոցական գործերէն, այլ և հակառակն են անոր»:³⁸ «Ալիքը» պահանջում էր, որ ամեն մի գավառական շրջան իր պայմաններին համապատասխանող կրթական ընդհանուր ծրագիր ունենար, որը կկիրառվէր բոլոր դպրոցներում կրթական բավարար մակարդակ ունեցող փորձառու ուսուցչական կազմի կողմից, որոնց աշխատանքը կվերահսկէր շրջիկ ուսումնական տեսուչը:³⁹ Նույն պահանջով էր հանդես գալիս Բաբերդի թղթակից Պարույրը՝ պնդելով, որ հենց այդ ամենի բացակայության պատճառով էր ետ մնացել Բաբերդի 27 հայաբնակ գյուղերի կրթական գործը:⁴⁰ Ազգային մարմինների վերակազմության խնդիրն էր առաջնահերթ,⁴¹ քանի որ բարենորոգումների գործադրությունից հետո դրանց գործունեության ծանրության կենտրոնը պիտի փոխադրվէր գավառներ (Մ.Հ.- «Ալիքը» հավատում էր հայկական բարենորոգումների ծրագրի կենսագործմանը): «Գավառական մեր ազգային մարմինները իրենց շրջանի հասարակական գործերուն վերաբերմամբ մեծ չափով պիտի խաղան այն դերը, ինչ-որ ցարդ վերապահւած էր պատրիարքարանին»:⁴² Ըստ «Ալիքի» խմբագրակազմի՝ ազգային մարմիններում ցանկալի էր ընդգրկել խելահաս և հասարակական ջիղ ունեցող անձանց:⁴³ Թերթը, միևնույն ժամանակ, ծանր ու վտանգավոր հարված էր համարում 1914 թ. հունվարին օսմանյան խորհրդարանի ընդունած այն օրինագիծը, որն իրավունք էր տալիս կառավարությանը առայժմ մեկ տարով վերացնել նահանգներում վճարված տուրքերը, մասնավորապես ազգությունների՝ իրենց կրթության համար վճարած տուրքը:⁴⁴ Ըստ այդմ, 1914թ. հունվարի 26-ին թուրքական կառավարությունն իր հերթին ընդունել էր այդ օրինագծից բխող հրամանագիր, որի համաձայն՝ հայ ժողովուրդը չէր կարողանալու տնօրինել կրթական բյուջէին, և կրկին շահելու էր թուրք տարրը:⁴⁵ «Պետական դպրոցներ պատրուակին տակ կը փորձւի թուրք տարրի կրթութեան համար ապահովել կրթական տուրքի մեծագոյն տոկոսը և

³⁶ Նույն տեղում, թիվ 6

³⁷ Նույն տեղում

³⁸ Նույն տեղում, թիվ 11

³⁹ Նույն տեղում, թիվ 12

⁴⁰ Նույն տեղում, թիվ 4

⁴¹ Նույն տեղում, թիվ 8

⁴² Նույն տեղում, թիվ 9

⁴³ Նույն տեղում

⁴⁴ Նույն տեղում, թիվ 15

⁴⁵ Նույն տեղում

ողորմելի մէկ փշրանքը միայն թողնել, բաժնելու համար զանազան տարրերուն, համաձայն իրենց մասնակցութեան չափին», - գրում էր թերթը խմբագրականում:⁴⁶ «Ալիքի» համար կրթական ոլորտում իրականացվող քաղաքականությունն անընդունելի էր, քանզի Թուրքիայում իրականում պետական դպրոցները թուրքական դպրոցներ էին: «Այդ դպրոցներու մէջ հազիւ հազ հայ գտնուի հարիւրին միայն 1-2 տոկոս, այնինչ այդ դպրոցները իրենց մէջ բաղկացուցիչ բոլոր տարրերէն ալ այնքան ուսուցիչ ու աշակերտներ պիտի ունենան, ինչքանով որ այդ տարրերէն ամեն մէկը կը մասնակցի կրթական տուրքին: Արդարութեան պահանջն է այս: Պէտք է իւրաքանչիւր տարր ստանայ իր վճարած տուրքի արդար ու լիակատար բաժինը», - պնդում էր «Ալիքը»:⁴⁷ Կառավարության այս որոշումը թերթը բնութագրում էր որպէս կրթական տուրքից անհատներին հատկացվելիք բաժնի գրավման օրինագիծ:⁴⁸ Դրանով թուրքական կառավարությունը հարվածում էր հայկական բարենորոգումների ծրագրին, որի գործադրման պարագայում նահանգներից գանձված կրթական տուրքից յուրաքանչյուր տարր իր կրթական գործը կազմակերպելու համար ստանալու էր այդ տուրքին սեփական մասնակցության չափով: Փաստորեն, այս օրինագիծը չեղյալ էր համարում հայկական բարենորոգումների ծրագրի վերոհիշյալ հատվածը, և այդ ծրագիրն արդեն հակասում էր նոր օրենքին:⁴⁹ Հայկական բարենորոգումների ծրագրից խուսանավելը և դրա իրագործման ձգձգումը զուգորդվում էր հայերի հանդէպ պետական բռնաճնշումների, իրավազրկումների, ալան-թալանի, բռնաձուլման քաղաքականությամբ: «Ալիքը» հրապարակել է այդ ամենը փաստող բազմաթիվ օրինակներ: Դրանք մասնավորապէս տեղեկացնում էին Թուրքիայում դատերի և իրավական վեճերի՝ ի վնաս հայերի լուծման և հողագրավումների մասին: Թղթակցություններից մեկում, օրինակ, տեղեկացվում էր, թէ քուրդ Մուստաֆա բէյը բռնագրավել էր Քղդի Ամառիճ գյուղի հայերի արտերը, ծեծել էր տվել ընդդիմացողներին ու նրանց կանանց:⁵⁰ Բացի այդ՝ քրդերը, կառավարության թողտվությամբ, հնձում և իրենց էին վերցնում Ամառիճի հայերի մարգագետինների խոտերը: «Կը տեղեկանանք, որ հայերը իրենց սեփական բնակավայրէն վտարելու համար տեղույն պատկանեալ իշխանութեան կողմէ որոշում եղած է: Այս պատճառով մեծ դէպքերու երևան գալը հաւանական է, հետևապէս առաջքն առնելու համար կը փութամ հաղորդել խնդիրը», - գրում էր «Ալիքի» թղթակիցը:⁵¹ Թաթուլը վկայում էր, որ հողային վեճերը շատ էին Բուլանուխում: Տեղական իշխանությունները գրեթէ ամեն օր զբաղվում էին դրանց լուծման գործով, թէն հիմնականում հօգուտ թուրքերի և քրդերի:⁵² Ոտնահարվում էին հայ հողագործների իրավունքները: «Երբ կառավարութիւնը ինքը կը պաշտպանէ քիւրդին և որոշում կը տրուի ի նպաստ անոր, ի՞նչ կը մնայ հային, ձեռքը ծոցը տուն վերադառնալ և լալ իրեն սև օրերը»:⁵³ Թաթուլը բերում էր օրինակ, թէ ինչպէս 1895-

⁴⁶ Նույն տեղում, թիվ 11

⁴⁷ Նույն տեղում,

⁴⁸ Նույն տեղում, թիվ 16

⁴⁹ Նույն տեղում

⁵⁰ Նույն տեղում, թիվ 11

⁵¹ Նույն տեղում

⁵² Նույն տեղում, թիվ 7

⁵³ Նույն տեղում

1896 թթ. համիդյան ջարդերից խուսափելու նպատակով Ապրի գյուղից Բարսեղը և Հակոբն իրենց ընտանիքներով գաղթել էին Ռուսաստան: Թուրքիայում սահմանադրական կարգերի հռչակումից հետո վերադառնալով գյուղ՝ նրանք տեսել էին, որ իրենց «շեն շող տները, ախտոները, յարդանոցները և այլն, ամեն ինչ աւերւած, գետնին հաւասարեցված է: Դրանք նրանց արտերի հետ գրավել էին տեղի քուրդ շեյխերը: Թաթուրը պատմում էր, որ Հակոբը և Բարսեղը փորձել էին օրենքի օգնությամբ լուծել այս հարցը, բայց դատական երկարատև քաշքշուկից հետո ոչնչի չէին հասել:⁵⁴ Լաթար գյուղում հողավեճերին լուծում տալու համար իշխանությունն ընտրել էր աճուրդի ճանապարհը:⁵⁵ Պարույրի կարծիքով՝ հայերը չէին կարողանում իրենց իսկ հողերի աճուրդին մասնակցել, քանի որ չունեին պահանջվող գումարները: Բնական էր, որ նրանք օրենքի ուժով էին զրկվում իրենց պապական հողակտորներից և գաղթում էին բնօրրանից:⁵⁶ «Քառասուն տարի առաջ մենք՝ գիւղացիներս, Ռուսաստանի ճամբան չգիտէինք, իսկ այսօր այչքը բացողը Ռուսաստանի ճամբան կը բռնէ: Տուն չկայ առանց պանդուխտի, 280 տունէ բաղկացած Ձիթոյ գիւղը 300 երիտասարդ պանդուխտ ունի: Գիւղացիութեան գոյութեան խարխիսը հողն է: Հողը ձեռքէդ էլալ՝ օջախդ մարեցալ՝ կըսէ գիւղացին», - կարդում ենք թղթակցություններից մեկում:⁵⁷ 1914 թ. հուլիսի 10-ին «Ալիքը» տպագրել է փաստեր, թե ինչպես էին Թուրքիայում գտել իրենց բնօրրան հայրենիքում հայերի օջախները մարելու նոր եղանակ. մանկական համաճարակներ: Դրանց համար պատասխանատվության է կանչում պետական առողջապահական մարմիններին, որոնք անգործության էին մատնված գավառներում և չէին բուժում Խնուսի գյուղերում բկացավով ու վարդախտով վարակված մանկիկներին:⁵⁸ Այդ բնակավայրերում գրանցված մանկական մահացածության մեծաքանակ դեպքերին ուրիշ անուն, քան կոտորած, չի կարողացել տալ Շ.Արմենը:⁵⁹ «Դրանք սովորական մահեր չեն, այլ աւերածութիւն, հասարակական աղէտ, գիւղերի ամայացում, օճախների աւեր, ընտանիքների քայքայում», - գրում էր հողվածագիրը:⁶⁰ Նա բերում էր թվային տվյալներ միայն Խնուսի շրջանում մահացած երեխաների թվաքանակի վերաբերյալ: Ըստ այդմ՝ մի քանի ամսվա ընթացքում Գարա-Չոպան գյուղում 250 տնից մահացել էին 170 երեխա, Գում-Գայա գյուղում՝ 50 տնից 25, Սալվորի գյուղում՝ 10 տնից 7, Կեովենտուկ գյուղում՝ 130 տնից 55, Կեոբալ գյուղում՝ 100 տնից 110, Խալիլ-Չավուշ գյուղում՝ 110 տնից 60, Շահպատին գյուղում՝ 40 տնից 32 երեխա: «Սա արդէն կոտորած է... Կան տներ, որոնք բոլորովին զրկւել են մանուկ սերունդից, կան ընտանիքներ, որոնք 5-7-13 զոհեր են տւած», - այսպես էր եզրափակում իր վերլուծական հոդվածը Շ.Արմենը:⁶¹ Պետական այս քաղաքականությունն, ըստ թերթի թելադրված էր Թուրքիայի կառավարման կենտրոնացված համակարգով, որին գումարված էր «ազգայնական կեդրոնացման սիստեմը: Պետական վարիչները չեն կրնայ հաշտւիլ, որ

⁵⁴ Նույն տեղում

⁵⁵ Նույն տեղում, թիվ 12

⁵⁶ Նույն տեղում

⁵⁷ Նույն տեղում, թիվ 10

⁵⁸ Նույն տեղում, թիվ 13

⁵⁹ Նույն տեղում

⁶⁰ Նույն տեղում

⁶¹ Նույն տեղում

Թուրքիան կրնայ Թիւրքիայ ըլլալ ու մնալ, որդեգրելով պետական այնպիսի ձև մը, որ հաստատուած ըլլայ բոլոր ազգերու հաւասարութեան իրաւունքին վրայ: Մեր վարիչներուն մէջ ղեկավարող ձգտում մըն է ոչ միայն զօրացնել թուրք տարրի քանակական ոյժը, այլ և դարձնել Թուրքիան միատարր ու միաձոյլ պետութիւն, եթէ հնար է ի հարկէ»:⁶²

«Ալիքի» խմբագրութիւնը ինչպէս կարելի է եզրակացնել թերթում հրատարակված նյութերից, չէր կարող պատկերացնել անգամ, որ հայ ժողովրդի հանդէպ իր բնօրրանում ոչ միայն կ'իրագործվեր թուրքական պետության կողմից մշակված ցեղասպանություն, այլ հայությունը կ'զրկվեր իր պատմական հայրենիքից:

Мариам Овсепян - *Периодическая газета г. Карин (1914 г.) „Алик“*- Периодическая газета “Алик” выходила в свет в городе Карин в 1914 году. Она была корпоративной газетой “Общества армянской молодежи”, которая действовала в Карине. Газета имела дашнакское направление. В своих статьях она касалась к несправедливостям турецкого государственного аппарата, к задачам западно-армянской жизни, к вопросам народного образования и уже начавшимся массовым истреблениям армян.

Однако „Алик” и не представляла, что турецкое государство не только совершит геноцид армян на их исторической родине, но лишит ее этой же родины.

Mariam Hovsepiyan - *Periodical Newspaper of Karin (1914) “Aliq”*- “Aliq” periodical was published in the city of Karin in 1914. It was the official newspaper of the “Armenian Youth Union” in Karin. The newspaper was pro-Dashnak direction. It mostly touched upon issues of injustices of the Turkish government, the problems of Western Armenian life and education, alsq as the mass killing of Armenians that had already begun.

However, “Aliq” had no idea that the Turkish government would not only commit genocide of Armenians in their homeland, but also deprive them of their historic lands.

⁶² Նույն տեղում, թիվ 1

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ՀԱՅԿԱԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴՐԻՆ 1912 – 1914ԹԹ.**

ՀԱՍՄԻԿ ՉԱԽՄԱԽՉՑԱՆ

Հողվածը նվիրված է Արևմտյան Հայաստանի Բարենորոգումների խնդրի նկատմամբ արևմտահայ հոգևոր և քաղաքական կազմակերպությունների վերաբերմունքին: Այնտեղ փորձ է արված ապացուցել, որ Բարենորոգումների մեծ տերությունների կողմից Հայկական հարցի լուծմանն էին հակված արևմտահայ հասարակական – քաղաքական գրեթե բոլոր շրջանները, անկախ այն հանգամանքից, որ այդ խնդրում որոշ ուժեր ցանկանում էին հանդես բերել զգուշություն և չանտեսել արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունը: Մակայն ինչքան էլ ցանկանային՝ այդ ինքնապաշտպանության կազմակերպման համար կորցրել էին ժամանակն ու հնարավորությունը: Եվ պատահական չէ, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնավորումով բոլորին մնում էր սպասել ռուսական զենքի հաղթանակին, հաղթանակ, որը ռուսական կողմը անենին չպայմանավորեց նաև արևմտահայությանը շուտափույթ կերպով ազատագրելու կամ ավելի ճիշտ՝ Արևմտյան Հայաստանն արագորեն գրավելու անհրաժեշտությամբ:

Բանալի բաներ. Արևմտյան Հայաստան, բարենորոգումներ, մեծ տերություններ, Առաջին համաշխարհային պատերազմ, հոգևոր կազմակերպություններ, քաղաքական կուսակցություններ

1912 թ. աշնանը նորից քաղաքական ասպարեզ մտցվեց Հայկական հարցը՝ պայմանավորված 1911 թ. թուրք-իտալական և 1912 թ. թուրք-բալկանյան պատերազմների առիթով մեծ տերությունների մասնավորապես Ռուսաստանի, հայությունը ներշնչած այն հույսերով, որ ժամանակն է նաև Թուրքիայից Արևմտյան Հայաստանի համար պահանջել բարենորոգումներ:

Հայկական բարենորոգումների խնդիրը ասպարեզ իջեցրեց Ռուսաստանը և այն մեծ ոգևորություն առաջ բերեց թե արևմտահայության և թե արևելահայության մեջ: Այդ ոգևորությունից անմասն չմնացին հայկական քաղաքական երեք կուսակցությունները, կաթողիկոսը և Կ. Պոլսի հայոց Պատրիարքարանը:

Արդեն 1912 թ. սեպտեմբերի 19-ին հայության քաղաքական ներկայացուցիչների մասնակցությամբ Թիֆլիսում տեղի է ունենում ժողով, որի ընթացքում որոշում են դիմել ցարական կառավարությանն՝ ազատագրելու Արևմտյան Հայաստանը: Ժողովից ոչ շատ անց, «2 հոկտեմբերի 1912» թվագրված դիմումով Գևորգ Ե Տիֆլիսեցի կաթողիկոսը Ի. Վորոնցով-Դաշկովին խնդրում է օգնության ձեռք մեկնել արևմտահայությանը: Այնտեղ կարդում ենք. «Թուրքիայի անատոլիական վիլայեթներում և Կիլիկիայում հայերը անպատիժ կերպով ենթարկվում են անլուր հալածանքների. նրանց սպանում են, թալանում, նրանց կանանց ու աղջիկներին տանում են իրենց հարեմները և շատերին բռնությամբ իսլամացնում են: Հայոց պատրիարքը բազմիցս դիմել է Բարձր Դռանը արդարադատության և իր հոտի պաշտպանության համար, բայց ստանալով միայն փուչ խոս-

տումներ՝ իր հայացքը իմ միջոցով հառում է ռուս մեծ ժողովրդին ու մեր մեծագոր թագավորին և նորին մեծությունից է սպասում պաշտպանություն և հովանավորություն...»¹:

Ակնհայտ է, որ ցարիզմը կաթողիկոսի միջոցով ցանակնում էր կրկին կյանքի կոչել իր ավանդական քաղաքականությունը, որը ենթադրում էր Թուրքիայի հետ հնարավոր պատերազմից առաջ իր կողմը գրավել արևմտահայությանը:

Վորոնցով-Դաշկովի՝ ցարին հասցեագրած մի նամակից պարզ երևում է նաև, որ նա այդ անում էր՝ չեզոքացնելու եվրոպական տերությունների կողմից արևմտահայության հարցի նախաձեռնությունը վերցնելու վտանգը², քանի որ հակառակ դեպքում ըստ նրա Ռուսաստանի հեղինակությանը մեծ հարված կհասցվեր հայերն ստիպված կլինեին «մեկընդմիջտ ձեռք քաշել ցարի հետ հույսերը կապելուց», այն դեպքում, երբ Ռուսաստանին անհրաժեշտ էր ունենալ «մի համակիր ժողովուրդ այն մարզերում, որոնք իրերի ներկա պայմաններում կամաթե ակամա հեշտությամբ կարող են գտնվել մեր ռազմական գործողությունների թատերաբեմում»³:

Այսպիսով Ռուսաստանի համար կարևորն իր քաղաքական խնդիրների կյանքի կոչելն էր և դրանցում արևմտահայության օգտագործումը, որը ցավոք չէին ընկալում հայ բազում քաղաքական գործիչներ:

Իր նպատակների իրականացման համար ցարիզմը Թիֆլիսում ստեղծում է հայոց Ազգային բյուրոն, իսկ կաթողիկոսը հայոց Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ, որը պետք է Եվրոպայում հետամուտ լիներ Հայկական հարցի լուծմանը:

Այն, որ 1912թ. հայությունն ամբողջովին նորից թեքվել էր դեպի Ռուսաստանը. երևում է նույն թվականի նոյեմբերին Թիֆլիսում տեղի ունեցած համագումարում ստեղծված Ազգային Բյուրոյի որոշումներից, որոնցից մեկում հետևյալն ենք կարդում. «Բյուրոյի քաղաքականությունը կարելի է ամփոփել հետևյալ հակիրճ բանաձևերով. մեր գործունեությունը հարմարեցնել ռուսաց քաղաքականությանը, ունենալ պահանջների մի ծրագիր միայն, համարձակ և ներդաշնակ գործունեություն առաջ բերել բոլոր կենտրոններում»⁴:

Փաստաթուղթը հետաքրքիր տեղեկություն է տալիս արևմտահայերի ինքնապաշտպանության նկատմամբ ցարիզմի ունեցած վերաբերմունքի մասին, որը փաստորեն բացասական էր, քանի որ այնտեղ կարդում ենք, որ «կառավարությունը ամեն միջոց ձեռք է առել հայերի ապահովության համար և որ ուրեմն պետք չի տեսնում օժանդակելու ինքնապաշտպանության»⁵:

Այսպիսով այն համոզումը կար, որ Ռուսաստանն ամեն ինչ կանի հայերի ապահովության համար, ուստի ավելորդ են ինքնապաշտպանության առումով աշխատանքները: Շատերի անընթեռնելի էր, որ արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպումը չի բխում նրա շահերից:

¹ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու **Մ. Գ. Ներսիսյանի** խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 283:

² Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 283:

³ Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՍՀ ԳԱ հրատ., հ 6, Երևան, 1981, էջ 520 - 521:

⁴ Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ(այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 1, թ. 28:

⁵ Նույն տեղում, փաստաթուղթն ամբողջությամբ տես թթ. 25-28:

Կ. Պոլսի պատրիարքարանը նույնպես կողմնորոշվում էր դեպի Ռուսաստանը: Այս շրջանում պատրիարքն էր Հովհաննես Արշարունին: Վերջինս 1913թ. մայիսի 20 – ին մի նամակ է ուղարկում Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Գիրսին, ուր նկարագրելով արևմտահայության ծանր վիճակը և չկորցնելով Հայաստանում բարենորոգումների հարցի լուծման հույսը, խնդրում է ձեռք առնել միջոցներ, ինչպիսիք տեղին կհամարի, «որպեսզի վերացվի Անատոլիայում զանգվածային անխուսափելի կոտորածի վտանգը...»⁶:

Նույն քաղաքական դիրքորոշումն էին որդեգրել նաև Կ. Պոլսում գործող հայ քաղաքական կուսակցությունները:

1912 թ. դեկտեմբերի 21-ին տեղի է ունենում Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի դռնփակ նիստ, որի ատենապետ Սո. Գարայանը և դաշնակցական գործիչ Վահան Փափազյանը (Կոմս) հայտարարում են, թե «այլևս սպառած են բոլոր միջոցները, ու քողարկուած ձեռով առաջադրեցին հայ ժողովրդի այսուհետև հետևելիք ուղեգիծը, այսինքն նորեն միջազգային սեղանի վրայ հանել Հայկական հարցը...»⁷:

Այս նիստից հետո Պատրիարքարանի խառը ժողովն ընտրում է այսպես կոչված Ապահովության խորհուրդ՝ որպես Հայկական հարցի լուծմանը նպաստող մարմին, որին տրվում են լիազորություններ՝ մեծ տերությունների հետ բարենորոգումների խնդրի շուրջ բանակցելու համար: Այս մարմնի անդամներ են ընտրվում Եղիշե արքեպ. Դուրյանը (նախագահ), Գրիգոր վարդապետ Պալաքյանը, Ստեփան Գարայանը, Ոսկան Մարտիկյանը, Լևոն Տեմիրճիպաշյանը, Մուրադ Պոյաճյանը և Վահան Փափազյանը:

Եզրակացությունը մեկն է՝ դեպի մեծ տերություններն էին կրկին շրջվել և արևելահայ և արևմտահայ հոգևորական և քաղաքական գործիչները: Մա նշանակում է, որ նրանք որդեգրել էին հակաթուրքական դիրքորոշում: Իսկ դրան ամեն կերպ ցանկանում էր խոչընդոտել թուրքական կառավարությունը, որը ցանկանում էր արևմտահայ ղեկավար շրջաններին կողմնորոշել դեպի բարենորոգումների իր ծրագիրը: Այս մասին վկայող բավական հետաքրքիր փաստեր կարելի է գտնել Կ. Պոլսում հրատարակվող «Ժամանակի» էջերում: «Առանց հայու թիրք չըլլայ, առանց թիրք հայ չըլլայ» վերնագրով հոդվածում մասնավորապես կարդում ենք. «Ելմտական նախկին նախարար Ճեվիտ պեյ, որ այս պահուս Կ. Պոլսոյ այլևայլ թաղերուն մեջ բանախօսութիւններ կատարելով Իթթիհատի ծրագիրը կը պարզէ, Չորեքշաբթի գիշեր Սամաթիոյ Իթթիհատի Քլիւպին մէջ ի ներկայութեան խառն բազմութեան, երկու ժամէ աւելի բուռն բանախօսութիւն մը արտասանեց: ...Ապակենդրոնացման դրութեան անդրադառնալով ըսաւ թէ մենք հոս՝ Կ. Պոլսոյ մէջ երեսփոխանական ժողով մը չենք շնորհք կառավարել, ու մնաց գաւառները, որոնք փոքրիկ էշրաֆները եւ միութիկալիպէները կազմուած փոքրիկ խորհրդարաններ պիտի կառավարեն: Իթթիհատի դէմ եղած անձնական յարձակումներին պատասխանելով նողկանք արտահայտեց և շեշտեց թէ Իթթիհատի ոճիր չէ գործած երբեք ալ չգործէ: Ազգերու համերաշխութեան վրայ խօսելով ծանրացաւ Հայոց մասին: Անցեալին մէջ հայ ազգին քաշած տառապանքը եւ ազատութեանը սիրուն համար անոր ըրած զոհաբերութիւնները

⁶ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, էջ 316:

⁷ Փափազեան Վ., Իմ յուշերը, հ.երկրորդ, Պեյրուք, 1952, էջ 182:

րով ըսաւ թէ հայ ազգը որչափ ալ գանգատներ ունենայ տիրող կառավարութեան դէմ, յիրաւի կամ յանիրաւի: Վստահ եղէք որ առանց Թիւրքիոյ Հայ չկայ, առանց Հայու Թիւրք չկայ: Հայը թուրքին եղբայրն է, ոչ թէ «վաթան գարտաշն է» միայն /հայրենակից եղբայրն / այլ մեր հարազատ եղբայրն է»⁸:

Այս մեջբերումը մի ավելորդ անգամ վկայում է, որ երիտթուրքերն ամեն կերպ ցանկանում էին, որ հայերը հեռու մնան մեծ տերությունների բարենորոգումներով տարվելու ցանկությունից, այն համոզումը փորձելով ներշնչել, որ հայերն ու թուրքերը եղբայրներ են և երիտթուրքերը նրանց դէն ոճիր չեն գործի, միաժամանակ դէմ լինելով ապակենտրոնացմանը: Սակայն, արևմտահայ քաղաքական ուժերի դեպի Ռուսաստանն ունեցած դիրքորոշումն անշրջելի էր:

Կ. Պոլսի ռուսական դեսպանատան գլխավոր թարգման Ա. Մանդելշտամը հենվելով պատրիարքարանի հայկական նախորդ ծրագրերի վրա մշակում է բարենորոգումների 1913 թ. հունիսի 8-ի նախագիծը, որի մեջ խոսք անգամ չկար Արևմտյան Հայաստանի անջատման և հայկական անկախ պետության ստեղծման մասին:

Հայտնի է, որ դիվանագիտական համառ պայքարի արդյունքում դեսպան Գիրսին հաջողվեց համաձայնության գալ թուրքական կառավարության հետ: 1914 թ. հունվարի 26-ին կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիրը՝ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների վերաբերյալ: Թե ինչու այն չիրականացավ՝ հայտնի է: Պարզապէս դարձյալ ցանկանում ենք շեշտել, որ այդ նախագիծը կյանքի կոչելու հնարավորությունները նույնպէս սպառվում էին, քանի որ ակնհայտ էր, որ հասունացող պատերազմի խնդրից զերծ չէր կարող մնալ Թուրքիան: Այս իսկ պատճառով, կարծում ենք, որ թե արևելահայ և թե արևմտահայ գործիչներն առհասարակ պէտք է հեռու մնային մեծ տերությունների ծրագրերով տարվելու ցանկություններից և պահպանեին չեզոքություն: Ակնհայտ է, որ հակառակ կեցվածքով նրանք ավելի էին զագագեցնում երիտթուրքերին: Պատահական չէ, որ նրանք հայագրի իթթիհատական Պ. Հալաճեանի միջոցով փորձում են սիրաշահել արևմտահայ մասնավորապէս դաշնակցական գործիչներին՝ կանխելու համար նրանց կողմնորոշումը դեպի Արևմուտք և Ռուսաստան: Պ. Հալաճյանի բնակարանում տեղի է ունենում հանդիպում Կ. Պոլսի ՀՅԴ մարմնի ներկայացուցիչների հետ: Իթթիհատականներից ներկա էին Թալեաթը, Խալիլը և Միդհատ Շյուքրին, իսկ Դաշնակցության կողմից՝ Ակնունին, Վարդգեսը և Արմեն Գարոն: Երիտթուրքերն առաջարկում էին, ինչպէս վկայում է Վ. Փափագյանը, «Ա) Հաւատ ընծայենք իրենց բարեացակամութեան, Բ) Թէ՛ վճռած են հայկական նահանգներու մէջ արմատական բարեկարգութիւն մտցցնել՝ հիմք ունենալով 1880-ի Արեւելեան Ռումելիի բարեկարգութեան ծրագիրը, Գ) Թէ՛ միեւնոյն հայրենիքի երկու գաւակներն ենք՝ անբաժան, միմեանց կապուած. Դ) Թէ՛ օտարներու խաղաղիք պէտք չէ լինինք. թէ՛ Պօղոս փաշան գործիք է դարձած ռուսերու ձեռքը, պէտք է հրախիբել, որ ան գա Պոլիս եւ իրենց հայտնէ իր բաղձանքները կամ իրենցմէ պահանջէ իր պահանջելիքը...»: Նրանք գտնում են նաև, որ կաթողիկոսի՝ ռուսների դրդամար գործին միջամտելն ապօրինի է և որ «Պատրիարքա-

⁸«Ժամանակ», թիւ 1022, 1912:

րանը Թիւրքիո մէջ է և ոչ մեկ պետութիւն ձեզի չէ տուած այն իրաւունքները, որ մենք տուած ենք յանձին ձեր Ազգային Սահմանադրութեան»⁹:

Սակայն արևմտահայ քաղաքական և հոգևորական գործիչները չեն հավատում իթթիհատականների առաջարկներին: Կարծում ենք, որ նրանք դրա դրդապատճառներն ունենին, բայց նաև դրդապատճառները քիչ չէին՝ մեծ տերություններին էլ չհավատալու համար: Թալեաթը և Նաջի բեյը նույն իթթիհատական Պ. Հալաճյանի միջոցով ցանկանում էին ստիպել Պատրիարքարանին, որպեսզի իրենց հետ վերջինս բանակցություններ սկսի՝ նպատակ հետապնդելով դրանով «պետութեանց միջամտութիւնը արգելելու»¹⁰:

Անշուշտ, կային այնպիսի արևմտահայ գործիչներ, որոնք ցանկանում էին թուրքական իշխանությունների հետ բանակցել: Նրանք ճանաչված էին որպես օտար տերությունների կողմից Հայկական հարցին միջամտելու հակառակորդներ (Մաղաքիա Օրմանյանը, «Մաբահ» թերթի խմբագիր Տիրան Քելեկյանը, Գ. Կյուպենկյանը և ուրիշներ): Սակայն, ինչպես վկայում է Ս. Վրացյանը, հասարակական – քաղաքական ուժերը հիմնականում հակված էին դեպի Ռուսաստան և Եվրոպական տերություններ: Ըստ նրա՝ «Երբ 1912-ին սկսուեց թիւրք-բալկանեան պատերազմը, հայերի մէջ այլևս հաւատ ու խանդավառութիւն չէր մնացել: Պատրիարքարան, կուսակցութիւններ, հանրային կարծիքը, բովանդակ ժողովուրդը եկել էին այն համոզման, որ առանց դրսի միջամտութեան հայերի վիճակը չի բարեփոխուի: Այս տրամադրութեան հետեւանքով էր, որ պատերազմի ընթացքին բուլգարահայութիւնը կազմակերպեց Թիւրքիայի դէմ Անդրանիկի կամաւորական խումբը»¹¹:

Իթթիհատականների հետ մի հանդիպման մասին է խոսում նաև Արմեն Գարոն, որը տեղի է ունենում նաև Խալիլ փաշայի տանը 1914 թ. հունիսին: Ելույթ է ունենում Թալեաթը, որը փորձում է համոզել, որ իրենք իրենց կամքին հակառակ չեն կարողացել մինչ օրս զոհացնել հայերի պահանջները, լուծել հողային և դպրոցական, կառավարման մարմիններում հայ պաշտոնյաների քանակի ավելացնելու և այլ խնդիրները: Նա մեղադրում է հայերին, որ փոխանակ իրենց հետ համաձայնության գալու փոխարեն արտաքին միջամտության դիմելու համար¹²:

Սակայն հայերը նրանց առաջարկները չեն ընդունում, որը Վ. Փափագյանը համարել է «անըմբռնելի յանդգնութիւն», «որուն արդիւնքը վայելեցինք 3 տարի վերջը»:

Մեկ ուրիշ հանդիպում էլ տեղի է ունենում այդ օրերին Սկյուտարի զինվորական կառավարիչ Ջեմալ փաշայի հետ, որին ներկա էին Արմեն Գարոն, Ակնունին, Վարդգեսը, Հրաչ Թիրյաքյանը, Վահագն Տաթևյանը և Վահան Փափագյանը: Ջեմալը մեղմորեն նույն հորդորն է անում հայերին և հասկացնում, որ «Օտարները իրենց շահերուն համար պիտի ջանան շահագործել մեր վիճակը, բայց դուք պիտի հասկանաք վերջապէս, որ մենք չենք կրնար հաշտուիլ այն դիրքին հետ, որ դուք եք բռնած, հետեւանքները անդարմանելի կրնան դառնալ...»¹³:

⁹ Փափագեան Վ., նշվ. աշխ., էջ 190 - 191:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 107, թ. 16:

¹¹ Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Պէյրութ, 1958, էջ 4:

¹² Արմեն Գարո, Ապրուած օրեր, Բոստոն, 1948, էջ 196-197, տե՛ս նաև նույնի՝, Մեր վերջին տեսակցութիւնը Թալեաթ փաշայի հետ, «Հայրենիք», Բոստոն, 1922, նոյեմբեր, թիւ 1, էջ 39-43:

¹³ Փափագեան Վ., նշվ. աշխ., էջ 192:

Այսպիսով, արևմտահայ հասարակական - քաղաքական կյանքում իշխում էր այն մտայնությունը, որ արևմտահայության փրկությունը կախված է Ռուսաստանից, որի հետևանքների մասին նախագգուշացնում էին իթթիհատականները: Բայց այդ նախագգուշացումները հաշվի չէին առնվում, հիմնականում այն համոզմունքից ելնելով, որ Թուրքիան այլևս անգոր է որևէ բան անելու: Այս առումով հայ քաղաքական միտքը խորաթափանց չգտնվեց:

Եվ նաև այս պատճառով առաջին համաշխարհային պատերազմում արևմտահայերին հասցված աղետը աննախադեպ եղավ, քանի որ մոռացվում էր, որ գրեթե ամբողջ 19-րդ դարում արևմտահայությունը, տարվելով ռուսական քաղաքականությամբ, վերջում միայն ու միայն խաբվել էր: Այնպես, որ կարելի է համաձայնվել Լ. Չորմիսյանի հետ, որը գրում է, որ թուրքերը «խորհուրդ տուին, թելադրեցին, որ հայերը հրաժարուն էն Եվրոպական պետութեանց պաշտպանութեուն էն եւ իրենց հետ համախորհուրդ լուծումներ գտնեն Հայկական խնդրին: Հայերը վստահութիւն չէին կրնար ունենալ եւ չունեցան թուրքերու վրայ: Ինչպես հին թուրքերը, նորերն էլ ցույց տուած էին Ըումելիի և Արաբիոյ դէպքերուն ընթացքին փոքրամասնութիւններու հանդէպ իրենց զգացումները եւ քաղաքականությունը: Ընդհանուր օրենք է նոյնպէս, որ որևէ պետություն իր պարտության եւ սկարտության պահուն միայն կը հաշտվի սա կամ նա քաղաքական զիջումին: Հայ դէկավարները ամենեն նպաստավոր եւ հարմար քաղաքական պահը կը նկատեին թուրքերուն պարտությունը: Նման պատեհութենե օգտվիլ ուզողը պարտավոր է հաշվի առնել նաև հակառակորդին հավանական վերաբերումը, երբ պայմանները ավելի նպաստավոր դարձվածք մը ստանան իր հանդէպ»¹⁴:

Կ. Պոլսի հանրային – քաղաքական գործիչների քաղաքական հայեցակետը մեծամասամբ իշխում էր նաև Թուրքիայի հայկական նահանգներում: Թեև Դաշնակցություն կուսակցությունը 1913 թ. օգոստոսին Էրզրումում գումարված յոթերորդ Ընդհ. ժողովում, ընդունեց ճիշտ որոշում, որն էր՝ «Քաղաքական բարդութիւններու ատեն՝ համախորհուրդ ընկերվարական միւս կուսակցութիւններուն՝ օրինական բոլոր հնարաւոր միջոցներով կանխել զինուած ընդհարումները, իսկ պատերազմի պարագային ամեն քաղաքացի կը կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը իր պետութեան հանդէպ»¹⁵, բայց գործնականում շեղվեց դրանից:

Հնչակյան կուսակցության արևմտահայ ներկայացուցիչները նույնպես Հայկական հարցի վերաբացման շրջանում կողմնորոշվել են դեպի մեծ տերությունները:

Այսպես, հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը 1913 թ. կանխագգալով մոտալուտ արյունալի պատերազմի սպառնալիքը, կոչ էր անում եվրոպական ժողովուրդներին և պետություններին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով Հայկական հարցի և բնաջնջման սպառնալիքի տակ գտնվող արևմտահայության վրա:

1913 թ. հունվարի 25-ին բավական հետաքրքիր մի շրջաբերականով է հանդես գալիս այս կուսակցության Վասպուրականի մարմինը: Դրանով նա հայ բո-

¹⁴ Չորմիսյան Լ., Կուսակցութիւնները, Երևան, 1995, էջ 63-64:

¹⁵ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 81ա, թ. 4:

լոր քաղաքական կուսակցություններին, չնայած ծրագրերի տարբերությանը համախմբվելու կոչ է անում:

«Մեր հայրենիքին այս պահուս անցուցած պատմական մեծ տագնապը, - կարդում ենք այնտեղ, - հրամայական պարտականություն մը կդնէ գործող կուսակցություններուն վրայ, մնալով հանդերձ իրաքանչիւրն իր ծրագրին եւ տակտիկին սահմաններուն մէջ, համաձայնութեան մը գալ համագային բնոյթ ունեցող հրատապ խնդիրներուն շուրջ»¹⁶:

Հետսահմանադրության շրջանում հնչակյաններն առաջ էին քաշում Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը, իսկ Հայկական հարցի վերաբացման շրջանում նրանք նույնպես կողմնորոշվում են դեպի մեծ տերությունները:

1913թ. հունվարի 30-ին Փարիզում Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության՝ եվրոպական մեծ պետություններին ուղղված կոչում նշվում է, որ Օսմանյան կայսրությունում «սիսկիւր ճնշումներն ու կոտորածները դարձել են ծրագրված անհնարական քաղաքականութիւն, որին դիմել են սուլթաններն ու ամէն անգամ, երբ ուզեցել են ոչնչացնել իրենց իշխանութեան տակ հեծեժող այս կամ այն քրիստոնէայ ժողովուրդին»¹⁷:

Կոչում առաջ էր քաշված բարենորոգումների իրականացման և Արևմտյան Հայաստանի ինքնավարության խնդիրը¹⁸:

Այսպիսով, հնչակյանները նույնպես որդեգրել էին քաղաքական այն ուղղությունը, որին հետամուտ էին վերոհիշյալ հոգևորական և քաղաքական գործիչները:

Հայկական հարցի վերաբացման շրջանում գրեթէ նույն դիրքորոշումն է որդեգրում Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը ևս: 1913թ. հունվարի 5. Պոլսում գումարվում է վերջինիս Բ համագումարը: Հայկական հարցի վերաբերյալ զեկուցումով է հանդես գալիս Ա. Ալպոյաճյանը: Վերջինս խոսելով Ազգային պատվիրակության գործունեության մասին, շեշտում է, որ այն որոշակի հույսեր է ներշնչում, սակայն մեծ տերությունների քաղաքական մրցակցությունը կարող է առավել վատթարացնել դրությունը¹⁹:

ՀՄՌԿ այս համագումարը նախագահող Տիրան Քելեկյանի «խորաթափանց միտքը նշեց մօտալուտ պատերազմի մը հաւանակութիւնը եւ որոշում առնուեցաւ Արեւելեան նահանգներուն մէջ մղում տալ ինքնապաշտպանութեան գործին...»²⁰:

Վերջնական եզրակացությունը մեկն է՝ Բարենորոգումների կամ, որը նույնն է մեծ տերությունների կողմից Հայկական հարցի լուծմանն էին հակված արևմտահայ հասարակական – քաղաքական գրեթէ բոլոր շրջանները, անկախ այն հանգամանքից, որ այդ խնդրում որոշ ուժեր ցանկանում էին հանդես բերել զգուշություն և չանտեսել արևմտահայության ինքնապաշտպանության կազմա-

¹⁶ *Մտեփանյան Մ.*, Սոցիալ - դեմոկրատ հնչակյան կուսակցությունը առաջին աշխարհամարտի և հայոց ցեղասպանության ժամանակաշրջանում., Երևան, 2005, էջ 26:

¹⁷ Հիսնամեակ սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան, Ֆրեզոն, 1938, էջ 265-267:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ *Չարքինեան Ա.* Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 209:

²⁰ Ռանկավար Ազատական կուսակցութիւն, ծրագիր եւ գաղափար, Երևան, 1991, էջ 66:

կերպման անհրաժեշտությունը: Սակայն ինչքան էլ ցանկանային՝ այդ ինքնապաշտպանության կազմակերպման համար կորցրել էին ժամանակն ու հնարավորությունը: Եվ պատահական չէ, որ Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնավորումով բոլորին մնում էր սպասել ռուսական զենքի հաղթանակին, հաղթանակ, որը ռուսական կողմը անեննին չպայմանավորեց նաև արևմտահայությանը շուտափույթ կերպով ազատագրելու կամ ավելի ձիշտ՝ Արևմտյան Հայաստանն արագորեն գրավելու անհրաժեշտությամբ:

Асмик Чахмачян - *Отношение духовных и политических организаций к вопросу проведения реформаций в Армении 1912 – 1914 гг.* - Данная статья посвящена вопросу отношения западных духовно - политических организаций к проблеме проведения реформаций в Западной Армении. В рамках данной работы мы попытались доказать, что к проведению преобразований со стороны Великих держав и решению армянского вопроса были склонны почти все общественно – политические круги Западной Армении, не зависимо от тех обстоятельств, что некоторые силы стремились внести некие меры предосторожности, не пренебрегая необходимостью создания самооборонительной системы жителями Западной Армении. Однако, сколько бы они этого не желали, для создания самообороны были упущены и время, и возможности. Совершенно не случайным является тот факт, что с самого начала разразившейся мировой войны, ничего не оставалось делать, как только ожидать победы русского оружия, победы, которую русская сторона совершенно не обуславливала необходимостью немедленного освобождения или, скорее, скорого захвата Западной Армении.

Hasmik Chakhmachyan - *The attitude of Western Armenian religious and political administrations towards the issue of implementation of Reforms during the years 1912 – 1914* - The present article focuses on the attitude of Western Armenian religious and political administrations towards the issue of Reform implementation in Western Armenia. Here are presented the attempts to prove that Reform implementations by Great Powers with the aim of resolution of the “Armenian Question” were welcomed by almost all social and political areas of Western Armenia, despite the fact that some powers were tending to bring forth a kind of wariness towards that issue, emphasizing the need for organization of self-defense. However, no matter how hard they wanted it to be, the organization of self-defense required time and ability which they were actually missing. It is no coincidence that as the World War broke out everybody had to do nothing but wait on the victory of the Russian arms, a kind of victory which the Russian party did not attribute to the need of prompt liberation or to be more precise of immediate capture of Western Armenia.

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1998-2005 ԹԹ.)**

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՏԵՏԵՑԱՆ

Տարածաշրջանային համագործակցության և ինտեգրման հարցերը կարևոր տեղ են զբաղեցնում Եվրոպական կառույցների՝ Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի շրջանակներում: Տարածաշրջանային համագործակցությունը կարևորվում է ոչ միայն տնտեսական զարգացման, այլև հակամարտությունների կարգավորման և կայունության հաստատման տեսանկյունից: Հողմածի շրջանակներում քննվում են Հարավային Կովկասում Եվրոպական կառույցների կողմից տնտեսության, խորհրդարանական համագործակցության, մշակույթի, կրթության և մի շարք այլ ոլորտներում ներկայացված նախաձեռնությունները և դրանց արդյունքները:

Բանալի բառեր. Հարավային Կովկաս, Եվրոպական միություն, Եվրոպայի խորհուրդ, տարածաշրջանային համագործակցություն, ինտեգրացիա

Եվրոպական կառույցների և հարավկովկասյան պետությունների հարաբերություններում կարևոր տեղ է զբաղեցնում տարածաշրջանային համագործակցության հարցը: Եվրոպական միությունը (ԵՄ), Եվրոպայի խորհուրդը (ԵԽ) մեծ տեղ են հատկացնում տարածաշրջանային համագործակցության և ինտեգրման հարցերին, ինչն առաջ է քաշվում Հարավային Կովկասի պետությունների վերաբերյալ այս կառույցների կողմից ընդունված գրեթե բոլոր առանցքային նշանակություն ունեցող փաստաթղթերում: Բազմաթիվ զարգացած երկրներ Ժամանակի ընթացքում ընտրել էին տարածաշրջանային ինտեգրման ճանապարհը, որը կարևոր դեր էր ունեցել կայունության և հակամարտությունների կանխարգելման հարցում¹: Դրա վառ օրինակը Եվրոպական միությունն էր, որը ստեղծվել էր Գերմանիայի և Ֆրանսիայի միջև ընթացող ամենամահաբեր հակամարտության ավերակների վրա²: Այն դարձավ Եվրոպայի վերածնման գրավականը: Պատահական չէր, որ տարածաշրջանային համագործակցության հարցը Եվրոպական կառույցների կողմից առաջ էր քաշվում այլ երկրների հետ հարաբերություններում: Բացառություն չէին Հարավային Կովկասի պետությունները:

Տարածաշրջանային համագործակցության և ինտեգրման համար առաջնային նշանակություն ունի փոխվստահության մթնոլորտի հաստատումը: Եվրոպական կառույցներում իշխում էր այն տեսակետը, որ վստահության չափազանց բարձր մակարդակ առկա է ժողովրդավարական կառավարում ունեցող երկրների միջև: Հետևաբար Եվրոպական կառույցները՝ կարևոր տեղ էին հատկացնում

¹ St' u Report on the Implementation of the European Commission's External Assistance, Situation at 01.01.01, p. 8, European Commission, EuropeAid Co-operation Office D (2001) 32947, Staff Working Document, http://ec.europa.eu/europeaid/sites/devco/files/annual-report-2001-ec-development-external-assistance-implementation-1_en.pdf (23.09.14,12:12):

² St' u «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 8 հոկտեմբեր 2011, թիվ 183

Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում ժողովրդավարության կայացմանն ուղղված քայլերին:

Հարավային Կովկասում տարածաշրջանային ինտեգրման փորձ էր արվել առաջին համաշխարհային պատերազմից հետո: Մեծ տերությունների Լոնդոնի խորհրդակցության ժամանակ (1920 թ. փետրվար–մարտ) բրիտանական դիվանագիտության ներկայացուցիչ Ռոբերտ Վանսիթարթի կողմից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակություններին առաջարկ էր արվել համաձայնության գալ համադաշնության (կոնֆեդերացիայի) հարցում և կազմել միասնական դաշինք (բլոկ), հակառակ դեպքում Անտանտի Գերագույն խորհուրդը մասնակցություն չէր ունենա Հարավային Կովկասի հետագա ճակատագրում³: Պատմական այդ ժամանակափուլում, Հարավային Կովկասի հանրապետությունների միջև առկա էին վիճահարույց տարածքային խնդիրներ, հետևաբար գրեթե անհնար էր ստեղծել համադաշնություն: Դրա ապացույցը Անդրկովկասյան Մեյմի գործունեությունն էր (1918 թ. փետրվար–մայիս), որտեղ Վրաստանի և Ադրբեջանի իշխող քաղաքական ուժերը առաջնորդվելով սեփական հավակնոտ ազգային ու տարածքային նկրտումներով՝ ի չիք դարձրեցին Հարավային Կովկասում դաշնային պետություն ստեղծելու հնարավորությունները: Խորհրդային իշխանությունները՝ անտեսելով տարածաշրջանում առկա ազգային և տարածքային խնդիրները, 1922 թ. ստեղծեցին Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միությունը (ԱԽՍՀՖՄ), ավելի ուշ՝ Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը (ԱԽՖՍՀ): Ինչպես հայտնի է ԱԽՖՍՀ-ն լուծարվեց 1936 թ., իսկ այս ոլորտում առկա խնդիրները շարունակվեցին հետագա տարիներին:

Այս բոլոր խնդիրները հայտնի էին նաև Եվրոպական քաղաքական, հասարակական գործիչներին: Դեռևս 1996 թ. սեպտեմբերին մասնագիտությամբ պատմաբան Էլեն Կարեր Դ'Անկուսը՝ Եվրոպական խորհրդարանին ներկայացրել էր ԵՄ-ի և Անդրկովկասի երկրների միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ զեկույց, որտեղ նշվում էր, որ «Անդրկովկասը իրական աշխարհագրական հասկացություն է, երբեք երկարաժամկետ քաղաքական միավոր չի եղել»⁴:

1990-ական թթ. առաջ քաշվեց Հարավային Կովկասում անվտանգության համակարգ ստեղծելու հարցը: Թեև նման համակարգ ստեղծելու անհրաժեշտության հարցում համաձայն էին բոլոր շահագրգիռ կողմերը, սակայն դրա մասնակիցների թվի և կազմի վերաբերյալ կային լուրջ տարակարծություններ, ինչպես Հարավային Կովկասի երկրների այնպես էլ տարածաշրջանում իրենց հետաքրքրություններն ունեցող պետությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի միջև: Եվրոպական քաղաքական հետազոտությունների կենտրոնի (Բրյուսել) տնօրեն Մայքլ Էմերսոնը և կենտրոնի փորձագետներ՝ Սերգիու Չելակը, Նատալի Տոչիխն 2000 թ. ապրիլին ներկայացրեցին «Հարավային Կովկասում կայունության դաշնագրի» նախագիծ, որը միտված էր գտնել տարածաշրջանա-

³ Տե՛ս *Аветисян Г.*, К вопросу о “Кавказском доме” и пантюркистских устремлениях, Центральная Азия и Кавказ, М., 1997, с.153:

⁴ Եվրոպական խորհրդարան. Նստաշրջանի փաստաթղթեր, Ձեկուցագիր Եվրոպական Միության և Անդրկովկասի երկրների միջև հարաբերությունների զարգացման վերաբերյալ, Ձեկուցող Դ'Անկուս Էլեն Կարեր, Եր., 1997, էջ 13:

յին համագործակցության համար արդյունավետ ուղիներ: Հետագայում «Կովկասյան պակտի» համահեղինակ Ս.Չելակը առանձնացնում էր նվազագույնը երկու պատճառ, որոնք խոչընդոտեցին համաձայնագրի կայացմանը. ազգային պետականության կայացումը գերակա էր տարածաշրջանային համագործակցության նկատմամբ և հակամարտությունների կարգավորումը կամ այդ ուղղությամբ շոշափելի առաջընթացը կարևորագույն նախապայման էին տարածաշրջանային համագործակցության կայացման և զարգացման համար⁵:

Առաջ քաշվեց նաև տարածաշրջանային երկրների միջև տնտեսական համագործակցության գաղափարը. տնտեսական հարաբերությունները կարող էին հիմք դառնալ քաղաքական կայունության համար: Տնտեսական ոլորտում ինտեգրացիոն գործընթացները կարող էին արդյունավետ լինել միայն լիովին ձևավորված ազգային տնտեսական համակարգի և համապատասխան լծակների առկայության դեպքում: Դրանց բացակայության պարագայում տնտեսական ոլորտում ինտեգրման հնարավորությունները խիստ սահմանափակ էին⁶: Բացի այդ, ինչպես նշում էր Կ.Հաջինը, բացի խողովակաշարերից, դժվար էր գտնել այլ տնտեսական դրդապատճառներ, որոնք կարող էին խթանել հարավկովկասյան տարածաշրջանում ինտեգրացիոն միտումները⁷: Այս ոլորտում, ինչպես հայտնի է համագործակցություն հաստատվեց Վրաստանի ու Ադրբեջանի միջև. 1999 թ. ապրիլին շահագործման հանձնվեց Բաքու-Սուփսա խողովակաշարը, նույն թվականի դեկտեմբերին ԵԱՀԿ Ստամբուլի վեհաժողովի ժամանակ ստորագրվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման վերաբերյալ համաձայնագիրը: Դրա հետևանքով տարածաշրջանում ստեղծվեց տնտեսական անհավասարակշռություն, ինչը չփոխվեց նաև Եվրոպական միության կողմից երկու նախաձեռնությունների՝ ՏՐԱՍԵԿԱ-ի (TRACECA Transport Corridor Europe – Caucasus – Asia) և ԻՆՈԳԵՏԹ-ի (INOGATE Interstate Oil and Gas Transportation System) մեկնարկից հետո: ՏՐԱՍԵԿԱ ծրագիրը մեկնարկել էր 1993 թ. մայիսին Բրյուսելում՝ Միջին Ասիայի հինգ երկրների և Հարավային Կովկասի հանրապետությունների առևտրի և տրանսպորտի նախարարների մասնակցությամբ կայացած կոնֆերանսի ընթացքում: ԵՄ-ն առաջարկում էր ստեղծել այլընտրանքային ուղիներ, որոնք արդեն գոյություն ունեցող ավանդական ուղիների հետ միասին կնպաստեն այս երկրների տնտեսական և քաղաքական անկախությանը: Այն պետք է նպաստեր տարածաշրջանային համագործակցությանը, միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից ներդրումների ավելացմանը⁸: Պարբերաբար շեշտվում էր ՏՐԱՍԵԿԱ-ի տնտեսական ուղղվածությունը, մինչդեռ ծրագրի իրագործման առաջին փուլում բացահայտվեց քաղաքական շահերի առաջնահերթությունը: Դա դրսևորվեց 1998 թ. սեպտեմբերին Բաքվում կայացած ՏՐԱՍԵԿԱ ծրագրի միջազգային կոնֆերանսի ընթացքում: Նախապես ծրագրվել էր ՏՐԱՍԵԿԱ-ի մասնակից պետությունների դեկավարների մակարդակով վեհաժողով կազմակերպել Թբիլիսիում: Հետագայում որոշվեց հանդիպումն անց-

⁵ St 'u *Челак С.*, Южный Кавказ в проекте Расширенного Черноморского региона, Южный Кавказ как часть Большой Европы, (Материалы конференции), Ер., 2005, с. 45:

⁶ St 'u *Шапиро Н.*, Интеграция стран СНГ: политический и экономико-теоретический аспект, Мировая экономика и международные отношения, № 7, 2000, с. 83:

⁷ St 'u *Гаджиев К.*, Геополитика Кавказа, М., 2003, с. 95:

⁸ St 'u ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 5, գ. 58. թ. 65:

կացնել Բաքվում: Դրա հետևանքով Հայաստանը հայտնվում էր երկրորդական դերում և նախապես զրկվում էր խորհրդաժողովին մասնակցելու հնարավորությունից, խախտվում էր հարաբերական հավասարակշռությունը, տարածաշրջանի երկրների հարաբերություններում արհեստականորեն նոր լարվածություն էր առաջանում⁹: Բացի այդ, այս նույն խորհրդաժողովի ընթացքում պայմանագրի ստորագրումից հետո, Ադրբեջանի նախագահ Ն.Ալիևի կողմից կատարվեց վերապահում, համաձայն որի պայմանագրի պարտավորություններից ոչ մեկը չէր իրականացվելու Ադրբեջանի կողմից այն բեռնափոխադրումների նկատմամբ, որոնց համար Հայաստանը համարվում էր սկզբնական, տարանցիկ կամ վերջնական տարածք¹⁰: Հետևաբար, ՏԲԱՄԵԿԱ-ն դարձավ յուրօրինակ փորձաքար, որը բացահայտեց, թե Հարավային Կովկասի հանրապետություններից յուրաքանչյուրն ինչ նպատակներ էր հետապնդում և կարող էին արդյոք փոխշահավետ տնտեսական համագործակցության ծրագրերը նպաստել քաղաքական խնդիրների կարգավորմանը¹¹:

Եվրոպական կառույցների կողմից փորձեր արվեցին տարածաշրջանային համագործակցությունը խթանել այլ ոլորտներում: Տարածաշրջանային համագործակցության հարցը 2002 թ. մայիսին Վիլնյուսում տեղի ունեցած ԵՄ Նախարարների կոմիտեի 110-րդ նստաշրջանի գլխավոր թեմաներից մեկն էր: Նախատեսվում էր տարածաշրջանային համագործակցության համար օգտագործել բոլոր հնարավորությունները. եթե կառավարությունների մակարդակով այն հնարավոր չէր, խրախուսել նման համագործակցությունը խորհրդարանների, տեղական իշխանությունների, ոչ կառավարական կազմակերպությունների և այլ մակարդակներում¹²:

Հարավային Կովկասի երկրների միջև միջխորհրդարանական համագործակցության առաջարկով 1998 թ. հանդես էր եկել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը, ինչը հավանության էր արժանացել ԵՄԽՎ-ի նախագահ Լորդ Ռասել-Չոնսթոնի կողմից: Երեք երկրների խորհրդարանների ղեկավարների առաջին հանդիպումը տեղի ունեցավ Ստրասբուրգում 1999 թ. մարտի 15-ին: Այդ հանդիպման ավարտին ստորագրված համատեղ հռչակագրում նշվում էր, որ նախաձեռնությունը կոչված էր նպաստելու ժողովրդավարական ինստիտուտների ուժեղացմանը, հակամարտությունների կարգավորմանը և այս պետությունների ԵՄ-ին անդամակցության գործընթացին¹³: Մեկ տարի անց՝ 2000 թ. մայիսին ԵՄԽՎ-ի նախագահ Լորդ Ռասել-Չոնսթոնի և հարավկովկասյան հանրապետությունների խորհրդարանների նախագահների հանդիպման ժամանակ կողմերը պայմանավորվեցին երեք երկրների խորհրդարաններում ստեղծել տարածաշրջանային համագործակցության հարցերով հատուկ խումբ, ինչպես նաև մշտապես գործող եռակողմ խորհրդարանական խումբ՝ ԵՄԽՎ-ի հովանու ներքո¹⁴: ԵՄ-ի կողմից տարածաշրջանային միջխորհրդարանական համագոր-

⁹ Նույն տեղում՝ թ. 16:

¹⁰ Տե՛ս նաև ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 5, գ. 58, թ. 151:

¹¹ Տե՛ս *Мартиросян А., Петросян Д.*, Армения и проект восстановления “Великого Шелкового пути”, Центральная Азия и Кавказ, № 1, 1998, с. 77:

¹² Տե՛ս նաև ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց. 9, գ. 68, թ. 39:

¹³ Տե՛ս նաև “Свободная Грузия”, 16 марта 1999, № 49:

¹⁴ Տե՛ս նաև «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 7 մայիս 2000, թիվ 84:

ծակցությունը ակտիվացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկվեցին 2004 թ.: Ընդունվեցին ԵՖՄՎ թիվ 1361 բանաձևը՝ ԵՄ-ի առջև Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ և թիվ 1358 բանաձևը՝ Ադրբեջանում ժողովրդավարական կառույցների գործունեության վերաբերյալ: Երկու բանաձևերում ԵՖՄՎ-ն կոչ էր անում վերականգնել խորհրդարանական համագործակցության ձևաչափը¹⁵: Պետք է նշել, որ այս հանդիպումները նպաստեցին երեք երկրների խորհրդարանական շփումների ակտիվացմանը, մինչև նույն ժամանակ կրում էին հիմնականում դեկլարատիվ բնույթ:

Մշակույթը համարվում է այն ոլորտը, որտեղ նույնիսկ քաղաքական հակամարտության մեջ գտնվող պետությունները կարող են գտնել համագործակցության եզրեր: ԵՄ-ի կողմից իրականացվեցին տարածաշրջանային մշակութային նախաձեռնություններ: ԵՄ-ի Օժանդակություն Մեծ Եվրոպայում արվեստի և մշակույթի զարգացմանը (Support for Transition in the Arts and Culture in Greater Europe (STAGE) ծրագրի շրջանակներում տեղի էին ունենում Հարավային Կովկասի հանրապետությունների մշակույթի նախարարների հանդիպումներ: Այդպիսի հանդիպումներ տեղի ունեցան Ստրասբուրգում (2000 թ.), Մոնթրեոյում (2002 թ.), Անթալիայում (2003 թ.), Մոսկվայում (2004 թ.)¹⁶: Այս ծրագիրը կոչված էր միջմշակութային երկխոսության ճանապարհով նպաստել Կովկասում կայունության հաստատմանը: Ավելի ուշ հիմնադրվեց Կիևյան նախաձեռնությունը՝ Հարավային Կովկասի երկրների, Մոլդովայի և Ուկրաինայի մասնակցությամբ: Տարածաշրջանային նշանակության ծրագրեր իրականացվեցին նաև ԵՄ-ի մեկ այլ՝ Մշակութային ուղիներ նախաձեռնության շրջանակներում¹⁷: Նման նախագծերի հաջողության գրավականը մասնակից պետությունների կողմից միմյանց արժեքների նկատմամբ հարգանքի և հոգածության առկայությունն էր և այդ ոգով ձևավորված մշակութային քաղաքականությունը: Սակայն այս ոլորտում տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները, կասկածի տակ էին առնում նաև մշակութային համագործակցության առումով դրական արդյունքներ ունենալու հեռանկարը: Ապացույցը 2005 թ. դեկտեմբերին ադրբեջանական իշխանությունների կողմից Նախիջևանի Հին Ջուղայի հայկական գերեզմանատան տասնհազարից ավելի խաչքարերի ոչնչացումն էր, ինչից հետո ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԵՖՄՎ-ի ներկայացուցիչներին հնարավորություն չտրվեց այցելել Ջուղա: Մինչդեռ 2005 թ. դեկտեմբերից Ադրբեջանը Կիևյան նախաձեռնության մասնակից պե-

¹⁵ Տե՛ս ՝ u Resolution 1361 (2004) Honouring of obligations and commitments by Armenia, Assembly debate on 27 January 2004 (3rd Sitting) (see Doc.10027, report of the Committee on the Honouring of Obligations and Commitments by Member States of the Council of Europe (Monitoring Committee), co-rapporteurs: Mr André and Mr Jaskiernia), Text adopted by the Assembly on 27 January 2004 (3rd Sitting), http://www.coe.am/en/docs/pace/resolution_1361.pdf (03.10.14, 16:20), Resolution 1358 (2004) Functioning of democratic institutions in Azerbaijan, Assembly debate on 27 January 2004 (2nd Sitting) (see Doc.10030, report of the Committee on the Honouring of Obligations and Commitments by Member States of the Council of Europe (Monitoring Committee), co-rapporteurs: Mr Gross and Mr Martínez Casañ), Text adopted by the Assembly on 27 January 2004 (2nd Sitting), <http://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17178&lang=en> (03.10.14, 16:17):

¹⁶Support for Transition in the Arts and Culture in Greater Europe (STAGE), http://www.coe.int/t/dg4/cultureheritage/Culture/Completed/STAGE/intro_en.asp#TopOfPage (03.10.14,16:16):

¹⁷ Տե՛ս ՝ u ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց.10, գ. 55, թ. 61:

տություններից մեկն էր¹⁸: Բացի այդ, Ադրբեջանը վավերացրել էր Եվրոպական մշակութային կոնվենցիան, որը ստորագրած յուրաքանչյուր պետություն. օրը հսկողության տակ գտնվող եվրոպական մշակութային արժեք ունեցող առարկաներին վերաբերվում է որպես Եվրոպայի ընդհանուր ժառանգության մասի, համապատասխան միջոցներ է ձեռնարկում դրանց պահպանության համար և ապահովում է դրանց ողջամիտ մատչելիությունը¹⁹:

Ավելին, հայկական նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները հաճախ յուրացվում էին և ներկայացվում իբրև ադրբեջանական: Պետք է նշել, որ այս ոլորտում հակասություններ կային նաև Վրաստանի և Ադրբեջանի իշխանությունների միջև՝ մասնավորապես Դավիդ-Գարեջա վանական համալիրի շուրջ:

Մյուս ոլորտը, որտեղ հնարավոր էր գտնել համագործակցության եզրեր՝ զբոսաշրջությունն էր: 1999 թ. ապրիլին Միջազգային զբոսաշրջության գործակալության նախագահ Ֆ.Ֆրանջելինիի նախաձեռնությամբ Թբիլիսիում կազմակերպվել էր «Խաղաղ Կովկաս՝ միասնական զբոսաշրջության տարածք» միջազգային տոնավաճառ²⁰: Հետագայում նման նախաձեռնությունները շարունակվեցին, սակայն դրանք չունեցան դրական արդյունքներ, քանի որ ինչպես հայտնի է Ադրբեջանում կազմվել էր «persqna nqn-grata» հայտարարված մոտ 300-ից ավելի քաղաքական, հասարակական, մշակութային նշանավոր գործիչների և գիտնականների անուններ պարունակող «սև ցուցակ», որտեղ ընդգրկված են բոլոր նրանք, ովքեր այցելել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Կրթության ոլորտում ԵՄ-ը քայլեր ձեռնարկեց Հարավային Կովկասում տարածաշրջանային նախագծերի իրականացման ուղղությամբ: ԵՄ-ի Գլխավոր քարտուղարի նախաձեռնությամբ 1997 թ. Թբիլիսիում կայացած Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի կրթության նախարարությունների ներկայացուցիչների հանդիպման ընթացքում ստեղծվեց «Թբիլիսյան նախաձեռնությունը», որի նպատակը Կովկասի պատմության ձեռնարկ ստեղծելն էր: ԵՄ-ի Գլխավոր քարտուղարն այդ նախաձեռնությանը հատուկ քաղաքական նշանակություն էր տալիս՝ համարելով, որ այն կաջակցի Կովկասում հակամարտությունների կարգավորմանը²¹: Այս նախաձեռնությանը միանալու ցանկություն հայտնեց նաև Թուրքիան: Դասագրքի աշխատանքները ձգձգվեցին, ապա դադարեցվեցին, քանի որ ադրբեջանական կողմից ներկայացվում էր կեղծված և խեղաթյուրված պատմություն, յուրացվում էին հայկական և պարսկական արժեքներն ու տարածքները: Հայկական կողմը չէր ընդունում 1915 թ. հայոց ցեղասպանության վերաբերյալ ԵՄ-ի փոխզիջումային տարբերակը. ցեղասպանությունը զրել չակերտներում՝ տողատակում բացատրության մեջ նշելով, որ որոշ երկրներ այն որակում են որպես ցեղասպանություն²²:

¹⁸ Կիևյան նախաձեռնությունը մշակութային համագործակցության տարածաշրջանային ծրագիր էր, որին մասնակցում էին Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Ուկրաինան և Մոլդովան: Ծրագիրը կյանքի էր կոչվել 2005 թ. դեկտեմբերի 15-16-ը Կիևում կայացած խորհրդակցության ժամանակ:

¹⁹ Եվրոպական մշակութային կոնվենցիա, 19 դեկտեմբեր 1954, http://www.coe.am/docs/signe_dand_rati_fied/018.pdf (25.10.14, 10:50):

²⁰ Տե՛ս «Свободная Грузия», 29 апреля 1999, № 84:

²¹ Տե՛ս ՆԱՀԱԳՆ պատմադիվանագիտական բաժնի, ց. 6, գ. 34, թ. 7:

²² Տե՛ս <http://www.aravot.am/2005/07/20/321328/>

ԵՄ-ի նախաձեռնությունների շրջանակներում 2000 թ. մայիսին Ծաղկաձորում կայացավ «Ազգային քաղաքականությունը և տարածաշրջանային համագործակցությունը կրթության որակի վերահսկման ոլորտում» խորագրով նախարարների մակարդակով առաջին տարածաշրջանային կոնֆերանսը²³: 2000 թ. ԵՄ-ի կողմից հիմնադրվեց տարածաշրջանային ծրագիր՝ «Կրթության քաղաքականությունը և փոքրամասնությունները», որին պետք է մանակցեին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Բելոռուսի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի ներկայացուցիչները²⁴:

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում տարածաշրջանային նախագծեր իրականացվեցին ԵԱՀԿ-ի կողմից: Առաջինը՝ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպության (ՆԱՏՕ) կողմից նախաձեռնած «Գիտությունը հանուն խաղաղության և անվտանգության» ծրագիրն էր, որի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել Հարավային Կովկասի՝ մասնավորապես Կուր և Արաքս գետերի ավազանի ջրային ռեսուրսների որակի և քանակի մոնիտորինգ: Երկրորդը՝ ՄԱԿ-ի և ԵԱՀԿ-ի կողմից համատեղ իրականացվող «Շրջակա միջավայր և անվտանգություն» նախաձեռնությունն էր (Environment and Security Initiative (ENVSEC): Վերջինը նախատեսում էր շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում տարածաշրջանային համագործակցության հաստատում, Հարավային Կովկասի հանրապետություններում շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում առկա իրավիճակի գնահատում և նախագծերի մշակում²⁵:

Եվրոպական կառույցները՝ մասնավորապես ԵՄ-ը նախընտրում էր հարաբերությունները խորացնել այն պետությունների հետ, որոնք ունեին իրենց տարածաշրջանում համագործակցության և ինտեգրման փորձառություն: Այդ նպատակով եվրոպական կառույցների կողմից առաջ քաշվեցին մի շարք տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություններ: Այդ ծրագրերից շատերը չունեցան սպասված արդյունքները, քանի որ Հարավային Կովկասի երկրներից յուրաքանչյուրի համար անկախության հռչակմանը հաջորդած ժամանակաշրջանում առաջնային կարևորություն ուներ ազգային պետականության կայացումը: Բացի այդ, բացակայում էր տարածաշրջանային համագործակցության համար կարևոր նախապայման հանդիսացող փոխվստահության մթնոլորտը: Եվրոպական կառույցների կողմից առաջ քաշված տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունները չապահովեցին հավասար մասնակցություն և հնարավորություններ Հարավային Կովկասի երեք հանրապետությունների համար: Տնտեսության՝ մասնավորապես էներգետիկ և տրանսպորտային ոլորտների ոլորտում համագործակցության համար առաջ քաշված նախաձեռնությունների շրջանակներում առանցքային դերակատարություն ձեռք բերեցին Ադրբեջանն ու Վրաստանը: Նկատելի ձեռքբերումներ չարձանագրվեցին նաև Հարավային Կովկասի պետությունների միջև միջխորհրդարանական համագործակցության, մշակույթի, կրթության, զբոսաշրջության, ինչպես նաև ժողովրդա-

²³ Նույն տեղում՝ թ. 70:

²⁴ Տե՛ս ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական բաժին, ց.10, գ. 59, թ. 27:

²⁵ Տե՛ս *Conkievich E.* The OSCE's Support for the Reform Process in Armenia, OSCE Yearbook, 2004, p. 191-201:

կան դիվանագիտության ոլորտում իրականացված նախաձեռնությունները, քանի որ դրանց շրջանակներում առաջ քաշվող հանդուրժողականության, վստահության, փոխադարձ հարգանքի կարգախոսները գործնականում անտեսվում էին ադրբեջանական իշխանությունների կողմից, իսկ դրանք փոխարինվում էին ռազմատենչ հայտարարություններով և գործողություններով:

Аршалуйс Тетейн - *Европейские структуры и инициативы регионального сотрудничества на Южном Кавказе (1998-2005 гг.)* - Вопросы регионального сотрудничества и интеграции занимают важное место в рамках европейских структур Европейского союза и Совета Европы. Региональное сотрудничество имеет большое значение с точки зрения экономического развития, а также в контексте разрешения конфликтов и сохранения стабильности. В статье изучаются разные инициативы европейских структур на Южном Кавказе в области экономики, парламентского сотрудничества, культуры, образования и других сферах.

Arshaluys Teteyan - *European structures and the regional cooperation initiatives in the South Caucasus (1998-2005)* - Regional cooperation and integration has an important role in the scope of the European structures European Union and Council of Europe. Regional cooperation has a great importance not only for the economic development, also it plays a significant role in the context of conflict resolution. Within the article were discussed several initiatives of the European structures in the South Caucasus in the fields of economy, parliamentary co-operation, culture, education.

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՆԱՐԻՆԵ ՄԻՐՉՈՑԱՆ

Հիմք ընդունելով առկա աղբյուրները և ուսումնասիրությունները՝ սույն հոդվածը արձանագրում է, որ Մխիթար Գոշի գրչին են պատկանում մատենագրության տարբեր ճյուղերին վերաբերող բազմաբովանդակ աշխատություններ: Նա գրել է մեկնողական, ուսուցողական-խրատական, դավանաբանական, վկայաբանական, ներբողագրական, աղոթագրական, իրավաբանական, ողբասածության, ժամանակագրական-պատմական և հովվական-քարոզխոսական բնույթի երկասիրություններ:

Բանալի բառեր. Մխիթար Գոշ, մատենագրական ժառանգություն, վերագրվող երկեր, ձեռագրեր, ուսումնասիրություններ, հրատարակություն, առակներ, ճառեր, խրատներ, աղոթքներ, ժամանակագրություն, պատմություն, վարքագրություն, մեկնություն, Դատաստանագիրք:

Բազմաժանր և բազմաբովանդակ է Մխիթար Գոշի գրական ժառանգությունը: Նրա գրչին են պատկանում մատենագրության տարբեր ճյուղերին վերաբերող աշխատություններ: Նա գրել է մեկնողական, ուսուցողական-խրատական, դավանաբանական, վկայաբանական, ներբողագրական, աղոթագրական, իրավաբանական, ողբասածության, ժամանակագրական-պատմական, հովվական-քարոզխոսական բնույթի երկասիրություններ: Մխիթար Գոշի մատենագրական վաստակի վերաբերյալ սկզբնական տեղեկությունները քաղում ենք նրա կենսագիր, հայոց պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն» աշխատությունից. *«Եւ եթող նա յիշատակ և արձան գերեզմանի գիրս մտախորհս յօգուտ ուսումնասիրաց՝ համառօտ մարգարեութեանն Երեմիայի գեղեցկագիր կարգօք, և սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեառն, թէ որպէս պատշաճ իցէ, կամ որպիսի կարգօք. և գիրք մի ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա, և ի դիմաց Եւայի առ դստերս նորա. և գիրք մի յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ գօրաւարին Չաքարէի և եղբօր իւրոյ և այլ թուղթս խրատականս»¹:*

Մ. Չամչյանը Մխիթար Գոշի մասին խոսելիս գրում է, որ նա նաև մի քանի երգերի և ոտանավորների հեղինակ է. *«...գրեաց սա (Մխիթար Գոշը-ընդգծումը մերն է՝ Ն.Մ.) և քանի մի երգս և ոտանաւորս»²* Մ. Չամչյանցի այս տեղեկությամբ առաջնորդվելով՝ փորձեցինք ՄՄ ձեռագրերում գտնել Մխիթար Գոշի անվամբ երգեր և ոտանավորներ, սակայն այդպէս էլ չհանդիպեցինք: Այն հանգամանքը, որ Մխիթարյաններից միայն Չամչյանցն է այդ մասին նշում՝ առանց աղբյուրի մասին հիշատակելու, ենթադրել է տալիս, որ Չամչյանը ոչ թե հիմնվել է Մխիթարյանների Մատենադարանում պահվող ձեռագրերի վրա, այլ ամենայն հավանականությամբ Մխիթար Գոշին շփոթել է Մխիթար Այրիվանեցու հետ: ՄՄ ⁴

¹ Տե՛ս *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն հայոց, աշխ.՝ Մ. Օհանջանյանի (այսուհետ՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց), Երևան, 1961, էջ 221:

² Տե՛ս *Չամչյանց Մ.*, Հայոց պատմություն, հտ. Գ, Երևան, 1984 (վերահրատ.), էջ 96:

7507³ և 2736⁴ ձեռագրերում զետեղված են Մխիթար Այրիվանեցու գանձերը, որտեղ հանդիպում ենք նաև Մխիթար Գոշի անունը՝

Գանձս ասացեալ Մըխիթարի,

Այրիվանից առաջնորդի,

Աստուածաբան վարդապետի,

Որ մականուամբն Գոշ կոչի:

Միանգամայն ակնհայտ է, որ հեղինակը Մխիթար Այրիվանեցին է, և սա որովհետև Գոշը չի եղել Այրիվանից առաջնորդը: Ինչպես երևում է, սա սխալ ընդօրինակության արդյունք է. ընդօրինակողը կամ Մխիթար Գոշին և Մխիթար Այրիվանեցուն շփոթել է: Նույնպիսի շփոթմունք կատարվել էր նաև տաղերի պարագային, երբ որոշ ուսումնասիրողների կողմից Մխիթար Այրիվանեցու տաղերը վերագրվել էին Մխիթար Գոշին:

Ինչպես նկատում ենք, Կիրակոս Գանձակեցին չի հիշատակում Գոշի գլխավոր երկերի՝ առակների և Դատաստանագրքի մասին: Որոշ ուսումնասիրողներ, հիմք ընդունելով Կիրակոս Գանձակեցու այս վկայությունը, կասկածի տակ են առել առակների և Դատաստանագրքի հեղինակային պատկանելությունը: Հարկ ենք համարում նշել, որ թեև այստեղ պատմիչը չի տեղեկացնում առակների մասին, բայց Գոշի կենսագրության մեջ գրում է, որ նա քահանայական ձեռնադրությունից հետո գնում է Հովհաննես Տավուշեցու մոտ՝ իր գիտելիքները խորացնելու Սուրբ Գրքի և առակների ուսուցման մեջ. *«Եւ պաշտեալ զքահանայութիւնն յորով ասն՝ ցանկացաւ նա հմուտ լինել մտաց գրոց սրբոց և առակաց խորնոց, որ կան ի նոսա»*⁵: Ճիշտ է, այստեղ Կիրակոս Գանձակեցին առակներ գրելու մասին չի խոսում, բայց, կարծում ենք, առակների խորացված ուսուցման մասին նշելը վկայությունն է այն բանի, որ նա տեղյակ էր առակներ գրելու մասին, պարզապես այնտեղ չի նշել կամ էլ «խրատական թղթեր» ասելով նկատի ուներ առակները. չէ՞ որ միջնադարում առակները կամ մտնում էին խրատական բնույթի երկերի մեջ⁶: Հավանաբար, *«և այլ թուղթս խրատականս»* ասելով՝ Կիրակոս Գանձակեցին նկատի ուներ Գոշի մյուս գործերը, որոնց մասին չի նշում՝ կարծես թե չցանկանալով կամ մեկ անգամ նշել այդ մասին, քանի որ իր ուսուցիչն արդեն գրել է պատմությունը⁷, կամ էլ չկարևորելով:

Ինչ վերաբերում է Կիրակոս Գանձակեցու կողմից հիշատակվող *«սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոյ մարմնոյ և արեան Տեան, թէ որպէս պատշաճ իցէ, կամ որպիսի կարգօք»* արտահայտությանը, ապա այն տարակարծությունների տեղիք է տալիս: Մի կողմից՝ կարելի է կարծել, որ Կիրակոս Գանձակեցին նկատի ուներ Դատաստանագիրքը: Մյուս կողմից՝ Մխիթար Գոշի աղոթքների բովանդակությունը ենթադրել է տալիս, որ Կիրակոս Գանձակեցին միգրացե նկատի ուներ Մխիթար Գոշի աղոթքները: Բայց եթե խոսքը Դատաստանագրքի մասին է,

³ ՄՄ ձեռ. Հ^մ 7507, թ. 71բ:

⁴ ՄՄ ձեռ. Հ^մ 2736, թ. 201:

⁵ *Կիրակոս Գանձակեցի*, Պատմութիւն Հայոց, էջ 208:

⁶ Այս մասին առավել մանրամասն տե՛ս համապատասխան ենթակետում՝ ուսուցողական-խրատական բնույթի երկերի համատեքստում:

⁷ Կիրակոս Գանձակեցին ամբողջական տեղեկություն չի տվել Մխիթար Գոշի վերաբերյալ՝ հիմնվելով իր ուսուցչի՝ Հովհաննես Տավուշեցու Պատմության վրա: Այդ պատճառով էլ նա գրում է, որ այլևայլ բաներ կարող ենք իմանալ իր ուսուցչից:

ապա ինչո՞ւ է պատմիչը միայն մի քանի կանոնների մասին խոսում. չէ՞ որ Դատաստանագիրքը ավելի քան 250 կանոններ է պարունակում: Բացի այդ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դատաստանագիրքը հայոց առաջին դատաստանագիրքն է, և մեծ արժեք է ներկայացնում, իսկ այդ ժամանակաշրջանում հայոց մեջ այն նոր ձեռքբերում էր, գրեթե համոզված ենք, որ պատմիչը այդ մեծարժեք գործի մասին չէր հիշատակի այդքան անտարբեր. կարելի է ասել, որ նա նույնիսկ չի կարևորում: Չենք էլ կարծում, որ նա աղոթքները կհիշատակեր կանոնների տակ, թեև թեմատիկան համապատասխանում է: Մենք առավել հավանական ենք համարում, որ Կիրակոս Գանձակեցին նկատի ուներ խրատները, որովհետև խրատները, բացի ուսուցողական լինելուց, կանոնական բնույթի էին: Հարկ ենք համարում նշել նաև, որ միջնադարում խրատական բնույթի երկերը լայնորեն տարածված էին, և իբրև աղբյուր են հանդիսացել Աստվածաշունչը, Կանոնագիրքը, սրբերի ու ժամանակակից վարդապետների երկերն ու ասույթները և իրական կյանքից անհատի ու սերունդների ստացած փորձը⁸: Այսինքն՝ կանոնները կարող էին լինել խրատական բնույթի: Ամենայն հավանականությամբ, արդեն վերջում «*և այլ թուղթս խրատականս*» ասում է, քանի որ վերևում խրատական կանոնների մասին խոսել է, իսկ այստեղ այլ խրատական բնույթի երկի մասին է, այն է՝ առակների, ինչը արդեն վերևում նշեցինք:

Այլևայլ ձեռագրերում Մխիթար Գոշի անվամբ հանդիպում ենք աղոթքներ, ճառեր, խրատներ, մեկնողական երկեր, թղթեր, ժամանակագրություն-պատմություն, վկայաբանություն, ներբող, առակներ և դատաստանագիրք:

Մխիթար Գոշի մատենագրական ժառանգության շուրջ հայագիտության մեջ տարակարծություններ են եղել: Ուսումնասիրողների մեծ մասն առանց վարանելու Դատաստանագիրքը համարում է Գոշի հեղինակած երկասիրությունը, թեև որոշ հետազոտողներ էլ կասկածի տակ են առել այս երկի հեղինակային պատկանելությունը⁹: Առակները ևս պատմաբանասիրական և քննական վերլուծությունից անմասն չեն մնացել: Հրատարակվել են նաև մնացյալ մանր երկերը՝ ենթարկվելով քննական վերլուծության: Այսօր դեռևս անտիպ են Երեմիա մարգարեի մեկնությունը¹⁰ և Ղազարոսի հարության ճառը¹¹:

Մխիթար Գոշի մատենագրական ժառանգության ցանկը և ընդհանուր նկարագիրը գլխավորապես ներկայացրել են Վ. Բաստամյանը¹², Գ. Զարբհանա-

⁸Այս մասին առավել մանրամասն տե՛ս *Բաղդասարյան Է.Մ.*, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 38-40:

⁹Տե՛ս *Ալիկենան Ն.*, Հ. Յովսեփի կարգաց վարժապետ «Հայոց դատաստանագրքի» իսկական հեղինակը, Ակոս, Պեյրուք, 1944 թ., էջ 97-113, *Ստեփանոս Տօռթայ*, ժամանակագրություն կամ Տարեկանք եկեղեցականք, աշխ.՝ **Հ. Ոսկյանի**, Վիեննա, 1964, էջ 125, տե՛ս նաև *Ստեփանոս Վ. Տօռթա և Մատթեոս Վ. Ջուղայեցի*, «Ազգային մատենադարան», ՄԲ, աշխ.՝ **Հ. Ոսկյանի**, Վիեննա, 1968, էջ 62:

¹⁰Որոշ հատվածներ հանդիպում ենք Հ. Քյոսեյանի «Հովհան Ոսկեբերանի՝ Երեմիայի մարգարեության մեկնության նորահայտ հայերեն թարգմանությունը» հոդվածում՝ Հովհան Ոսկեբերանի Երեմիայի մարգարեության մեկնությունից բերված հատվածների հետ համեմատության ժամանակ (Տե՛ս *Վ. Քյոսեյան*, Հովհան Ոսկեբերանի՝ Երեմիայի մարգարեության մեկնության նորահայտ հայերեն թարգմանությունը, ԲՄ, Երևան, 2012, № 19, էջ 141-158):

¹¹Ղազարոսի հարության ճառին կանոնադառնանք Գոշի ճառագրական բնույթի երկերին անդրադառնալիս:

¹² *Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց*, իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան ծ. վարդապետի Բաստամեանցի, Վաղարշապատ, 1880, էջ 92-93:

լյանը¹³, Հ. Ոսկյանը¹⁴, Հո. Ջանփոլադյանը¹⁵, Ն. Պողարյանը¹⁶ և ուրիշներ: Մնացած ուսումնասիրողները անդրադարձել են Մխիթար Գոշի առանձին երկերին և ուսումնասիրություններ նվիրել նրա գլխավոր երկերին կամ մեկ երկին¹⁷:

Հիմք ընդունելով Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմության» հաղորդած տեղեկությունները Մխիթար Գոշի մատենագրական վաստակի վերաբերյալ, այլ մատենագրական աղբյուրները, այլևայլ գրչագրերում առկա երկերը և հետազոտողների ուսումնասիրությունները՝ ստորև առանձնացնենք Մխիթար Գոշի երկացանկը՝

1. Վկայություն սրբոյն Խոսրովու մեծ և փառաւորեալ որ կոչի նոր նահատակ, որ վկայեաց յաշխարհն Աղուանից ի մայրաքաղաքն որ կոչի Գանձակ,
 2. Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալն Խոսրով,
 3. Գիրք դատաստանի,
 4. Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու,
 5. Համառօտ մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի,
 6. Փիլոնի յաղագս նախախնամութեան բան առաջին առ Աղեքսանդրոս Գօշին ասացեալ պատճառ,
 7. Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց, ի խնդրոյ մեծ զօրաւարին Ջաքարէի և եղբօր իւրոյ (ինչպես նաև՝ Թուղթ առ վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ կամ Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր),
 8. Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա, և ի դիմաց Եւայի առ դստերս նորա,
 9. Առակներ,
 10. Խրատներ,
 11. Ճառեր,
 12. Աղոթքներ:
- Ներկայացնենք Մխիթար Գոշի երկերը՝ ըստ մատենագրական բնույթի:

ա. Վկայաբանական

1. *Խոսրով Գանձակեցու՝ «Վկայություն սրբոյն Խոսրովու մեծ և փառաւորեալ որ կոչի նոր նահատակ, որ վկայեաց յաշխարհն Աղուանից ի մայրաքաղաքն որ կոչի Գանձակ»* վերտառությունը կրող վկայաբանությունը պատկանում է Մխիթար Գոշին: Այն առաջին անգամ հրատարակել է Գալուստ Տեր-Մկրտչյանը 1896 թ. «Արարատ» ամսագրում մի կարճ առաջաբանով¹⁸: Այնուհետև 1903 թ.

¹³ **Ջարքահանայեան Գ.**, Պատմութիւն հայերէն դպրութեանց, հտ. Ա, Վենետիկ, 1865, էջ 559-568, Նույնի, Հայկական հին դպրոցի պատմություն (Դ- ԺԳ դար), Գ տպ., Վենետիկ, 1897 թ., էջ 686-698, գլխ.՝ 697-698:

¹⁴ **Ոսկեան Հ.**, Մխիթար Գոշ, ՀԱ, Վիեննա, 1926, № 1-2, էջ/սյուն 25-148, Նույնի, Մատենագրական քննություններ, Վիեննա, 1926, էջ 145-192:

¹⁵ **Ջանփոլադյան Հ.**, Մխիթար Գոշը և Նոր Գետիկի վանքը, հտ. Ա, Երևան, 1948, էջ 115-116:

¹⁶ **Պողարեան Ն. Խչս.**, Հայ գրողներ (Ե-ԺԷ դար), Երուսաղէմ, 1971, էջ 261-262:

¹⁷ Սրան կանդորադոսնանք հաջորդիվ՝ առանձին երկերը և դրանց ուսումնասիրությունները ներկայացնելիս:

¹⁸ **Տեր-Մկրտչեան Գ.**, Վկայություն սրբոյն Խոսրովու մեծ և փառաւորեալ որ կոչի նոր նահատակ, որ վկայեաց յաշխարհն Աղուանից ի մայրաքաղաքն որ կոչի Գանձակ, «Արարատ», 1896, № 1-12, էջ 590-594:

վկայաբանությունը հրատարակվել է «Հայոց նոր վկաները» աշխատության մեջ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի աշխատասիրությամբ¹⁹: Վկայաբանության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հեղինակը Խոսրով Գանձակեցու ժամանակակիցն է, իսկ գրչագիրը 12-րդ դարի է: Այսպես՝ Վկայաբանության մեջ նշված է, որ Խոսրով Գանձակեցին նահատակվել է 1167 թ.. «*Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յաշխարհին Առանայ, ի մայրաքաղաքին որ կոչի Գանձակ, ի թուականին ՈՇԶ (1166/67-ընդգծումը մերն է՝ Ն.Մ.), յամսեանն Արաց, յերրորդ աւուր, ի գլուխ յիսներեկի պահոց վարդավառին...*»²⁰:

Ինչպես տեսնում ենք, Խոսրով Գանձակեցին նահատակվել է 1167 թ.: Հայոց նոր վկաները գրքի հեղինակները բնագրում առկա «*յամսեանն Արաց, յերրորդ աւուր, ի գլուխ յիսներեկի պահոց վարդավառին*» կապակցությունը բացատրում են շարժական տոմարով և համապատասխանեցնում 1167 թ. հուլիսի 10-ի երկուշաբթի օրվան²¹:

Վկայաբանության հեղինակը ականատես է եղել Խոսրով Գանձակեցու մահվանից երկու տարի հետո սրբի նշխարների տեղափոխությանը և պատմում է սուրբ նշխարների սքանչելիքների, նահատակին զրպարտող կնոջ և դատավորի կրած պատիժների մասին. «*Բսկ զկնի անցելոց երկուց ամաց՝ փոխեցաւ ի մատուռն ի նոյն տեղոջ գերեզմանացն. և ի փոխել նորա ականատես եղաք՝ զի ոչ էր այրեալ կապանք ձեռացն... Բայց եկեսցուք և ի տեսիլ սքանչելի լուսոյն՝ որ երևեցաւ ի վերայ նշխարաց սրբոյ վկային. երևեալ ոչ հաւատացելոց միայն, այլ և անհաւատիցն. ոչ մի անգամ, այլ և երկիցս... Բազումք և յանհաւատիցն առնուին ի բժշկութիւն: Չկնի ինչ աւուրց անցանելոյ՝ տեսեալ ի հեռաստանէ հաւատացեալք լոյս իջեալ ի վերայ գաւթին...*»²²: Այստեղից պետք է եզրակացնել, որ Վկայաբանությունը 1169 թ. շուտ չի գրվել: Թե որքան են տևել հեղինակի պատմած դեպքերը, որևէ վկայություն չկա, բայց կարելի է ենթադրել, որ շատ չի տևել, նույնիսկ մի քանի ամիս: Այսպիսով՝ Վկայաբանությունը գրվել է շուրջ 1169 թ.: Վկայաբանությունն ընդգրկող ճառքնտիրը թվագրվում է 1187 թ.-ով (ՈԼԶ): Ուշադրության է արժանի «*և ի փոխել նորա ականատես եղաք*» արտահայտությունը, ինչից երևում է, որ հեղինակը ականատես է եղել դեպքերին:

Վկայաբանությունը համառոտ տարբերակներով գտնվում է նաև հայամավորքների մեջ: Վկայաբանության նույն՝ Խոսրով Գանձակեցուն նվիրված ներբողյանում կրկնվող հատվածները խոսում են այն մասին, որ վկայաբանության ու ներբողյանի հեղինակները նույնն են: Բացի այդ՝ հին ժամանակներից սովորություն էր, որ վկաների հիշատակի օրը կարդացվում էր նրանց նահատակության պատմությունը և ապա ներբողյան նվիրվում նրանց: Մովորաբար, վկայաբանության ու ներբողյանի հեղինակը նույնն էր լինում²³: Քանի որ Խոսրով Գանձակեցու ներբողյանի հեղինակը Մխիթար Գոշն է, ուստի պետք է ենթադրել, որ վկայաբանության հեղինակը ևս Մխիթար Գոշն է: Վկայաբանությունը և ներբողյանը սպագրվել են Էջմիածնի Հ^մ 939 և Կ. Պոլսի Հ^մ 919 ձեռագրերի հիման վրա:

¹⁹ Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատ.՝ Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի, Վաղարշապատ, 1903 թ., էջ էջ 23-24:

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 31:

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 41:

²² Տե՛ս նույն տեղում, էջ 29:

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 40:

Ինչպես վերևում արդեն նշեցինք, Վկայաբանության հեղինակը նահատակված Խոսրով Գանձակեցու ժամանակակիցն է, նույն վայրում և միջավայրում ապրող մեկը: Այստեղ ներկայացված վայրը և անձինք հաստատում են, որ Մխիթար Գոշն է Վկայաբանության հեղինակը. «*Էր սուրբն Խոսրով քրիստովնեայ, ի քրիստովնեայ ծնողաց, յաշխարհին Առանայ, հուպ ի քաղաքն՝ որ կոչի Գանձակ...*»²⁴:

Եվս մեկ օրինակ բերենք, որտեղ ամբողջությամբ երևում է մեզ ծանոթ միջավայրը՝ Մխիթար Գոշի ժամանակաշրջանը. «*Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յաշխարհին Առանայ, ի մայրաքաղաքին որ կոչի Գանձակ, ի թուականին ՈՇՁ...ի թագաւորութեանն Յունաց Կեո Մանուիլի և յիշխանութեանն հայոց Թորոսի, որ էր պատուեալ կեստրոսական պատուով ի թագաւորէն Յունաց, և ի Վրաց Գեորգէ, և յիշխանապետութեանն Հասանայ՝ որդւոյ Վախթանգայ*²⁵՝ կողմանցն Խաչենոյ, ի հայրապետութեանն Տեառն Գրիգորիսի և Ներսիսի հարազատ եղբարց Հայոց մեծաց, և տանն Աղուանից Տեառն Ստեփանոսի, և Տէր Յոհանիսի եպիսկոպոսի քաղաքին Գանձակայ...»²⁷:

Այսպիսով՝ Խոսրով Գանձակեցու Վկայաբանությունը գրվել է շուրջ 1169 թ. Մխիթար Գոշի կողմից:

2. 1170 թ. *Հովսեփ Դվնեցու կամ Նորաշենցու նահատակությանը նվիրված ներբողյան* է գրել Դավիթ քահանան Մխիթար անունով մեկի խնդրանքով: Գ. Տեր-Մկրտչյանը վկայաբանությունը վերցրել է ձեռ. 936 ճառընտիրից: Հովսեփ Նորաշենցու նահատակության թվականն է՝ Հայոց ՈՇԹ (1170 թ.-ընդգծումը մերն է՝ Ն.Ս.): Գ. Տեր-Մկրտչյանը կարծում է, որ այդ վկայաբանության մեջ հիշատակված Մխիթարը նույն ինքը Մխիթար Գոշն է, ում վերագրում է նաև Հովսեփ Դվնեցու նահատակության պատմությունը²⁸: Այստեղ մենք համակարծիք ենք Գ. Տեր-Մկրտչյանի հետ: Մենք չենք կարևորում այստեղ այս հարցին անդրադառնալը, քանի որ նրա գրական ժառանգությունն ենք ներկայացնում և չենք կենտրոնանում նրա խնդրանքով գրված երկերի վրա:

բ. Ներբողագրական (Վկայաբանական)

1. Մխիթար Գոշի՝ Խոսրով Գանձակեցուն նվիրված ներբողը, որ հայտնի է «*Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալ Խոսրով*» վերնագրով, Խոսրով Գանձակեցու Վկայաբանության շարունակությունն է: Պատմական մասը վերցված է Վկայաբանությունից: Մխիթար Գոշն էլ կարգել է կատարել Խոսրով Գանձակեցու տոնախմբությունը, ինչպես երևում է ներբողյանից: Ներբողյանն առաջին անգամ հրատարակվել է 1897 թ.-ին «Արարատ» ամսագրում²⁹ և այնտեղից արտատպվել «Հայոց նոր վկաները» աշխատության մեջ³⁰: Ներբողը գրվել է շուրջ 1169 թ. և ընդգրկվել ճառընտիրում 1187 թ.:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 25:

²⁵ Մեզ ծանոթ իշխանը՝ Հաթերքի իշխան Վախթանգը, ով մեծ դերակատարություն ունեցավ Մխիթար Գոշի գործունեության ծավալման շրջանում և մեծապես նրան աջակցեց:

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 31:

²⁸ *Տէր-Մկրտչեան Գ.*, Յովսեփ Նորաշենցի, «Արարատ», 1897, № 1-12, Լ. տարի, Յունուարի 16, էջ 41:

²⁹ *Տէր-Մկրտչեան Գ.*, Մխիթարայ վարդապետի մականունն կոչեցեալ Գոշ, Ներբողեան ասացեալ ի նոր վկայն կոչեցեալն Խոսրով, «Արարատ», 1897, Լ. տարի, յունուար, № 1-12, էջ 37-41:

³⁰ Հայոց նոր վկաները, աշխատ. *Հ. Մանանդյանի և Հ. Աճառյանի*, Վաղարշապատ, 1903 թ., էջ 32-42:

գ. Իրավաբանական

1. **Գիրք դատաստանի (Դատաստանագիրք):** Հայկական մատենագրության մեծագույն կոթողներից է Մխիթար Գոշի մատենագրական ժառանգության գլուխգործոցը՝ Հայոց առաջին դատաստանագիրքը: Այն կարելի է համարել Գոշի մատենագրության «թագն ու պսակը»: Դատաստանագիրքը գրվել է 1185 թ. Դասնո անապատում՝ Հռոմաշեն վանքում: Այն բաղկացած է երեք խմբագրություններից՝ Ա, Բ, Գ: Դատաստանագրքի քննական բնագիրը՝ բանասիրական վերլուծությամբ, առաջին անգամ կազմել է Վ. Բաստամյանը³¹ Բ խմբագրության հիման վրա: Իսկ Ա և Գ խմբագրությունները հրատարակել է Խ. Թորոսյանը³²: Իրավաբանական այս խոշորագույն հուշարձանը մեզ է հասել բազմաթիվ ձեռագրերով: Ա խմբագրությունը բաղկացած է Նախադրությունից՝ բաղկացած 11 գլուխներից, և 251 հոդվածից: Բ խմբագրությունը կազմված է եկեղեցական (124) և աշխարհական (130) օրենքներից: Գ խմբագրությունը Ա խմբագրության համառոտ տարբերակն է՝ գլխավորապես աշխարհիկ օրենքներով:

դ. Պատմական-ժամանակագրական

1. Մխիթար Գոշը իր Դատաստանագրքի վերջում՝ հիշատակարանին կից, գետեղել է ժամանակագրական պատմություն՝ Աղվանից կաթողիկոսների շարքը և հիմնականում Աղվանքում տեղի ունեցած պատմական իրադարձությունները՝ *«Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու»* վերնագրով: Ժամանակագրությունը հրատարակել է Ղ. Ալիշանը 1901 թ. իր «Հայապատում» երկում³³: Ժամանակագրության մեջ շարադրված է Աղվանքի XI-XII դարերի պատմությունը՝ մինչև 1161 թ. դեպքերը (քանի որ վերջին հատվածները չեն պահպանվել)՝ Աղվանից կաթողիկոսների շարքի ուղեկցությամբ: Մինչև Աղվանից կաթողիկոսների շարքին անդրադառնալը հեղինակը նշում է, որ մինչ այդ Աղվանից աշխարհի պատմությանը հանգամանալից անդրադարձել է Մովսես Դասխուրանցին, և նրանից հետո ոչ ոք չի շարունակել, ուստի իր ժամանակագրությունը Մովսես Դասխուրանցու պատմության³⁴ շարունակությունն է. *«Համարեցաք և զայս եւս հարկատր լինել, զի զչար կարգի հայրապետացն դիցուք զԱղուանից. զի և յայնոսիկ յամենեսեանն՝ զոսսա որ այժմ ունին՝ յարմարեցուք. մի, ըստ այդմ գրեցուք պատճառի. Երկրորդ, զի թէ որ յօժարեսցի գրել պատմութիւն զկնի գրեցելումն պատմութեանն Մովսեսի Դասխուրանեցույն, որ գրովանդակ պատմէ զտանս Աղուանից, դիւրին լիցի յայսմանէ զչար հայրապետացն առնուլ. զի ոչ զամենեցուն անուն ի նորայն գտցէ պատմութեան, բայց զայնոցիկ գորոց գրեաց. զի յայն ժամանակէ մինչեւ զայժմ՝ ոչ ոք գրեաց. և թէ պատահի որ՝ յոյժ հարկատր է: Եւ արդ դիցուք զկարգն.»*³⁵:

³¹ Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց, իրավաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան ծ. վարդապետի Բաստամեանցի, Վաղարշապատ, 1880:

³² *Մխիթար Գոշ*, Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խ. Թորոսյանի, Երևան, 1975:

³³ *Ալիշան Ղ.*, Հայապատում, հտ. Բ, Վենետիկ, 1901, սյուն 338-353:

³⁴ *Մովսես Կաղանկատուացի*, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխատ.՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983:

³⁵ Տե՛ս Հայապատում, Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու, աշխ.՝ Ղ. Ալիշանի, Վենետիկ, 1901, էջ 338:

Վերը բերված բնագրից, այն է՝ ժամանակագրության առաջաբանից հետո «Շարք հայրապետացն Աղուանից որք կացին զկնի Տեառն Եղիշայի որ եկն յԵրուսաղէմէ» վերնագրի ներքո հեղինակը ներկայացնում է Աղվանից կաթողիկոսների շարքը: Վերջին մասը աղավաղված է, իսկ ամենավերջին հատվածները կորած են: Հ. Ոսկյանը ենթադրում է, որ թեև հեղինակը պատմությունը իբրև հավելված է դրել Դատաստանագրքում, բայց այն գրել է իբրև առանձին գիրք՝ հույս ունենալով, որ կառանձնացվի Դատաստանագրքից: Եվ պատահական չէ, որ այն ձեռագրային տարբերակով քիչ դատաստանագրքերում է արտագրված և հիմնականում՝ առանձին³⁶: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ Դատաստանագրքի հիշատակարանում է, որ Մխիթար Գոշը գրում է այդ մասին. «Գրեալ էաք և սակաւ ժամանակագրութիւն ընդ դատաստանի գրոցս ի մերն յարիւնակ, գոր անպատշաճ վարկայ և աստ գրել, զի յատուկ և այդ կացցէ գիրք: Սկիզբն արարաք ի կատարածէ Պատմութեանն Աղուանից՝ զշար հայրապետացն մինչև ցայն, որ այժմ ունի և գայլ զիրս, որքան լուաք եւ տեսաք, զի և այդ այժմ ի մերս շիջաւ յագգէ. զի թէպէտ ունեաք սովորութիւն գրել զժամանակս իւրաքանչիւր՝ զկնի եկեալքն ի միասին յարմարելով՝ առնէին լիով պատմութիւն»³⁷: Այս հիշատակարանում գետեղված է Մխիթար Գոշի նամակը հայոց կաթողիկոսին, ինչից իմանում ենք, որ Մխիթար Գոշը պատմությունը գրել է որպես առանձին գիրք 1185 թ., երբ գրում էր Դատաստանագիրքը: Բնագրից երևում է, որ Մխիթար Գոշը Հայոց կաթողիկոսին տեղեկացնում է, որ ժամանակագրություն է գրել իր օրինակում և այն ուղարկում է նաև նրան ուղարկվելիք օրինակով: Այս հիշատակարանը պահպանվել է Ջմմաթի Հ⁴ 180 ձեռագրում, որը Դատաստանագրքի հին և մեծարժեք գրչագրերից է³⁸: Հարկ ենք համարում բերել Մխիթար Գոշի՝ Հայոց կաթողիկոսին հղած նամակը, որով հեղինակը ուղարկում էր Հայոց դատաստանագիրքը. «Զսուրբ և զաստուածարեալ գլխոյդ եկեղեցեացս Հայաստանեաց և հանուրց կարգաց պետի անուանակրութեամբ տեսառնդ մերոյ հոգևորի և և Լուսաւորչին մերոյ սրբոյ կոչման և աթոռոյ ժառանգաւորի, զհարկ հոգևոր հրամանի նուաստս յամենայնի ամենայնիվ Մխիթար ընկալայ, գոր վասն գրոցս էր դատաստանի, ի ձեռն եղբար եկելոյ ի ձեռն... Աղաչեմ պարապմամբ և մտադիր ընթերցմամբ քննել զախտաժէտ մտաց իմոց զեկադ...»³⁹:

Չնայած պատմության համառոտ լինելուն՝ ժամանակագրությունը պարունակում է շատ կարևոր նյութեր և տեղեկություններ:

Ե. Մեկնողական երկեր

Մխիթար Գոշի գրչին են պատկանում նաև մեկնողական երկեր: Նրա անունով մեզ է հասել մեկնողական երկու երկ՝ «Համառօտ մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի» և «Փիլոնի յաղագս նախախնամութեան բան առաջին առ Աղեքսանդրոս Գօշին ասացեալ պատճառ»:

³⁶ Տե՛ս Հ. Ոսկեան Հ., Մխիթար Գոշ, ՀԱ, Վիեննա, 1926 թ., մարտ-ապրիլ, էջ 130, Նույնի, Մատենագրական քննություններ, Վիեննա, 1926, էջ 181-182:

³⁷ Ջմմաթի միաբանության ձեռ. Հ⁴ 180, թ. 255ա-255բ

³⁸ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Մեղրոսյ վ. Քեչիշեան, Յուզակ հայերեն ձեռագրաց Ջմմաթի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 414-426:

³⁹ Ջմմաթի միաբանության ձեռ. Հ⁴ 180, թ. 253բ, թ. 254բ:

1. **«Համառոտ մեկնութիւն մարգարեութեանն Երեմիայի»:** Հայ միջնադարյան մեկնողական մարգում իր ուրույն տեղն ունի նաև Մխիթար Գոշի *«Համառոտ մեկնութիւն մարգարեութեանն Երեմիայի»* երկը: Այն վառ վկայությունն է, որ Մխիթար Գոշը նաև իր ժամանակի խոշորագույն մեկնիչներից էր: Այս երկի մասին վկայում է Կիրակոս Գանձակեցին՝ *«համառոտ մարգարեութեանն Երեմիայի գեղեցկագիր կարգօր»*⁴⁰:

Հ. Անասյանը իր «Հայկական մատենագիտության» մեջ, հիմնվելով մատենագիտական բնագրերի վրա, առանձնացնում է հայ մեկնիչներին: Նրանց շարքում է նաև Մխիթար Գոշը Երեմիա մարգարեի մեկնությամբ. *«ԶԵրեմիայ՝ Գոշ վարդապետն Մխիթար, և զԴատաստանագիրքն ևս»*⁴¹:

ՄՄ ձեռ. Հ⁴⁰ 1216 թ. ժողովածուում, որ թվագրվում է 1283 թ., գտնված է Մխիթար Գոշի՝ Երեմիայի մարգարեության համառոտ մեկնությունը և նախադրությունը: Գրչագրի հիշատակարանում ստացողը՝ Գրիգոր Տամբատեցին (Բջնեցի մականվամբ), տեղեկացնում է, որ Երեմիա մարգարեի մեկնության հեղինակը Մխիթար Գոշն է. *«եւ զՄեկնութիւնս մարգարեութեանն Երեմիայի, գոր արարեալ է երիցս երանեալ ըաբունոյն Մխիթարայ, որ մակադրեալ կոչեցաւ Գոշ»*⁴²:

Բոլոր փաստարկները՝ մատենագրական աղբյուրները և ձեռագրային տվյալները, գալիս են վկայելու, որ նշված մեկնության հեղինակը Մխիթար Գոշն է:

Երեմիա մարգարեի մեկնության գրչագրեր են պահպանվում Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանում:

ՄՄ Հ⁴⁰ 2606 թ. ձեռագրին կցված հիշատակարանից տեղեկանում ենք, որ հիշատակարանի հեղինակը Մխիթար Գոշն է, գրիչը՝ Դավիթը, ով մասամբ արտագրել է Գոշի մեկնությունը, մասամբ էլ տվել արտագրելու իր ուսանողներին, ապա ուղղել 1198 թ. *«Այս յիշատակարանս Մխիթար վարդապետին է, Գոշին՝ յարմարողի զմեկնութիւն սրբոյ կտակիս, գոր և ես սիրող և համակամ եւ յորդորիչ նորին Դաւիթ, յիմումս եղի արիւնակի, վասն յաւերժութեան նորայն անուան յամենայն արիւնակս...Հաւանութեամբ եւ սիրով ընկլալայ եւ շնորհակալ եմ քում նազելի եւ երկիւղած պարկեշտութեան, ով պատուականդ ինձ...ըստ յաճախութեան մեղաց մերոց եւ Նէ է առ Ո.ով թուականս Հայոց (1198 թ.- ընդծումը մերն է՝ Ն.Մ.)...»*⁴³:

Քննարկվող ձեռագրի հիշատակարանը արժեքավոր է նաև նրանով, որ իմանում ենք գրության թվականը և վայրը. *«Փառք ամենասուրբ Երրորդութեանն յաւիտեանս յաւիտենից. ամէն. Եւ գոհութիւն, որ ետ մեզ յանկել զայս ձեռնարկութիւն, որ ի վեր իսկ էր, քան զկար մեր եւ յամալթ արար զամենայն խափանիչս այսմ տառի եւ զարացոյց զտկարութիւն իմ եւ ծագեաց ի նսեմացեալ միտս զնշոյլ լուսոյ իւրոյ աննախանձն յամենայն ի պարզեւս իւր: Եւ զի սկիզբն արարաք այսմ իրողութեան ի թուականիս Հայոց ՈԼԶ. (1187-ընդծումը մերն է՝ Ն.Մ.)*

⁴⁰ Տե՛ս *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն հայոց, էջ 221:

⁴¹ Տե՛ս *Անասյան Հ.*, Հայկական մատենագիտություն (Ե-ԺԸ դդ.), Երևան, 1959, հտ. Ա, LX:

⁴² Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Դ, կազմեցին՝ *Ա. Քեօշկերեան, Կ. Սուրիասեան, Յ. Քեօւեան*, Երևան, 2008:

⁴³ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ը, կազմեց՝ *Ս. Վրդ. Ճեմճեմեան*, Երևան, 2013:

և կատարեցաք զկնի միոյ ամի...Այլ եւ յայս ամի սակաւ մերոյս գործոյ առաւ քաղաքն սուրբ Երուսաղէմ ի Սալահադդինն... Եւ եղև այս ի հայրապետութեանն տեառն Գրիգորի Հայտոց կաթողիկոսի եւ յեպիսկոպոսութեան տեառն Բարսղի հռչակաւոր ուխտիս Հաղբատայ: Բայց գրեցաւ յանապատիս Գետկայ...»⁴⁴:

Հիշատակարանում Գոշը ներկայացնում է նաև այն համառոտ գրելու պատճառները՝ իր տկարությունը, հալածանքները, համառոտելու ժամանակ սխալները և Սալահադդինի կողմից Երուսաղէմի գրավումը. «Եւ գոհութիւն, որ ետ մեզ յանկել զայս ձեռնարկութիւն, որ ի վեր իսկ էր, քան զկար մեր եւ յամալթ արար զամենայն իսպիանիչս այս ատոռի եւ զաւրացոյց զտկարութիւն իմ... Եւ զի թեպէտ յաւժարեցաք զտիրագոյնն առնուլ զմիտս եւ հակիրճ դնել բանիւ, այլ բազմապատիկ վրիպեցաք, զի յոյժ սխալ եւ անգոյ պատահեցաք արիւնակի, եւ բազում հնչեաց ի վերայ մեր փորձութիւնք ներքոյ եւ արտաքոյ... այլ եւ յայնտիկ, յոր զմնացեալսն ի նմանէ համարձակեցաք լնուլ... Այլ եւ յայս ամի սակաւ մերոյս գործոյ առաւ քաղաքն սուրբ Երուսաղէմ ի Սալահադդինն...»⁴⁵:

Հիշատակարանից տեղեկանում ենք, որ Մխիթար Գոշը մեկնությունը սկսել է գրել 1187 թ., ավարտել 1188 թ.: Այսպիսով՝ Երեմիա մարգարեի մեկնությունը գրել է Մխիթար Գոշը 1187-1188 թթ. Գետիկ վանքում:

Հ. Ոսկյանը բերում է Զմմառի վանքի 3 ձեռագրեր՝ Հ^մ 267, Հ^մ 341, Հ^մ 349, որոնք ունեն Երեմիայի մարգարեության մեկնությունը: Առաջինն ամփոփված է Հավաքածոյի մեջ՝ թ. 189ա-246բ: Երկրորդը նորագույն օրինականությունն է (1845)՝ կատարված Երուսաղէմում Մկրտիչ վրդ. Արծրունյանի ձեռքով: Զմմառի Հ^մ 349 գրչագիրը պարունակում է Գոշի հիշյալ մեկնությունը: Վերջինիս նախորդում է մի նախաբան: Իսկ Գոշը մեկնել է մարգարեությունը զլուխ առ զլուխ, համար առ համար⁴⁶: Գրչագիրը հավանաբար 15 կամ 16-րդ դարի բոլորգիր է: Անձանոթ են գրչի և գրության տեղը, ինչպես և ստացողի անունները: Հեղինակը, հանգամանքներից ելնելով, ջանացել է համառոտելով ավարտել գործը և հանձնել Դավիթ վարդապետին, ում խնդրանքով էլ գրել է⁴⁷:

Հովհան Ոսկեբերանի համանուն երկի հայերեն թարգմանությունների շուրջ խոսելիս Հ. Քյոսեյանը⁴⁸ անդրադարձել է նաև Մխիթար Գոշի մեկնությանը: Նա համեմատել է երկու մեկնությունները և տեսել, որ Գոշը իր երկը գրելիս ձեռքի տակ է ունեցել Ոսկեբերանի մեկնությունը: Մխիթար Գոշի ժամանակ Ոսկեբերանի համանուն երկի ընդօրինակությունները լայն շրջանառության մեջ էին հայոց մեջ⁴⁹: Հ. Քյոսեյանը, համեմատական բնագրեր բերելով, նշում է, որ Ոսկեբերանի համանուն մեկնությունը թարգմանվել է 5-րդ դարում, սակայն ժամանակի ընթացքում ընդօրինակությունների արդյունքում խաթարվել է, իմաստը դարձել է անհասկանալի նույնիսկ վարդապետների համար, ուստի Մխիթար Գոշը

⁴⁴ ՄՄ ձեռ. Հ^մ 2606, թ. 255ա-256ա:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Տե՛ս *Ոսկեան Հ.*, Մխիթար Գոշ, ՀԱ, Վիեննա, 1926 թ., մարտ-ապրիլ, պուն 133-134, **Նույնի**, Մատենադարանի քննութիւններ, Վիեննա, 1926, էջ 187-188:

⁴⁷ Նկարագրությունը տե՛ս *Մեքորայ վ. Քեշիշեան*, Յուզակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 414-426:

⁴⁸ *Քյոսեյան Հ.*, Հովհան Ոսկեբերանի՝ Երեմիայի մարգարեության մեկնության նորահայտ հայերեն թարգմանությունը, ԲՄ, Երևան, 2012, № 19, էջ 141-158:

⁴⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 142:

արբագրելով խմբագրել է հայերեն թարգմանությունը և հղկել թերի հատվածները⁵⁰:

«*Համառոտ մեկնություն մարգարեությանն Երեմիայի*» երկը առ այսօր անտիպ է:

2. Մխիթար Գոշի «*Փիլոնի յաղագս նախախնամութեան բան առաջին առ Աղեքսանդրոս Գօշին ասացեալ պատճառ*» մեկնաբանական երկը մեզ է հասել Գրիգոր Աբաստրդու կազմած «Գիրք պատճառաց» անունը կրող անտիպ ժողովածուի միջոցով: Վերջինս ընդգրկված է ՄՄ թիվ 1879 ձեռագրում: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ժողովածուն կազմել է Գրիգոր Աբասյանը: Այն բաղկացած է երեք մասից՝ Հին կտակարանի գրքեր, հայրաբանական ու իմաստասիրական երկեր և Նոր կտակարանի «պատճառ»-ները: «Պատճառ»-ները մեկնության տեսակ են կամ ավելի ստույգ՝ մեկնություններին նախորդող ներածական բացատրություններ: Ժողովածուն կարելի է համարել մեկնությունների մեզ հասած առաջին հայկական միջնադարյան հանրագիտարանը⁵¹:

Մեկնությունը մեզ է հասել ՄՄ Հ^մ 1879, ՄՄ Հ^մ 1449 և Վիեննայի Մխիթարյան Սիաբանության մատենադարանի Հ^մ 47⁵² օրինակներով:

Մեկնությունն առաջին անգամ հրատարակել է Լ. Մելիքսեթ-Բեկը 1959 թ. ԺԳ-ԺԴ-րդ դարի ՄՄ Հ^մ 1879 ձեռագրի հիման վրա⁵³:

Երկի գրության թվականը հայտնի չէ: Ըստ Լ. Մելիքսեթ-Բեկի՝ այս երկը «Գիրք Պատճառաց»-ում ընդգրկվել է 13-րդ դարի սկզբներին, բայց ոչ ուշ քան 1213 թվականը, այսինքն՝ դեռ Գոշի կենդանության օրոք⁵⁴:

Լ. Մելիքսեթ - Բեկը նշում է, որ Փիլոն Ալեքսանդրացու՝ «Գիրք պատճառաց»-ում ընդգրկված ճառերը թվով 10-ն են: 10 ճառերից «Գիրք Պատճառացում» պահպանվել են միայն 2 մեկնություն՝ կատարված Դավիթ Քոբայրեցու («Փիլոնի այնոցիկ որ ի լինելութեան ինդրոյ և լուծմանց ասացեալ սկիզբն միահամուռ եւտանց գրոցն Դարթի վարդապետի Քոբայրեցոյ») և Մխիթար Գոշի («Փիլոնի յաղագս նախախնամութեան բան առաջին առ Աղեքսանդրոս Գօշին ասացեալ պատճառ») կողմից: Այսինքն՝ մնացած ութը թարգմանություններ են⁵⁵:

Երկում երևան են գալիս Մխիթար Գոշի՝ որպես մեկնիչի, աստվածաբանի, իմաստասերի հմտությունները. «*Անզեղ է Աստուած ի ձիրս, և զոր պարզևէ, այլ ոչ նախանձի, որպէս առ մարդս տեսանեմք, զի արար, քանզի զոր եղ ի բնութեանս, զոր ստեղծ և զամենայն, զոր ետ, բարի է*»: Այստեղ արտահայտված են մեկնիչի արարչագործական հայացքները: Նա բերում է արարչագործության վե-

⁵⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 145-146:

⁵¹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս *Շիրինյան Մ. (Է.)*, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական՝ դասական, ու բյուզանդական աղբյուրների բաղդատությամբ), Երևան, 2005, էջ 194-202, Նույնի, Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Աշտանակ՝ հայագիտական պարբերագիրք, թիվ Գ, Երևան, 2000, էջ 36-64, *Շիրինյան Մ. (Է.), Խաչատրյան Գ.*, Գիրք Պատճառաց, Աշտանակ՝ հայագիտական պարբերագիրք, թիվ Դ, Երևան, 2011, էջ 18-43:

⁵² Ակարագրությունը տե՛ս *Տաշեան Հ. վրդ.*, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 224:

⁵³ *Մելիքսեթ-Բեկ Լ.*, Մխիթար Գոշի անտիպ երկերից, «Էջմիածին», 1959, № 7-12, էջ 41-45, գլխ.՝ 45:

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 43:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 43:

րաբերյալ իմաստասերների տեսակետները, ապա բացատրում Օննդոց գրքի «Եւ խաւար ի վերայ անդնդոց, եւ Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (Օննդոց Ա:2-3) նախադասությունը՝ նշելով, որ ոմանք, սխալ հասկանալով Մովսեսի այս խոսքերը, կարծում են, որ ամեն ինչ ստեղծվել է խավարից, անդունդից և ջրից՝ առանց իմանալու, որ Աստված ամեն ինչի նախասկիզբն է դրել, ապա մասնավորներն է ստեղծել. «...զի եւ կէսք՝ մոլորեալք ի բանս Մովսեսի յայնս, զի ասէ. « Եւ խաւար ի վերայ անդնդոց, եւ Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»: Վկայէ, ասեն, Մովսէս, թէ յերիցս յայսցանէ գոյացոյց Աստուած, ի խաւարէ, յանդնդոց, ի ջրոյ. զվիտս ասացելոցն ոչ իմացեալ, զի նախասկիզբն եղ լինելոյ երկնի և անդնդոց. և յայսմանէ զմասնաւորսն գոյացոյց»⁵⁶:

Մեկնությունը կա՛մ կրճատ տարբերակով է դրվել ժողովածուում, կա՛մ կիսատ տարբերակով է մեզ հասել, կա՛մ էլ հեղինակը անավարտ է թողել. միայն վերջին նախադասությունից երևում է, որ այն անավարտ է. «Այս և որ սոցին նման է պատճառ առաջիկայ գրոցս, որպէս ասէ. յորժամ զնախախնամութեանն բան»⁵⁷:

Բացի այդ՝ քանի որ «Գիրք պատճառաց»-ում որպէս կանոն արծարծվում են այն հարցերը, որոնք երկբայելի են և դրանց վերաբերյալ բացատրություններ տրվում⁵⁸, ուստի կարծում ենք, որ այստեղ միայն այս հատվածն է ընդգրկված, քանի որ այն խնդրահարույց է, ինչպէս Գոշի վերը բերված մեկնությունից ենք տեսնում, և հենց այս հարցի պատասխանն էին ուզում Փիլոնից ստանալ. «Ձայս ամէն առաջի եղեալ՝ Աղեքսանդրոս խնդրէր լուծումն ի Փիլոնէ, որպէս վայել էր նորա իմաստութեանն, ոչ թէ հակառակութեամբ, այլ ուսումնասէր հոգւովն»⁵⁹:

գ. Դավանաբանական

Թղթեր: 1. «Յայտարարութիւն ուղղափառութեան հաւատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց ի խնդրոյ մեծ զօրավարին Ջաքարէի և եղբօր իւրոյ» աշխատության մասին հիշատակում է դեռևս Կիրակոս Գանձակեցին իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ: Թուղթը հրատարակել է Կ. Էպս. Տեր-Մկրտչյանը⁶⁰ երեք՝ ՄՄ ՀՊ 631, ՀՊ 2966 և ՀՊ 3062 ձեռագրերի հիման վրա: Երկրորդ անգամ հրատարակել է Պ. Մուրադյանը 1996 թ.⁶¹: Այս բնագրից հատվածներ են զետեղվել նաև «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության» մեջ⁶²: Թուղթը հայագիտու-

⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 45:

⁵⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 45:

⁵⁸ Տե՛ս **Շիրինյան Մ. (Է.)**, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը (հայկական և հունական՝ դասական, ու բյուզանդական աղբյուրների բաղադրությամբ), Երևան, 2005, էջ 32-33:

⁵⁹ Տե՛ս **Մելիքսեթ-Բեկ Լ.**, Մխիթար Գոշի անտիպ երկերից, «Էջմիածին», 1959, № 7-12, էջ 45:

⁶⁰ Թուղթ Մխիթար Վարդապետին, որ Գոշն կոչվիւր, աշխ.՝ **Տեր-Մկրտչյան Կ.**, «Արարատ», 1900, ԼԴ տարի, հոկտեմբեր, էջ 497-504, 562-568, Նույնի, «Արարատ», 1901, ԼԴ տարի, յունուար, էջ 55-61, 121-127:

⁶¹ **Մխիթար վարդապետ Գոշ**, Թուղթ առ Վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան յաւատոյ, աշխ.՝ **Պ. Մուրադյանի**, «Գանձասար» աստվածաբանական հանդես, Գիրք Զ, Երևան, 1996, Նույնի, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, Ս. Էջմիածին, 2011:

⁶² Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, աշխ.՝ **Պ. Խաչատրյանի և Հ. Քրոսեյանի**, Ս. Էջմիածին, 2003:

թյան մեջ հայտնի է նաև «Գծագրութիւն... յաղագս Վրաց» և «Թուղթ առ վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հավատոյ» անուններով:

Դավանաբանական-ջատագովական այս երկասիրությունը մեզ է հասել ՄՄ գրչագիր օրինակներով, հիմնականում՝ ժողովածուներում:

Կ. եպս. Տեր-Սկրտչյանը իբրև բնագիր անփոփոխ ներկայացրել է ՄՄ չ⁴ 631 ձեռագրի բովանդակածը, իսկ մյուս երկուսը Ա և Բ ցուցիչներով տրված են որպես տարբերակներ: Որոշ ուսումնասիրողներ կարծում են, որ ընտրված բնագիրն ունի ոճական, իմաստային ու ուղղագրական խաթարումներ⁶³:

Պ. Մուրադյանը, հրատարակելով բնագիրը հինգ ընդօրինակությունների՝ ՄՄ չ⁴ 631, չ⁴ 2966, չ⁴ 3062, չ⁴ 9622, չ⁴ 2678 գրչագրերի հիման վրա, այն տրոհել է դրվագների՝ առանձնացնելով նաև Նախադրությունն ու Ամփոփումը:

Գրության ժամանակի վերաբերյալ որևէ տեղեկություն չի պահպանվել: Այն հաստատապես գրվել է 1197-1207 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում: Կիրակոս Գանձակեցին վկայում է Շռագատկի և Զաքարեի օրոք գումարված ժողովների ժամանակ առաջացած տարաձայնությունների մասին: Պ. Մուրադյանը կարծում է, որ գրվել է 1206 թ., քանի որ գրվել է Լոռեի 1204-1205 թ. ժողովից հետո և 1207 թ. Ծննդյան տոնի նախօրեին հրավիրված Անիի ժողովին, և թղթում առկա «յաղթող թագաւորք մեր»՝ Թամարն ու Դավիթ Սոսլանը, կենդանի են: Այստեղից էլ ենթադրում է, որ գրվել է 1206 թ.⁶⁴:

Այս թուղթը հեղինակի կարևոր դավանաբանական երկասիրությունն է: Լ. Մելիքսեթ-Բեկը⁶⁵ նշում է, որ Դվինի ժողովի մասին պատմելիս Մխիթար Գոշն օգտվել է Հովհան Օձնեցուն վերագրվող «Մակս ժողովոց, որ եղեն ի Հայս» երկից՝ համառոտելով Անանիա Մանահնեցու «Վասն բաժանման Վրաց» գործից գրեթե բառացի քաղումներով: 1938 թ. գրված մի հոդվածում Ի. Աբուլաձեն նշում է, որ Գոշի թուղթը վրացի մատենագիր Արսեն Վաչեսձեի «Դոգմատիկոն»-ի «Երեսուն գլուխ հայոց հերձուածի» գլխում հայերին ներկայացված մեղադրանքների պատասխանն է⁶⁶:

Թղթի գրման շարժառիթները Հայոց եկեղեցու և հայերի դեմ ուղղված գրպարտություններն են թե՛ վրացիների և թե՛ հույների կողմից: Ուստի, Մխիթար Գոշը ներկայացնում է հայոց դավանանքն ու ծիսակարգը, բացատրում դրանց յուրահատկությունները և ցույց տալիս, որ հայերը, ինչպես և հույներն ու վրացիները, հերձվածողներ չեն: Երկը սկսվում է այն մտքով, որ այս թուղթն ուղղված է նաև վրացիներին, ովքեր հայերի նկատմամբ թշմանություն էին տածում ոչ քիչ քան հույները, քանի որ հույներին էին աշակերտում և դավանակից էին նրանց: Մինչ վրաց կաթողիկոսին դիմելը Մխիթար Գոշը իր նախադրությունն ուղղում է Զաքարեին և Իվանեին, քանի որ գրել էր նրանց խնդրանքով:

⁶³ Տե՛ս *Մեսրոպ ճ. վրդ. Գրիգորեան*, Անձնանուններու աղաւաղումներ դաւանաբանական գրութեանց մեջ, ՀՍ, 1970, էջ 330, *Ոսկեան Հ.*, Մխիթար Գոշ, ՀՍ, 1926 թ., մարտ- ապրիլ, էջ 136, *Նույնի*, Մատենագրական քննութիւններ, էջ 191, *Մուրադյան Պ.*, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, Մ. էջմիածին, 2011, էջ 191:

⁶⁴ *Մուրադյան Պ.*, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, էջ 172:

⁶⁵ Տե՛ս *Մելիքսեթ-Բեկ Լ.*, Մխիթար Գոշի անտիպ երկերից, «Էջմիածին», 1959, № 7- 12, էջ 43:

⁶⁶ *Մուրադյան Պ.*, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, էջ 173:

«Ձայս գծագրութիւն սակաւութ հարկաւոր կարծեալք եղաք յաղագս Վրաց, որ ոչ սակաւ թշնամութեամբ վարին ընդ Հայս, աշակերտելով Յունաց: Եւ արդ, զի նախ առ ձեզ է նախադրութիւն բանիս, ով աստուածատէր եւ բարեպաշտ իշխանք իշխանաց Ձաքարէ եւ Իւանէ, ծնունդք սիրոյ Աստուծոյ ի բարեգարդ ծնողաց, զի ես՝ յամենայն նուաստ Մխիթար, ի բանս եւ ի գործս սպասաւորաց Բանին, որ յաւուրս մեր տեսանելով եւ լսելով զբամբասանս Վրաց ի դաւանութիւնս մեր հաւատոյ եւ կարգաց եկեղեցւոյ, յոյժ խոցեալ լինէր հոգի, մանաւանդ զի հաւանելի թուելով ձեզ ասացեալքն առ ի նոցանէ, յայտասիկ եկի ի միտս գրել սակաւութ գճմարիտ հաւատոյս մերոյ զարիւնակ»⁶⁷:

Վերը բերված բնագրում ակնհայտորեն երևում են թուղթը գրելու շարժառիթները:

Թղթից երևում է, որ Մխիթար Գոշը դեմ է դավանական տարբերությունները ժողովուրդների հարաբերությունների լարման առիթ դարձնելուն՝ պաշտպանելով Հայոց եկեղեցու ուղղափառությունը. «...զմիմեանս չթշնամանեմք եւ զիսաչ եւ զեկեղեցի միմեանց չանարգեմք, զի այն Քրիստոսի է եւ Աստուծոյ անարգանք: Եւ գոր գրեմք ի թղթի վասն Հայոց խոստովանութեան ճշմարտութեամբ այդպէս է...»⁶⁸:

Միալ հասկանալով Մխիթար Գոշի՝ այս թղթում արտացոլված ազգամիջյան համերաշխության և դավանական հանդուրժողականության հայացքները՝ որոշ ուսումնասիրողներ նրան քաղկեդոնականության հետևորդ են համարել: Իսկ Պ. Մուրադյանը արտահայտում է այն միտքը, որ Գոշը, թեև պաշտպանում էր միաբնակ եկեղեցու ուղղափառությունը, բայց երկաբնակությունը հերձված չէր համարում⁶⁹: Պ. Մուրադյանը բերում է Գոշի խոսքերը և նշում նրա կողմից երկաբնակությունը որպես հերձված չհամարելու փաստ: Այժմ բերենք այդ բնագիրը. «Ձի Ե. ազգացդ չտեսանեմք այնքան պատճառս, որ անընդունելի առնէ Աստուած զհաւատ կամ զտաւն, եւ նա ճանաչէ զհորաքանչիւրոցն զարժանաւորութիւն... Այլ թէ ասացեալ հինգ ազգացդ ոչ կարեն միաբանիլ, բայց կարող են թշնամիք միմեանց չլինել, զիսաչ եւ զեկեղեցի միմեանց ընդունել երկրպագութեամբ...»⁷⁰:

Չցանկանալով ծավալվել Գոշի՝ մյուս ուսումնասիրողների կողմից քաղկեդոնական համարվելու տեսակետների շուրջ⁷¹, բերենք մեկ-երկու օրինակ, որոնք բավական կլինեն փաստելու, որ Մխիթար Գոշը քաղկեդոնականությունը հերձված էր համարում, իսկ վերը նշված խոսքերով նա պարզապես ցանկանում էր, ինչպես արդեն նշել ենք, ազգամիջյան համերաշխություն և դավանական հանդուրժողականություն հաստատել: Նա ասում է, որ Քրիստոսի Եկեղեցին մեկ է՝ «Յաղագս այնորիկ Քրիստոս սկիզբն բարեաց հաստատելոց զխոնարհութիւնն ետ երանութեամբ եւ Աւետարանան արար մի հաւտ եւ մի հովիւ՝ զցրուեալ գորդիսն Աստուծոյ ժողովելով ի մի եկեղեցի...»⁷², և Աստծուն հաճելի էր⁷³, որ բոլոր

⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 196:

⁶⁸ Նույն տեղում, էջ 172:

⁶⁹ Նույն տեղում, էջ 174:

⁷⁰ Նույն տեղում, էջ 174:

⁷¹ Համարում ենք մեր հոդվածի շրջանակներից դուրս:

⁷² Նույն տեղում, էջ 200-201:

ազգերը միակրոն լինեն, բայց քանի որ չարի հետևանքով առաջացել են բաժանումներ, ուստի չպետք է թշնամանք լինի, բոլորը պետք է հարգեն միմյանց եկեղեցին, հավատքը և խաչը, այսինքն՝ ապրեն համերաշխության մեջ՝ չմիաբանվելով և միևնույն ժամանակ թշնամի չլինելով. *«Զի այն էր հաճոյ Աստուծոյ, զի ամենայն ազգ միակրան լինէր, բայց տեսաք, որ սաստանայ եւ ամբարտաւանութիւնն մեր զայդ չտայ առնել՝ լաւ համարեցաք, որ զմիմեանս չթշնամանենք եւ զհասչ եւ զեկեղեցի միմեանց չանարգենք, զի այն Քրիստոսի է եւ Աստուծոյ անարգանք»⁷⁴*: Այստեղ ցայտուն կերպով արտահայտված են Մխիթար Գոշի եկումենիկ հայացքները: Գոշը ներկայացնում է բոլոր ազգերի սովորույթների և եկեղեցական կարգերի տարբերությունները և ամենավերջում հաստատում, որ միությունն անհնար է. *«Եւ վասն այն անհնարին տեսանենք զգալն ի միաբանութիւն, զի ամբարտաւանեալ ոչ հնազանդին միմեանց... Եւ թէ իւրաքանչիւր ոք զիւրն թողոյր զխոտեղին եւ առնոյր զգովելին լինէր միաբանութիւն ազգաց»⁷⁵*:

Մխիթար Գոշը պաշտպանում էր Հայոց եկեղեցին և հայ ազգին, բայց միևնույն ժամանակ ներկայացնում էր մյուս ազգերի դրական կողմերը՝ նշելով, որ ազգ չկա, որ բարի և լավ կարգեր չունենա. *«Աստուած գործակից լինէր եւ ի բարին ուղղէր կարգ եկեղեցոյ, զի չիք ազգ, որ բարի կարգ ոչ ունի եւ խոտան»⁷⁶*:

Ամբողջ թղթում երևան է գալիս Մխիթար Գոշի՝ ազգերի սովորույթների, եկեղեցական կարգերի, հայրախոսական աստվածաբանության և եկեղեցական պատմության վերաբերյալ փայլուն իմացությունը: Ուշագրավ է նաև այն, որ նա ներկայացնում է ազգերին բնորոշ գծերը. հույները իմաստուն են, ողորմած և Ս. Հովհան Ոսկեբերանի ուսմունքին քաջատեղյակ ու գիտակ, հռոմեացիները խիստ են աղոթքի մեջ ու առաջնորդներին հնազանդ, ասորիները խոնարհ են և ճգնող, հայերը խիստ պահեցող են, ողորմած գերյալների և եկեղեցականների նկատմամբ, սրբություններ սիրող, բայց առաջնորդներին չհարգող, իսկ վրացիները սրբերի և վանքերի մեծարողներ են ու առաջնորդներից չբամբասող⁷⁷: Հետաքրքրական է նաև այն, որ խոսելով տարբեր ազգերի սովորույթների մասին՝ Մխիթար Գոշը գրում է, որ եթե հույները և վրացիները առավել քան պատկերահարգ են, ապա հայերը՝ խաչահարգ են. *«Յոյնք եւ վիրք զպատկերագրութիւն առաւել պատուեն եւ հայք՝ զխաչն»⁷⁸*: Միջնադարյան մատենագրական աղբյուրները վկայում են, որ խաչը կարևոր տեղ է գրավում Հայոց եկեղեցու դավանաբանական, ծիսապաշտամունքային համակարգի մեջ, ինչպես նաև ժողովրդի կյանքում: Պատահական չէ, որ հայերին անվանել են խաչապաշտ և անգամ մեղադրել են խաչի հանդեպ չափից ավելի մեծ պաշտամունք ունենալու մեջ: Այս առումով հետաքրքրական է Ա. Մահակյանի դիտարկումը. *«VI դարում հայ եկեղեցին իր ազգային-դավանաբանական (հակաքաղկեդոնական) քաղա-*

⁷³ Այստեղ խոսքը ներկայի մասին չէ. նա խոսում է անցյալ ժամանակաձևով, Աստված ցանկանում էր, որ բոլորը հավաքվեն մեկ քրիստոնեական հավատքի՝ եկեղեցու ներքո:

⁷⁴ Տե՛ս **Մուրադյան Պ.**, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, էջ 198:

⁷⁵ Նույն տեղում, էջ 252:

⁷⁶ Նույն տեղում, էջ 215:

⁷⁷ Նույն տեղում, էջ 253:

⁷⁸ Տե՛ս **Մխիթար Գոշ**, Թուղթ առ վրացիսն, աշխատ.՝ **Պ. Մուրադյանի**, «Գանձասար», թիվ 2, Երևան, 1996, էջ 354:

քականությանը նպաստեց խաչի պաշտամունքի ձևավորմանը, որը համաժողովրդական բնույթ ստացավ VII-VIII դդ.»⁷⁹:

Այնուհետև Մխիթար Գոշը պատգամում է, որ թշնամությունը վերացնենք, միմյանց բարեկամ լինենք և միմյանց եկեղեցիների կարգերը չվատաբանենք ու հարգենք. «*Լաւ էր, թէ՛ զայն ընտրեաք, որ զթշնամութիւն բառնեաք ի միմեանց եւ բարեկամ լինեաք եւ զկարգ միմեանց չհայհոյեաք*»⁸⁰:

Այսպիսով՝ ամբողջ թղթում Մխիթար Գոշը հանդես է գալիս որպես խոշորագույն ջատագով, հակաճառող և մանկավարժ: Հայագիտության մեջ թուղթը մեծ արժեք ունի, որովհետև ջատագովական և հակաճառական աստվածաբանության փայլուն օրինակ է: Թուղթը արժեքավոր աղբյուր է նաև ժամանակաշրջանի մտայնության և տիրող իրավիճակի ուսումնասիրման տեսակետից: Բացի այդ՝ երևում են նաև Գոշի էկումենիկ և այժմեական հայացքները:

2. «*Թուղթ վարդապետացն Հիւսիսային կողմանց, որ ի Հաղբատ եւ ի Սանահին, առ պատուական կաթողիկոսն Տէր Գրիգորիոս»* թղթի համահեղինակներից է: Թուղթը տեղ է գտել Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ում: Այս թուղթը, որ Գրիգոր Տղա կաթողիկոսին հղել են Հյուսիսային Հայաստանի, մասնավորապես Հաղբատի և Սանահինի մեծանուն վարդապետները, Հայոց եկեղեցու անշեղ ընթացքի համար մտահոգված գործիչների նախագուշացումն է հայոց հայրապետին՝ միջեկեղեցական հարաբերություններում հաշվի առնելու նաև իրենց ցանկություններն ու խորհուրդները:

Է. Ուսուցողական-խրատական

1. **Խրատներ:** Մխիթար Գոշի գրչին են պատկանում նաև ուսուցողական-խրատական բնույթի երկեր՝ խրատներ և առակներ: Կիրակոս Գանձակեցին, խոսելով Գոշի գրական ժառանգության մասին, նշում է նաև նրա խրատները՝ «*և այլ թուղթս խրատականս*»⁸¹ Հ. Տաշյանը հնարավոր է համարում, որ Կիրակոս Գանձակեցին ակնարկում էր Գոշի մյուս գործերը, հատկապես առակաց գրքերը, որոնց մասին ևս ոչ մի տեղեկություն չի հայտնում:⁸² Ըստ իրենց բովանդակության՝ միջնադարում խրատները տարբեր խմբերի են բաժանվել: Այս առումով հետաքրքրական են նաև Գոշի խրատները, որոնք մեզ են հասել «*Վասն ճշմարիտ եւ հաճոյ սպասաւորել մարմնոյ եւ արեանն Տեառն*», «*Նորին խրատ ոգեշահ մանկանց եկեղեցոյ*»⁸³ և «*Նորին դարձեալ բան խրատու վասն զգուշութեամբ սպասաւորել մարմնոյ եւ արեան Տեառն մանկանց եկեղեցոյ օրինադրական եւ կանոնական սահմանաւ սակաւութ*»: Մխիթար Գոշի խրատները հրատարակվել են 1933 թ. Վենետիկում:⁸⁴ Դրանք մեզ են հասել ՄՄ Հ⁴ 3276 (ԺԷ դար, 1640 թ. հետո) և 4251 գրչագրերով:

⁷⁹ **Մահակյան Ա.**, Միջնադարյան պատկերապաշտության հայկական տարբերակը, ՊԲՀ, 1987, թիվ 2, էջ 150:

⁸⁰ Տե՛ս **Մուրադյան Պ.**, ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը, էջ 253:

⁸¹ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն հայոց, էջ 221:

⁸² **Տաշեան Յ.**, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Վիեննա, 1900, էջ 16:

⁸³ Այս խրատները գրել է ում Մանուկ քահանայի խնդրանքով:

⁸⁴ **Մխիթարայ Գոշի** Խրատք Ոգեշահք, «Սոփերք հայկականք», ԻԳ, Վենետիկ, 1933:

Ինչպես արդեն նշել ենք, գրեթե համոզված ենք, որ Կիրակոս Գանձակեցին, «և սուղ ինչ կանոնս վասն սպասատրերոյ մարմնոյ և արեան Տեան, թէ որպէս պատշաճ իցէ, կամ որպիսի կարգօք» ասելով, նկատի ուներ խրատները: Ինչպես օրինակ՝ Դատաստանագրքում և խրատներում հանդիպում ենք կանոնների, որ գրեթե նույնն են: Նախ երևում է, որ հեղինակները նույնն են, ապա փաստվում է այն, որ խրատները նաև կանոնական բնույթ ունեն. «Ձի ըստ օրինացն՝ քսան, քսանեւհինգամենից ի վեր և ոչ ի խոնարհ հրամայէ կարգել ի քահանայութիւն».⁸⁵ Այսպիսի կանոն կա նաև Դատաստանագրքում (Գիրք Դատաստանի, Նախադրություն, Գլուխ Է, էջ 12): Մեզ հասած խրատների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում կանոնական բնույթ ունեն:

Խրատներում Գոշը հանդես է գալիս որպէս ուսուցիչ, մանկավարժ, դավանաբան, օրենսդիր: Հետաքրքրական է նրա ուսուցողական խրատը, որ աղոթքի ժամանակ պետք է զգաստ լինես ոչ միայն մարմնով, այլև հոգով. «Ի տեղի աղօթից զգաստ լիցիս, մի միայն մարմնով՝ այլ և հոգւով».⁸⁶

Խրատներում նկատելի են նաև Գոշի հայրենասիրական մտքերը, որոնք արդեն կանոնների տեսքով և կոնկրետ գործողությամբ զետեղված են Դատաստանագրքում: Խրատները ստեպ-ստեպ ընդմիջարկված են առ Աստված ուղղված սրտաբուխ խոսքերով՝ աղոթքներով, խոստովանություններով և Տիրոջն ուղղված ներբողով:

«Նորին խրատ ոգեշահ մանկանց եկեղեցոյ» վերնագիրը կրող խրատներում հետաքրքրական է Մխիթար Գոշի կողմից «մանկունք եկեղեցոյ» եզրի⁸⁷ կիրառումը, ինչն անմիջականորեն կապված է «նուրբ և լայն գրեանք»-ի⁸⁸ հետ, քանի որ հենց նրանց համար էր մեկնաբանվում հոգևոր սնունդը: «Նուրբ գրեանք» տերմինի կիրառմանը մեծապես նպաստել են Սև լեռան վանքերում ուսանող հայ գործիչներ, ովքեր այնտեղ տարածված «նուրբ գրեանք»-ի վերաբերյալ իրենց ստացած գիտելիքները փոխանցել են իրենց աշակերտներին: Իսկ մենք գիտենք, որ Մխիթար Գոշը ևս Սև լեռան վանքերում է ուսանել:

2. Առակներ: 12-13-րդ դդ. հայ մատենագրության մեջ մեծ նշանակություն և լայն տարածում է գտնում առակագրության ժանրը: Հայկական մատենագրության մեջ ունենք թարգմանական և ինքնուրույն առակներ: Թարգմանական գլխավոր կոթողներ են «Բարուախօս/Բարոյախօս» և «Ոլիմպիանի/Ողոմպիանի առակներ» կոչված ժողովածուները.⁸⁹ Ինքնուրույն առակագրությունը հայոց մոտ երևան է եկել 12-րդ դարի երկու հայտնի առակագիրներ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու միջոցով: Առակների առաջին ժողովողն ու խմբագրողն է Մխիթար Գոշը: Վերջինիս առակները միջնադարյան գրականության մեծարժեք կոթողներ են: Մեզ է հասել Մխիթար Գոշի՝ 190 առակներից բաղկացած առակների ժողո-

⁸⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 64:

⁸⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 64:

⁸⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս *Շիրինյան Մ. (Է.)*, նշվ. աշխատ., էջ 297-302:

⁸⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 194-285:

⁸⁹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս *Անասյան Հ.*, Հայկական մատենագիտություն (Ե-ԺԸ դդ.), Երևան, 1959, հտ. Ա, սյուն 1059-1060, *Маррв Ի.*, Сборники притч Вардана, ч. 1, Санктпетербургь, 1899, стр. 407-409, *Տաշեան Յակովբոս վ.*, Ժողովածոյք առակաց Վարդանայ, ըստ հայագետ Ն. Մառի, Վիեննա, 1900, էջ 101-105, *Արեղեան Մ.*, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2004, 152-158:

վածուն, որն առաջին անգամ հրատարակվել է 1790 թ.-ին Վենետիկում⁹⁰, ապա՝ 1842 և 1854 թթ.⁹¹: Ողումպիանոսի և Եզովպոսի առակների հետ հրատարակվել են նաև Գոշի առակները Բաքվում Խորեն քահանա Միրզաբեկյանցի կողմից:⁹² Առակները թարգմանվել են նաև ռուսերեն⁹³ և ֆրանսերեն⁹⁴:

Միջնադարյան հայկական առակներին նվիրված իր եռահատոր աշխատության առաջին հատորում մեծանուն հայագետ Նիկողայոս Մառը⁹⁵, քննելով Վարդան Այգեկցու առակների հեղինակային պատկանելության խնդիրը, անդրադարձել է նաև Մխիթար Գոշի առակներին: Հայագետը համոզված չէ, թե արդյոք Գոշի անունով հայտնի առակները նրանն են՝ հիմնվելով գլխավորապես այն հանգամանքի վրա, որ Կիրակոս Գանձակեցին այդ մասին չի հիշատակում իր «Հայոց պատմության» մեջ:⁹⁶ Նրան հայտնի չորս ձեռագրերը 17 և 18-րդ դարերի գրչագրեր են, որոնց վերնագրերում էլ հիշվում է Մխիթար Գոշի անունը իբրև հեղինակի: Այդ հիմունքով էլ Մառը կարծում է, որ որևէ հիմնավոր վկայություն չկա, որ առակները Գոշինն են. միգուցե հետո է ավելացվել նրա անունը: Բացի այդ՝ Մառի համար որպես հիմք է հանդիսացել այն, որ իր ձեռքի տակ եղել է ձեռագրական մի տեղեկություն, որով Գոշի անունով հայտնի առակներից 30-ը վերագրվում է Հովհաննես Երզնկացուն (ՄՄ Հ^մ 2189):⁹⁷ Մինևույն ժամանակ հայագետը, հանգամանալից անդրադառնալով այդ ձեռագրին, հիմնավորում է, որ այդ առակների հեղինակը Հովհաննես Երզնկացին չէ. նա պարզապես գրիչ է, ով արտագրել է առակները:⁹⁸

Հ. Տաշյանը Մառի ուսումնասիրությունից անմիջապես հետո՝ 1900 թ., լույս ընծայեց Մառի ուսումնասիրության հայերեն համառոտած շարադրանքը մինևույն վերնագրով՝ «Ժողովածոյք առակաց Վարդանայ»:⁹⁹

Ինչպես տեսնում ենք, Մխիթար Գոշի առակների ուսումնասիրությամբ զբաղվել են ոչ միայն հայ, այլև օտարազգի հետազոտողներ: Առակների քննական վերլուծությամբ ժողովածուն 1951 թ.¹⁰⁰ հրատարակել է նաև Էմ. Պիվազյանը, ով հանգամանալից անդրադարձել է Մխիթար Գոշի առակներին և Դատաստա-

⁹⁰Առակը եւ ոտանաւորք իրատականք սասցեալք ի նախնեաց մերոց ի հրահանգ ուսումնասեր համբակաց, Վենետիկ, 1790:

⁹¹ Առակը Մխիթարայ Գոշի, Վենետիկ, 1842, Նույնի, Վենետիկ, 1854:

⁹² **Գոշ Մխիթարի**, Ողումպիանոս եւ Եզովպոսի ընտիր առակները, թարգմ.՝ **Խորեն քահ. Միրզաբեկեանցի**, Բազու, 1878:

⁹³ **Орбели И.**, Басни средневековой Армении, Москва-Ленинград, 1956, Նույնի, Избранные труды, Ереван, 1963, Նույնի, Из истории культуры и искусства Армении X-XIII вв., Москва, 1968, **Маррь Н.**, Сборники притч Вардана, ч. 1, Санктпетербург, 1899.

⁹⁴ Այս մասին տե՛ս՝ **Ղուլիսանյան Ա. Գ.**, Մխիթար Գոշի առակների ընտրանին ֆրանսերեն, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 3 (629), Երևան, 2010, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 227-231:

⁹⁵ Նիկողայոս Մառը այս հրատարակության համար պարզևստրվեց Մեծ ոսկե մեդալով որպես Վարդան Այգեկցու և Մխիթար Գոշի առակների առաջին փայլուն հետազոտող:

⁹⁶ Այս մասին առավել մանրամասն տե՛ս՝ **Маррь Н.**, Сборники притч Вардана, ч. 1, Санктпетербург, 1899, стр. 66.

⁹⁷ Նույն տեղում, էջ 67-70:

⁹⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս նաև Մառը և հայագիտության հարցերը, Երևան, 1968, էջ 47-57, **Առաքեյան Ա.**, Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Երևան, 1959, էջ 375-385:

⁹⁹ **Տաշեան Թակույրոս վ.**, Ժողովածոյք առակաց Վարդանայ, ըստ հայագետ Ն. Մառի, Վիեննա, 1900:

¹⁰⁰ **Մխիթար Գոշ**, Առակներ, աշխ.՝ **Էմ. Պիվազյանի**, Երևան, 1951:

նագրքին:¹⁰¹ Առակների բովանդակային վերլուծությունը և նկարագրված դեպքերը, ոճը, միևնույն նպատակը համեմատելով Դատաստանագրքի բովանդակության հետ՝ անհնար է չնկատել, որ առակների հեղինակը Մխիթար Գոշն է:¹⁰²

1902 թ. «Journal Asiatique» պարբերականում ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Մակլերը¹⁰³ հրատարակում է Մխիթար Գոշին վերագրվող առակների ընտրանին՝ իր թարգմանությամբ:¹⁰⁴ Մակլերի թարգմանած առակները թվով 178-ն են, իսկ հայ բանասիրության մեջ դրանց ընդունված թիվը 190 է:

ը. Հովվական-քարոզիտական

1. **Ճառեր:** Մխիթար Գոշի մատենագրական ժառանգությունից անմասն չեն մնացել նաև ճառագրական երկերը: Նրա անունով մեզ հայտնի են չորս ճառեր՝ 1. «Ասացեալ Մխիթարայ վարդապետի, թէ զինչ է պատճառ մարդեղութեան Բանին Աստուծոյ Տեառն Հիսուսի Քրիստոսի, եւ թէ յարկ էր եղանալ տնաւորինութեան խորհրդոյ...», 2. «Վասն խոստովանութեան մեղանաց», 3. «Յաղագս ողորմածութեան եւ աղքատասիրութեան» և «Ճառ ի Յարութիւն Ղազարու»: Առաջին երեք ճառերն ընդգրկված են ՄՄ Հ^{մբ} 3276 ձեռագրում, իսկ վերջինը՝ Էջմիածնի Հ^{մբ} 1227 ձեռագրում: ՄՄ Հ^{մբ} 3276 ձեռագրում (Ժողովածոյ, ընդօրինակվել է 1640 թ. հետո, թ. 35ա-44ա) առկա ճառագրական երեք միավորները հրատարակել է Հ. Քյոսեյանը:¹⁰⁵ Իսկ «Ճառ ի Յարութիւն Ղազարու» ճառն անտիպ է:

Առաջին ճառն ունի դավանաբանական բնույթ: Ճառի շարադրման պատճառը, Մխիթար Գոշի օրոք հասարակական որոշ շրջանակներում տիրապետող դարձած այն մտայնությունն էր, թե առանց Բանի մարմնացման և մարդացման՝ Նա՝ Աստծո Որդին, գտնվելով երկնքում, կարող էր այնտեղից իրականացնել տնօրինական իր ողջ գործունեությունը: Գոշը, հակադրվելով նրանց, վկայակոչում է նրա տնօրինական գործունեությունը փաստող աստվածաշնչական բազում տեղիներ՝ համառոտ վերապատումով ներկայացնելով հիմնական դրվագները: Ճառագիրը տալիս է նաև եկեղեցու պատմության ընդհանուր շարադրանքը՝ եկեղեցու համար սպառնալիք դարձած հերձվածողների և հերձվածների քրիստոսաբանական թյուր տեսությունների վարդապետական ամփոփ բնութագրումներով: Ըստ Հ. Քյոսեյանի՝ ճառում առկա են որոշակի ժամանակավրեպ տեղեկություններ:

Մխիթար Գոշի մյուս երկրորդ և երրորդ ճառերն ունեն բարոյաբանական բնույթ: Նրանցում դրսևորվում է հեղինակի ոչ միայն Աստվածաշնչի, այլև հայրախոսական ժառանգության իմացությունը: Նա վկայություններ է բերում Եվագր Պոնտացու երկերից, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգությունից», Ներսես

¹⁰¹ **Պիվագյան Էմ.**, Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» բանասիրական քննություն, Երևան, 1987, էջ 95-139, Հայ մշակույթի նշանավոր գործիչները (V-XVIII դարեր), Երևան, 1976, էջ 266-282:

¹⁰² Առակների քննական վերլուծությանը մենք չենք անդրադառնա, քանի որ այն մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս է. մեր նպատակն է միայն Մխիթար Գոշի առակների համառոտ ակնարկը տալ:

¹⁰³ Ֆրեդերիկ Մակլերը Մխիթար Գոշի մահվան թվականը դնում է 1207 թ. (տե՛ս Choix de Fables Armeniennes attribuees a Mkhitar Goch, traduites par **F. Macler**, «Journal Asiatique», 1902, p. 461)

¹⁰⁴ Choix de Fables Armeniennes attribuees a Mkhitar Goch, traduites par **F. Macler**, «Journal Asiatique», 1902, p. 457-487.

¹⁰⁵ **Քյոսեյան Հ.**, Նորահայտ էջեր Մխիթար Գոշի մատենագրական ժառանգությունից, ԲԵՀ, Երևան, 2011, 133. 1, էջ 46-61:

Շնորհալու «Մատթեոսի Ավետարանի մեկնությունից», ինչպես նաև «արտաքին» իմաստասերների ժողովածուներից:¹⁰⁶

2. Աղոթքներ: Մխիթար Գոշի գրական ժառանգության մասն են կազմում աղոթքները: Նրա աղոթքների շուրջ հյուսվել են նաև ավանդություններ, ինչին արդեն անդրադարձել ենք համապատասխան ենթակետում: Մեզ հասած աղոթքները վկայում են, որ Գոշը աղոթագրական ժանրի մեծահռչակ հեղինակներից է: Աղոթքները կան Էջմիածնի, Երուսաղեմի, Վենետիկի, Վիեննայի, Ջամառի, Մյունխենի և այլ ձեռագրերում: Աղոթքները տպագրվել են 1886 թ. Երուսաղեմում և 1860 թ. Փարիզում Գրիգոր Նարեկացու երկին՝ Նարեկին կից:¹⁰⁷

Մխիթար Գոշի աղոթագրական երկերն ընդգրկված են ՄՄ մի շարք գրչագրերում:

Վերագրվող երկեր

Ջամառի Հ^մր 299 ձեռագիրը ունի «Տաղ ասացեալ Մխիթարայ Այրիվանից առաջնորդի, աստուածարան վարդապետի որ մականուամբն Գոշ կոչի, ասայ զսայ ի յատենի լալոտ աչաւք եւ ողբալի» վերնագրով տաղը, որը շատ ուսումնասիրողներ սխալմամբ վերագրել են Մխիթար Գոշին: Կարծում ենք՝ սա պարզապես սխալ ընդօրինակման արդյունք է: Երբեմն Մխիթար Գոշին շփոթել են Մխիթար Այրիվանեցու հետ¹⁰⁸:

Կ. Գանձակեցին հիշատակում է, որ, զգալով իր մոտալուտ մահը, Մխիթար Գոշը գրել է մի կտակ¹⁰⁹, որը ևս հրատարակված չէ:

Կորած երկեր

Ողբասածություն: «Ողբք ի վերայ բնութեանս՝ ի դիմաց Ադամայ առ որդիս նորա» երկի մասին հիշատակում է Կիրակոս Գանձակեցին «Հայոց պատմության» մեջ¹¹⁰, սակայն այն մեզ չի հասել:

Нарине Мирзоян - О литературном наследии Мхитара Гоша - На основании имеющихся источников и исследований данная статья вкратце свидетельствует о том, что перу Мхитара Гоша принадлежат богатое литературное наследие-Библиейские толкования, обучающие - назидательные, догматические, агиографические, молебные, юридические, трагические, историко-хронологические и пастырские произведения.

Narine Mirzoyan - On The works of Mkhitar Gosh - Accepting as a basis the existing sources and studies, this article records that Mkhitar Gosh has substantial works devoted to different branches of bibliography. He wrote Bible commentaries, teaching-advisory, dogmatic, hagiographical, prayer, law, tragedy and historical-chronological works, as well as pastoral books.

¹⁰⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 47-48:

¹⁰⁷ Աղոթք ի ժամ Ս. Պատարագի, Փարիզ, 1860, էջ 415, Աղոթք ի ժամ Ս. Պատարագի, Երուսաղեմ, 1886, էջ 435-440:

¹⁰⁸ Մխիթար Գոշին երբեմն շփոթել են Մխիթար անվամբ այլ գիտնականների հետ:

¹⁰⁹ Տե՛ս «Կիրակոս Գանձակեցի», Հայոց պատմություն, էջ 221:

¹¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 221:

Գ Ր Ա Կ Ա Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՒՆԵՐԱՆԳՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԸ ՀԱՍՈ ՍԱՀՅԱՆԻ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱԼԻՍԱ ՀԱՍԱՆՅԱՆ

Գույնը Սահյանի քնարերգության մեջ պատկերի կառուցման կարևոր տարրերից է: Բանաստեղծը գույների՝ ավանդաբար կայունացած իմաստները հարստացնում է ներ նրբերանգներով: Խարհրդանիշ-գունապատկերները դառնում են քնարական հերոսի հոգու թարգմանը, հետաքրքիր համադրումներով բացահայտում ոչ միայն պատկերի արտաքին նկարագիրը, այլև ներկայացնում են հեղինակի տրամադրությունը, մեկնաբանում ասելիքի ենթաշերտը, ընդգծում զգացմունքային հարուստ ներաշխարհը:

Բանալի բառեր. ապրում, բնապաշտություն, բնապատկեր, գույն, դեղին, երազանք, խորհրդանիշ, կանաչ, կապույտ, կարմիր, կարոտ, հույզ, մանկություն, ներաշխարհ, սպիտակ, սև, վերհուշ, օջախ:

Աշնան դողահար տերևներից, լեռնային ցողաթաթախ կաճանից, ժայռից կախված մարենուց, ամպի ճերմակաթույր պատառիկից, ձորից եկող ջրերի կարկաչից, այգաբացի շողիկներից, քարե լեռների առինքնող վեհությունից, մարդկային ներաշխարհի անբացատրելի ելևեջումներից, աննշան թվացող սովորական երևույթներից Համո Սահյանը հյուսել է հույզերի ու ապրումների անկրկնելի պատկերներ:

«Ջանգեզուրի բանաստեղծը» հայրենի գրականություն է բերում իր տպավորությունները՝ հայրենի բնաշխարհի խրոխտ գեղեցկությունը, բարձրաբերձ սարերի կանչը, նաիրյան բարդիների խշշոցը, զանգակ աղբյուրների մեղեդիները, հոգու սրտամաշ թախիծը, շառաչուն Որոտանի եզերքին նստած աղջկա պատկերը, որին հետո պիտի թաքուն շշնջար՝ ինչ էլ լինի, կգամ, ուր էլ լինեմ, կգամ...

Հետաքրքիր է Սահյանի քնարերգության գունային համակարգի կառուցվածքը, գունագեղ ու ներդաշնակ՝ նրա քնարերգության ներկայանակը: Խորհրդանիշ-գունապատկերները բանաստեղծություններին տալիս են առանձնահատուկ որակ: Բանաստեղծը խորհրդանիշ-գույների համադրմամբ արտահայտում է և՛ բնապատկեր, և՛ բազմազան ապրումներ՝ դառնալով քնարական հերոսի հոգու թարգմանը: Ջանգեզուրյան հպարտ լեռնաշխարհի ծիածնագույն երանգները լուսապսակ են գծում ամպածերպ լեռների վրա, կապտամով լեռնագագաթների երկնամուխ խոյանքը համադրվում է քնարական հերոսի հոգեկերտվածքին: Սահյանը հոգու թելերով կապված է լեռնային բնությանը, խոր ձորերում և սարերում ապրող մարդկանց: Բանաստեղծը դիմում է գույների օգնությանը ոչ միայն հմայող գեղանկարներ ստեղծելու, այլև իր զգացմունքային վերաբերմունքն արտահայտելու համար:

Գույնը Սահյանի քնարերգության մեջ պատկերի կառուցման կարևոր տարրերից է և հավասարաթեք գործածվում է կառուցվածքային մյուս միավորների կողքին: Բանաստեղծի գունային սիմվոլիկան կայուն է: Նա բացառիկ դիտո-

ղականությամբ գույների՝ դարեր շարունակ ավանդույթի ուժով կայունացած իմաստները (բուն թե փոխաբերական) հարստացնում է նոր նրբերանգներով: Գույների խորհրդանիշ-գործառնությունն ու նրբերանգային անցումները գեղագիտական արտածումներից գատ ներկայացնում են նաև կառուցվածքային այլ միավորների հետ զուգահեռ հարաբերություններ, ինչի շնորհիվ բանաստեղծը կարողանում է լիովին բացահայտել պատկերների ենթատեքստը և արտահայտել հոգու ասելիքը, զգացմունքային վերաբերմունքը՝ պարուրելով բանաստեղծական տողերը տրամադրություններին ներդաշնակ զգացմունքայնությամբ, կերտելով տպավորիչ գեղանկարներ: Գույները, զուգորդվելով գարնան, արևի, լույսի, բնության զարթոնքի հետ, արտահայտում են երիտասարդության, կենսասիրության, փթթումի հոգեվիճակներ: Սահյանի վերհուշային բանատողերը բացում են կյանքի խորհուրդները, նրբատես ու խոհուն քնարերգուի հոգու մեղեդիներն ու սիրառատ հույզերի գունապնակը: Բանաստեղծը դառնում է նուրբ հոգեբան, հոգու դրամայի և երազների երգիչ:

«Սահյանի՝ բնության մասին գրած բանաստեղծությունները, - գրում է Մեծելայտիսը, - քեզ տեղափոխում են նախապատմական ժամանակների հախուռն ու լուսնկա հոսքի մեջ, քեզ պարուրում վաղնջական օրերի ու գույների մաքրությամբ: Ավելի ճիշտ՝ հարստացնում: Իսկ էլ ավելի ճիշտ՝ մինչև այդ օրերը հասցնում մարդու զգացմունքի՝ կարոտի, սիրո ու ցավի երկարակեցության պարամետրերը, լայնացնում նրա կենսագրության սահմանները: Հենց դրանով է Սահյանն ընթերցողի մեջ ավելացնում գույնի, տարածության ու անադարտության նոր շերտեր: Հենց դրանով է նա մեզ դարձնում բոլոր ու բոլոր ժամանակների մասնակիցը: Եթե բանաստեղծ Սահյանը ոչինչ ստեղծած չլիներ, նրա բնապաշտական երգերն իսկ բավական են նրան դասելու հայ (և ոչ միայն հայ) պոեզիայի մեծերի շարքը»¹:

Զգալի են բնապատկեր կերտող ծիածանագույն մակդիրները, որոնք հերթագայում են իրար՝ ստեղծելով առանձնահատուկ որակ: Կապույտը, կարմիրը, դեղինը, սևն ու սպիտակը բնապատկերները ցողում են նրբին երանգներով.

Ամպրոպից հետո
Ճերմակ շուշանը ավելի ճերմակ,
Կակաչն ավելի կարմիր է լինում
Եվ մեղրածաղիկն ավելի դեղին:

Գույնն ու տրամադրությունը դառնում են բանաստեղծի գեղագիտության հիմքը, կենսասիրության ակունքն ու աշխարհայացքի վկայությունը.

Ծաղկավոր է երգիդ ուղին...

Հմայիչ է սահյանական գունագեղ աշխարհը՝ լեցուն հույզերով, նուրբ ապրումներով, ալեվետող թախիծով ու պայծառ հպարտությամբ.

¹ «Գրական թերթ», N 9, էջ 47:

Նրանք գալու
Եվ բերելու են են իրենց երգերում
Այնպիսի գույներ, այնպիսի բույրեր,
Այնպիսի կանաչ մի ուրախություն:

Բանաստեղծի գունապնակը ստեղծում է բնապատկեր ու գունային որոշակի տրամադրություն.

Մարն սպիտակ էր: Եվ սարի վրա
Քամին սպիտակ նժույգ էր տակիս:
Մարն սպիտակ էր, և սարի վրա
Փախչող ստվերն էր կանաչ հասակիս:

Մահյանի բանաստեղծություններից շատերը պարուրված են վերհուշի տխրության շղարշով, իսկ բնապատկերում տխրության խորհրդանիշ է դառնում կապույտ գույնը: Մեր գրականության մեջ կապույտի՝ որպես կարոտի պաշտամունքը ձևավորվել է դեռ վաղ անցյալում՝ Չարենցի «Օրածան» շարքում: Հոգու հուզական աշխարհի թաքուն էլևեջները խտանում են կապույտի մեջ.

Զմրուխտ անտառներ, լեռներ երկնաբարձ
Եվ կապույտ պատկեր իմ հայրենի տան...

Հին օրերի կանչն է արձագանքվում.

Իմ առաջին սիրո առասպելը մնաց,
Առունների կապույտ շրթունքների վրա...

Արթնանում են մանկության հրաշք առասպելները.

Ժայռերն են կանչում – մտած եթերը –
Կապույտը բերդերը իմ մանկության...

Կապույտ կարոտի հեքիաթային երազը ելևեջում է բանաստեղծի հոգում.

Կանգնել եմ կապույտ ամայության մեջ

Ես մեն ու մենակ... Եվ կապույտ-կապույտ

Մոլորակներ են բախվում ճակատիս:

Կապույտը վերհուշի թախիծ, տրտմություն է բերում.

Իմ վերհուշների կապույտ աշխարհում
Լեռները նորից երկինք են հագել,
Երկինքնուսվել են ոտքերս նորից:

Գույնը ձուլվում է հոգու փոթորկումների.

Կապույտ հողմերը զայրույթով կապույտ
Իմ կրծքի վրա բախվում են իրար
Եվ բաժանվում են կապույտ սուլոցով
Եվ չքվում կապույտ ամայության մեջ:

Կապույտը խտացնում է տառապող անհատի ուժն ու հպարտ մենակությունը.

Կանգնել եմ կապույտ ամայության մեջ
Կապույտ սուլոցով սաստում են կապույտ
Մարսուռը սրտիս...

Կապույտը դառնում է երազանքի գույն ու երջանկության սպասում.

Բարձրության կապույտ սարսուռների մեջ
Մի կապույտ-կապույտ գլխապտույտից

Օրորվում եմ ես...

Կանաչը Սահյանի գունային համակարգում ամենագործածական գույնն է՝ կանաչ քամի, կանաչ դարեր, կանաչ դայլայլներս, կանաչ ամպեր, կանաչ ծով, կանաչ գետ.

Հետը արև է բերում,
Կանաչ սարեր է բերում,
Կանաչ դարեր է բերում
Զորգորա գետը:

Այդ ամենը միահյուսում է մանկութ օրերի հիշողությանը.

Կանաչ ճամփեքով Սյունաց աշխարհի
Գնամ մանկական սրինգս փնտրեմ...

Բանաստեղծի հոգում հավերժորեն ծավալվում է հին օրերի ծովացած մեղեդին.

Ինձ է երագում մի կանաչ բարդի –
Բարձրացած բակում իմ հայրենի տան:

Կանաչի մեջ խտանում է երազանք, նպատակ, ապագա.

Իմ կանաչ կուռս, իմ ծաղկած նուռս –
Իմ քնքուշ քույրս, դու երբ ես գալու:

Կանաչ աստվածություն, կանաչ հրաշք, կանաչ հավիտենություն գունապատկերները խորհրդանշում են անմոռաց մանկությունն ու հայրենի բնաշխարհը.

Եվ կանաչ-կանաչ մամուռ են դարձել
Իմ արցունքների հատիկները տաք...

Կանաչը հիշեցնում է հայրենի հողի բույրը.

Նագում ես ու շորորում գմրովստե քո շորերեում,
Շուք արած ճամփի վրա մանկության կանաչ արտի...

Կանաչ հրաշքը՝ բարդին, հայրենիքից հեռու՝ պատերազմող բանաստեղծի հոգում, դառնում է կարոտի, սիրո ու հավատարմության անգուգական երգ՝ խորհրդանշելով հայրենական օջախի սրբությունը.

Ա՛խ, ասես խարույկ լինես՝ բռնկված կանաչ բոցով,
Ես հեռվից քեզ եմ գգվում կարոտով կրակ սրտիս:

Հույզն ու լիցքը վերհուշի տրամադրություն են ստեղծում, արտաքուստ թվացող անդորությունը հոգու սլացքն է սանձում.

Կանաչ ծով է քո շուրջն առաջվա պես,
Կանաչ մրրիկներ են երգում դարձյալ...

Սահյանի գեղագիտական համակարգում գույն - տարի, եղանակ - տարիք, սև - սպիտակ, վախճան - ձմեռ գուգորդումները համարժեքվում են.

Զրնգում էր կանաչ քամին դաշտում լայնատարած,
Իմ մանկության կանաչ երգը բերանացի արած:
Որոտում է կարմիր քամին, կարմիր կրակ դառած,
Պատանության կարմիր երգը բերանացի արած:
Հառաչում է ճերմակ քամին, աչքն անհայտին հառած,
Իմ ծերության ճերմակ երգը բերանացի արած:

Մահյանը մանկություն, հասունություն, ծերություն խորհրդանշող գունափոխումներին (կանաչ, կարմիր, դեղին, ճերմակ) գումարում է տարիքային փոփոխումները խորհրդանշող ծիլը, հասկը, ամպը, ձյունը և դրանց բերող թռչուններին՝ սարյակ, ծիծեռնակ, ագռավ:

Գույների տարատեսակ զուգորդումները՝ ենթատեքստային կամ փոխաբերական խտացումներով, դառնում են հոգեբանական ընդհանրացումներ.

Երբ դեղին փոթորիկն աշխարհում պարում է,

Ամպեղեն ծածկի տակ չոքում են լեռները:

Անդարձություն է խորհրդանշում դեղինը.

Դեղին փոթորիկ է այնտեղ նորից,

Հոգեվարքի դեղին մի առասպել:

Դեղինը հոգեմաշ տխրություն է բերում, կարոտ ու հուշեր.

Ուր որ նայում ես, դեղին բոցեր են,

Դեղին հրդեհ է և դեղին ծովս...

Բնապատկերի մեջ իշխող դեղինը միաձուլվում է հոգու ծովացած հույզերին.

Դեղին ծով են դարձել դարձյալ

Սյգիներ ու պարտեզ...

Մահյանի պոետիկայի յուրահատկություններից է բառիմաստի ընդլայնումը: Կարմիր բառը, բնանկարի գունային խորհրդանշան լինելուց բացի, հոգեբանական ճկուն անցումներով ընդգծում է սիրահարություն, կրակոտ սեր, ծաղկուն տարիք, նաև հուզիչ է դարձնում ապրումը և ավելի տեսանելի՝ պատկերը.

Մի կարմիր գատիկ իջավ

Բախտավոր սարվորի ուսին:

Մի կարմիր խնձոր ընկավ

Պատանի սայլվորի ուսին:

Երեսդ կարմիր կտրեց,

Երբ աչքս առավ քո ծամին...

Կարմիրի իմաստային վերափոխումները նույն հոգեվիճակներն արտահայտող հուզապրումային տարբեր նրբերանգներն են արտահայտում.

...Քարափները երկար կարմրին են տալիս:

Մահյանը պատկերաստեղծման բացառիկ վարպետ է, նա բացահայտում է բառի տեքստային ու ենթատեքստային բոլոր հնարավորությունները.

Ձեր դռան նռան ծառին

Մի կարմիր հավք էր թևածում...

Քնքուշ զգացմունքներն ու սիրո անցած երազների ծիրը բանաստեղծին տանում են դեպի մանկության գեղեցիկ ակունքներ.

Պահեր, գրկի մեջ պահեր

Կարմիր աստղերը ձկան,

Կարմիր արևս տաներ

Ջաղացպանի աղջկան:

Մահյանի բնանկարում, ինչպես ժողովրդական երգերում ու խաղիկներում, յուրօրինակ է կանաչ-կարմիրի՝ իբրև մեկ ամբողջական երանգի կիրառումը, որը երբեմն միահյուսվում է ազգային մտածողությանը.

Մերթ էլ կանաչ-կարմիր կապեց
Ճակատագիրն իր խաղերով:

Պատկերակերտման մեջ կանաչ-կարմիրը դառնում է բնանկարն
ընդգծող գուներանգ.

Կանաչ-կարմիր կապեց սարին
Պառավ կաճանը:

Սահյանական բանաստեղծական աշխարհում ծաղկում են
երագները, կանաչ-կարմիր հույսերը, ձգվում է Լեռնային Հայաստանի
գեղեցկությունների կախարդող մեղեդին.

Կեսօր: Կանաչ-կարմիր հովեր,
Կանաչ-կարմիր ծաղիկ ու խոտ:

Գունային անցումները նաև հուզական լիցքեր են բերում.
Ճախրում էինք՝ մեր առջևում
Կանաչ-կարմիր օրեր...

Մռայլ խոհերի մեջ անգամ գուներանգը մատնանշում է սպասում և
հավատ.

Սև լուրեր եկան կովից
Ու կանաչ-կարմիր հավատ:

Բայց հաճախ ամեն ինչ խունանում, անէանում է, ձուլվում օրերի
հավերժությանը.

Իմ կանաչ-կարմիր արևից
Մի դեղին շողք է մնացել...

Սահյանի երանգապնակում տեղ են գտել նաև վարդագույնը, մոխ-
րագույնը, մանուշակագույնը, շիկագույնը, ոսկեգույնը, ծիրանագույնը:

Բանաստեղծը գալիք մարդկանց է հանձնում ժողովրդի և հոգու
պատկերը, մաքառումների, ոգևորումների ու տագնապների մթնոլորտում
ծնված երագները, անքուն, անհանգիստ կարոտների մշուշում ձև առած
չքնաղ հեքիաթները, սիրո կարոտներն ու խորհրդավոր տեսիլները՝
ապրած կյանքի և գալիքի ուղիների մասին:

Սահյանը գույների օգնությամբ ստեղծում է գեղանկար, որի մեջ
խտացվում է հեղինակի զգացմունքային վերաբերմունքը: Ամենաքիչ
գործածականը սև գույնն է, որը հիմնականում բացասական հույզեր ու
մռայլ տրամադրություն է հաղորդում բնանկարին, ընդգծում հոգու
տառապանքը, անորոշության տաղտուկը.

Սևեր հազան ստվերի
Ծաղիկները անանուն:

Սևին համարժեքվում է ստվերը՝ դառնալով նույն հոգեվիճակի
կրող.

Խոնարհվում են հնձած խոտերի վրա,
Սև ստվերների դրոշները սև...

«Սև քրտինք է քամում» բանաստեղծության մեջ Սահյանը մեռնող ու
վերստին հարություն առնող բնության գունանկարով կյանքի ու մահվան
հավերժական խնդրի յուրօրինակ լուծումն է գտնում.

Սև քրտինք է քամում քարանձավը կրկին,
Սև երախը բացել և սև ամպ է լափում,
Մոռի թուփը կանգնել քարանձավի հոնքին
Եվ խեղճ առվի գլխին սև կարկուտ է թափում:

Դարերի տառապանք տեսած մեր ժողովրդի՝ դեպի հավերժություն գնացող երթն անխորտակ է.

Որքան ամպ ու բուք են տեսել այս սարերը,
Որքան սև ու սուգ են տեսել այս սարերը:

Բնապատկերն ու հոգեվիճակը բացում են մռայլ խոհերի ու տրամադրությունների ենթաշերտը.

Սև մարախի սև ամպն է մեր գլխի վերև...
Սև ամպրոպի տարերք է սև,
Սև կայծակ է ու սև կարկուտ...
Քանի սև ենք ճեղքել-անցել,
Այս սևին էլ կդիմանանք հավատացեք:

Հաստատվում է կյանքի շարունակության, անվեջանալիության գաղափարը՝ սևի ու կանաչի հակադրությամբ, մեղմացնող կարմիրի անցումներով: Բանաստեղծը ուշ աշնան խորհրդածությանը հավելում է մասրենու զարնան երագանքը, որը հույսի ու սպասումի երանգներ է ստանում «ձորի՝ մի խումբ կանաչի» ներկայությունից: Այս դեպքում գույնը խորհրդանշում է մարդկային ապրում.

Ժայռից մասուր է կաթում,
Կարմիր սարսուռ է կաթում,
Ձորում մշուշ է:

Խոհերի նրբին աշխարհում կարմիրը երագանքի խորհրդանիշն է.

Էլ ո՞վ է այս աշխարհում,
Մեզ կարմիր մի որդան տալու...

Բնապատկերային համապատասխան երանգներ ունեն մանկությունից ծերություն ձգվող կյանքի փուլերը՝ զարուն - ամառ - աշուն, իսկ համադրությունները Սահյանի քնարերգության մեջ շատ հետաքրքիր են.

Քո ձյունագեղ բարձունքից
Արևի հոտ է գալիս,
Աղբյուրներիդ արցունքից
Արևի հոտ է գալիս:

Ձմեռը անկումային տրամադրության ու մահվան զգացողության արտահայտություն է, իսկ նման Բանաստեղծությունները Սահյանի պոեզիայում քիչ են: Նրա գունային համակարգը պայծառ է, լուսավոր, արևոտ: Ճերմակը, սպիտակը դառնում են մաքրության, անաղարտության խորհրդանիշ, քնքուշ երագի, առաջին թրթիռի վկայություն, որ պարուրվում է անմոռաց ու չխամրող թախիծով: Բանաստեղծի հոգում լուռ ալիքվում են ցավոտ կորուստները, առաջին ձյունն աստվածային զորությամբ մաքրագործում է անցյալի հետքերը՝ բերելով քնքուշ մի հանդարտություն.

Ճերմակ մեղմություն է փռում ձորերն ի վար
Եվ մաքրության ճերմակ հրապույրը
Լեռնաշխարհի քարե եղջյուրներից կախված

Այս առաջին ձյունի վարագույրը:

Միայն վերջին՝ «Ինձ բացակա չդնեք» ժողովածուում, կյանքի մայրամուտին մոտեցող բանաստեղծի խոհին ավելի համահունչ են դառնում սպիտակի ու ճերմակի տարերանգները («Վերջին լեռնանցք», «Քարերն ի վեր», «Ձյուն է գալիս», «Այցի եկա»):

Մարն սպիտակ էր: Եվ սարի վրա
Քամին սպիտակ նժույգ էր տակիս:

Մարն սպիտակ էր: Եվ սարի վրա
Փախչող ստվերն էր կանաչ հասակիս:

Գունային պատկերների մեջ գծագրվում է բանաստեղծի կերպարը, ներկայանում է կենսագրությունը, ընդգծված գունային գամման բացահայտում է խոհերի ու ապրումների ելևէջները: Իր կյանքի կեսօրին նա դառնում է իմաստուն, որն ածանցվում է հասակից, ճանապարհից, ցավերից ու երազներից, ժողովրդական փորձից և անձնական լարումներից, հին ու նոր ապրումներից և անկատար երազներից.

Տարիներ ~ րս, տարիներ ~ րս,
Ու ր մնացին տարիներս,
Կանաչ - կարմիր,
Սև, սպիտակ տարիներս...
Որքան ցավեր տվին, առա՛ն,
Որքան սևե՛ր, սևե՛ր, սևե՛ր,
Տարիներ ~ րս, տարիներ ~ րս:

Բնական գույներով հյուսվում են ցավն ու սերը, սևն ու սպիտակը, ինտելեկտն ու թռիչքը: Ծավալվում է գուլալ ու անպաճույճ երգը մարդու ճանապարհի, հեռավոր կարոտների և մորմոքների մասին: Մա հավերժական դրամա է, բայց ամեն անգամ հնչում է նորովի՝ գունային հաջորդականությամբ ստեղծելով հոգեբանական անցումներ:

Սահյանի պոեզիայում պատկերավորման միջոցներն իրենց բազմազանությամբ, հուզաարտահայտչական գունավորմամբ և ժողովրդական լեզվամտածողությամբ բնորոշ դրսևորումներով հմայք ու գեղեցկություն են հաղորդում խոսքին, ասելիքը դարձնում դիպուկ, իմաստալից, ուժեղացնում բանաստեղծության ենթատեքստային իմաստը, պատկերները դարձնում բնական ու գունազեղ: Գույնը դառնում է բանաստեղծի հոգու թարգմանը:

Алиса Асанян - Смысл цветowych оттенков Амо Сагияна - В статье „Смысл цветowych оттенков Амо Сагияна” - представляется цветовая палитра поэтического мира Амо Сагияна, раскрывается значение каждого цвета, гармоничного с думами и переживаниями великого лирика. Посредством устойчивой цветовой символики и интересного сопоставления стихотворных строк раскрывается праницательная сагияновская сущность, комплексный подход к цвету. Сагиян с особой наблюдательностью обогащает новыми оттенками закрепившиеся на протяжении веков в силу традиций конкретные значения цветов. Цветы-символы выражают картины природы,

различные переживания, становясь переводчиками души лирического героя. Проводятся параллели с лирическими палитрами армянских поэтов.

Alisa Hasanyan - *The meaning of the hue of colours in Hamo Sahyan's lyric poetry* - In the article "The meaning of the hue of colours in Hamo Sahyan's lyric poetry" is represented Hamo Sahyan's poetical world's colour-plate (palette), each symbol of colour which is harmonizes with great lyric poet's thoughts and feelings.

With interesting comparison (unity) of steady symbolism of colour and poetical lines opened Sahyan's profound inner world, the systematized approach to colour. Sahyan with exceptional observation enriches the stabilized meanings of colours with new hues (tints) by force of traditions for centuries. Symbol-colours express landscape, various feelings becoming the translator of lyric hero's soul.

Parallels are drawn between poets' colour-plates (palettes).

ԼԵՌՆԱՇԽԱՐՀՆ ՌԻ ՆՐԱ ՄԱՐԴԻԿ Ս. ԽԱՆՁԱԴՅԱՆԻ
«ՄԱՏՅԱՆ ԵՂԵԼՈՒԹՅԱՆՑ» ՎԻՊԱԿՈՒՄ

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱՅԱՆ

Զարմանալիորեն կենսասեր ու հայրենի հողին արմատներով կապված մարդիկ են Ս. Խանզադյանի «Մատյան եղելությանց» վիպակի հերոսները: Հայրենիքը նրանց համար ոչ թե սոսկ ծննդավայր է, աշխարհագրական տեղանք, այլ կայուն ու անբեկանելի արժեհամակարգ, ինքնաճանաչման ու ինքնահաստատման միջոց:

Ս. Խանզադյանը գրականություն է բերում Սյունյաց լեռնաշխարհի գույներն ու երանգները, բայց չի կտրվում մեծ աշխարհի անցուդարձից: Մեծ աշխարհը նրա համար ճանաչելի է դառնում հայրենի բնության, այդ բնության մեջ ապրող հասարակ մարդկանց ու նրանց զգացմունքների, նախնականորեն պարզ կենցաղի, վարք ու բարքի միջոցով:

Բանալի բաներ. վիպակ, կերպար, հերոս, թեմա, ժանր, հետպատերազմական արձակ, վավերագրություն, ժամանակ, տարածություն:

Ս. Խանզադյանի հարուստ գրական ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ ունեն պատմվածքներն ու վիպակները: Հեղինակը ձգտում է պահպանել Սյունյաց լեռների մարդկանց բնատուր, տոհմիկ էպիկականությունը, բանաստեղծական գեղեցկությունն ու վեհությունը, որոնց գեղարվեստական առաջին դրսևորումներն ի հայտ եկան հենց պատմվածքներում և վիպակներում: Այս առումով իխստ ուշագրավ է «Մատյան եղելությանց» (1966) վիպակը, որը մեր գրականության մեջ «քրոնիկոնի ժանրի» բարձրագույն դրսևորումներից է: Վիպակը միանգամից լայն ընդունելություն գտավ:

«Մատյան եղելությանց» վիպակը լայն առումով չի տեղավորվում ժանրի դասական պատկերացումների մեջ: Կարելի է ասել, որ այն ո՛չ վիպակ է, ո՛չ վեպ, ո՛չ էլ վավերագրություն*, որովհետև այնտեղ ներկայացված է իսկապես ապրված մի իրողություն, որը հնարավորություն է տալիս պահպանել ժամանակի բարոյահոգեբանական մթնոլորտը, այն ներկայացնել այնպես, որ ընթերցողին թվում է, թե ինչքան էլ ժամանակ անցնի, այն երբեք չի հնանա:

Վիպակում քայլ առ քայլ Ս. Խանզադյանը բացահայտում է գավառական քաղաքի պատկերը և նրա համապատկերում՝ ժամանակին այդ քաղաքի համար խորհրդանիշներ հանդիսացող մարդկանց:

Ժամանակներն արագորեն փոխվում են, ու նրանց հետ փոխվում է ամեն ինչ՝ մարդկային ու հասարակական հարաբերությունները, անգամ՝ քաղաքի փողոցների անունները. «Ահա, օրինակ, այս մի փողոցը, որին քաղաքացիք իրենց նախաձեռնությամբ հիմա Անտառահայաց են անվանում: Ի սկզբանե նրա անունը եղել է Փեխի Կոլոլ, հետո՝ Յարսկի, հետո, ինչպես վկայում է ինքը՝ Ճել Ավան բիձան, կնքվել է Կարմիր Կարդան, հետո էլի նոր անուններ...»¹:

¹ *Խանզադյան Ս.*, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Ե., 1983, էջ 474-478: Այսուհետև բնագրում կնշվի միայն հատորը՝ հոմեական, էջը՝ արաբական նիշերով:

Փողոցների անունները նույնպես հեռու են գրական պայմանականություններից և արձագանքում են ժամանակի քաղաքական մթնոլորտի փոփոխություններին, մակընթացություններին ու տեղատվություններին, բնութագրում աշխարհագրական կոնկրետ տարածության յուրահատկությունները:

Յուրահատուկ կոլորիտ ունի Ս. Խանգադյանի նկարագրած գավառական քաղաքը, յուրահատուկ հատակագիծ, ճարտարապետական յուրահատուկ լուծումներ («Քաղաքի բոլոր տները քարաշեն են ու կամարակապ դարպասներ ունեն: Տների գույգ դարպասներից մեկը մարդկանց ելումուտի համար է, մյուսը՝ անասունների: Ամեն տուն իր առջև պարտեզ ունի: Հռչակավոր է այն տունը, որ հոտոլ ջրի վրա տնկած արտաքնոց ունի և քուչի բավկոն» (V, 475):

Յուրաքանչյուր շեղում այս համապատկերից դժգոհության պիք է առաջացնում նույնիսկ քաղաքի հասարակ բնակիչների մոտ. «Վերջերս Սրեդի Ազի գնացած, այնտեղ ապրող Մուռիկ Սամոնը «դաչ» եկավ ու հոր համար քաղաքում նոր տուն կառուցեց: Մակայն Մուռիկ Սամոնը նոր տան դարպասը տափակ շինեց: Այս նորամուծությունը աղմուկ գցեց: Կոմունալ բաժնի վարիչ ընկեր Երանուսյանը Մուռիկ Սամոնին կանչեց իր մոտ:

-Անունդ մուրտառ է, ուզում ես քաղաքիս պատկերքն էլ մուրտառե՞ս: Կամ դարպասդ կամարակապ պիտի լինի, կամ չպիտի լինի: Վե՛րջ:

Մուռիկ Սամոնի հոր համար շինած տան դարպասը դարձավ կամարակապ և քաղաքի պատկերը փրկվեց մուրտառվելուց» (V, 475):

Քաղաքը հատակագծվել է գերմանացի ճարտարապետի կողմից և փողոցների դասավորությամբ շախմատի տախտակ է հիշեցնում: Քաղաքի բոլոր տանիքները կապված են կարմիրով ներկված թիթեղից, և զարնանը, երբ ծաղկում են խնձորենիները, բալենիներն ու կեռասենիները, մի չքնաղ տեսարան է փոփում վերնից քաղաքին նայողների առջև՝ իր անկրկնելի գեղեցկությամբ, ճարտարապետական կարգավորվածությամբ:

Ա. Բակունցի Կյորեսից շատ քիչ բան է մնացել Ս. Խանգադյանի նկարագրած գավառական քաղաքում, որը «գավառական» է կոչվում միայն այն պատճառով, որ հեռու է մայրաքաղաքից: «Ուղիղ ու լայն են քաղաքի անուն կրող և անանուն փողոցները: Անուն կրողները կոկված, հղկված են ասֆալտով, մայթերին անպտուղ ծառեր ունեն:...Անհամար բարդիները քաղաքին երկնամերձ տեսք են տալիս: Ընկուզենիներն իրենց հզոր ճյուղերը մի պարտեզից մյուսն են հասցնում, կովի ու վեճի առիթ տալիս հին հարևանների միջև» (V, 475):

Ամենևին ինքնանպատակ չեն քաղաքային այս պատկերներն ու մեծապես նպաստում են հերոսների բնավորության գծերի, հայրենի եզերքի նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքի, նրանց աշխարհընկալման բացահայտմանը:

Քաղաքային յուրահատուկ պատկերները ջերմ զգացումներ են առաջացնում Ճել Ավան բիձայի հոգու խորքում, ու նա տիրոջ զգացումով է անում, ինչպես ինքն է իրավացիորեն մտածում, իր անչափ կարևոր գործը:

Անտարակույս է, որ լեռնաշխարհն իր որոշակի ազդեցությունն է թողնում այնտեղ ապրող մարդկանց հոգեկերտվածքի վրա՝ նրանց մեջ մշակելով առնականության, անհնազանդության գծեր, մարդկային ու հասարակական հարաբերությունների գնահատման յուրահատուկ արժեհամակարգեր:

Քաղաքային բնապատկերները ներդաշնակվում են մարդկանց արտաքինի նկարագրություններին: «Մատյան եղելությանց» վիպակի հերոսներից շատերը քաղաքը շրջափակող լեռների նմանապատկերներն են կարծես, նրանց պես ամուր կառչած հողին, նրանց պես անդրդվելի ու հաստատուն: Ու ամեն լուսաբացի, երբ արեգակը դուրս է գալիս այդ լեռների հետևից ու ողողում քաղաքի փողոցներն իր առատ ու անխառն լույսով, փառավորվում է Ճել Ավան բիձայի հոգին, ու նա նորանում է ամեն բացվող առավոտի հետ:

Գավառական քաղաքի համապատկերն ամբողջացնում են հասարակական տարբեր շերտեր ներկայացնող մարդիկ՝ Գիրք Պետրուսը, դպրոցի դիրեկտոր Ձենդ Մկրտիչը, զինկոմիսարիատի Յուրիկը, Կտրեմ-Կցեմ Համբարձումը, Ճառ Սիմոնը, Գրուգ Բարսեղը, Մըզմզ Վլադը, Սև Թութին, Չեկայի Վրույրը, Դիք Ալբերտը, Կապիտոսող Սուդին, Թառչի Ղազարը, Փայտոնչի Գիրիշը, Բուխալտեր Մուխանը, Լդար Սերոժը, Գրաբար Գաբրիելը, Հռաքել Դայի Տասը տարի դատախազը, նրա եղբայր Փափախ Ավագը, Մեհրաբի Վարթերը՝ յուրաքանչյուրն աշխարհընկալման իր կերպով, իր կենսափիլիսոփայությամբ:

Մարդկանց մականունները նույնպես խիստ բնութագրական են և հեռու են գրական պայմանականություններից: Դրանցից շատերը եկել են տասնամյակների խորքից և լիարժեք բնութագրում են մարդուն, իրենց մեջ ամփոփում խոր իմաստ, ժողովրդական կենսափիլիսոփայության դրսևորումներ և ամփոփ պատկերացումներ են տալիս հասարակական տարբեր շերտերի տրամադրությունների, բնավորությունների, սովորությունների վերաբերյալ:

Գավառական քաղաքում մարդկանց նախ և առաջ ճանաչում են «իրենց փոթով» («Եթե նույնիսկ քաղաքի քոթուկ Տատունց Անդրեաս հայրիկին հարցնես, թե ո՞րն է Հովհաննես Չաքարյանի տունը, ապա նա զարմացած կնայի քեզ ու անվերապահ կհաստատի, թե նման մարդ առհասարակ չի եղել ու չկա իրենց քաղաքում: Ապա նորից կզարմանա, երբ իմանա, թե դու Բարութչի Ավանեսին ես որոնում», կամ՝ «Շրջանային ավտոգրասենյակի պետի անվան փոթը Անհամ է՝ Անհամ Ալեքսան, թեպետ նա բնավ էլ անհամ մարդ չէ, ուտող-խմող է, բիլիարդ խաղացող ու մարդամոտ» (V, 486):

«Մատյան եղելությանց» վիպակում Ս. Խանգադյանը մեծ տեղ է հատկացնում հասարակ մարդկանց, նրանց աշխարհընկալմանը, հայացքներին, որոնք մի դեպքում խիստ նահապետական - պահպանողական են, մի այլ դեպքում արդյունք են ժամանակի մթնոլորտային փոփոխությունների: Եվ եթե Ս. Խանգադյանի մի շարք պատմվածքներում ու վիպակներում առաջնային տեղ են գրավում բարոյախրատական ընդգծված շեշտադրումները, ապա «Մատյան եղելությանց» վիպակում ընդգծվում են կերպարների բնավորության հոգեբանական արտածումները:

Քաղաքի մտավորականության համապատկերն ամբողջացնում են «միակ եղանակագուշակ, մի հին գրաբար օրացույցի տեր ու կարդացող Գրաբար Գաբրիելը, խմբագրության սրբագրիչ Վրիպակ Միքայելը, Ագրոնոմ Սաղաթելը, ովքեր որոշակի սկզբունքների ու կայուն համոզմունքների տեր մարդիկ են, որ երբեք չեն ենթարկվել ժամանակի փոփոխություններին ու մնացել են մաքուր ու ազնիվ, ինչպես Ճել Ավան բիձան...

Այս ազնիվ ու քաղաքի համար խորհրդանշական կերպարների կողքին կան նաև մարդիկ, ում նկատմամբ իր որոշակի վերաբերմունքն ունի Ճել Ավան բիժան՝ Հռաքել դայի – Տասը տարի դատախազը, նրա եղբայր Փափախ Ավազը, Հիմնարկ Ղևոնը...

Նրանց ի նկատի ունենալով է երբեմն Ճել Ավան բիժան մտքում հաճախ կրկնում. «Եթե քաղաքի «Ավրորա» կոլտնտեսության չորքոտանիներին էլ նկատի ունենանք, ապա այս քաղաքում անասունն ավելի շատ է, քան ասունը: Թեկուզ մարդ համարենք Հիմնարկ Ղևոնի նման երկոտանուն անգամ» (V, 487):

1930-ականների տիպիկ ներկայացուցիչներից է Հիմնարկ Ղևոնը, ում մատնագրերով տասնյակ մարդիկ են արքայազնի, բանտարկվել կամ գնդակահարվել: Միայն խեղճ ու կրակը Կապիտոսող Մուղին տասը անգամ դատարան է կանչվել նրա մատնագրերով այն բանի համար, որ ժամանակին ցանկացել է քահանա դառնալ, մի քանի ամիս սովորել է Էջմիածնի ճեմարանում և ճեմարանը փակվելուց հետո վերադարձել է՝ Էջմիածնից էլ խռով, աշխարհից էլ:

Ղևոնի համար բացարձակապես նշանակություն չունի, որ Մուղին հիմա աթեիստ է և առաջինն ինքն է բարձրացել քաղաքի մայր եկեղեցու գմբեթը ու պոկել խաչը: Անտոն լեզվաբան ուսուցչի մեկնությամբ կապիտոսող նշանակում է այլաբանորեն խոսող: Նաև դրա համար է Հիմնարկ Ղևոնը ամիսը հինգ անգամ «Ակտ» կազմում նրա վրա, ներկայացնում դատարան՝ «քաղաքիս օդն ապակառող սույն այս ապօրինի էլեմենտի դեմ»:

Սյունեցիները հայտնի են իրենց սրախոսությամբ, իրերն իրենց անունով կոչելու սովորությամբ: Կապիտոսող Մուղին սյունեցիների այդ հատկանիշների մարմնացումն է վիպակում: Նրա սուր լեզվից խուսափում են բոլորը՝ սկսած Փայտոնչի Գիրիշից մինչև Հռաքել Դայի Տասը տարի դատախազը:

Ս. Խանգաղյանը ուշագրավ դիտարկումներով, երբեմն քնարական ջերմությամբ է ներկայացնում այդ տարօրինակ մարդու կերպարը՝ նրա միջոցով հեզնելով քաղաքի տերերին, բացահայտելով նրանց անգրագիտությունը, ազահությունը, անմարդկային վերաբերմունքը հասարակ մարդկանց հանդեպ: Ժամանակին Մուղին նույնիսկ սիրահարված է եղել և սիրած աղջկան՝ Մանիկին, հորդորել է «չխրտնել իր տիրացու լինելու հանգամանքից»: Նույնիսկ նամակներ է հղել նրան՝ «գլխին գրած» «Պրուլետարներ բոլոր երկրների, միացեք...»: Ժամանակներն էին այդպիսին, և Մուղին չէր կարող ապրել այդ ժամանակից դուրս: Ս. Խանգաղյանը, սակայն, անգամ Մուղու կերպարում հուզական շերտեր է հայտնաբերում, կարողանում է թափանցել իր հերոսի խեղված ներաշխարհը («Երբեմն-երբեմն նրա աչքերը լցվում են: Աչքերի մշուշի մեջ նախ հալվում է Էջմիածնի, ապա Կլոբ Մանիկի պատկերը» (V, 483):

Հիմնարկ Ղևոնը Հռաքել դայի դատախազի ամենատես աչքն է, նրա աջ ձեռքն ու ապրում է կրիայի պես իր պատյանում ամփոփված, որովհետև բոլորը խուսափում են նրանից: Ստորաքարշ այդ «երկոտանին» վերնների համակրանքին արժանանալու համար կանգ չի առնում ոչ մի բանի առջև, խտրականություն չի դնում միջոցների միջև ու պատրաստ է մատնագրերով «ժողովրդի թշնամի» որակելու անգամ արյունակից հարազատներին:

Մի եզակի երևույթ է Փափախ Ավազը («Տասը տարում տասներկու պահեստ, խանութ է համտես արել Փափախ Ավազը: Նախ փորձել է կոլտնտեսու-

թյան պահեստի համը՝ քսան ցենտներ մեղր: Հետո՝ ոսկեղենի խանութը՝ հարյուր հինգ մատանի, իննսունմեկ ժամացույց: Հետո Ջագոստկոտ՝ քսանինը խոշոր եղջյուրավոր՝ կով ու եզ... Հետո... Հետո նրան ազատել են «համաձայն իր դիմումի»:

Իր «Փոթը» նա վաստակել է «ձեռքն ընկած ձվից էլ մազ թոցնելու՝ փափախ անելու հանճարեղ ունակության համար» և իր վարքագծով ու ընչաքաղցությանը հիշեցնում է դասական գրականության մեջ բազմիցս հիշատակված վաճառականներին, հատկապես Մարկոս աղա Ալիմյանին, ով, սակայն, կնախանձեր Ավագին՝ հաճախորդներին վարպետորեն խաբելու տարաբնույթ միջոցների տիրապետելու համար:

Թե՛ Հիմնարկ Ղևոնը, թե՛ Պաղոշ Ածատը, թե՛ Փափախ Ավագը մարդկային այն տիպերն են, ովքեր սովեր են գցում քաղաքի վրա ու աղճատում նրա համապատկերը:

Այս մարդկանց գործունեությունը ծավալվում է ճել Ավան բիձայի աչքի առջև, ու ծերունին շատ հաճախ տառապում է իր անգորությունից, բայց հոգու խորքում խղճում է նրանց, որովհետև «ինչքան չլինի նրանք էլ մարդ են, թեկուզ...»: Անհնարին է Ավան բիձայի կարծիքով լիովին վերափոխել այդ մարդկանց, «դարձի բերել», բայց, այնուամենայնիվ, հնարավոր է ինչ-որ չափով մաքրել նրանց հոգին, մաքրել կեղտից ու փոշուց, հիշեցնել, որ վերջապես իրենք էլ են մարդ:

Քաղաքի բնակիչներին Ս. Խանգաղյանը ներկայացնում ու բնութագրում է ճել Ավան բիձայի՝ նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի համապատկերում, որտեղ առանձնահատուկ տեղ ունեն ազնիվ աշխատանքով ապրող մարդիկ, հատկապես «կարդացած ու լուսավորյալ մարդիկ»՝ քաղաքի միակ ու նշանավոր լեզվաբան Անտոն ուսուցիչը, Գիրք Պետրուսը, դպրոցի դիրեկտոր ու կենսաբանության դասատու Ձենդ Մկրտիչը, Մեհրաբի Վարթերը, Արդար Հաբուղը, Թառչի Ղազարը, ովքեր մի առանձին գույն ու երանգ են ավելացնում քաղաքի համապատկերին:

Քաղաքի ամենանշանավոր մարդկանցից է լեզվաբան Անտոնը, ում ամեն առիթով դիմում են և՛ քաղաքային իշխանության ներկայացուցիչները, և՛ հասարակ մարդիկ, ովքեր լեզվաբան Անտոնին համարում են բառի բժիշկ («Մեռած, թաղած, մի բառ տուր ձեռքը, կկենդանացնի»):

Անտոնին անվերապահորեն հավատում է հատկապես գործկոմի նորընտիր նախագահ Ալբերտ Ալեքովիչը՝ Դիք Ալբերտը՝ մեկը քաղաքային իշխանության այն ժամանակների համար տիպիկ ներկայացուցիչներից, ով ամեն ինչի մեջ փորձում է «քաղաքական իմաստ տեսնել» («Իսկ էդ գրաբար ասածդ քաղաքական որակ ունի», «Կապիտալիզմն ի՞նչ է նշանակում», «Իսկ զինքը դ... Այս էլեմենտ Սև Թուրին ինձ նման մարդուն ասում է «զինքդ քեզ հավաքիր»: Այդ էլեմենտ «զինքդ» էլ չի՞ քաղաքական որակ» (V, 480): Ու լեզվաբան Անտոնն ուրախանում է, որ բավարարելով Դիք Ալբերտի հարցափրությունը՝ փրկում է հանդուգն Սև Թուրուն, բայց նաև դառնանում է, որ Ալբերտ Ալեքովիչը քաղսովետի նախագահ դառնալուց հետո «զինքը չհավաքելով» շատ է մեծամտացել:

Քաղաքի կոլորիտային կերպարներից է դպրոցի դիրեկտոր ու կենսաբանության ուսուցիչ Ձենդ Մկրտիչը, ով «աբաթը մեկ անգամ երեխաներին բերում,

կանգնեցնում է Ճառ Միմոնի պատշգամբի դիմացը, ցույց տալիս պատշամբի յուրաներկ պատին նկարած առյուծներն ու այքը դասագրքից չկտրելով՝ բացատրում նրանց կազմվածքը» (V, 477-478):

Քաղաքին մի առանձին հմայք է տալիս Թառչի Ղազարը, ում սիրում ու հարգում են բոլորը. «Բարձրահասակ է Թառչի Ղազարը, թիկնեղ և... և կույր: Գիշերները հազվադեպ է լինում տանը: Գալիս, տանում են հարսանիքի, նշանդրեքի, կնունք-ծնունդի կամ թանկ հյուրի պատվին տված քեֆ-ուրախությունն իր նվազով զարդարելու» (V, 483):

Ազնվության ու բարության մարմնացում է Թառչի Ղազարը, իր սկզբունքներին հավատարիմ («Երբ նրան հրավիրում են հարսանիք, խոսք չի տալիս, մինչև չհամոզվի, որ հարսը խոնարհ է ու պարկեշտ, փեսան էլ շատ ու շիթթաղ չի: Եթե նորապսակներն իր սրտովը չեն լինում, ապա շրջկումի քարտուղարն էլ զա իր ետևից, հրավերը մերժում է» (V, 484):

Նա ճել Ավան բիձային առաջին բարևողներից մեկն է քաղաքում, և Ավան բիձան հաճախ է մտածում նրա մասին ու հանգում այն եզրակացության, որ «որքան էլ չարը շատանա, բարին հա՛ կա»:

Ուրույն նկարագրի տեր է Ագրոնոմ Սաղաթելը, ինչպես ինքն է իրեն բնութագրում՝ «ջահելությունը գիտությանը զոհ արած» մարդ, ով ոչ կին ունի, ոչ էլ կին ունենալու միտք:

Տիպիկ այունեցու մարմնացում է Սաղաթելը՝ «շապիկն ուզիր, կհանի կտա: Մերժել չգիտի: Քաղաքում շատերն են Սաղաթելից փող պարտք անում: Նրա հույսին են հատկապես քաղաքի պետական թատրոնի եկվոր դերասանները»: Վիպակում վարպետորեն է դրսևորվում Ս. Խանգաղյանի արձակի պոետիկայի յուրահատկություններից մեկը՝ հեգնանքը՝ որպես բնավորությունների բացահայտման, մարդկանց բնութագրման միջոց օգտագործելու հնարք:

Ահա թե ինչպես է նա բնութագրում քաղաքի «թատերասեր» հասարակությանը. «Հոգու մեղք արած կլինենք, եթե ասենք, թե քաղաքը թատրոնից խրտնում է: Ապա թող թատրոն անեն «Պըլը Պուղին», «Տմբլաչի Խաչանը» կամ «Նամուսը»: Այն ժամանակ պետական թատրոնի դերասանները չեն ընկնի Ագրոնոմ Սաղաթելի դռները՝ փող պարտք անելու համար: «Պըլի Պուղու» տոմսի համար Անտոն ուսուցիչը չի խնայի կիրակնօրյա մսի փողը, իսկ կոլտնտեսության հովիվ Ադունց Պետին մի գառ կծախի, որ թատրոն գա՝ հանդերձ ընտանյոք» (V, 500):

Սա գավառական կյանքի տիպիկ օրինակ է, որի միջոցով հեղինակը ստեղծում է ծիծաղաշարժ, բայց միաժամանակ տխուր մի պատկեր. «Այդպես է: Թե չէ, ո՞վ գլուխ ունի դնգացնելու «Համլետի» կամ «Անտառի ծառերի» համար: Իրենք մրգերով լի անտառ ունեն՝ անտառապահ Հիբուն Արշակ, և քաղաքն էլ լիքն է համլետներով, որոնք, բոլորն էլ, առաջին միջնակարգի դիրեկտոր Ձենդ Մկրտիչի վկայությամբ, փուչ կենդանիներ են» (V, 500):

Հեգնախառն հումորով են ներկայացված գիրք Պետրուսը, Սոցապ Գալուստի գնդապետ փոքր եղբայրը, ով ամեն առիթով կրկնում էր՝ «Ետ ենք մնում, տղե՛րք, մենք պետք է շատ բան սովորենք Եվրոպայից, ետ ենք մնում», Պաղո՜ Ածատը, ով «կիրակի օրերին սպիտակ բլուզ էր հագնում, վրան կապում կարմիր փողկապ՝ քորոցով: Գլխին շյապա էր դնում, Հիմնարկ Ղևոնի և էլի մի երկու իր նմանների հետ ողջ օրն անցկացնում Սոցապ Գալուստի եղբոր հետ,

կերուխում անում նրա փողերով: -Է՛լ ինչով ենք ետ մնում Եվրոպայից, ընկե՛ր գնդապետ,- ժպտում, անմեղ հարցնում էր նա» (V, 503):

Հետո Հիմնարկ Ղևոնի մատնությամբ «բռնե-բռնե» տարում գնդապետին էլ բռնեցին («-Մենք ոչինչ չունենք բուրժուական փտած Եվրոպայից սովորելու, իսկ էդ գնդապետը եկել, մեզ մոլորեցնել է փորձում») (V, 504):

Գավառական քաղաքի խորհրդանիշներից է Փայտոնչի Գիրիշը՝ Ճել Ավան բիձայի հարազատ մարդկանցից մեկը՝ ողբերգական ճակատագրի տեր մի անձնավորություն, ով լրացնում է քաղաքի պայծառ ու լուսավոր մարդկանց շարքերը:

«-Կյանքդ երկար լինի, Գիրիշ: Օլես, ծաղկես,- հաճախակի օրհնում է նրան Ավան բիձան»՝ հիշելով, թե ինչպես նա իրեն նվիրեց իր հին կառքերից մեկի «գույգ անիվները՝ սոնիով, պողպատե առանցքով», նաև՝ «Իմ թաղմանը դագաղս կբռնես, Ավան» պատվերով» (V, 488-489): Փայտոնչի Գիրիշը նույնպես տիպիկ այնուհետևի այն մարդկանցից է, ում հաշմել ու հոգեպես խեղել է ժամանակը: Նա հիասթափված է աշխարհից, ինքն իրենից, իր «ընկերներից», որոնց համար ոչինչ չէր խնայում: Ս.Խանգադյանը նուրբ դիտարկումներով է ներկայացնում Փայտոնչի Գիրիշի հոգեկան ծանր ապրումները, որոնք ավելի խորացան, երբ նրան ձայնագուրկ հոչակեցին, այսինքն՝ ավելորդ մի մարդ, ում մահով մի երանգ պակասեց քաղաքի համապատկերից:

Վիպակի հերոսներից շատերը, ճիշտ է, հանդես են գալիս պատումի առանձին դրվագներում, սակայն լրացնում են միմյանց, ունեն իրենց ներաշխարհը, աշխարհընկալման կերպը, երջանկության, երագանքների, ուրախության ու վշտերի վերաբերյալ իրենց մտասնեռումները:

Ժողովրդական առողջ սկզբունքների մարմնացումն է Գաղթական Սարգիսը, ով լույսի մի շող է գավառական քաղաքի «քաղաքակիրթ հասարակության» ապականված միջավայրում:

Գաղթական Սարգիսը եղեռնից հրաշքով փրկված բեկորներից մեկն է, որ գաղթել ու արմատավորվել է Գորիսում, ուր նրան սյունեցու յուրահատուկ ջերմությամբ ու կարեկցանքով են ընդունել տեղացիները, օգնել, ով ինչով կարողացել է:

Երգրի կարոտով ու մի օր անպայման հայրենի եզերք վերադառնալու հույսով ու հավատով է ապրում Գաղթական Սարգիսը, ու այդ հավատն օգնում է դիմանալու կյանքի դաժան փորձություններին: Նրա կերպարում կարծես թե շարունակվում են Ա. Բակունցի Հազրոն ու Լառ Մարգարը՝ աշխատանքի նկատմամբ ունեցած իրենց յուրահատուկ վերաբերմունքով, աշխարհահիացումի իրենց զգացումներով: Դաժան փորձությունների միջով է անցել Գաղթական Սարգիսը, տեսել է արհավիրք ու սով, կոտորած ու ավերածություններ, բայց իր նոր եզերքում պահպանում է հայրենիքին, իր արմատներին տեր կանգնելու գենը ու, փառք աստծո, հիմա գոհ է, որ շրջկոպի երկանիվ սայլակին լծված հաց է հասցնում քաղաքի բնակչությանը:

Գաղթական Սարգիսին հեղինակը ճանաչում է տասնամյակների հեռվից («Ես դեռ մի թիզ բան էի, երբ նա հացը շալակով էր կրում խանութ» և հետո՝ «երբ ես սկսեցի դպրոց հաճախել, Գաղթական Սարգիսը հացը փոփ խանութ էր տա-

նում շրջկոռպի երկանիվ սայլակով, որին, փողոց մաքրող ճել Ավան բիձայի նման, լծվում էր ինքը» (V, 473):

Վիպակում ավարտուն է միայն ճել Ավան բիձայի կերպարը, որին կարելի է տեսնել սյուժետային բազմաճյուղ ծավալումներում, բայց ուշագրավն այն է, որ մնացած կերպարները մի կողմից նպաստում են գլխավոր կերպարի լիարժեք բացահայտմանը, մյուս կողմից՝ հնարավորություն են ընձեռում հեղինակին ներկայացնելու Սյունյաց լեռնաշխարհի մարդկանց յուրահատուկ գծեր՝ ուղղատուրություն, հայրենի եզերքի նկատմամբ սյունեցու առանձնահատուկ վերաբերմունք, ճշմարտախոսություն, իրերն իրենց անունով կոչելու համարձակություն:

Քաղաքում հայտնի Անտոն ուսուցչի մեկնաբանությամբ «Ճելը» ևս հայոց գավառական բարբառի մնացուկ է: Նշանակում է շուտ արա, շտապիր: Դե, ամեն առավոտ Ավան բիձան աղաչաձայն շտապեցնում է որդուն («Ճե՛լ արա, Գրիգոր ջա՛ն, ճե՛լ արա»): Այդ ճելը փոթ մնաց նրա տան վրա: Ինքը՝ ճել Ավան, տղերքը՝ ճելի Գրիգոր, ճելի Մուխան, ճելի Ներսես, Վարդան, Իվան» (V, 486):

Արդեն ծեր է Ավան բիձան: «Վաղուց շարքից դուրս եկած կապա-արխալուղ ու խոնջան շավար է հագնում ճել Ավան բիձան: Նման մասունք միայն կտրում-կարում է տրիկոտաժի ֆաբրիկայի ավագ ձևավար Կտրեմ-Կցեմ Համբարձումը: Միայն նա: Հին մասունք են նաև ճել Ավան բիձայի փափախը՝ կտուրին դրված խոտի դեզ, արծաթապատ գոտին, մինչև ծնկները հասնող գուլպաները»:

Գավառական քաղաքի հին բնակիչներից է Ավան բիձան: Վաթսուն տարի առաջ էր, երբ առաջին անգամ հորն օգնելու նպատակով ձեռքն առավ երկար կոթով ավելն ու սկսեց մաքրել «Ցարսկիի աղտեղությունը»: Այդ տարի հայրը սպանվեց («Մի լուսաբացի կոզակներն իրենց ձիերը չափ գցեցին, թռան Ցարսկի փողոցով և սմբակահար արին գլուխը կախ փողոց մաքրող հորը»:

Քաղաքի «կալ-կլոր» հրապարակից է սկսվում Ավան բիձայի աշխարհը, որը միայն իրենն է՝ պարփակված տխուր ու ծանր օրերով, լցված հոգսերով ու ցավերով, մարդկային ազնիվ ցանկություններով ու բարեմաղթանքներով:

Մաքրում է Ավան բիձան քաղաքի հինգ հիմնական փողոցները, որոնց բնակիչներին բոլորին մեկ առ մեկ ճանաչում է, հիշում է նաև նրանց, ովքեր այլևս չկան, ոմանց՝ թռուցիկ կերպով, ոմանց՝ հարգանքով ու ակնածանքով: Ահա նա մաքրում է Անտառահայաց փողոցը, ու նրա ակնաչնչություն հնչում է Գաղթական Մարգսի աղաղակը: «-Մըր անուշ աշխարհ ավերեցի՛ն: Տեղ տվեք, չոջուխներուս պահեմ...»: Աղաղակում էր Գաղթական Մարգիսը՝ «մտը, ցամաք գետնին, վեց չոր-ցամաք երեխա: Մաքրված-լպաստված էր քաղաքը՝ հացը՝ կրակի գին»:

- Բարի լույս, Ավան բիձա,- ամեն առավոտ մաղթում են անցորդները: Մաբարի լույս է նաև մարդկանց ու աշխարհին, լույս, որ ցրում է ստվերներն ու խավարը, լցվում մարդկանց հոգիները, հույսի դռներ բացում, ազնվություն ու բարություն սերմանում:

Գաղթական Մարգիսի պես Ավան բիձան էլ ապրում է հիշողությունների դաշտում, ժամանակ առ ժամանակ հետ է տալիս նրանց կծիկը, հիշում է մեկը մյուսի հետևից կորցրած իր հինգ գավակներին ու մխիթարվում, որ թոռը՝ Գրիգորը, գոնե կա, ու ինքը հիմա միայն նրանով ու նրա համար է ապրում:

Ճել Ավան բիձայի կերպարում միահյուսվում են հին ու նոր իրողությունները հաստատող անցյալն ու ներկան, որտեղ ապրում են վիպակի հերոսները: Նրա կենսապատումի աննշան թվացող դեպքերն ընդլայնվում, դառնում են ծավալուն ու ընդգրկուն, «զգայական-մտային հոսքի մեջ սրվում, պայծառանում են հնագույն պատկերների մանրամասները»:

Վիպակում գործողությունները ծավալվում են համաժամանակային ու տարածաժամանակային հարթություններում: «Հենց նոր մտա լուսաբացից շիկնած մեր փոքրիկ քաղաքը և առաջինը հանդիպեցի մեր հարևան Ավան բիձային» (V, 473):

Իր կյանքի հոգսաշատ, հաճախ կիսաքաղց օրերին անգամ Ճել Ավան բիձան չի կորցրել մարդու նկատմամբ ունեցած իր հավատը («Դե, մարդ ասածդ լավ արարած է») ու աշխատել է միշտ բարձր պահել իր անունը:

Ս. Խանգաղյանը Ճել Ավան բիձայի կերպարում խտացնում է մարդկային բարձր իդեալների վերաբերյալ գրողական իր պատկերացումները:

Ազնվության մարմնացում է Ճել Ավան բիձան, ով չի կարողանում արգահատանքի խոսքեր չչպրտել բոլոր նրանց երեսին, ովքեր օրը ցերեկով խաբում-թալանում են միամիտ մարդկանց, նվաստացնում նրանց:

Ինչքան կատարյալ կլինեք աշխարհը, եթե չլինեին պատերազմներ, ինչքան ուրախություն ու խիղճ կթևածեր աշխարհում, եթե այն բնակեցված լինեք միայն ազնիվ ու մաքուր հոգիներով. սա է Ճել Ավան բիձայի՝ աշխարհի վերաբերյալ ունեցած պատկերացումների կիզակետը:

Աշխարհը, ծերունու կարծիքով, բոլորիս տունն է, ու բոլորիս պարտքն է շարունակ բարեփոխել այն, մաքրել աղտեղություններից, ծնկաչոք երկրպագել այս հող ու քարին, քրիստոնեական բարեգործությամբ վերաբերվել յուրաքանչյուր շնչավոր արարածի նկատմամբ ու ոչ մի դեպքում չկորցնել լավի ու բարու հանդեպ եղած հավատն ու հույսը:

Իր ազնվությամբ Ավան բիձան ազնվացնում է քաղաքը («Այդ օրերին քաղաքն իրեն ավելի ազնվացած գտավ»):

Ուշագրավ կերպով է Ս. Խանգաղյանը նկարագրում իր հերոսին պատճառած ուրախությունն ու հրճվանքը, տառապանքն ու ցավը:

Կյանքի դաժան փորձությունների միջով է անցել Ճել Ավան բիձան:

Հարցը միայն այն չէ, որ նա ապրել է կոլեկտիվացման ու կուլակաթափության ծանր օրերը, ականատես է եղել բազմաթիվ ողբերգական իրադարձությունների, զգացել հանիրավի դատապարտված մարդկանց ընտանիքների ցավը, դառնությունը, տեսել սովից մահացող ծերերի ու երեխաների, այլև այն, որ իր միամիտ պատկերացմամբ «աշխարհը շատ է անկատար, և այն, որ մարդիկ այդ անկատարությունն ընդունում են որպես ի վերուստ սահմանված կեցության կերպ («այսպես եղել է, այսպես էլ կլինի»):

Առաջին ծանր հարվածը որդու՝ Իվանի մահն էր. «Մեռավ համատարած կոլեկտիվացման տարին: Համայնացումը եկավ անսպասելի: Աբգար Հաբուդի մի հատիկ կովը տարան, միացրին Սաղըդի Հաբուդի երեք հարյուր ոչխարին ու համայնացրին: Իրեն՝ Ճել Ավան բիձային էլ իր էշի ու սայլակի հետ կոլտնտեսական գրեցին... Հացը պակասեց... Մինչև հացը բերեցին, սովը երևաց Ավան բիձայենց թաղում, հասցրեց մի երկու երեխա թոցնել... Հացը հասավ: Բայց դե սովը հասց-

րել էր տանել Փոստատար Նիկոլի վեց աղջիկներից մեկին, այն, որ Իվանի հետ էր սովորում» (V, 514): Իվանի վիշտը դեռ չէր մոռացել, երբ ոռնաց պատերազմը: Գրիգորից փոքր տղան՝ Միքայելը, զինվորական հրամանատար էր: Առաջ նա գնաց: Հետո տարան Գրիգորին, Ներսեսին, մի երկու տարի հետո էլ՝ Վարդանին: Իսկ Ավան բիձան շարունակում էր մաքրել փողոցները, ու ամեն անգամ որդիներին հիշելիս կոկորդը խցանվում էր, ծնկները թուլանում էին.

- Հիվա՛նդ ես, Ավան բիձա:

- Չէ, որդի, ես չէ, աշխարքս է հիվանդ... Մտքերիս ճամփան ընկա:

«Մտքերի ճանապարհի» յուրաքանչյուր հանգրվանում միշտ մի լուսավոր կղզի է հայտնաբերում Ավան բիձան: Հիշում է որդիների մանկության տարիները, երբ ինքը դեռևս ջահել էր ու եռանդով լեցուն, երբ կարիքն ու պակասությունները հեշտ հաղթահարելի էին թվում, անցողիկ: Տունը մանկան աղմուկով ու ճիչերով էր լեցուն, և տխրության ու ցավի համար տեղ չկային նրա անկյուններում: Ոչինչ, որ երբեմն օրերով հաց չէին ունենում, ոչինչ, որ երեխաները հագուստ չունեին... Կարևորն այն է, որ նրանք կային, ու ինքը մեն-մենակ չէր... Բոլորն էին այդ վիճակում, և դրանից էր երևի, որ մարդկայնություն ու խիղճ կար, առավել կարիքավորներին, տուն ու տեղ կորցրածներին, ջարդերից մի կերպ մազապուրծ եղածներին օգնելու, սատար կանգնելու, օրվա մի կտոր հացը նրանց հետ կիսելու ազնիվ ցանկություն:

Մաքրում է ծերունին քաղաքի անունավոր փողոցների աղտեղություններն ու փոշին ու թերթում է հուշերի կծիկը. «Այս տունը Բակունց Ստեփանինն է: Այս մայթը մաքրելիս նա հիշում է Ստեփանի որդուն՝ Ալեքսանին: Անձամբ էր ճանաչում ճեղ Ավան բիձան Ա. Բակունցին, ով «եկավ, հարություն տվեց հող ու առասպել դարձած Գուրջու Օբուն, կենդանացրեց ավերակ Աքարը, ձմեռն էլ ալպյան մանուշակի բույր տվեց հին քարանձավներին, տաք անձրևի խշշոցի պես իր խոսքերը շաղ տվեց մարդկանց հոգու սև ցեղերի վրա: Ու ամեն անգամ նրան հան-դիպելիս Գրաբար Գաբրիելը ժայթքում էր ի խորոց սրտի.

- Արևդ շա՛տ, Ալեքսա՛ն, էս ի՞նչ նշխար-մեռոն տվիր մեզ» (V, 517-518):

Նուրբ հոգի ուներ ճեղ Ավան բիձան ու իրիկնահացից հետո ծալապատիկ նստում էր թախտին ու որդիներից մեկին հորդորում մի բան կարդալ Ալեքսանից: Շունչը պահած լսում էր, «հեռանում է իր փողոցների փոշիներից, խրվում Մթնաձորի մամոռոտ ծերպերը: ...Տունը լցվում է հանդ ու հացի բույրերով: Աշխարհը քաղցրանում է: Մերկ ու ահռելի ժայռերը դառնում են մարդ արարած, և լույս է կաթում Դրնգանի խորխորատներում» (V, 519):

Ճեղ Ավան բիձան հիշում էր Դիլան դայուն, Մոնային, ու թվում էր՝ «ջահելանում է ինքը և ջահելանում է տան պուճախում ճախարակ մանող, միշտ հիվանդ իր պառավը, դառնում խշխշան հարս Մոնան՝ շիկնած երեսով, չթե զգեստով՝ ուրցի հոտը ծոցերում» (V, 519):

Կապույտ աչք-ծիծաղով տղա էր Ալեքսանը ու ամեն հանդիպելիս հարցնում էր.

« - Բարի լույս, Ավա՛ն բիձա: Էլի՞ մաքրում ես:

- Էլի՛: Մարդը կա՛ ապականությունը հետը: Ի՞նչ կա-չկա:

- Հե՛չ: Կաքավաբերդի գլխին ամպ է նստում» (V, 517- 518):

Ու ամեն անգամ Ավան բիձան, երբ աշխարհից մի պահ վերանալու, գեղեցիկին հաղորդակցվելու, աշխարհը մաքուր-մաքուր տեսնելու պահանջ էր զգում, դիմում էր որդիներին.

- Մի մեր Ալեքսանի գրքից մի բան կարդացեք:

Բակունցի եղերական մահից հետո մահանում է նրա հայրը՝ Ստեփանը, որի դագաղը «միայն ութ հոգով վերցրին ու տարան հանգստարան: Միայն ութ հոգով, դրանց հետ ինքը՝ Ճել Ավան բիձան, Փոստատար Նիկոլը, Գաղթական Սարգիսը... Գերեզմանի ճանապարհը հոտոտելով գալիս էր Հիմնարկ Ղևոնը՝ ականջը ածելի...» (V, 520):

Ու նոր ցավ է ապրում բազմաթիվ ցավեր տեսած ծերունին. «Հոր գերեզմանը կա, տղայինը՝ ոչ»:

Հետո վառեցին Ալեքսանի գրքերը, «Սոնային ու Դիլան Դայուն, Գյուրջի Օբու նշխարները...»:

Մինչև կյանքի վերջ Ավան բիձան սուրբ նշխարի պես պահում է հին կարասում «խաշիլի ու ձավարի ցորենի մեջ» ահասարսուռ 37-ին թաքցրած գիրքը: Երբեմն-երբեմն «գիշերային լռության մեջ Ճել Ավան բիձան կարասից հանում էր Ալեքսանի գիրքը, շուռուժուռ տալիս կոշտացած ձեռքերով, հոտ քաշում: Հո չի՞ բորբոսնետ, մզկել: Չէ, կարասում չոր ցորեն է: Յորենն աշխարհ է պահում, այս գիրքն էլ: Ափսո՛ւ, կարդալ չգիտի, թե չէ նկուղի լույսը կվառի ու կկարդա՛... Կկարդա, մինչև աշխարհի վերջը, մինչև իրեն էլ տանեն թաղելու...» (V, 521):

Ճել Ավան բիձայի մահով քաղաքում մի ամբողջ ժամանակաշրջան է փակվում ու մի մեծ հարցական է կախվում քաղաքի վրա.

-Հիմա ո՞վ պիտի մաքուր պահի մեր քաղաքը...

Ս. Խանզադյանի պատմվածքներն ու վիպակներն ունեն տարածական ընդգրկումների բավականին լայն շրջանակներ: Բոլոր պարագաներում, սակայն, նրանց գործողությունները ծավալվում են Սյունյաց լեռնաշխարհում, որտեղից սկսվում է անվանի գրողի՝ մեծ աշխարհի ճանաչողությունը:

Ванан Агабабян - Нагорье и его люди в повести Серо Ханзадяна „Матян егелутянц“ - Герои повести „Матян егелутянц“ С. Ханзадян удивительно жизнелюбивые и вросшие корнями в родную землю люди. Родина для них не просто месторождения, географическая местность, а постоянная и непоколебимая система ценностей средство самопознание и самоутверждения.

С. Ханзадян привносит в литературу цвета и оттенки Сюник с кого нагоря, но не теряет связи с внешним миром. Этот большой внешний мир познается автором через чаяния простых людей, живущих в этой природе, через изначальную простоту быта и поведения людей.

Vahan Aghababyan – The highlands and its people in Sreo Khanzadyan’s Nowelette “MatyanYeghelutyants” - In the article, it is discussed, that the heroes of S. Khanzadyan’s novel “MatyanYeghelutyants” are surprisingly worldly and devoted people to their motherland. The motherland is not only just a place of birth or geographical site, but also a stable and unshakeable system of values, and a means of self-establishment and self-acknowledgement.

The literature of Khanzadyan brings the colors and tints of Syunik Highlands, but he is not sidetracked from the outer current world. He makes the big world become recognizable through his native nature, through the people and their feelings living in that nature, preliminary with the aid of simple living, behavior and manner.

**ՄԻՐՈՍԱՐԲԵՐ ՄՈՏԻՎՆԵՐԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ՉԱՓԱԾՈՒ ԼԵԳԵՆԴՆԵՐՈՒՄ**

ՀԱՄՄԻԿ ՎԱՆՅԱՆ

Հողվածում դիտարկվել է սիրո մոտիվների բազմազանությունը (սիրո աստվածային ծագումը /«Իրիցկնկա աղբյուրը»/, անպատասխան սեր /«Սիրո վեպը»/, անմուրազ սեր /«Լեյլի ու Մեջլում»/, հարատև սեր /«Հավերժական սերը»/, սպասման հոգեբանությունը սիրո մեջ /«Ասպետի սերը»/, բացասելով հաստատելու սիրո հոգեբանությունը /«Սիրահար Նադոն»/ և այլն) Ավետիք Իսահակյանի չափածո լեգենդներում ու բալլադներում:

Բանալի բաներ. Սիրո տարբեր մոտիվներ, աստվածային սեր, անպատասխան սեր, անմուրազ սեր, հավերժական սեր, սպասման հոգեբանությունը սիրո մեջ, չափածո լեգենդներ, բալլադ, ձև, բովանդակություն:

«Հայ գրականությունը միջնադարից մինչև Իսահակյանը ունեցել է շատ քնարերգուներ՝ սքանչելի տաղասացներ, ինչպես Աղթամարցին ու Թլկուրանցին, սիրո սրտագրավ երգիչներ, ինչպես Քուչակն ու Մայաթ-Նովան և շատ ուրիշներ, բայց Իսահակյանը, ժառանգելով նրանց ոսկե տավիղը, ավելի բազմակողմանի հնչեցրեց սիրո մոտիվները»¹, - իրավացիորեն բնութագրել է Ստ. Ջորյանը:

Սիրո մոտիվների բազմազանությամբ են աչքի ընկնում Ավետիք Իսահակյանի չափածո լեգենդներն ու բալլադները՝ սիրո աստվածային ծագումը («Իրիցկնկա աղբյուրը», 1891), անպատասխան սեր («Սիրո վեպը», 1908), անմուրազ սեր («Լեյլի ու Մեջլում», 1910), հարատև սեր («Հավերժական սերը» 1914), սպասման հոգեբանությունը սիրո մեջ («Ասպետի սերը», 1917), բացասելով հաստատելու սիրո հոգեբանությունը («Սիրահար Նադոն», 1934) և այլն:

«Իրիցկնկա աղբյուրը»՝ չափածո լեգենդում դրսևորվել է սիրո զգացմունքի աստվածային սկիզբը: Լեգենդի համար հիմք է ծառայել Շիրակում տարածված «Հացթուխ իրիցկինը» վերնագրով ավանդավեպը:

Աղքատ մարդուն համբույր տվող իրիցկինը, տերտերին տեսնելով, վախից և ամոթից շփոթվում է, ընկնում վառ թոնիրը: Աստծո հրաշքով տաք թոնիրը դառնում է մի գով աղբյուր, իսկ իրիցկինը՝ մի ոսկեղեն ձուկ:

Եվ հատակից գով աղբյուրի, ջինջ աղբյուրի, մեղմորեն,
Երեսն ելավ իրիցկինը՝ դառած մի ձուկ ոսկեղեն:

Եվ ոսկեղեն ձուկը նայեց՝ դարձ ու գոջում աչքերում,
Նայեց սիրով հեզ տերտերին, որ աղոթք էր մրմնջում:

Հանկարծ, թրը՝ պ, պոչը շարժեց, սուզվեց ձուկը ջրի տակ,
Փրփուր հանեց, տիղմը ելավ, սնցավ աղբյուրն անապակ:
Այն օրվանից իրիցկինը անմեռ, անմահ ձուկ դառավ,

¹ Ստ. Ջորյան, ԵԾ 12 հատորով, հ. 12, Եր., 1990, էջ 121:

Եվ թոնիրն էլ «Իրիցկնկա աղբյուր» անունը առավ (էջ 160-161):

Լեգենդի՝ 1894թ. տարբերակի վերջնամասում, որը չկա հիմնական տեքստում, ակնհայտ կերպով արտահայտվել է ամուսնական հավատարմության գաղափարը.

... Ա՛խր, հլպատ էսպես արավ
Տերը ծով ու ցամաքի.
Որ խրատվին մարդ ու կնիկ,
Հարս ու փեսա ու աղջիկ.
Որ պսակի կարմիր օրեն
Մինչև մութը գերեզման
Սուրբ նարոտին, սուրբ կոսբանդին
Հաստատ, ամուր, պինդ կենան²...

«Միրո վեպը» չափածո լեգենդում կույր գուսանի շուրթերով ներկայացվում է անպատասխան սիրո մի վեպ:

Աշխարհեաշխարհ անցել, հեռու երկրից չքնաղ աղջկա դուռն է հասել մի սիրուն տղա և նրա պատուհանի տակ սեր է աղերսում:

Մակայն աղջիկը չի լսում նրան,
Եվ միտն է բերում՝ ինչպես մի անգամ
Շքեղ, աննման եկավ մի ասպետ
Եվ անցավ, գնաց ու չնայեց ետ:
Լքել է կույսը դոյակը ոսկի,
Առել է ձեռը մի ցուպ երկաթի,
Ընկել է թափառ
Աշխարհե-աշխարհ
Միրած ասպետին գտնելու համար,
Որ գնաց, գնաց... առանց վերադարձ (էջ 173):

Այստեղ ականա հիշում ես կանացի սիրո վերաբերյալ մեր մյուս մեծ գյումրեցու՝ Հովհաննես Շիրազի բանաստեղծական դիտարկումը.

... Կնոջ ետևից երբեք չվազես,
Չվազես երբեք ետևից փառքի,
Ինչքան շատ վազես նրանց ետևից,
Փառքի ետևից և թե աղջկա,-
Այնքան կփախչեն միշտ քո առջևից,
Ինձ չես հավատում, քո վիշտը վկա³ ...

Սեր աղերսելու մոտիվն առկա է նաև «Ասպետի սերը» բալլադում, որտեղ, սակայն, առաջնայինը սպասման հոգեբանությունն է սիրո մեջ:

Իսահակյանի բալլադի հիմքում ընկած է միջնադարյան մի այլաբանական գրույց, որը դեռևս Վրթանես Փափազյանն էր գործածել իր «Ասպետ» պատմվածքում՝ յուրովի իմաստավորելով այն: Ըստ այդ գրույցի՝ մի գորեղ ասպետ, թողած հայր ու մայր, տուն ու տեղ, եկել, կանգնել էր իր իղեալի ամրոցի տակ և նրանից սեր էր ուզում: Բայց աղջիկը սիրտ չունեք, քարսիրտ էր, բոլորին մերժել էր և ետ

² ԳԱԹ, Իսահակյանի ֆոնդ, II բաժին, N 4:

³ Հ. Շիրազ, Հատընտիր, Եր., 1992, էջ 20:

դարձրել: Նիզակը ցցելով ժայռի մեջ, ձին կապելով հսկա կաղնուն՝ հաստատակամ ասպետը սպասեց ամիսներ ու տարիներ՝ արհամարհելով ձյուն ու քամի, արև ու խորշակ, քաղց ու ամեն խոչընդոտ: Իսկ մեռնելիս «խնդրեց աստծուց մի-միայն մի բան. այնպես անել, որ դիակն իսկ իդեալից անբաժան մնար:

Եվ աստված լսեց նրան. քարացրեց դիակն ու ձին, ու նիզակը ամրոցի կողքին:

Այսպես ասպետը սիրեց և քարացած՝ հավիտյան մնաց իր իդեալի մոտ»⁴:

Միջնադարյան այս գրույցը Վարպետի գրչի տակ շնչավորվել է՝ դառնալով անշեջ սիրո մի ուրույն արտահայտություն:

«Կանաչ-կտրիճ» մի ասպետ, սիրելով ոսկեղեն ամրոցում ապրող «հուր ու հրաշք» մի աղջկա, նրա սիրո համար պատրաստ է աշխարհը տիրելու և նրան ընծա բերելու, սրով կուրծքը պատռելու և սիրով լի սիրտը նրա ոտքերի տակ նետելու.

-Հրաշք-աղջի՛կ, թագավորիս գորքերով
Կես աշխարհը դրոշակիս տակն առա.
Քեզ սիրեցի, սիրող տուր ինձ, քո սիրով
Մյուս կեսն էլ տիրեմ, բերեմ քեզ ընծա:

...

-Ինչպե՛ս հայտնեմ սրտիս հուրը, նագելի՛ս.
Կուզե՛ս պատռեմ կուրծքս հիմա այս սրբով,
Ոտներիդ տակ նետեմ սիրտս սիրով լի,
Մեռնիմ ուրախ ու բախտավոր՝ քո սիրով (էջ 186):

Սակայն աղջիկը դա՛ չէր ուզում ասպետից, այլ անշեջ սեր, որը պիտի արտահայտվեր սպասումի միջոցով.

-Թե կսիրես, թո՛ղ ինձ հիմա ու գնա՛,
Ու ականջ դի՛ր, մի օր դուռդ կըբախես:
Այսպես ասաց, ու իր ծոցեն մարմարյա
Նետեց նրան մի հատիկ վարդ հրեղեն (էջ 187):

«Բոց կարոտով, լի հույսով» սպասեց ասպետը շարունակ, իսկ երբ մահը վրա հասավ, ծոցից հանեց սիրո վարդը «ու համբուրեց, ու համբուրեց, ու ...մեռավ՝ հոգին լցված բլբուլների երգերով»:

Անշեջ հրի, այսինքն՝ հավերժական սիրո, երջանկության սպասումը բնորոշ էր և Փարվանա չքնաղ արքայադստերը: Նրա երագած անշեջ հուրը, սակայն, կտրիճները փնտրում են ոչ թե իրենց ներսում, այլ դրսում: Եվ այդպես ամբողջ կյանքի ընթացքում սպասում է ու սպասում աղջիկը, իսկ կտրիճները չկան ու չկան, որովհետև

... Շատ, շա՛տ անգամ բերող հոգին
Ինքն է այրվում նրբա մեջ⁵ ...

Բայց, իհարկե, իրենց բովանդակությամբ ու գեղարվեստական արժանիքներով Հովհ. Թումանյանի «Փարվանա» և Ավ. Բասիակյանի «Ասպետի սերը» բալլադները միանգամայն տարբեր ստեղծագործություններ են:

⁴ Վ. Փափազյան, ԵԺ 5 հատորով, հ. 3, Եր., 1958, էջ 200:

⁵ Հ. Թումանյան, ԵԺ 4 հատորով, հ. 1, Եր., 1969, էջ 254:

Իսահակյանի «Լեյլի ու Մեջլում» չափածո լեզենդում արտահայտվել է դժբախտ սիրահարների անմուրազ սիրո հավերժականության գաղափարը:

Այս լեզենդի համար հիմք է ծառայել Ս. Հայկունու գրառած քրդական համանուն ավանդավեպը: Համաձայն այդ ավանդության՝ Մեջլումը մորը պատմում է «դրախտի հյուրին» տեսնելու մասին երազը: Մայրն էլ գնում է «Զգիրու շուկան»՝ փնտրելու և գտնելու որդու երազի աղջկան: Լեյլին, ճանաչելով Մեջլումի մորը, բարևում է նրան, պատմում իր սիրո մասին: Մայրը Մեջլումի մոտ փնտվում է Լեյլիին՝ նրան համարելով «ձանձախարիթի պես սև»: Զայրացած Մեջլումը շատ կոպիտ ձևով անիծում է մորը, թե՛ «Աստված հոգնություն կը կանչեմ, երկու աչքերդ գագաթեդ դուրս գա», և պահանջում հայտնել Լեյլիին գտնելու վայրը: Անեծքից վախեցած մայրը կատարում է որդու պահանջը:

Անեծքի զորությունից բացի՝ ժողովրդական ավանդավեպում ուշագրավ է կրոնական մոլեռանդության որոշակի տարրերի առկայությունը: Հատկանշական են Մեջլումի հարության, Լեյլիի ու նրա մոր կողմից ոսկորները հավաքելու և Աստված կանչելու դրվագները:

Ժողովրդական այս ավանդության հենքով ստեղծված Իսահակյանի «Լեյլի ու Մեջլում»-ը որակական բարձր հատկանիշներ ունեցող գեղարվեստական երկ է:

Իսահակյանի լեզենդում բացակայում է Լեյլիի ու Մեջլումի հանդիպման այդ երկար նախապատմությունը, Մեջլումի մոր հետ կապված անախորժ դեպքը: Փոխարենը վարպետորեն գծագրված սեղմ դրվագում Մեջլումը խնդրում է մոր օրհնությունը՝ գնալու և Լեյլիին գտնելու.

-Ա՛յ նանե-մերիկ, գլուխս կդնեմ բարձին, կբարձրացնեմ,

Դրախտի հյուրին երազիս կտեսնեմ:

Ա՛յ նանե-մերիկ, հալալ արա ինձի քու ծծի կաթ,

Երթամ՝ աշխարհք ժուռ գամ՝

Գտնեմ Լեյլիին (էջ 175):

Ժողովրդական էպոսին բնորոշ ոգով ու ոճով, բարեմաղթանքով է հյուսել Իսահակյանը ժամանակի զգացողությունը կորցրած սիրահարների հանդիպման պատկերը.

Առավոտ բարի լույս բացվի ձեր վրա,

Առավոտ բարի լույս բացվավ Լեյլիի վրա,

Առավ կուժն ու գնաց աղբյուրը ջրի,

Հոգին վկայեց ու եկավ Բինգյոլի աղբյուրը ջրի:

-Ա՛յ Մեջլում, բարև քեզ, ասավ Լեյլին:

-Հագար բարին քեզ, աչքիս վրա,

Սրտի սիրական Լեյլի:

Մեջլում նայեց Լեյլիին

Ու կանգնավ մնաց.

Լեյլին նայեց Մեջլումին

Ու կանգնավ մնաց:

... Յոթն օր, յոթ գիշեր

* Այդ ավանդավեպը տպագրված է «Էմինյան ազգագրական ժողովածու»-ում (գիրք 5-րդ, 1903, էջ 71-75)՝ Մոկաց Տիմանցի քրդերի բարբառով և հայերեն թարգմանությամբ:

Ոտքի վրա կանգնան էնոնք,
Էլի կիմանային, թե նոր են եկած (էջ 175-176):

Դարձյալ ժողովրդական ոգով, բայց ոչ ծայրահեղ մոլեռանդությամբ է ներկայացված «տնավեր» Մեջլումի ոսկորների վրա Լեյլիի ողբը և մահը:

Բնության մեջ անմուրազ սիրահարների անեղծ սիրո շարունակականության մի հիասքանչ արտահայտություն է լեգենդի վերջնամասը.

Աստծու հրամանով երկուսն էլ աստղ դառան,

Անմուրազ Մեջլում ու երազ Լեյլին,

Երկինք թռան, աստղ դառան.

Մեկը շողաց հարավակողով,

Մեկը հյուսիսա:

Աստծու հրամանով տարին մեկ անգամ

Լեյլիի ու Մեջլումի աստղերը իրար կուգան,

Կարոտ-ծարավ սրտով կփաթաթվեն իրար,

Պաշ կուտան ու պաշ կառնեն (էջ 177):

1901 թ. դեկտեմբերի 27-ին էր Իսահակյանը գրի առել անմուրազ սիրահարների՝ աստղ դառնալու և տարին մեկ անգամ համբուրվելու մասին գրույցը՝ որը հետագայում զետեղել է իր «Հայկական լեգենդներ»-ի մեջ:

Արևելյան ժողովուրդների մեջ լայնորեն տարածված Լեյլիի և Մեջլումի մասին ավանդության գեղարվեստական ամենահայտնի մշակումը Նիզամի Գյանջևիի «Լեյլի և Մեջնուն» (1188) պոեմն է: Ուշագրավ է, թե Իսահակյանը Նիզամիի ստեղծագործության վերաբերյալ հողվածում ինչպես է բնութագրել նրա «Լեյլի և Մեջնուն»-ը. «Երրորդ պոեմը՝ «Լեյլի և Մեջնուն», արաբական մի շատ հուզիչ և ցավագին գրույց է մի սիրահար գույգի դժբախտ սիրո մասին, նման Եվրոպայում տարածված ողբերգական վախճան ունեցող սիրո գույգերի՝ Տրիստան և Իսուլդի, Ռոմեո և Ջուլիետայի...

... «Լեյլի և Մեջնունի» սերը տարերք է՝ խորտակող, թշվառացնող, ոչնչացնող: Սա Արևելքի ամենառոմանտիկ պոեմն է՝ շատ սիրված ժողովուրդների կողմից»⁶:

Սիրո հարատևության գաղափարն է հաստատվում նաև «Հավերժական սերը» չքնաղ բալլադում:

«Սիրո հավերժությանը ձգտող Իսահակյանի համար միանգամայն օրինաչափական է լեգենդների ու ավանդությունների աշխարհում ստեղծագործական ներշնչումներ որոնելը, - գրել է Մ. Մկրյանը: - Նրա չափածո և արձակ լեգենդներում հավերժության գաղափարը մարմնավորվում է նոր կողմերով ու երանգներով: ... «Հավերժական սերը» բալլադում Իսահակյանը փառաբանում է լեգենդար Էլ-Մաման արքայի հզոր ու անմահ սերը: Իհարկե, ի վերջո մարդը ֆիզիկապես անէանում է, բայց «անշեշ» սիրո ձգտումը-գաղափարը մնում է անմահ...»⁷:

⁶ Այդ գրույցը, ըստ գրականագետ Ա. Մուշեղյանի ենթադրության և բերած փաստարկների, Իսահակյանն է պատմել Թումանյանին Վերնատան հավաքների ժամանակ և հուշել գրչակից ընկերոջը «Անուշ» պոեմի նշանավոր վերջերգը՝ Համբարձման գիշերվա հրաշալի վայրկյանի և սիրահար աստղերի համբույրի մասին (Տե՛ս **Ա. Մուշեղյան**, Ավետիք Իսահակյան, Եր., 1983, էջ 74):

⁷ Մեջնուն նշանակում է դիվահար:

⁶ **Ավ. Իսահակյան**, ԵԺ 6 հատորով, հ. 5, Եր., 1977, էջ 254-255:

⁷ **Մ. Մկրյան**, Իսահակյանի հումանիզմը, Եր., 1975, էջ 101-102:

Ավ. Բասահայանի բալլադի հիմքը արաբական «Անթար» գրույցն է՝ անապատի բեդվին, «հաղթութեան սուր» Անթարի և Թադմորի թագուհի, Էլմասի ու Լեբիդի դուստր Գյուլ-Նազարի բացառիկ սիրո մասին: Գյուլ-Նազարն Անթարին առաջարկում է փորձել կյանքի երեք քաղցրությունները:

Ճաշակելով առաջինը՝ վրեժխնդրությունը, Անթարը համոզվում է, որ «նորա գմայլեցուցիչ քաղցրութիւնը անցանումէ ինչպէս առաւօտեան մատախուղը, և թողում է իւրեանից յետոյ մի անախորժ զգացողութիւն»⁸:

Երկրորդ քաղցրությունը՝ իշխանությունը, նրա մեջ առաջացնում է զզվանք, որը խեղդում, ճնշում է նրան, բայց որից չի կարողանում հրաժարվել:

Առաջարկելով երրորդ քաղցրությունը (սեր) Գյուլ-Նազարը զգուշացնում է, որ այն, լինելով «առաւել գմայլեցուցիչ քան թէ բոլոր միւս քաղցրութիւնները, նոյնպէս ունի հետևանք մի ահաւոր, անտանելի դառնութիւն, և, - որ առաւել խորհրդաւոր բանն է, եթէ նա միանգամ թունաւորումէ մարդու սիրտը, այնուհետև ոչինչ կերպով կարելի չէ քաղցրացնել նորան»⁹:

Անթարը համաձայնում է Գյուլ-Նազարի հետ ճաշակել սիրո քաղցրությունը, բայց պայման է դնում, որ հենց դառնությունը սկսի ներթափանցել սիրո քաղցրության մեջ, Գյուլ-Նազարը վերջին համբույրի հետ առնի իր հոգին: Այդպէս էլ վարվում է Գյուլ-Նազարը, սակայն նույն բուռն սիրով շարունակում է սիրել անշնչացած Անթարին:

Արևելյան այս գրույցի հիման վրա Ավ. Բասահայանն ստեղծել է իր խորքով ու խտությամբ եզակի գեղարվեստական երկ՝ «Հավերժական սերը» բալլադը:

Հրաշագեղ բամբիշի հանդեպ երիտասարդ Էլ-Սամանի հզոր սերը Բասահայանը ներկայացրել է շքեղ պատկերավորությամբ:

Բամբիշի գեղեցկությունը չափվում է բնության միջոցով, որը, սակայն, խամրում է նրա լուսապայծառ կերպարանքի առջև.

Փերուզ ծովը, որ փարում է մշտաթոր
Սեպ ժայռերը Լիբանանի փեշերի՝
Չունի այնպէս, այնպէ՛ս փրփուր ձյունաթուր
Ինչպէս կուրծքը լուսապայծառ բամբիշի (էջ 179):

Էլ-Սամանի սիրո բարձրությունն էլ չափվում է երկնի ձեղուններով, խորությունը՝ երկրի հիմունքներով, բայց նրանցից բարձր է ու խոր.

-Բարձր են երկնի ձեղունները, նազելիս,
Բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նազելիս,
Բայց իմ սերը խորախոր է նրանցից (էջ 180):

Իսկ ահա սիրո ուժգնությունը չափելու համար Բասահայանը Էլ-Սամանի սիրո դիմաց կանգնեցնում է մահվանը.

-Կրխորտակեմ կամարները երկնային,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս.
Ե՛վ կվանեն և՛ կհաղթեն չար մահին,

⁸ «Արևելեան գրոյց» վերնագրով՝ այն տպագրված է «Հյուսիսափայլ» ամսագրում («Հյուսիսափայլ», Մ., 1859, N1, էջ 15-41):

⁸ «Հյուսիսափայլ», Մ., 1859, N1, էջ 30:

⁹ Նույն տեղում, էջ 35:

Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս
Եվ գրկել է դժգունացող բամբիշին,
Մահվան հանդեպ սուր ու վահան է շարժում.
Եվ բամբիշի սառած-մեռած շրթներին
Իր հրեղեն սերն ու շունչը ներարկում (էջ 180):

Ժամանակներ կգան ու կանցնեն, իսկ Էլ-Մամանի հզոր սերը հար ու հավետ կմնա: Երկնքին ու երկրին ի տես՝ կանգուն է մնում աշտարակը՝ որպես այդ սիրո վկա.

...Որ իմանան վառ աստղերը հեռավոր
Էլ-Մամանի սերը հզոր ու անմահ:
Որ աշխարհին պատմեն սերը հաղթապանձ.
Էլ-Մամանի սերը՝ անանց, հավերժո՛ղ,
Քարավաններն ու ճամփորդներն երկյուղած
Հեռուներից հեռուն եկող-գնացող... (էջ 182):

Իսահակյանից առաջ արաբական այս գրույցը հիմք էր ծառայել Դ. Դեմիրճյանի համար՝ գրելու «Կյանքի տեսիլ» (1904-1912) պոեմը, որտեղ նա, պահպանելով հերոսի Անթար անունը, լիովին հեռացել է սկզբնաղբյուրից, տանջանքի և վայելքի գաղափարը դիտել փիլիսոփայական խնդիրների հանգույցում. «Անթարը, ինչպես հիանալի մեկնաբանել է Ավ. Իսահակյանը, «տանջանքի և հաճույքի հավասարակշռության» դեմիրճյանական գաղափարի արտահայտությունն է, այն գաղափարի, որի համաձայն մարդուս երջանկությունը պատրանք է, նրա ճանապարհը՝ անվերջանալի դրամա, կյանքը՝ ինքնակործանման ընթացք»¹⁰:

Արևելյան այդ գրույցի հիմքում ընկած սիրո և մահվան հակադրության մոտիվը տարածված էր նաև այլ ժողովուրդների բանահյուսության մեջ: Դրա վկայությունն է Մ. Գորկու՝ ժողովրդական հենքով ստեղծված «Աղջիկը և մահը» չափածո լեգենդը, որը թեև գրվել է 1892 թ., բայց գրաքննության պատճառով տպագրվել է 1917 թվականին:

Գորկու հերոսուհին մի խիզախ ու համարձակ երիտասարդ աղջիկ է, որն անկաշկանդ ձևով տրվում է սիրո վայելքին: Միրուց թեև առած՝ նա չի նահանջում ո՛չ զազիր արքայի, ո՛չ էլ չար ու դժնի մահվան առջև, քանզի երբ սիրածը գրկում է իրեն.

«...Էլ սարսափ չկա գալիքի հանդեպ,
Ո՛չ մարդ է էլ պետք, ո՛չ երկինք անհուն.
Մանկան պես - խինդը իրենո՛վ է խենթ,
Եվ իրենո՛վ է սերը հիանում...
Լսում է մահը, մտածկոտ ու սև,-
Էհ, ո՞նց կասեցնի այս երզը անվերջ...
Չի՞ք աստված կյանքում - արևից վսեմ,
Չի՞ք կրակ - սիրո կրակից անշեջ¹¹ ...

Ավ. Իսահակյանի «Միրահար Նադոն» չափածո լեգենդում վարպետորեն դրսևորվել է բացասելով հաստատելու սիրո հոգեբանությունը՝

¹⁰ Մ. Աղաբաբյան, Հայ սովետական գրականության պատմություն, Եր., 1986, էջ 348-349:

¹¹ Մ. Գորկի, Բանաստեղծություններ, լեգենդներ, Եր., 1984, էջ 84:

Միրելով սիրում էր կտրիճ Նադոն Գյուլիզարին, հուրի-փերի Գյուլիզարն էլ Նադոյին: Սակայն հպարտ էին սիրահարները, և այդ հպարտության զգացումը սիրահարներից ոչ մեկին թույլ չէր տալիս առաջինը խոստովանելու իր սերը.

Լուռ գիտեին սրտերն իրանց,
Որ սիրում են նրանք իրար,-
Բայց երկուսն էլ հպարտ էին՝
Կտրիճ Նադոն ու Գյուլիզար:
Մեկն ուզում էր մեկելն առաջ
Իրան սրտի գաղտնիքն ասե,
Որ հետո խեղճ, շլինքը ծուռ,
Գուրթ պաղատե հպարտ յարից (էջ 213):

Բայց ահա իր խոսքում Նադոն ժխտելով հավաստում է Գյուլիզարի հանդեպ իր ուժգին սերը, մերժելով վերստեղծում է Գյուլիզարի չքնաղ գեղեցկության պատկերը՝ է՛լ սև աչեր՝ «խոռ-խոռ ծվարած երկու սև օձեր», է՛լ բարակ մեջք, բարձր հասակ, է՛լ քառուն ծամ...

Մերըդ աչքերըս մուժով չի պատել,
Մար ու դարերը չի պատել մուժով:
Ունեցածդ ի՞նչ է,
Ա՛յ ջադու խրճե,
Որ շուքիդ գերի՝
Հալվիմ ու մաշվիմ...
Շիտակ է, որ դու քառուն ծամ ունիս,
Որ մեջքիդ բոլոր փաթուր են գալիս,
Բայց քու ծամերըդ մուշկի հոտ չունին,
Ու աբրեշումի փայլվանք չունին (էջ 213):

Լեգենդի վերջնամասում Նադոյի ժխտողական խոսքը շրջվում է՝ հանդես գալով իր բուն նշանակությամբ՝ որպես սիրո ճշմարիտ խոստովանություն.

... Աստված գիտե, դու էլ գիտես,
Որ սուտ եմ ասում, սուտ:
Ա՛խ, մեռնում եմ քեզ համար,
Հոգիս բերանս է եկել, յա՛ր:
Աշխարհքի մեջ, ծովերի վրա
Չկա քեզ նման, չկա քեզ նման... (էջ 215):

Դե «սիրոյն քարն չի դիմնայ», ուր մնաց՝ հպարտության զգացումը...

Асмик Ванян - *Различные мотивы любви в легендах в стихах Аветика Исаакяна.*- В статье рассматривались различные мотивы любви (божественное начало любви, безответная, безнадежная, вечная любовь, психология ожидания в любви и т.д.) в легендах в стихах Аветика Исаакяна.

* Հայ գրականության մեջ նմանատիպ սիրո արտահայտություն կար Լ. Շանթի «Օշին Պայլը» (1929) դրամայում՝ Սմբատ իշխանի դուստր Ռիթայի վարքագծում: Օշինին անչափ սիրելով հանդերձ՝ Ռիթան նրան հակառակ էր գործում:

Hasmik Vanyan - *Various moives of love in Avetik Isahakyan's legends in verse.*

- In the application it has been taken in consideratiqn expressions of various loves: (divine love, answerless, unbagged, infinite love, psychology of waiting in love, rejecting the approval of love psychology etc.) in Avetik Isahakyan's legends in verse.

**ԺԱՆ ՎԱԼԺԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԻ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ՀՈԳԻՆ ԽՏԱՑՆՈՂ ՀԵՐՈՍ**

ՆՈՒՆԵ ԴԱՎԹՅԱՆ

Վ. Հյուգոյի «Թշվառներ» վեպը ստեղծվել է 30 տարիների ընթացքում իր դարաշրջանի հակադիր կերպարների հիման վրա՝ թիապարտի և սրբի, ցույց տալու ոչ թե նրանց բարոյական տարբերությունը, այլ միավորելու նրանց մարդու էության մեջ: «Թշվառների» գլխավոր նպատակը ֆրանսիացի գրողը համարում էր այն ուղին, որով անցնում է ինչպես առանձին անհատը, այնպես էլ ողջ հասարակությունը՝ չարից բարուն, մեղավորից արդարին, ստից ճշմարտությանը: Սկզբնակետը նյութականն է, վերջնակետը՝ հոգևորը: Վեպի գլխավոր հերոսը՝ թիապարտ Ժան Վալժանը իր մեջ մարմնավորում է այդ գաղափարի ներքին իրականացումը: Նրա կյանքի ողջ պատմությունը հասարակությունից փախչելն է, հասարակություն, որը նրան դատապարտել էր թիարանի աշխատանքներին, բայց որի բարոյական օրենքներին հենց ինքն էլ ողբերգական կերպով ենթարկվում է: Ժան Վալժանի բնավորության մեջ տեղի է ունենում մարդկային հոգու ռոմանտիկ վերափոխում՝ պայմանավորված եպիսկոպոսի մեծահոգի վերաբերմունքով: Չարի և բարու, խավարի և լույսի անհաշտ հակադրությունը, որ արտահայտված է Հյուգոյի արվեստի առաջին շրջանի կերպարների բնավորության մեջ, այժմ լրացվում է նոր շարժառիթով՝ չարից բարուն վերափոխվելու հնարավորությամբ: Ցնցման հետևանքով Ժան Վալժանը ընդհանրապես ուրիշ մարդ է դառնում:

Բանալի բառեր. Ժան Վալժան, Վ. Հյուգո, հերոս, ողբերգություն, վեպ, դարաշրջան, հոգեվիճակ, էություն, հոգի

Աշխարհի հետ կռիվ ունեւ Հյուգոն և այդ կռիվը տիտղոսի կամ իշխանության կռիվ չէր, այլ կռիվ էր մարդ ծնվելու, մարդ ապրելու և մարդ մեռնելու համար...

«Թշվառները» ճշմարիտ գրողի ազնիվ մտահոգությունների արգասիք է՝ շարադրված ցավի, տառապանքի, հուսահատության, հույսի ու հաստատման զգացողություններով: Երբեմն դրանք ուղղված են օրվա հրատապ հարցերին և ջերմ են ու անմիջական, երբեմն ժողովրդի պատմական անցյալի հարցադրումներ են, հաճախ բարոյական անկման վիհը փակելու մտահոգ հարցումներ: Բազում են հարցադրումները, բայց մեկն է գլխավոր հիմնահարցը՝ թշվառության մեջ տառապող ժողովրդի բախտն ու ճակատագիրը:

«Թշվառները» հայրենասերի, մարդասերի ցավի ճիչն է, որ ասում է սթափվեք, բավական է: Ազգային (համամարդկային) ճակատագրի չլուծվող հարցական է թշվառությունը:

Վ. Հյուգոյի «Թշվառներ» վեպը ստեղծվել է 30 տարիների ընթացքում իր դարաշրջանի հակադիր կերպարների հիման վրա՝ թիապարտի և սրբի, ցույց տալու ոչ թե նրանց բարոյական տարբերությունները, այլ միավորելու նրանց մարդու էության մեջ:

Հյուգոյական մտքի թելադրանքով զգում ենք թշվառությունը, զգում ենք թշվառներին, որոնց ուսերին է հենվում անարդարությունների փոթորկվող մոլորակը:

Մեղադրական դատավճիռն արդեն վաղուց է ասված այդ հասարակության նկատմամբ. թող վերանա թշվառությունը:

«Թշվառները» ահագանգ է ողջ մարդկությանը, որ արթնանան, քանզի մարդը թշվառության մեջ է, անմեղությունը կործանվում է, էգոիզմը բարգավաճում, մարդուն շահագործում է մարդը, անարդարությունը ճնշում է ժողովրդին, կործանվում է ազնիվը, ճշմարիտը, մաքուրը, «բարձրանում» ստորը, կեղծն ու զազիրը: Անարդար ու անկատար աշխարհում ապականվում է մարդը, սերը, ընտանիքը, օրենքն ու իրավունքը, շարունակական պայքար է ընթանում չարի ու բարու միջև:

Այո, պետք է արթնանա մարդկությունը:

Պատմությունը Հյուգոյի ելակետով շարժում է ոչ թե խոշոր անհատների ինքնակալ կամքը, այլ ժողովրդի սոցիալական ու պատմական հոգեբանությունը: Մա, չասենք ինքնատիպ, բայց լիովին արդարացված հայացք է: Ինքնատիպը Հյուգոյի մտահղացումն է. ֆրանսիական պատմությունից անբաժան թափառականի, փախստականի, գերու միջոցով է նա արծարծում թշվառության ու գոյության թեման: Գծվում են ժամանակը, մարդը, տարիները:

Հյուգոն չի առանձնացրել հերոսի ազգային գծերը, այլ դիմել է ժողովրդական կյանքին ու ժողովրդական երևակայության միջոցով ստեղծված կերպարին: Գեղագիտական այս կողմնորոշումն էլ որոշել է կյանքից գրականություն անցած հերոսի ազգայնությունը և մարդկայնությունը, որովհետև այդ երկու կողմերը ոչ թե բացառում, այլ լրացնում են իրար:

Ազգայինի ու համամարդկայինի կապը այստեղ ոչ թե երկմիասնություն է, այլ՝ միասնական ընթացք, ուստի և համամարդկայնությունը այստեղ հանդես է գալիս որպես ազգայնության լավագույն գծերի արտահայտություն:

Ազգայինի միջոցով արտահայտվում է գրականության համամարդկային բովանդակությունը:

Բազմիցս կրկնված խոսք է, որ գրականությունը չի կարող ազգային չլինել, և եթե նաև մեծ է ու իսկական՝ չի կարող հեռու մնալ արվեստի համամարդկային հատկանիշներից:

Ինչ խոսք, յուրաքանչյուր ժողովրդի գրականություն այդ ժողովրդի գեղարվեստական պատմությունն է, բայց անհերքելի է նաև այն, որ այդ գրականության մեջ ուրիշները ևս ճանանչում են իրենց, այնտեղ գտնելով հարազատ միտք, ցավ, հոգս և զգացմունք:

Գտնելով, որ բարձրարժեք ստեղծագործության մեջ ազգայինն ու համամարդկայինը ապրում են կողք-կողքի, պայմանավորվում են միմյանց և ունեն նույն նպատակը, այնուամենայնիվ, կարծում եմ, հայրենիքը լինելով պատմական ծննդավայր, շարունակվող գոյության հիմքն է, և նրա ժողովրդի՝ հոգսերի, կենդանի կյանքի բովանդակությամբ է ստեղծվում արվեստը: Միայն գրականության ազգային նկարագիրն է հնարավորություն տալիս խոսելու նրա համամարդկային գծերի մասին: Այստեղից էլ՝ ազգային- համամարդկային կապակցության մեջ առաջինը հիմնականն է:

Այո, Հյուգոն քննում է աշխարհին հատուկ երևույթներ, բայց ամենից առաջ հանդես է գալիս իբրև «ֆրանսիական ոգու» արտահայտիչ:

Ազգայինը զարգանալով կատարելագործվում է, հասնում համամարդկայինի: ՌԻՐԵՄՆ, համամարդկայինը ազգային է՝ նոր ու բարձր աստիճանում:

Գրողը հաստատեց մարդկության ապրելու օրենսգիրքը, որի տիտղոսաթերթն է խիղճ ու պատվախնդրություն:

«Թշվառներ» վեպը յուրովի պատմական էր, գաղափարապես՝ ժամանակակից: Որպես ֆրանսիական պատմության վեպի օրինակ, այն ներառել էր իր մեջ այդ ժանրի նվաճումները՝ տեղային երանգավորումը, գեղապատկերությունը, կենցաղի և բարքերի յուրօրինակությունը, հերոսների ճակատագրի կապը հասարակության պատմական կյանքի հետ:

Հյուգոն չի սահմանափակվել պատմության չոր փաստերով: Նա պատմության ճշմարտությունը զուգակցել է մտացածնի, երևակայության հետ, դրանով իսկ ստիպելով ընթերցողին մասնակից դառնալ գործող անձանց որոնումներին, բաժանել նրանց ուրախությունները և հույսերը:

Ստեղծագործական հանճարի ուժը հայտնվում է մեկ բառով՝ Թշվառներ, որը դառնում է գրականության գլուխգործոց, որովհետև այն պարունակում է ոչ միայն մեծ ու ճշմարիտ մտահղացում, այլ փիլիսոփայական ընդհանրացում: Հյուգոն ստեղծել է ոգու անպարտության և բարոյական հաղթանակի մի պատմություն:

Վեպում ժամանակի և պրոբլեմի հասկացությունները արժեքավորում է դարաշրջանի համար կարևորություն ունեցող երևույթների չափանիշով: Մի կողմից՝ Վաթեռոյի աղետ, Ռեստավրացիայի վախճան, 1830-ական և 1848 թվականների հեղափոխական մարտերը, մյուս կողմից՝ թշվառ ու մռայլ ետնախորշերի Փարիզը, աղքատների վիճակը, որ դժբախտ են եղել թե՛ Նապոլեոնի դիկտատորայի, թե՛ Բուրբոնների և թե՛ Հուլիայան միապետության օրոք: Մի կողմից՝ երկարամյա բանտարկություն, տանուլ տված կյանք, մյուս կողմից՝ այդ տանուլ տվածի՝ վերստին գյուտ, որը պայմանավորվում է ստեղծագործ մտքի առկայությամբ:

Իր որոնումների դառն ու դժվար ճանապարհին նա խորապես համոզվել էր, որ երբեք չի կարելի քողարկել ու թաքցնել հասարակական արատներն ու խոցերը, որ դրանք վեր են ածվում անբուժելի վերքերի և անխնա ծվատում են երկիրն ու ժողովուրդը:

Ժան Վալժան

Վեպն ընդգրկում է համամարդկային հետաքրքրություն ներկայացնող պրոբլեմներ, ժամանակի բարդ հոգեբանական կյանքով ապրող մարդն ու այդ մարդու հիշողության մեջ բեկված պատմությունը:

Տվյալ իրականության հասարակական, հոգեբանական ու փիլիսոփայական կարևորագույն գծերը վերարտադրելու համար ժամանակի էությունն ու ոգիների մեջ խստացնող ժամանակին բնորոշ հերոսին գտնելն է:

Վեպում տևականորեն հանդես եկող հերոսները բավականին շատ են, սակայն նրանցից ոչ մեկը չունի գործողություններում Ժ. Վալժանի կարևորությունը, ոչ ոք այնքան կյանքի և գրականության բավանդակություն չի ամփոփում, որքան նա:

Մի կողմից գլխավոր հերոսի հոգեբանության մեջ կատարվող խորացումը և մյուս կողմից կյանքի լայն ընդգրկումը, ժամանակային տարբեր հատվածների, կյանքի տարբեր վիճակների ու ոլորտների համադրումը, ստեղծում են հա-

րուստ հիմք ունեցող գեղարվեստական մի ստեղծագործություն, որի արժեքը պայմանավորվում է թե իրականության տարրողունակ նկարագրությամբ և թե տվյալ իրականությանը հատկանշական հերոսների և առաջին հերթին գլխավոր հերոսի կերպարի ստեղծմամբ:

Ի՞նչ է անում նա, որտե՞ղ են հերոսի դիմանկարին բնորոշ գույներն ու գծերը, նրա «կյանքի փիլիսոփայությունը» ինչպիսի՞ ուղղություն ունի. վեպի բովանդակությունը ձևավորվում է այս հարցերի պատասխաններին:

Մենք գործ ունենք ոչ թե հեղինակային բնորոշումների, այլ հերոսի ներքին աշխարհում տեղի ունեցող մեծ ու փոքր բազմաթիվ շարժումների հետ, որոնք ծնվում են անխուսափելիորեն և բնական հանգամանքներում:

Պրոբլեմը նրա կյանքում գոյություն ունեցող հակասություններն են, նրա հոգեբանության մեջ արմատներ արձակած լավի ու վատի բախումը, անհատական կյանքի և հասարակական միջավայրի սուր ձևով արտահայտվող անհամապատասխանությունը:

Ժան Վալժան- հերոս, որի կյանքը լեցուն է բազում վիճակներով և իրադարձություններով, որն ապրում է բազմաբնույթ հարաբերություններ: Ընդունված է ասել, որ միայն ժամանակի խորություններն ու հոգեվիճակները, մտածողությունը իր մեջ կրող հերոսի հայտնաբերմամբ է հնարավոր գտնել առանձնահատկությունների այն հիմնական ամբողջությունը, որը տվյալ ժամանակը տարբերում է նախորդից, տվյալ ժամանակի մարդուն՝ նախորդ ժամանակի մարդկանցից: Կարծում եմ, դա չի վերաբերվում «Թշվառներին»: Հյուզոն ավելի հետամուտ է կյանքի նստվածք տված շերտերի բացահայտմանը:

Այդ հերոսի ճակատագիրը նորություն չի գրականության մեջ: Նորությունը նրա բնավորությունն է և դրա կեղևի բացումը, նորությունը նրա հոգու տառապանքի և առնականացման ընթացքն է և դրա ճշմարտությունը:

Այս հոգեբանական ցնցող վեպի մեջ բեկված են հերոսի մտորումները, ցավերը, ապրումներն ու զգացմունքները՝ լուսի և ստվերի հաջորդական ելևէջներով:

Հեղինակի համակրանքը կյանքի տառապանքը քաշած Ժան Վալժանի կողմն է, որովհետև նրա մեջ է նա տեսնում կյանքի արմատը: Բարձր մտքի և երկար փորձի եզրահանգումն է այն, որ դժբախտ են նրանք, ովքեր միայն անցյալով են ապրում, ուրվականատես են միայն ապագայով ապրողները, թեթևամիտ՝ միայն ներկայով ապրողները:

Անցյալով, ներկայով և ապագայով ապրողն է իմաստուն ու մեծ: Ժ. Վալժանը (ինչպես բոլոր հերոսները) ապրում է 3 ժամանակով, 3 ժամանակի մեջ և հնազանդորեն տանում է իր ճակատագրի քարը: «Թշվառներ» վեպի ժամանակը եռաժամանակ է. ներկայի մեջ բաղադրված են անցյալն ու ապագան, անցյալի մեջ՝ ներկան ու ապագան, ապագայի մեջ՝ անցյալն ու ներկան:

Ժան Վալժանը երևում է անվերջ մաքառումների մեջ և կյանքի գնով նվաճում իր լինելու, ապրելու իրավունքները. հենց այդ դժվարին նվաճումն է,՝ որ ավելի արժեքավոր է դարձնում՝ նրա թեն չնչին, բայց և այնպես առկա հաղթանակները, որոնք թեն կազմված են անվերջ պատմություններից, բայց և այնպես, ի վերջո հաղթանակ են, որովհետև այդ պարտությունները չեն ոչնչացրել նրան, այլ դարձրել են ավելի դիմացկուն, համառ ու կենսունակ:

1815թ. հոկտեմբեր-նոյեմբեր ճամփորդող մի մարդ է մտնում Դիյն քաղաք: Թշվառ տեսք ունեցող անցորդը միջահասակ էր, ամրակազմ ու թիկնեղ, արևակեզ ու քրտնաթոր դեմքով, քառասունվեց կամ քառասունութ տարեկան: Հագել էր կապույտ քաթանե մաշված ու քրքրված, մի ծունկը ծակված, մյուսն սպիտակած շալվար և ցնցոտի դարձած մի գորշ բլուզ, որի արմունկին կանաչ չուխայե մի կարկասան էր կարված, անգուլպա ոտքերին հագել էր կոպիտ, երկաթե գամերով կոշիկներ. գլուխն ածիլված էր և երկար մորուք ուներ:

Մոռացած հոգնությունը, ջարդված, մոլորված անձանոթ փողոցներով նա առաջ էր գնում, առանց իմանալու թե ուր: Քայլում էր մենակ մնացած մարդը և հուսախափության ու հուսահատության նոր վայրկյաններ ապրում:

Քայլում էր նա տանելով անամոք ցավեր և ցավը տանում էր լուռ, հարսըտության պես, որը նրան հետագայում պիտի իմաստուն դարձներ:

Կյանքը նրա համար կենսական տառապանք էր ու դժոխք: Նրա կյանքը մի կատարյալ ողիսական էր, տառապանքներից հյուսված մի անընդմեջ շղթա: Մթնում էր: Նրան չէր հաջողվել օթևան ճարել. բոլոր դռները փակվել էին նրա առաջ դեղին անձնագրի պատճառով:

Այդ մարդը Ժան Վալժանն էր, մի թիապարտ որ տասնինը տարի անց էր կացրել թիարանում և անձնագրի վրա գրված էր. « Ժան Վալժան, ազատված տաժանակիր, բնիկ...ցի: Հինգ տարի կոտորելով գողություն անելու համար: Տասնչորս տարի էլ փախչելու 4 փորձ կատարելու համար: Այս մարդը «խիստ վտանգավոր է»:

Մի կտոր հաց գողանալու համար նա հայտարարվել էր հանցավոր:

Ահավոր բռնություններ են, երբ պատժական օրենքը վճիռ է արձակում, մահա-գույժ վայրկյան է, երբ հասարակությունը հեռանում է, լքում մի մտածող էակի:

Երբ մուրճի ծանր հարվածներով նրա ծոծրակի մոտ ամրացնում էին երկաթե խոշոր գամը, նա լաց էր լինում, արտասուքը խեղդում էր նրան և թույլ չէր տալիս խոսել: 27 օր շղթան վզին՝ սայլակով ճանապարհ գնալուց հետո հասավ Տուլոն, ուր նրան կարմիր բաճկոն հագցրին: Նա մինչև անգամ Ժան Վալժան չմնաց, այլ դարձավ 24601:

Այս սրտի մեջ, որտեղ վերք էր գոյացել, առաջացավ մի սպի:

Ժան Վալժանը թիարան էր մտել հեկեկալով ու այնտեղից դուրս եկել անզգա: Նա մտել էր այդտեղ հուսահատ, դուրս եկել մոայլ:

Ի՞նչ էր տեղի ունեցել նրա հոգում: Տաժանապարտների փայտե անկողնու վրա նա խորասուզվեց իր խղճի մեջ ու երկար մտածեց: Խոստովանեց, որ ինքը անմեղ չէր, որ կատարել էր դատապարտելի արարք: Ապա ինքն իրեն հարցրեց.

Արդյոք ինքը միակ հանցավորն էր այդ ճակատագրական պատմության մեջ: Հանցանքը կատարելուց և խոստովանելուց հետո՝ միթե պատիժը գազանա-յին ու ծանր չի եղել: Արդյոք օրենքն ավելի մեծ սխալ չէ՞ր կատարել պատիժը նշանակելիս, քան թե մեղսագործը հանցանք գործելիս: Արդյոք կշռի նժարներից այն մեկը, որտեղ քավությունն է՝ խիստ ծանր չէ՞ր եղել:

Այս հարցերը դնելուց ու լուծելուց հետո նա դատեց հասարակությանը և դատապարտեց նրան իր ատելությանը:

Ատելություն... մեղմ է ասված:

Ասում են, որ մարդուն հասանելիքի չափ ու կշիռը որոշողը աշխարհը չէ, այլ հենց ինքը՝ մարդը: Եվ հերոսը մի պահ շեղվում է բարոյական շիտակության ճանապարհից և...

Ի՞նչ ասել այն հասարակությանը, որ մի կտոր հացի համար տանում են մարդուն այնպիսի մի տեղ, ուր ավելորդ են մարդկային երազանքներն ու ձգտումները, ուր ստիպում են նրան հոգեկան նոր փլուզումներ ապրել և մարդու կյանքը դարձնում են լինել-չլինելու պայքար: Եվ լինել թե չլինելու այս հարցականների մեջ ամփոփում է հերոսի ողջ կյանքը: Նա տառապանքը տանում է իր ուսերին, բացահայտ լավատես չլինելով հանդերձ, այնուամենայնիվ, պատասխանելով՝ լինել, կանգնելով պայքարի կողքին:

Ամբողջ վեպի ոգու տրամաբանական զարգացման մեջ կա մի երակ, որ կամաց-կամաց լցվում է արյունով. ճանաչում է կյանքը, և նրա ներաշխարհ են թափանցում այն ամենը, ինչը նաև ժողովրդի բախտն է ու ցավը:

Նա պարզեց իրեն, որ իր հասցրած վնասի և իրեն հասցված վնասի մեջ հավասարակշռություն չկար և վերջո եզրակացրեց, որ իր կրած պատիժը, ճիշտն ասած, անարդարություն չէր, բայց անիրավություն էր:

Բարկությունը կարող է անմիտ ու խենթ լինել. կարելի է գուտ տեղը բարկանալ, բայց մարդը զայրացնում է միայն այն ժամանակ երբ իսկապես որևէ կողմից իրավունք ունի: Ժ. Վալժանն զգում էր, որ զայրացած է: Մարդկային հասարակությունը նրան միայն վատություն էր արել: Մարդիկ նրան մոտեցել էին միայն խոցելու համար: Երբեք, սկսած մանկությունից, մորից ու քրոջից, նա քաղցր խոսքի ու բարոյական հայացքի չէր հանդիպել: Տառապանքից տառապանք անցնելով՝ նա քիչ-քիչ հանգեց այն համոզման, որ կյանքը պատերազմ է և այդ պատերազմում ինքը պարտվել է: Նա իր ատելությունից գատ այլ զենք չուներ: Եվ որոշեց այն սրել թիարանում և դուրս գալուց հետո տանել: Տուլոնում տաժանակիրների համար մի դպրոց կար, որը պահում էին անգետ եղբայրները և որտեղ սովորեցնում էին ամենաանհրաժեշտ բաներն այդ դժբախտներից նրանց, ովքեր ցանկություն ունեին: 40 տ. հասակին նա դպրոց գնաց և սովորեց կարդալ, գրել ու հաշվել: Նա զգաց, որ միտքն ուժեղացնել՝ նշանակում էր ուժեղացնել ատելությունը: Որոշ դեպքերում կրթությունն ու լույսը կարող են չարի զարգանալուն նպաստել:

Նա դատեց նաև այդ հասարակությունն ստեղծող նախախնամությունը և նրան էլ նույն ձևով դատապարտեց:

Այսպիսով, տասնիննամյա տանջանքից ու ստրկությունից հետո այս հոգին միաժամանակ և բարձրացավ, և ընկավ: Մի կողմից լույս մտավ այդտեղ, իսկ մյուս կողմից՝ խավար:

Նրա բոլոր մտքերի ելակետը, ինչպես նաև ժամանման կետը, մարդկային օրենքի ատելությունն էր, այն ատելությունը, որ եթե իր զարգացման մեջ կանգ չի առել որևէ նախախնամական դիպվածով, մի որոշ ժամանակի ընթացքում դառնում է հասարակության ատելություն, հետո արարչության ատելություն, և վերածվում է վնասելու մի տարտամ, շարունակական ու վայրագ ցանկության, ով ուզում է լինի, միայն թե մի որևէ կենդանի արարած:

Ճշմարտությունն ու ազատությունը նրանով են լավ, որ այն ամենը, ինչ արվում է հոգուտ ու ընդդեմ նրանց, հավասարապես նրանց է ծառայում:

Վ. Հյուգո:

Ժան Վալժանը շլացել էր ազատության մտքից և կարծել էր, որ նոր մի կյանք է սկսվում: Բայց շատ շուտ նա տեսավ, թե ինչ բան էր այն ազատությունը, որի համար դեղին անձնագիր են տալիս: Ազատագրությունը ազատվել չէ: Դուրս են գալիս թիարանից, բայց ոչ դատապարտությունից:

Նրա կերպարում առկա է արդիական զգացողությունը: Ապրածը նրա հոգին հագեցրել է տեսած, սակայն չբացահայտված հակասությունների դառնությամբ: Նա սկզբից մինչև կյանքի վերջին պահը ծանրաբեռնված է մոայլ ու անլուծելի խոհերով: Եվ այն մտքերը ծնվում են ոչ թե փիլիսոփայական կոահումներում, այլ այն շավղի վրա, որ անցնում են կյանքի դառը ճշմարտությունը սեփական մաշկի վրա զգացած միլիոնավոր հասարակ մարդիկ:

Իրականությունը դաժան էր, տխուր, վիատեցնող: Նրա տառապած ու տառապող հոգին կարծես յուրահատուկ մարտահրավեր էր նետել շրջապատին ու հասարակությունը՝ ջանալով պայքարել մինչև վերջ: Մենք մի փոքր նայեցինք Ժան Վալժանի խղճի խորքերը: Մի անգամ ևս նայենք քաղաքապետ Մադլեն դարձած նույն հերոսի ներաշխարհը: Հոգու խորքը միայն մարդու մեջ է ունենում անսահման շլացուցիչ փայլ և ուժեղ խավար: Հոգու անսահման ներքինը տեսնելու դեպքում է հնարավոր տեսնել մարդկային խիղճը որպես գաղափարների քարանձավ, երազների հնոց ու նախաքայլերի քառու: Նա, որ կողոպտել էր գերապատիվ եպիսկոպոսին, ստացել նրա ներումը, գողացել էր փոքրիկ Ժերվեի փողը, ամբողջ մի գիշեր արտասովել էր եպիսկոպոսի դռան առաջ, այլ մարդ էր դարձել:

Անորոշ կերպով նա զգում էր, որ այդ քահանայի ներումն այն մեծագույն հարվածն ու սաստկագույն գրոհն էր, որից նա կարող էր սասանել, զգում էր, որ իր խստասրտությունը վերջնական կլիներ, եթե դիմադրեր այդ ներողամտությունը, իսկ եթե զիջեր, ստիպված կլիներ հրաժարվել այն ատելությունից, որով լցրել էին նրա հոգին այդքան տարիների ընթացքում այլ մարդկանց արարքները, իսկ իր կուտակած ատելությունը դուր էր գալիս իրեն: Սակայն այս անգամ արդեն պետք էր կամ հաղթել կամ հաղթվել և պայքարը, մի վիթխարի ու վերջնական պայքար, սկսվել էր իր չարության և այդ մարդու բարության միջև:

Ինչ էլ որ լինի, նրա վերջին վատ արարքը վճռական ներգործություն ունեցավ նրա վրա. նրա միանգամից ճեղքեց ու ցրեց իր իմացության մեջ եղած քառսը, խավարը տարավ մի կողմ, իսկ լույսը մյուս կողմ և ազդեց հոգու վրա:

Նրա խիղճը գննեց իր առջև կանգնած եպիսկոպոսին:

Նշենք, որ վեպում հեղինակի կողմից կարևորություն ստացած պրոբլեմներից մեկը ինքնագիտակցության գալու և կատարած հանցանքից հետո սեփական անձի հոգեվերլուծական դատավարության կատարելու պրոցեսն է: Հայացքից հետո նա դառնում է իր անհատական մտածողությունն ու զգացողությունն ունեցող մարդ: Եթե նրա սևեռուն հայացքի տակ մոայլվում էր կյանքի իրական պատկերը, ապա հավատը բարոյական ուժի նկատմամբ մնում էր ամուր ու հաստատուն:

Նրան հաջողվել էր անհետանալ, ծախել եպիսկոպոսի արծաթեղենը, անցնել քաղաքից-քաղաք, հաստատվել Մոնտրոյ-սյուռ Մեռում, թաքնվել այլ անվան տակ, հարստանալ, դառնալ քաղաքապետ:

Եպիսկոպոսի բարությունն ու ներողամտությունը փրկել էին նրան: Նա երջանիկ էր զգում իրեն, որ իր խիղճը տխրում է իր անցյալով և իր գոյության առաջին կեսը հերքվում է վերջին կեսով: Այն, ինչ եպիսկոպոսն էր ցանկացել

դարձնել նրան՝ նա իրագործեց: Դա ձևափոխություն չէր, դա կերպարանափոխություն էր:

Չարիքը ջորի է. նա համառ է ու անպտուղ:

Վ. Հյուզո

Մարդու փոփոխությունը պայմանավորված է ապրած վիճակների փոփոխությամբ. այդ վիճակների անցումների մեջ էլ Հյուզոն ներկայացնում է իր հերոսի (և բոլոր հերոսների) հոգեբանական փոփոխությունը:

Ասում են, ոչ ոքի վիճակված չէ վաղվա օրվա դատավորը լինել, այսօրվա ներկան չի խոսում վաղվա օրվա մասին, և վաղվա օրերից մեկը արևկոծեց ժան Վալթանի հոգին, երբ ժավերը տարօրինակորեն արտասանեց ժան Վալթան անունը, իր անունը, որ նա թաղել էր...

Ժան Վալթանը ուզում էր գնալ, անձնատուր լինել, դուրս հանել գողության համար բանտարկված այդ մարդուն, ով իրեն կոչում էր Շանմաթիյո, իսկ ոստիկանները համարում էին նրան կրկնահանցագործ ժան Վալթան: Խոցելի է խիղճը: Այսպես տատանվել կարող է միայն շատ խելոք ու շատ նուրբ մարդ: Մա արդիականության իսկական ողբերգություն է, ուժեղ ու խելացի, խոր և շատ տառապած մարդու ողբերգություն:

Խիղճը գալարվում էր, ցնցում սրտի մեջ եղած հեգնանքը, հրճվանքը, հուսահատությունը: Չգիտեմ աստվածն է հենց սեփական խիղճը, թե մեր ներքին ձայնն է խիղճը, բայց մի բան հաստատ է, որ ժան Վալթանը իր կամքի տիրակալն էր ու իր խղճի ստրուկը: Նա գիտեր, որ խղճի վերքերը չեն սպիանում:

Նա խոսում էր ինքն իր հետ, իր խղճի խորքերում... Տանջանք էր մոլեգնում նրա մեջ, խառնվել էին մտքերը: Խոսողն էլ էր ինքը, ունկնդրողն էլ: Երբ մարդը խոսում է ինքն իր հետ, նշանակում է՝ դիմում է հոգեկան խաղաղություն գտնելու վերջին հնարավորությանը, նշանակում է՝ ողբերգական հոգեվիճակում է, նշանակում է ցավը չափազանց խորն է:

Անվիճելի է, որ չկա որևէ մտածող էակ, որ երբևէ ինքն իր հետ չի խոսել: Մտածողությունը գնում է խղճին և խղճից կրկին վերադառնում մտածողության:

Մարդկային մեկ հոգեվիճակ չէ, որ արտահայտված է նրանում: Կան և քնարական շեղումներ (անհատական հույզ, վերհուշ), և դրամատիկական պահեր, և ողբերգական ապրումներ, և փիլիսոփայական խորհրդածություններ, և խորհիմաստ դատողություններ: Ինչպիսի բարդ, խոհափիլիսոփայական կերպար:

Փակվել էր անցյալի դուռը: Նա կարող էր այլևս չբացել այն: Նորից բացել անցյալի վրա փակված դուռը՝ մի անարգ գործ կատարելով. չէ* որ նորից դառնում է ամենագազրելի գողը, որովհետև գողանում է ուրիշի կյանքը, գոյությունը, հանգիստը, սպանում է մի թշվառ մարդու, դատապարտում նրան մի սոսկալի անմեռ մահվան, որ կոչվում է թիարան: Կա և հակառակը. փրկել թյուրիմացության զոհ դարձած այդ մարդուն, նորից դառնալ տաժանապարտ ժան Վալթան: Մա նշանակում է ավարտել հարությունը և ընդմիշտ մտնել դժոխք:

Հարց հարցի ետևից և պատասխան պատասխանի վրա... Կարևոր է, որ այդ հարցերը որոշակիորեն բարձրացված են պարզ տեսության աստիճանի՝ հուզում են նույնիսկ գիրքը փակելուց հետո: Հերոսը փնտրում է ծանր կացությունից դուրս գալու ելքը և գտնում . իր անձը փրկելու համար նա պիտի գոհի իրեն:

Նա զգաց, որ եպիսկոպոսն իր մոտ է, նայում է իրեն, որ ինքը իր բոլոր առաքինություններով հանդերձ խայտառակ մարդ է, իսկ թիապարտ Ժան Վալժանը սքանչելի ու մաքուր: Նա կարող էր մնալ պարկեշտ մարդ, մնալ որպես պարոն քաղաքապետ, մնալ հարգելի ու հարգված, հարստացնել քաղաքը, կերակրել կորստյալներին, խնամել որբերին, ապրել երջանիկ, առաքինի ու հիացմունքով շրջապատված: Այդ նույն ժամանակամիջոցում, կլինի մեկը, որ կկրի Վալժանի կալանավորական կարմիր հագուստը, անարգանքի մեջ կկրի նրա անունը և թիարանում քարշ կտա շղթան: Այդ արդարամիտ, ուժեղ մարդը, որ երազներ ուներ, հավատ, տենչեր, որ սիրում էր ազատությունը, որ ընդհատվել էր անարդար իրականության հետ, հոգով մնացել էր ազնիվ մղումներով օժտված: Օ, ինչպիսի թշվառություն: Ճակատագիրը կարող է չար լինել՝ իմացական էակի պես և դառնալ դժոխային՝ մարդկային սրտի պես: Այո, նա գնում է այդ քայլին, գտնելով, որ անօգուտ կլինի կյանքը, և ամբողջ ապաշխարհանքը կորած, եթե չփրկի այդ մարդուն:

Առանց ծավալվելու հիշենք միայն դատարանում ասված նրա հետևյալ խոսքերը. «Արձակել տվեք այդ մեղադրյալին: Պարոն նախագահ, ձերբակալել տվեք ինձ: Այն մարդը, որին դուք փնտրում եք, նա չէ, ես եմ: Ես Ժան Վալժանն եմ»:

Մարդկային ահավոր դաժան ու անսահման հուզիչ ճակատագիր... Մարդկային ամենաազնիվ արարք, մարդ էակի հանդեպ սիրո ամենավսեմ հասկացողություն, մարդկային ամենաբարձր առաքինություններ, ասպետականություն, գեղեցիկ մահը անպատիվ կյանքից գերադասելու գիտակցություն, ահա թե ինչպիսի հատկություններով էր մարմնավորված Ժան Վալժանը:

Հավատալով Ժան Վալժանի տառապանքների կենդանի ճշմարտությանը, մենք այնուհանդերձ նրան դիտում ենք որպես գեղարվեստական կերպար, անհնար է նման անձնավորության գոյությունը մեր կողքին: Իսկ եթե իրականում հանդիպում է այդպիսի անձնավորության հիշեցնող ինչ-որ մեկը, ապա անպայման՝ խամրած լուսապսակով:

Այո, կյանքը պայքար է: Պետք է կամ պայքարել կամ հանձնվել: Սակայն թե բարության և թե չարության մեջ վսեմ Վալժանի խառնվածքը հուշում է պատասխանը՝ ապրել և պայքարել: Նա ողբերգականի իր ուժով հաստատում է կյանքը, իր մարդկային լիարժույթյամբ ժխտելով անորոշությունը:

Հերոսի այս տեսակի համար կարևոր է կյանքի իմաստի որոնումը, որի համար հերոսը մղվում է դեպի ներաշխարհ՝ ինքնավերլուծման, ինքնագնահատման: Այս ներսուզումը նկատի ունի բացահայտելու կյանքի արժեքը, ապրած օրերի նշանակությունը, գոյության ժամանակի բաժանումը ապրած տարիների և չապրած տարիների:

Թվում է կյանքի կայունացումը նրա համար չէ նրան միշտ ուղեկցում են անորոշ ու նորը: Իսկ կյանքը ունի իր շրջագիծը և ամենօրյա կարուսելը նույն այդ հերոսին վերստին ստիպում է քրքրել անցյալը:

Ամեն մարդ հոգու մեջ ունի իր աշխարհը. ոչ այն, որ ապրում է բոլորի աչքի, առաջ, այլ մեկ ուրիշը, որը միայն իրենն է, որի համար ինքն իրեն պատասխանատու է ամբողջ էությանը: Ճակատագրի արհավիրքների դեմ մենք մենակ կանգնած Ժան Վալժանը նորից թիարանում է... Նրա թիարանի համարը փոխվեց

և նա կոչվեց 9430: Մադլենի արհեստանոցները փակվեցին, շենքերն սկսեցին քանդվել և բանվորները ցիրուցան եղան:

Երկնքի տակ ապրելու ցանկություն ունեցող ամեն ինչ ստիպված է պայքարել ճակատագրի դեմ: Պայքարում է թե ծառն ու թուփը, թե համայն մարդկությունը: Բայց շատ քչերին է վիճակվում այնպիսի պայքար մղել, ինչպես Ժան Վալժանը: Նա չի կարող, նա իրավունք չունի մարտը տանուլ տալ:

...Օրին նավի նավաստին հավասարակշռությունը կորցրեց, երերաց: Նրան օգնության հասնելը նշանակում էր սոսկալի վտանգի ենթարկվել: Կարմիր շորերով ու կանաչ գլխարկով մի մարդ, որը ցմահ տաժանակիր էր, վայրի կատվի ճարպկությամբ մագլցում է թոկասարքերի վրա: Վարանելով ու երերալով տաժանակիրը ընկավ ծովը:

Ծովը դա սոցիալական անողոր խավարն էր, որ պատժական օրենքը նետում էր իր դատապարտվածներին: Ծովը դա անսահման թշվառությունն է:

Մինչև երեկո փնտրեցին, բայց մարմինն էլ չգտան: Հաջորդ օրը Տուլոնի լրագիրը տպեց, որ «Այդ մարդը բանտարկված էր 2430 համարով, նրա անունը Ժան Վալժանը էր: Ժան Վալժանը չէր մեռել...»

Փարիզ հասնելուն պես ամենից առաջ մի ձեռք սզի շորեր գնեց 7-8 տ. աղջկա համար, ապա մի բնակարան ճարեց, որից հետո գնաց Մոնֆերմեյ, իր հետ տանելով անամոք ցավեր:

Կան ներքին փլուզումներ: Հուսահատեցնող ստույգության թափանցումը մարդու մեջ՝ երբեք տեղի չի ունենում առանց անջատելու ու խզելու որոշ խոր տարրեր:

Երբ ցավը հասնում է այդ աստիճանին՝ դառնում է խղճի բոլոր ուժերի գլխապատառ ազատում: Հենց դրանք են ճակատագրական ճգնաժամերը: Քչերն են դրանցից դուրս գալիս իրենք իրենց նման և պարտականությունների նկատմամբ հաստատական: Այդ քչերից էր Ժան Վալժանը:

Իրար են հաջորդում մարդկային ամենաբարդ հոգեվիճակները՝ պողոտայի խարխուլ տուն, հետո վանք, ապա Լյուքսեմբուրգի այգի, Պլյուսմե փողոցի տուն... Բայց Ժան Վալժանը միշտ մնում է հավասարակշռված, խոր ու տարողական և հենց խորությունն ու տարողականությունն են անկրկնելի դարձնում կերպարը:

Նա դուրս հանեց Կոզետին թենարդիենների ճանկերից, հասավ Փարիզ: Կոզետին տանելիս սիրտը դողում էր: Այն ամենը, որ կրքոտ ու խանդակաթ էր նրա մեջ, արթնացավ ու խոստացավ դեպի այդ երեխան: Գնում էր նրա անկողնու մոտ, երբ նա քնած էր, ու հրճվանքից դողում. մայրերին հատուկ մի զգացում կար նրա մեջ և չգիտեր, թե ինչ է դա: Եվ իսկապես, ինչ անորոշ ու ինչ քնքուշ բան է սիրել սկսող սրտի այդ մեծ ու տարօրինակ շարժումը: Ինքը 55 տարեկան էր, իսկ Կոզետը՝ 8: Եվ այն սերը, որ նա կարող էր ունենալ իր ողջ կյանքում, վերածվեց անպատմելի ճաճանջի:

Կոզետը երկրորդ լուսավոր հայտնությունն էր նրա կյանքում: Եպիսկոպոսը ծագեցրել էր նրա հորիզոնի վրա առաքինության լուսաբացը, Կոզետը ծագեցրեց սիրո այգաբացը:

Ժան Վալժանը կարդալ սովորեցրեց Կոզետին, ապա դրան հաջորդեցին վանքի տարիները, ուր նա այնքան երջանիկ էր, որ նրա խիղճն ի վերջո ան-

հանգստացավ: Ամեն օր նա տեսնում էր Կոզետին, զգում էր, որ իր մեջ ծնունդ է առնում հայրությունը և գնալով ավելի է զարգանում: Երազանքի փշրված աստամ-նասանիվը նորից պտտվում էր:

Երբ ավարտվեց Կոզետի կրթությունը, Ժան Վալժանը դուրս եկավ մշտնջե-նական պաշտանմունքի վանքից:

Նա սիրում էր Կոզետին իբրև իր դարեր, իբրև իր մոր, քրոջ, և քանի որ եր-բեք սիրուհի կամ կին չէր ունեցել, քանի որ բնությունը ոչ մի բողոքարկում չնդու-նող պարտատեր է, ապա այս զգացումն էլ, որ ամենասանկորուստն է, խառնված էր մյուս զգացմունքներին իբրև տարտամ, անզետ, կորության աստիճան մաքուր, երկնային, աստվածային, մի զգացում, ավելի քիչ որպես զգացում քան բնագո, ավելի քիչ որպես բնագո քան խայծ, անշոշափելի, անտեսանելի, բայց իրական, և Կոզետի հանդեպ տածած խանդաղատանքի մեջ բուն սերը այնպես էր, ինչպես ոսկու երակը լեռան մեջ, մշուշապատ ու կուսական:

Տարօրինակ մի հայր, որ կոփված էր Ժան Վալժանի մեջ եղած պապից, որ-դուց, եղբորից ու ամուսնուց. մի հայր, որի մեջ նույնիսկ մայր կար, հայր, որ սի-րում էր Կոզետին ու պաշտում, որի համար այդ երեխան լույս էր, բնակարան, ըն-տանիք, հայրենիք, դրախտ:

Ամեն վիճակ ունի իր գլխավոր խորհուրդը, որը երբեմն թվում է պարզ, բայց պարզությամբ հանդերձ այն կորչում է բազում մանրամասների և լրացուցիչ տարրերի մեջ:

...Ժ. Վալժանը բարիկաղներում կարող էր սպանել Ժավերին, լուծել վրեժը, բայց նա դա չարեց: Միգուցե այն պատճառով, որ նրան սպանելը իսկական հա-տուցում չէր: Ոչ, գլխավորը այս չէ: Ժ. Վալժանն ուժեղ մարդ էր: Նա կարող էր վրեժխնդիր լինել, իսկ հետո... Կյանքը հետո ինչպե՞ս կընթանար:

Որևէ բան կկարողանա՞ր փոխել: Նա բաց է թողում Ժավերին: Մա է հումա-նիզմի առաքելությունը. ցնցել բարոյապես՝ խիղճն արթնացնելու համար:

Լինելով մարդկանցից ամենաթշվառը՝ պիտի լիներ ամենադժբախտը, պետք է տառապանքով կրեր այն ամենը, ինչ կարելի էր կրել, պետք է ծերանար՝ առանց երիտասարդ լինելու, ապրել առանց ընտանիքի, առանց բարեկամների, պետք է լիներ մեղմ, երբ իր հանդեպ դաժան էին, բարի երբ իր նկատմամբ չար էին, դառնար ազնիվ մարդ, զոջար իր գործած չարիքի համար և ներեր այն չարիքը, որ ուրիշներն էին արել իրեն. և այն բոլորին, երբ վարձատրված էր, երբ հասնում էր նպատակին, երբ ուներ այն, ինչ ուզում էր, ինչ վաստակել էր, ամբողջը պիտի ցնդեր, պիտի կորցներ Կոզետին, կորցներ կյանքը, ուրախությունը հոգին:

Այս ամենի գիտակցումը սակայն չխանգարեց, որ նա փրկի Մարիուսի կյանքը, ուշաթափ Մարիուսին ձեռքերի վրա պահած՝ կտրի բարիկաղի սա-լազրկված տարածությունը, տանի կոյուղով, երբ ամենուր դարանակալած մահն էր սպասում...

Յուրահատուկ են հերոսի հոգեկան վիճակները. դրանց արտաստվոր զար-գացումը գրեթե միշտ սկսվում է ենթագիտակցության խավարից և դանդաղորեն հասնում բազմաթիվ վառ գաղափարների լույսին:

Կոզետից զրկվելով նա՝ կորցնում է ամեն ինչ՝ խավարը թանձրանում է, երազները՝ խորտակվում: Ըստ էության, դա միայն Ժան Վալժանի տառապանքը (կործանումը) չէ, այլ բոլոր նրանց, ովքեր վեր են անհրապույր ու կոպիտ առօրյա-

յից, ովքեր բարձունքների կարոտն ունեն իրենց ազնիվ սրտերում: Դա մարդկային լավագույն ձգտումների, վեհ նպատակների ու ազնիվ խոհերի խորտակումն է:

Հյուգոն քայլ առ քայլ համոզիչ փաստերով նախապատրաստում է նրա հոգեբանական ու ֆիզիկական մահը:

Կյանքը, ուր ամեն ինչ խառնաշփոթ է, աններդաշնակ, պղտոր, համընդհանուր սուտ է ու կեղծիք, կարծես ուղղակի ու ստույգ պատասխաններ է ստանում, երբ մահվան դիրքերից են սկսում դատել նրա մասին: Խորտակվում են բոլոր պայմանականությունները, և ամեն ինչ իր արժեքն է ստանում: «Խորհել մահվան մասին նույնն է թե խորհել ազատության մասին»:

Մահը չի սարսափեցնում, այլ իմաստնացնում է: Կյանքում ամեն ինչ փուչ ու դատարկ չէ, եթե ամբողջ աշխարհը ընկալի որպես միասնական նյութական պրոցես, շնչավոր-անշունչի, բարձրագույն ստորագույնի անցումներով: Նյութը մեռած է: Ինքնին այն զուրկ է հոգուց:

Պատահակա՞ն է արդյոք, որ վեպը ավարտվում է Ժ. Վալժանի մահով: Կարծում եմ՝ ոչ:

Այս երեսուն մոլորակի վրա դարձյալ մնում է մի բուռ հողի խորհուրդը և մարդու ներաշխարհը, նրա ուրախությունն ու ցավը-ահա վեպի ար-դիականության խորհուրդը: Այո, մահանում է մենակ, դժվար ապրող, կյանքի տեղ տառապանք տեսած, հաճույքի տեղ զրկանք ճաշակած հերոսը:

Нуне Давтян - Роман-эпопея Жан Вальжан-герой воплощающий сущность и дух времени - „Отверженные“ создавалась Гюго на протяжении тридцати лет. В основу сюжета французский писатель положил два строго противоположных образа своей эпохи – каторжника и праведника, но не с тем, чтобы показать их нравственную разницу, а с тем, чтобы объединить их в единой сущности Человека. Главной целью «Отверженных» французский писатель видел показ пути, которой проходит как отдельная личность, так и всё общество «от зла к добру, от неправого к справедливому, от лжи к истине. Исходная точка – материя, конечный пункт – душа». Центральный связующий образ роман – каторжник Жан Вальжан – воплощает в себе внутреннюю реализацию этой идеи. Вся его история - бегство от общества, которому он еще на каторге выносит приговор, но морали которого он сам в итоге трагическим образом подчиняется. В характере Жана Вальжана и совершается чисто романтическое преобразование человеческой души после грандиозной очистительной бури, вызванной великодушным отношением к нему епископа. Непримируемый контраст между злом и добром, тьмой и светом, проявившийся в характерах персонажей Гюго первого периода его творчества, дополняется теперь новым мотивом: признанием возможности преобразования злого в доброе. В результате этого потрясения Жан Вальжан и становится совсем другим человеком.

Nune Davtyan - The essence of time in the image of the hero Jean Valjean- The epic novel “Les Miserables” was being created by Victor Hugo over a thirty years’ period. The French writer based his plot on two strictly opposite images of his epoch – a convict vs. a pious man, though not to demonstrate their moral difference, but intending to unite them in the integrated nature of a Man. The author saw the main purpose

of his “Les Misérables” in showing the path taken by both a single individual and the entire society “from evil to good, from wrong to just, from a lie to the truth. The starting point is the matter and the destination point is the soul”. The novel’s central binding image – a convict Jean Valjean – personifies the inner realization of this idea. His entire story is an escape from the society which he condemns way back in servitude, but to the moral of which he eventually submits in a tragic way. It is in the personality of Jean Valjean that a purely romantic transformation of a human soul takes place after a grand purgatory storm induced by the bishop’s magnanimous attitude towards him. The uncompromising contrast of evil and good, darkness and light that manifested itself in Hugo’s characters in his first creative period, now is complemented with a new motif – recognition of a possibility to turn evil into good. As a result of this shock, Jean Valjean becomes a quite different person.

Ի՞ՆՉ ԵՆ ՊԱՏՄՈՒՄ ՄԱՐՈՒԹԱ ՄԱՐԻ ԱՄՊԵՐԸ

ԱՒԴԱ ՄԱՐՀԱՏՑԱՆ

Էսսեն նվիրված է Ն. Գալշոյանի «Մարութա սարի ամպերը ժողովածուին, որ մեծ եղեռնի գեղարվեստական արձագանքն է, գաղթած հայերի ապրած ողբերգության անմոռաց հիշողությունները: Պատմվածքների հերոսները կորցրել են հայրենիք ու հարազատներ, բայց կորուստների անփարատ ցավն ու վրեժի զգացումը հոգիներում՝ կյանքի հրամայականով շարունակում են ապրել...

Բանալի բառեր. Մեծ եղեռն, գաղթ, չմոռացվող հիշողություններ, հայրենիքի կարոտ, որբացած Մասուն, ավերված երազներ, կյանքի հրամայական, ապրելու տենչ:

Հարյուր տարի է անցել մեծ ոճրագործությունից, բայց ո՞վ է ասում՝ 100 տարի: Եղեռնը երեկ էր, նախորդ օրը, մի շաբաթ առաջ... Մեծ ողբերգության ահագարհուր տառապանքն ու կսկիծը այս և բոլոր հարյուրամյակներում աշխարհասփյուռ հայերի բոլոր սերունդներն են ապրել և ապրելու են միշտ... Եվ քանի դեռ որբ է Մասնո էրգիրը, քանի ավերակ են հայի հավատի կիսավեր վկաները, ու անքաղ՝ գինարբ ծաղիկները Մարութա սարի, նրա արձագանքները իրենց գեղարվեստական արտացոլանքն են գտնելու հայ գրողների ու բանաստեղծների ստեղծագործություններում...

Մեծ եղեռնի սարսափները տեսած ու ապրած, սպանդից մի կերպ մազապուրծ եղած սասունցիների ընտանիքում ու միջավայրում ապրեց և գաղթվածների հետ կոտորածի սարսափները, կորցրածների ողբերգությունն ու անանց կարոտի մորմոքը վերապրեց տաղանդաշատ արձակագիր Մ. Գալշոյանը և այդ ամենը ընթերցողին ներկայացրեց Մասնո ունկնահաճո, քաղցրահունչ բարբառի կենդանի շնչով...

Այս **էսսեն** Մ. Գալշոյանի՝ գրական հուշարձաններ դարձած հերոսներից ընթերցողիս փոխանցված հույզերի պոթթկումն է՝ ծնված նրանց մորթված ժպիտներից, կյանքի կարոտով լի նրանց պայծառ երազներից, մայրերի ու երեխաների՝ սարսափից մթագնված հայացքներից, չպղծվելու համար անդունդը նետված կանանց աներեր առաքինությունից, տղամարդկանց անկատար վրեժի ցասումից, որբացած էրգիրը տեսնելու նրանց նվիրական ցանկություններից...

Ժողովածուի խոստուն վենագիրն արդեն հուշում է այն տրամադրության մասին, որով պարուրված է ամբողջ շարքը: Հիշողությունները ամպի պես ծանրացել են հերոսների հոգու վրա... Չվայելած կյանքի կարոտն ու անմոռաց հույզերի հիշողությունները խեղդում, ատելության ու չլուծված վրեժի զգացումը տանջալիորեն հետապնդում են նրանց... Բայց նրանց ապրեցնում է կյանքի հրամայականը...

«Մարութա սարի ամպերը» կերպարների պատկերասրահ է, ուր, ասես կտավից, քեզ են նայում Չորի Միրոն ու Ջորոն, Ծովասարի Օհանն ու Քեռի Թորոսը, Դավոն, Մամփրե արքան ու մյուսները...

Չորի Միրոն՝ համանուն վիպակի հերոսը, ապրել է եղեռնի սարսափները. նրա աչքի առաջ սպանել են, խոշտանգել, թալանել: Կռվել է Միրոն ասկյարների դեմ, անողոք ու արյունոտ վրեժ էր լուծել քանիսի ց՝ իր ընտանիքի ու հարազատ ընկեր- բարեկամների կորստի, կնոջ ու ծնվել չհասցրած որդու կորստյան համար, ավերված ու թալանված գյուղի ու գյուղացիների... Կոտորածից հազիվ մազապուրծ՝ նա հասել է քարոտ- քարքարոտ մի երկիր ու փորձել նորից բույն հյուսել...

Այսպես ուժեղ, սարից էլ ուժեղ կարող է լինել միայն հայը, որովհետև Աստծո տված ցավերը միայն նա կարող էր տանել՝ մահվան դեմ օրորոց դնելով՝ բայց և չմոռանալով անցյալի մղձավանջային տեսիլները... Հուշերի ծվեններից ամբողջանում են խլված հայրենիքի, նրա բնության ու մարդկանց պատկերները՝ չմարող կարոտի բոլոր գույներով ու բույրերով. իրենց ծաղկոտ սարե ըր, առատ անձրևներ ըր, իրենց երգրի գարունները, որ ուրիշ էին, երգրի աշունները, որ ուրիշ էին, ձմեռները, որ ուրիշ էին, ուրիշ շ... Մա չմարող կարոտի ճիչն է, որով լի է Միրոյի հոգին.«- Լսե, Հարութ, կարոտ գորե՞ր գորեղ է, կարոտից գորեղ բան աշխարհքը չկա: Ինչքան հեռանում ես Քարազուլու գեղից, մեր քողտիկից, մեր ձորից, էնքան կարոտդ կմեծանա: Կարոտի հետ տխրություն կմեծանա, գառ... Կարոտ տխրություն է, անուշ-անուշ տխրություն... ասում էր Միրոն: Նա իր ապրած դժվար կյանքում հասկացել է մի մեծ ճշմարտություն. «Աշխարհք հող ու ջրից անուշ բան չկա: Մարդու ուժ հողի մեջ է: քանի հող չեն խլե՞ ոտաց տակեն, մարդ անպարտ է, թեկուզ գարկվի, անպարտ է, իլեցին, գերի է»:

Միրոյի հոգում ատելության մաղձը սահման չունի, և անօրեն ջարդարարների, հետ կապված հիշողության ամեն մի պատառիկ ավելի է խորացնում ապրած դառնությունը, սաստկացնում չսպիացող վերքի մրմուռը: Ինչպե՞ս մոռանար. արյունախում թուրքերը սև գիշերի պես պատանքեցին գյուղը, ավերեցին, սպանեցին ու անպատիժ թալանեցին. «...Օսմանը նստած է դիմացը՝ ճնկներին թուր ու թվանք և ֆոֆացնում է մեծ հարսի վզից պոկած ոսկե շղթան ու նենգորեն ժպտում...», այն **հարամ** Օսմանը, որ Խումար մարեի ձեռքի հացն ու թացն էր կերել...»: Օսմանցին հավատ ու հավատարմություն չունի, քու ափի մեջ ձվածեղ պատրաստե-տուր, թուրքը կերավ-պրծավ, կասի՝ վառած էր... Թուրք բեկ կմտներ շեն, խարջի վրա խարջ կուզեր, հարս ու աղջիկ եղծել կուզեր, կոիվ-արուն թափել կուզեր...

Անլուր մի հառաչանք է ակոսում Միրոյի միտքը. լինե՞ր, այնպես լինե՞ր, որ հիշողությունից դուրս գային մոռալ հուշերը, էն գարունը չեղներ, Մարաթուկի գլխին էն սև ամպերը չկուտակվեին, չեղներին էն սահվոր օրերը, էն կրակոց-տրաքոցը չլինե՞ր, ասկյարի թուր ու թվանքից փախչելն ու սար ու ձոր ընկնելը չլինե՞ր, էն սև լուրը չառնե՞ր, թե իր կին ծոցվոր Խանդութ Ջոնի ձորի քարափից մահ ընդունեց. անօրեններ անպատվել կուզեին... Բայց կյանքը շարունակվում է. Միրոյի տոհմը շարունակվում է վերջին Հարութ որդով...Մա մեր բիրիխական կենսակերպն է եղել միշտ...

Պատմությանից ու իր ապրած միջավայրից ստացած տեղեկություններն ու տպավորություններն մեկ վիպակում անհնար էր տեղավորել: Եվ ծնվում են պատմվածքները, նրանցից՝ հրաշալի մի ժողովածու՝ **Մարութա սարի ամպերը**»:

Արդեն **Ճամփորդ** ծերունագարդ հերոսները ավերված օջախի ու ծննդավայրի, նահատակված կամ աշխարհով մեկ ցրված ազգակիցների մորմոքից շարունակում են թաքտալ ափ նետված ձկան պես ու մի նվիրական երազանք ունեն. Էրզրի կողմից թվանքի ձեն չլավի, սպանվածների ճիչ ու հառաչանք չլավի, աշխարհքը խաղաղ լինի ու անփորձանք...

Միլիոնավոր կյանքեր իլեց, միլիոն երազներ ավերեց 15-ը, , բայց սերը մնաց, սիրո երազը մնաց ապրողների մեջ, սերը ապրելու ուժ ու ոգի տվեց: Գալշոյանի ամենասքանչելի պատմվածքներից մեկի՝ **«Կանչը»** պատմվածքի հերոս ծերունի Ջորոյին մենք տեսնում ենք կապույտ արևածագին՝ Ալեի անունը շուրթերին՝ որպես չմոռացվող սիրո երգ, թախիժ ու անկատար երազանք... Քանի՜ տարի առաջ էր, այն է բբ էր, բայց կարոտը ժամանակ ու տարածություն է ճանաչում, բայց սիրո կարոտը հնարավոր է մարել, Ջորոյի Ալեն կարո ղ է մոռացվել, Ալեն, սև պլատսն աչքերով ու ջուխտակ բարակ ծամով, Ալեն, բոբիկ ու նախշուն գոգնոցով ու կրակի կտոր Ալեն, ծաղկեպսակը գլխին Ալեն, Ալեն, որ իրենն էր դարձնում այդ կապույտ աշխարհը, մետաքսաքող Մարութա սարը, Տիրամայր վանքի գլխին որպես լույս իջած ամպի ճերմակ պատառը, այս արևն ու երկինքը...

Պատմվածքը ասես կապույտ երազով է ողողված. կապույտ էր առավոտը, կապույտ էր աշխարհը, կապույտ էր Մարութա սարը՝ քողն ի դեմքին, ձորերն ու կիրճերը կապույտ երկնքով էին լցված, ծերպերին ու ձորաբերաններին թառած գյուղերի շունչը կապույտ էր, սանձը կտրած Տավորիկի հեքից ձորը կապույտ քլթթլթոցով էր լցված ...

Մասնա ծուռ, Մասնա խենթ է Ջորոն: Իր Ալեին կորցնելուց 55 տարի անց Արարատյան դաշտի գյուղերից մեկում, ուր գնացել էր փոքր որդու հարսանիքի համար գինի առնելու, հանդիպում է նրան՝ իր Ալեին, որ արդեն պատիկ մի պառավ էր: Միտ չմոռացված զգացումները ասես հեղեղում են պատմվածքի էջերը, լցնում թախծամբմունջ կարոտով, լուսեղեն թախիժով ու անցյալն այլևս հետ բերելու անհնարինությունից ծնված տաք արցունքներով...

-Ալե, էն օր **Մարութուկ սեր տվեց, հըմը մեկել օր անօրենները իլեցին...Բորենին ընկավ մեջ մատղաշներին, ավեր ու կոտորում, առ ու փախ ու ալան-թալան եղավ ու արևի խավարում եղավ, արևի խավարում եղավ, Ալե, ու ես ու դու կորցրինք զիրար...**

-**Քու խոսք կոտորումի մասին չէ՞, ախպեր Ջորո:**

- **Կոտորումի մասին է ու ... սիրո մասին է, Ալե...**

Արևի խավարում էր, հապա ի նչ էր, Բայց սերն այն լույսն է, որ ճեղքում է խավարը ու նորից լուսավորում դառնացած աշխարհը. սասունցի խենթ ծերուկը ուզում է կյանքի մնացած մի քանի տարին սիրելով ապրել իր Ալեի հետ.<<- Ախպեր Ջորո, երկինք վկա, դու քո խելք թոցրեր ես,- նեղսրտեց պառավը>>: Չէ՛, Ջորոն խելքը չի թոցրել, Ջորոն կբաժանվի կնոջից, զավակներից, կապրի իր սիրո հետ աղքատ խրճիթում: Ալեն պատիկ, մի բուռ բան է, կզգի պարկի մեջ ու կփախցնի, հա՛, կփախցնի: Մի քանի տարվա կյանք է մնացել, իրար հետ կապ-

րեն, ու թող Մարաթուկի սրտով եղնի... Հետո՞... հետո հարբած Ջորոն ոտքի կանգնեց, ու պառավին գիրկն առավ... պառավը դեմքը սեղմել էր ծերունու կրծքին, իսկ Ջորոն խոնարհել էր գլուխը, այսը հենել Ալեի մագերին ու երգեցիկ կանչում էր՝ Ալեե՛, Ալեե՛, իմ հոգին, Ալեե՛ ...

Նովելների բոլոր հերոսները հոգեկան դրաման ունեն, որոնցից կա՛մ ձերբազատվում են անսպասելիորեն գտնված ելքով, կա՛մ մեռնում են պայծառ, խաղաղված, կա՛մ կյանքի մնացած մասը շարունակում են ապրել աշխարհի հետ արդենհաշտ աներդաշնակ:

Ժողովածուի կերպարները իսկական Սասնա ծռեր են, որոնք չեն համակերպվում մարդկային պայմանականությունների հետ, միշտ ձգտում են, որ բնական, անխաթար հարաբերություններ լինեն, և մտածում են այն մասին, թե ինչու չկարողացան պահել իրենց հայրենիքը, իրենց դրախտային Սասունը:

Արտասվելու չափ հուզիչ է **«Շովասարի Օհանը»** պատմվածքը, որ կարոտի լեռնացած խտացում է... Այնքա՛ն կենդանի են պատկերները, թվում է՝ դիմանկար-քանդակներ են՝ սպանվածների չչորացող արյամբ ու կենդանի մնացածների չսառչող արցունքներով...

Տարիքն առած մարդ է Օհանը, բայց նրա ականջին շարունակ հնչում է հոր ձայնը. թվում է՝ նա կանչում է իրեն: Մինչդեռ որդին՝ կարծում է՝ հայրը մոռացել է, որ նա վաղուց չկա: Բայց Օհանը չգիտի՞, որ հայրը չկա, ախր Օհանի աչքի առաջ են սպանել, ինքը քանի՞ անգամ է պատմել՝ հայրը սպանվեց Շովասարի փեշին, իր աչքի դիմաց: Դա մոռանալու՞ բան է: Ի՛նչ մոռանալ: Այսօրվա պես հիշում է՝ հայրը ծոցից հանեց դանակը, հայհոյեց իրենց փնտրող ասկյարներին, ապտակի պես համբուրեց իրեն ու առաջացավ՝ վրեժի զգացումից կրակված... Ասկյարը տապալվեց, հայրը զարկվեց... Դրամա է, ողբերգություն, կինոնկարի բնանկար-կադր. Օհանի հայրը, արդեն սպանված, գլորվում է Շովասարի լանջն ի վար: Պատանի Օհանին, որ թաքնված էր թփերի հետևը, թվում էր, հայրը սարի կանաչ ու փափուկ փեշին խաղ էր անում, գլորվում, գլուխկոնծի տալիս... «Ի՛նչ անուշ կգլորվեր իմ հեր, թող որ մեռնելուց առաջ, իմ հեր, քանց էրեխա, գլորիկ խաղաց Շովասարի անուշ փեշին...»: Ու զարկված հերոսի հանդեպ ունեցած ծանր հույզերին խառնվում է ասկյարների հանդեպ երկու տողի մեջ չտեղավորվող աղաղակող ստեղծությունն ու անթաքույց զարշանքի հիշողությունը. հորը սպանող թուրքերից մեկը, հետ դարձավ, խուզարկեց սպանված ընկերոջ գրպանները, ծանր ու թեթև արեց, կապոցից մի ոսկե ատամ ընկավ, ասկյարը թքեց վրան, ապա վերցրեց, կապոցի հետ հարմար տեղավորեց գրպանում, առավ ընկածի հրացանը և նորից վազեց...

Օհանի համար Շովասարը մոռացվող երազ չէր, պատրանք չէր, երգ էր, անհուն ցանկություն, կարոտի մորմոք ու իրական ծրագիր. ինքը շիփշիտակ կզնա սահմանապահների հրամանատարի մոտ, կբացատրի իր միտքը, և հենց հրամանատարը ուղեկից կլինի. կբռնի Օհանի թևից, Արաքսը կանցկացնի այն կողմ, թուրքին կհրամայի թող էս հալտորը գնա Շովասարը տեսնի ու ետ գա: Ինքն էլ ճամփորդ է, կզնա, Շովասարի անուշ փեշին կառնի իր հավերժ քունը, իսկ եթե չէ, ման կգա սար ու ձորերում, Բանջար կուտի, աղբյուրներից ջուր կխմի, ծաղիկ կհավաքի, սարի փեշերին գլորիկ կխաղա, կիջնի, կբարձրանա մինչև Շովասարի կատարի լճակը: Հոգեցունց է նրա գրույցը իր պառավի հետ գերեզ-

մանցում. որ էրթա՞ գա, ի՞նչ բերի նրա համար՝ Բանջա՞ր, խավրծի՞լ, նուխի՞կ, ի՞նչ ծաղիկ բերի, Ծովասարի լճակից ջու՞ր բերի, իսկ համերկրացի ննջեցյալներին խոստանում է Ծովասարի հող բերել... Օհանի կարոտից ծաղկի բույր է գալիս, խոտի բույր, Օհանի կարոտը գույներ ունի՝ ճերմակ՝ Ծովասարի ձյուների պես, կապույտ Մասնա երկնքի պես, կանաչ, սարի լանջերի գմբուխտ կանաչի պես...

Համոզիչ ու բնական է Օհանի կերպարը: Ոչ մի շինծու շէշտ, ոչ մի ավելորդ մանրամասն: Մշտնջենական տեսիլները՝ ապրած ահ ու սարսուռի, արյունոտ կոտորածի, հեռվում անտեր ու որբ մնացած Ծովասարի հիշողություններով լի, Օհանի գլխում մթագնել էին անցյալի ու ներկայի հարաբերությունները... Մինչդեռ շրջկետրոնից ավտոմեքենա էր եկել՝ նրան տանելու..., Օհանը զարմանում է, թե ինչու, փոխանակ ուրախանալու, որ **հայրը երգիր կերթա**, հարսն ու որդին հուզվել են և հազիվ են գսպում փղձուկը...

Հայրենիքի կարոտն ու հիշողություններն են ծվարած նաև **Քեռի Թորոսի** հոգում. Էրգիրը նրա համար սիրո և կարոտի կանչ է, վրեժխնդրության ու ատելության զգացումը՝ չմարող գաղափար: Կարճկոթ սուրը ժանգոտել էր, բայց դեռ պէ տք էր լինելու. պետք էր սրել, պատրաստել... Նրա հիշողության մեջ շարունակ հառնում էր վաթսուսնից տարի առաջ կատարվածը... Թուրք ոստիկանապետը հայտնվեց գյուղում՝ ասկյարացու տղաներ հավաքելու, և ինքը՝ տասնվեց-տասնյոթ տարեկան մի տղա, մերկ մատներով նրան կրակ մատուցեց **դայլունը** վառելու: Եվ երբ վերջինս հետ-հետ գնաց՝ տեսածից զարմացած, Թորոսիկը սուր նայեց շեհիտի աչքերի մեջ. «-Վառե՛, աղա, էլ ի՞նչ ասկյարացու, թե կրակ չառնի իր մատներուն»: Շեհիտը, նրա աչքերում առկայծած զայրույթից ահաբեկված, նայել էր իր ոստիկաններին՝ հասկացնելով, որ հեռանան... Տարիները չէին մթագնել շեհիտի դեմքը, ավելին, նա ամեն գիշեր հայտնվում է իրեն որպես արդեն կոկորդը խեղդող չարորակ ուռուցք, և հիմա, երբ դաժան հիվանդությունը բույն էր դրել այնտեղ, Քեռի Թորոսին թվում էր, թե կոկորդում շոշափվող այդ ճիրանները, այդ սև մագիլները շեհիտի քստմնելի ժպիտից են ծնվել, այդ նա է, որ բռունցքի չափ դարձած, սև ու գալարուն մագիլներով հայտնվել է կոկորդում ... ինքը վրե՛ժ կլուծի նրանից, կլուծի՛՝ այն սրբազան վրեժը, որ չէր հասցրել լուծել այնտեղ՝ Էրգրում, ու կազատվի վերջապես այն հրեշից՝ արնամխած աչքերով, նենգադավ ժպիտով Մեհմեդ ոստիկանապետից՝ մարմինը մի սև, անձոռնի գունդ՝ անհամար մագիլներով: Եթե կարողանա ր թրատել այդ քստմնելի ժպիտը, որ իր կոկորդում էր... Պետք էր վե՛րջ տալ, շուտո՞վ, շուտո՞վ... Բայց կյանքը այնքա՞ն քաղցր է... Գալշոյանը Քեռի Թորոսի կերպարում խտացրել է մահը բաց աչքով տեսած, մահից փախչող ու կյանքին կառչած մարդկանց ապրելու տենչանքը. հրաշք է աշխարհը, հրաշք է երկինքը, երկիրը, բացկուրծք սարերը, հրաշք են ծառերը, խոտերը, գետերի ու ջրվեժների տնագն անող թլորիկ առվակը, հրաշք է արևը, որին **կարոտել էր երգրի պես**, հրաշք է արշալույսը, որ մեկուկես միլիոնին չթողեցին վայելել **մահաբեր չարորակ ուռուցքի** վերածված արնախում մարդասպանները... Թախծի ծանր ամպեր են նստած ամբողջ պատմվածքի վրա...

Անցյալի ու ներկայի մեջ է ապրում նաև համանուն պատմվածքի հերոս սասունցի փախստական **Դավոն**: Նա մահամերձ է: Զինակր ընկերները եկել են

նրան տեսնելու.«Դավո, քու երակներուն մեջ էդքան ուժ կա, տղա, դու ու՞ր է կերթաս», բայց Դավոն կռվի մեջ է, Դավոն կռիվ է գնում, և «Ով զարկվի, դավաճան է»: Նա եղել է զորավար Անդրանիկի բանակում, նրա լավագույն զինվորներից մեկը, բայց երբեմն նրան նույնիսկ չի հնազանդվել, դատապարտվել է մահվան, բայց հաղթել է իր համառությամբ, իր սկզբունքներին հավատարիմ մնալով: Դավոն ճամփորդ էր, Մարութա վանքում խաչի փոխարեն սուրը համբուրած տալվորցի Դավոն **գնում էր**, և արևմարքի հետ նրա շունչը խառնվելու էր Մարութա սարի ամպերին: Դավոն անկատար երազ ունի, նա կռիվ ունի թշնամու հետ ու հիմա կռվի է գնում. Տավորիկ կռիվ է... Ու խնդրում է իր ձեռքերը բաց մնան...խաչած ձեռքերով ինչպե՞ս է զենք առնելու...

«Մարութա սարի ամպերը» ժողովածուն ավարտվում է **«Մամփրե արքան»** պատմվածքով, որ մեծ խորհուրդ ունի իր մեջ, որ դաս է ու պատգամ: Այստեղ իշխում է խորհրդանշական կարմիր գույնը՝ արյան, վրեժի ու պայքարի գույնը: «Հայոց տառերը կարմիր գույնի են... քանզի սուրբ Մաշտոցը իր սրտից է հանել ի լույս: Եվ կարմիր են, քանզի թրծվել են արդար Արեգակով, և կարմիր են, քանզի սրբազան կռիվների են մասնակից եղել»: Հավերժող մեր ոգու գաղտնիքը, մեր գոյությունը մեր հավատի մեջ է, մեր լեզվի մեջ, որ կյանք առավ գրով... Ու Մամփրեն, ութսունամյա Մամփրեն սովորեց հայոց գրերը, որ գրով իր անկատար վրեժը լուծի, իր կռիվը անի Օսմանի հետ, կոտորածն ու գաղթը վրա տվեցին, ու ինքը էն ճպրտտ Օսմանին պարտք կռիվը չտվեց. Հիմա, երբ մահը հայտնվեց աչքերի առաջ, ծոծրակի մեջ այնպիսի սուր ցավ զգաց, ինչպես այն օրը, երբ այդ նենգ լակոտ Օսմանին լավ տրորեց, ապա ծնկեց, իսկ նա քարով զարկեց իր գլխին ու քարերի պես շարտում էր Աթաբունար...Աթաբունար, որպես թե աղբրի անունը՝Մեհրե չէ, որպես թե աղբյուրը քոզ՝նը չէ, ի՛մն է...

Մամփրեն գլխապտույտի մեջ ու աչքերը մթազնած, հայացքի առաջ մշուշ ու ամպ, ճերմակն ու կարմիրը խառնված իրար, օգնության կանչեց էրգրի շունչը, որ սպասի այնքան, մինչև գրելը վերջացնի...օգնի գրելու, գրելու գլխատառերով, այնպես շեշտ ու զգաստ, որ ավարառուն գրի տեսքից իսկ դողա...

Լուսաբացին որդին հորը գտավ սեղանի մոտ մարած, ճակատը սեղանին, սեղմված բռունցքում մատիտը և ճակատի տակ կարմիր գլխատառերով գիրը.

«Օսմա՛ն, թալանչի՛ Օսման, ուրեմն որպես ավագակ որ ճամփին կանգնեցիր, էդ ճամփեն քոնն է հա՛... »:

Չէ՛, ճամփաների դարանակալ ավագակ, թալանչի Օսմանը թող այսուհետ հասկանա, որ նրա գիշատիչ աչքը որ սարը տեսավ, իրենը չէ՛, հարամ շունչը որ աղբրակին դիպավ, իրենը չէ՛, թալանչի ձեռքը որ դռանը դիպավ, էդ տունը իրենը չէ՛, մեռնի էլ, իրենը չէ՛. Առյուծ Մեհրը էդ աղբրակի բխած տեղն է հանդիպել ու ճղել առյուծին, ու Արարիչն ինքն է կնքել Մեհրե աղբյուր, չէ՛, մեռնի էլ, աղբրի անունը Մեհրե է ու Մեհրե էլ կմնա...

Ո՛վ գիտե, գուցե մի օր էլ Մարութա սարը նրանցը չլինի, մերը լինի, ու ցրված լինեն նրա զմրույստ լանջերին մետաքսաքողի պես իջած ճերմակ ամպերը...

Аида Саргатян - *О чем рассказывают облака горы Марута.* - Эссе посвящено сборнику М. Галшояна "Облака горы Марута", который является художественным откликом геноцида.

Герои рассказов перенесли жестокие ужасы непредсказуемого преступления, потерю родины и родственников, но боль потери, тоска и месть сохранившиеся в глубине души и любовь к жизни велят жить...

Aida Sarhatyan – *What do Maruta mountain clouds tell about?* - The essay is devoted to N. Galshoyan's „Maruta Sari Amper” collection, which is fictional response to calamity, migrated Armenians unforgettable memories of lived tragedy. The novel's heroes lost homeland and relatives, but still continue to live with life challenge having the feeling of undissipated pain and revenge in their souls.

**ԹՎԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՈՎ ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ
ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Պ. ՍԵՎԱԿԻ
ՊՈԵԶԻԱՑՈՒՄ**

ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թվականը շարահյուսորեն բնորոշվում է նրանով, որ գոյականի հետ հանդես է գալիս որպես որոշիչ: Թվականով արտահայտված որոշիչները ցույց են տալիս քանակային հատկանիշ և արտահայտվում են թվականների բոլոր տեսակներով: Թվականական որոշիչները գուրկ են ոճական արժեքից և գործածվում են ուղիղ իմաստով: Որոշյալի նկատմամբ հիմնականում հանդես են գալիս նախադաս. հնարավոր են նաև հետադաս կիրառություններ:

Բանալի բառեր. Թվական, խոսքի մասեր, գոյական, բառակապակցություններ, լրացումներ, հայոց լեզու, որոշիչներ

Թվականը հայ քերականագիտության մեջ երկար ժամանակ առանձին խոսքի մաս չի համարվել: Ըստ խոսքի մասերի որոշման շարահյուսական հիմունքի՝ թվականը համարվել է ածականի մի տեսակ, որը «բուն ածականների նման գործածվում է գոյականների հետ որպես որոշիչ և ածականից տարբերվում է միայն իր ընդհանուր իմաստով. եթե ածականը ցույց է տալիս առարկայի որակային հատկանիշ, ապա թվականը ցույց է տալիս առարկայի քանակային հատկանիշ (հմմտ. գեղեցիկ աղջիկ և երկու աղջիկ): Մակայն բառերի խոսքիմասային կարգերը որոշելիս կարևոր նշանակություն ունի նրանց բառային ընդհանուր իմաստի հաշվառումը: Եվ ելնելով հենց դրանից էլ, ինչպես նաև ձևաբանական, շարահյուսական ու առանձնապես բառակազմական որոշ առանձնահատկություններից՝ թվականը հայ քերականության վերջին շրջանում առանձնացվում է որպես առանձին խոսքի մաս»¹:

Ներկայացնելով լեզվի բառապաշարի ամենահին ու կայուն շերտերից մեկը՝ թվականները, այնուամենայնիվ, չեն կարող չունենալ իմաստային որոշ նրբերանգներ: Դա առաջին հերթին պայմանավորված է թվականի շարահյուսական առանձնահատկություններով: Թվականը շարահյուսորեն բնորոշվում է նրանով, որ գոյականի հետ հանդես է գալիս որպես որոշիչ: Թվականով արտահայտված որոշիչները ցույց են տալիս քանակային հատկանիշ և արտահայտվում են թվականների բոլոր տեսակներով: Թվականական որոշիչները որոշյալի նկատմամբ հիմնականում հանդես են գալիս նախադաս. հնարավոր են նաև հետադաս կիրառություններ:

Քանակական թվականով որոշիչ լրացումներ ունեցող գոյականական բառակապակցություններում որոշիչները ցույց են տալիս առարկաների կոնկրետ թիվը, քանակը, ինչպես օրինակ՝
Այլ ավելի շուտ մարդակերպ կապիկ,

¹ *Մ. Սասորյան.* Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2002, էջ 161:

Որ **յոթ տարին** մեկ չեն տեսնում նույնիսկ օճառի երես,
Տասը տարին մեկ չեն փոխում շապիկ...
(h. IV, 174)²

Բա լսվա՞ծ բան է. **չորս-հինգ փութ** ցորեն ջաղաց են
տանում,
Նա՛ օրդեր գրում, դրա համար էլ...աշխօր ստանում:
(h. I, 197)

110000 գորքի հանդիման
Մարտնչում էին **600 քաջեր**:
Չմարդկայնացած թուրքի հանդիման
Մարդեղինացած մի ազգ էր խաչել
Իր բախտի վրա:
(h. IV, 90)

Պետք է նկատի ունենալ, որ քանակական թվականների որոշչային կիրառությունները ոճականորեն չեզոք են: Չափածո խոսքի առանձին կիրառություններում, սակայն, դրանք ստանում են ոճական արժեք: Այսպես՝ Սևակի ստեղծագործություններում լայն կիրառություն ունեն հատկապես **հազար** թվականով կազմված բառակապակցությունները, որոնցում թվականը ցույց է տալիս առարկաների, հատկանիշների մեծաքանակ լինելը: Դիտարկենք օրինակներ.

Լող էին տալիս **հազա՛ր ու հազա՛ր** Վանա **կատուներ՝**
Վառվող աչքերով,
Թե՞ ցլում էին **հազա՛ր ու հազա՛ր քարեր** թանկագին...
(h. IV, 208)

... Խմիչք ու փշատ,
Հազա՛ր մի բարիք
Եվ, ամենից շատ,
Անվարձ ու ձրի
Միայն նախշո՛ւմ է...
(h. IV, 51)

Ոչ բոլոր թվականներն են գործածական Պ. Սևակի ստեղծագործություններում: Դրանց հիմնական մասը՝ մեկ /մի, յոթ, տասը, քառասուն, հազար, ինչպես առհասարակ գեղարվեստական լեզվում, այնպես էլ Սևակի ստեղծագործություններում գերազանցապես հանդես են գալիս ոչ այնքան իրենց բուն նշանակությամբ՝ առարկաների ստույգ քանակ ցույց տալու համար, որքան ժողովրդական հավատալիքները արտահայտող, շատություն, բազմաքանակություն ցույց տվող բառեր: Ինչպես իրավացիորեն նկատում է Ռ. Մկրտչյանը, «նման կառույց-

² Տե՛ս **Պ. Մուսկ**, Երկերի ժողովածու 6 հատորով, Եր., 1972-1976, հետագա շարադրանքում մեջբերված օրինակներից հետո նշվում են համապատասխան հատորն ու էջը:

ների արտահայտչականությունն ու վերաիմաստավորումն ակնհայտ է»³, ինչպես օրինակ՝

Ա՛խ միամի՛տ իմ պապերի
Մանկաբարո ուրախություն,
Որ տևում է **յո՞թ օր-գիշեր**,
Որ անցնում էր երգ ու պարով...
(h. IV, 126)

... Խմիչք ու փշատ,
Հագա՛ր մի բարիք
Եվ, ամենից շատ,
Անվարձ ու Լճրի
Միայն նախշո մե է...
(h. IV, 56)

Դասական թվականով որոշիչ լրացումներ ունեցող գոյականական բառակապակցություններում որոշիչները ցույց են տալիս առարկաների թվային կարգը՝ հանդես գալով և՛ նախադաս, և՛ հետադաս կիրառություններով, ինչպես օրինակ՝

...Այսպես մեր հոգու մեջ կյանքը իրար խառնեց
Մեր **առաջին վիշտը** և **առաջին խինդը**,
Մեր **առաջին վիշտը**, որ մատներով քարե
Կմճտեց մեր սիրտը... սակայն բերեց նաև
Եվ **առաջին միտքը**...
(h. I, 26)

Նա՛՛
Շինականի համկալ-ընկերը,
Հոտաղ-մշակը
Ու... **երրորդ ձեռքը**.
Նա՛՛
Ինքը... ե՛րգը:
(h. IV, 54)

Բանաստեղծը հաճախ է զուգակցում քանակական ու դասական թվականների գործածությունները, ինչպես՝

«Իմ սիրտը Միրո **հագար գիշեր** է ապրել ու տեսել,
Իսկ ուր է հապա, Ո՛ւր է **գիշերը հագարմեկերորդ**»:
(h. I, 284)

Կոտորակային թվականով որոշիչ լրացումներ ունեցող գոյականական բառակապակցություններում որոշիչները ցույց են տալիս առարկաների որոշակի մասը: Կոտորակային թվականները ռճական լայն հնարավորություններ չունեն: Սևակի խոսքարվեստում լայնորեն կիրառվում է **կես** թվականը.

Ավերում են դեմքերն իրենց

³ *Ռ. Մկրտչյան*, Ժամանակակից հայերենի ձևաբանական ռճաբանություն, Եր., 1992, էջ 184:

Ու հետևից շուտ ճաշակում
Կես թաս շորվա,
Մի ֆունտ գեր միս...
(h. IV, 117)

...Փակեց երկինքը և ծածկեց աստծուն,
ա՛յն աստծուն,
որի որդու տարիքը նույն այդ ժամանակ
ավելացել էր ևս **կե՛ս տարով...**
(h. IV, 276)

Յուրահատուկ ռճական կիրառություններով են աչքի ընկնում քանակա-
կան թվականներով կազմված հարադրական բարդությունները:
...Տարվա այս ուշ եղանակին
Էլ գյուղացուն ինչ է մնում,
Թե ոչ երգե՛լ, պարե՛լ, հարբե՛լ,
Ժամանակն է սուրբ պսակի,
Մեկ-տասնը մեկ հարսանիքի...
(h. IV, 110)

...Ցատկում էր վեր,
Յոթ-ութ վայրկյան օդում մնում արձանացած
Եվ քարի պես ընկնում է ցած՝
Ընկած տեղը ծնկի գալով...
(h. IV, 124)

Չանցած ևս **մեկ-երկու** ժամ՝
Տեղավորվում, հանգստանում
Մա՛ հողիկում, նա՛ վրանում...
(h. III, 17)

Հետաքրքիր է որոշյալի դրսևորումը թվական որոշիչ ունեցող գոյականա-
կան բառակապակցություններում: Քանակական թվականները որոշչի դերում
կարող են թվացյալ կախման կապակցություն ստեղծել որոշյալի հետ: Սևակի չա-
փածոյում մեկից ավելի մեծ թիվ նշանակող թվական որոշչի հետ որոշյալը
դրվում է ն՛ եզակի, ն՛ հոգնակի թվով:

Եվ ասֆալտի փոշու յուրաքանչյուր հատիկ
Հազար գաղտնիք ունի իր շերտերում պահած...
(h. I, 135)

...Պիտի անցնեին շուրջ **365 օրեր...**
(h. IV, 288)

Քանակական թվական որոշչի որոշյալը միայն եզակի է դրվում այն դեպ-
քում, երբ այդ թվականը մեկ // մի բառն է: Օրինակներ՝
Ակնածանքով շուտ տանք հողին
Այս **մեկ բաժակ** մաքուր օղին,

Այս մի բաժակ անխառն գինին...

(հ. I, 428)

Այսպիսով՝ Սևակի չափածոյում թվական որոշչի որոշյալի քերականական թիվը պայմանավորված է խոսքի ընդհանուր բովանդակության և կառուցվածքային առանձնահատկություններով, մասնավորապես տաղաչափական, ինչպես նաև այլ գործոններով, որոնք կազմում են գրողի անհատական, այսպես ասած, լեզվական զգացողության, ոճի բաղադրիչները:

Лусине Оганнисян - Существительные словосочетания с числительным дополнением в поэзии П. Севака - Имя числительное синтаксически характеризуется тем, что вместе с существительными выступает в качестве определения. Определения, которые выражаются числительным, показывают количественный признак и проявляются всеми видами числительных. У числительных определениях нет стилистической ценности, и они используются в буквальном смысле. Относительно определения они в основном бывают препозитивными: постпозитивные применения также возможны.

Lusine Hovhannisyan - Numerical objective nouns in P. Sevak's poetry - The Numeral is syntactically characterized by the fact that it acts as an attribute together with the noun. The attributes expressed by the Numeral show quantitative trait and are expressed by all the types of the Numerals. The Numerical attributes are devoid of stylistic value and are used in literal sense. Concerning the attribute they mainly act prepositive: postpositional applications are also possible.

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԱՐՎԵՍՏՈՒՄ ԳԵՂԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՆԴԱԿԻ ԴԵՊԻ ՎԵՐԱՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՄԱՆ ԱՂԼԱՄԱԶՅԱՆ

Վերացական արվեստը Հայաստանում տարբեր արվեստագետների մոտ ունենում է ինքնատիպ արտահայտություն: Գեղարվեստական ձևերը աստիճանական անցում են ունենում դեպի վերացարկումը: Երբեմն այն կրում է երևակայական պատկերների ի հայտ գալու բացարձակեցմամբ, երբեմն ձևի, գույնի արտահայտչականության հետ հարաբերության շեշտադրմամբ: Ճարտարապետ, քանդակագործ, գեղանկարիչ Վան Խաչատուրի, ինչպես նաև Արկոյի և Էլիբեկյանի արվեստներում հնարավոր է դիտարկել դեպի բացարձակ վերացարկում անցման գեղարվեստական որոնումների հիմնական ընդհանրությունները:

Բանալի բաներ. Վերացական արվեստ, Արկո, Էլիբեկյան, Վան Խաչատուր, ռե-լիեֆ, ձևագրագցում, տարածական պատկեր, դեկորատիվություն, հարթային:

Վերացական արվեստը Հայաստանում իր յուրահատուկ արտահայտչականությունն է գտնում 1960-70-ականներից թե՛ գեղանկարչության, քանդակի և թե՛ ճարտարապետական ձևավորման մեջ:

Խոսելով ճարտարապետական էլեմենտների վերացականացվող սղագրման մասին հետաքրքիր է անդրադառնալ վերացականի ռելիեֆային, քանդակային կամ ճարտարապետական դեկորի արտահայտություններին, որոնց հատկանշական օրինակ կարող է հանդիսանալ հայ արվեստում Վան Խաչատուրի որոշ արվեսային դրսևորումները:

Վան Խաչատուրը (Վանիկ Խաչատրյան) հանդես եկավ որպես գեղանկարիչ, ճարտարապետ, քանդակագործ և գրաֆիկ: Նա ստեղծեց բազմաթիվ ճարտարապետական, հաստոցային, խճանկար, գրաֆիկական և հուշարձանային օրինակներ: Իր աշխատանքներին կարող ենք հանդիպել Մատենադարանի նախասրահում՝ որմանկար-խճանկարների օրինակով, Անի հյուրանոցային համալիրի արտաքին պատի մեծ խճանկարի կամ Ծիծեռնակաբերդի 1915թ-ի Եղդեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի նախագծմանը մասնակից եղած օրինակներով, ինչպես նաև Գիտությունների ազգային ակադեմիայի նախասրահի «Մեսրոպ Մաշտոցի և Մովսես Խորենացու» մոնումենտալ ստեղծագործության օրինակներով:

Այնպիսի գեղանկար աշխատանքներում, ինչպիսին են «Մարդը տարածության մեջ», «Տիեզերական սիմֆոնիա», «Երկրաչափական աշխարհ», «Ապոկալիպսիս. 20-րդ դար», «Մարսափների աշխարհ» և այլ ստեղծագործություններում կարելի է նկատել ճարտարապետին և քանդակագործին հատուկ երկրաչափա-

կան ձևերի ուշադրությունն ու առաջնայնացումը: Պատահական չէ, որ նա համարվում է հայ արվեստում մոնումենտալ-դեկորատիվ գեղանկարչության հիմնադիրը:

Որոշ աշխատանքներում հանդիպում ենք գունային պլաստիկ շարժման և շնչավոր հնչեղության: Իր վերացարկման կարողությամբ, ինքնատիպ լուծումներով և ճարտարապետական համարձակ մտահղացումներով կարողանում է տալ տարածական քաղաք-նախագծերի, խոշոր հենակային ձուլվածքներով շենքերի կառուցման նոր եղանակներ: Հեղինակը նույնիսկ միջազգային արտոնագիր է ստանում բազմահարկ շինության հիմնակմախքի մոնտաժման համար: Նրա հայտնի աշխատանքներից կարելի է նշել նաև Երևանի կրկեսի, Դիլիջանի մարզադպրոցին այլ նախագծեր: Երևան-Սևան խճուղու վրա տեղադրված իր հայտնի «Ճայ» աշխատանքը, Անի հյուրանոցի ճակատային կոմպոզիցիան և այլ ստեղծագործություններ աստիճանաբար արվեստագետին բացեցին մի նոր գեղարվեստական ճանապարհ, որը թույլ տվել առավել մոտենալու ավանգարդիստական և վերացական արվեստին: Պատահական չէ, որ որոշ ուսումնասիրողներ հենց Վան Խաչատուրին են անվանում հա առաջին աբստրակցիոնիստ և ավանգարդիստ:¹

«Անի» հյուրանոցի ճարտարապետական կառույցի պատի կոմպոզիցիայում Վան Խաչատուրը հատկանշական լուծումներ է տալիս: Նախ Հայաստանում առաջին անգամ ստեղծվում է ճարտարապետության մեջ գունավոր շինանյութերի օգտագործման դպրոցը:² Հեղինակը դեկորատիվ ձևերով կազմում է պատի ողջ հարթության կոմպոզիցիան, որը որոշակի սիմետրիկության պատճառով, այնուամենայնիվ, ոչ լիարժեք է ընթերցվում որպես վերացական ձևերի կառուցվածքային համակարգ: Կոմպոզիցիան անվանվում է «Հայտնություն 20-րդ դար» և իրականում ոչ թե ուղղակի երեսպատված է, այլ կառուցված է սև և սպիտակ տուֆից: Այս բոլոր աշխատանքները փաստում են ճարտարապետության և քանդակի, որոշ դեպքերում նաև հաստոցային գեղանկարչության մեջ մոնումենտալ դեկորատիվ արվեստի ներդաշնակ սինթեզի նորովի մեկնաբանման և ըմբռնման մասին հենց դեկորատիվ ձևամտածողության զարգացումների որոնումներով:

Ճարտարապետական աշխատանքներում արվեստագետը չի սահմանափակվում ճարտարապետական քաղաքային նախագծերով, այլ նաև առաջարկում է «ապագայի ճարտարապետություն»: Իր նոր քաղաքաշինական գաղափարները գալիս են նպաստելու և լուծելու համաշխարհային բնապահպանական ճգնաժամի հիմնադիսինթերը, որոնք իրենցից ներկայացնում էին բազմահարկ շինություններ, որոնք պետք է կառուցվեին օդի մեջ: Իր ճարտարապետական և շինարարական լուծումներում երբեմն արվեստագետը հանդես է գալիս որպես նորարար: Դա են փաստում միջազգային մի շարք մրցանականները իր որոշ լուծումների համար:

1959թ-ին նա վտարվում է «նկարիչների միությունից» իր հակասովետական հայացքների պատճառով: Սա առավել պարզ է բնութագրում արվեստագետի ըմբոստ կեցվածքը, որն արտահայտվու է իր արվեստում գույների վառ և մասշտաբայության ձգտող ու մոնումենտալաին հնչեղությամբ ներակայցող

¹ *Մաթենիկ Մարտյան* - «Վան Խաչատուր՝ քանդակագործ, ճարտարապետ, նկարիչ և մտածող» -N6, «Մշակույթ»:

² Նույն տեղում:

ստեղծագործությունները: Նկարչի ներքին դիմակայության կայուն պլատֆորմը, անակնկալներով լի նորարարական մտածողությունը արդեն 50-ակաների կոնֆլիկտային իրավիճակներ էին ստեղծում արվեստագետի համար տարբեր հաստատություններում³:

Արվեստագետի քննադատական և ներքին անհանդուրժողական դիրքը վերացական արվեստի հատկանշական երևույթներից է, որն անպայմանորեն չի դրսևորվում միայն արվեստագետի կյանքում, բայց միանշանակ տեսանելի է իր արվեստում:

Այս առումով հետաքրքրական է բոլորովին այլ արվեստային մթնոլորտ առաջադրող ևս մեկ հատկանշական արվեստագետ Արկադի Բադդասարյանը (Արկո):

Արկոն վաղ շրջանում աչքի է ընկնում իր ոչ ավանդական լուծումներով և հորինվածքներով. Մարդկային իրար մոտեցված ափեր, , կոպիտ, միաժամանակ նրբագեղ և խոստուն, ինչ-որ տեղ գերիբապաշտական միջոցներով կերպավորված: Նման եղանակով արված ա՛խատանքները զարմացնում են իրենց գեղանկարչական լեզվի ամբողջականությամբ և *«ոգեղեն դաշտի անսովոր լարվածությունը»*⁴:

Ծնունդով արցախցի նկարիչը ձգտում էր նորովի և սթափ հայացքով ընկալելու, բացահայտելու և ներկայցնելու շրջապատող աշխարհը, թարմ և ինքնատիպ երանգավորումներով տալու բնության բնության անկրկնելի երևույթները և երևակայական աշխարհի ձևագոյացումները:

Մռանձնակի շեշտադրմամբ է հանդեպ գալիս Արկոյի արվեստում հոգևոր թեման: Իր հենց խոստովանմամբ նա ժամանակին ձգտել է լայնորեն ուսումնասիրել հայկական մանրանկարչությունը, փորձել առավել խորանալ և ըմբռնել գունային գամմայի «մանրանկարային նրբությունները»՝ չսահմանափակելով բանաստեղծական ակունքներով⁵: Ուստի տիպական , ինքնին խոստուն անուններն ակամա մեզ հուշում են բավականին ընդգրկուն, նկարչի մտահղացումներին և նախասիրություններին բնորոշ ստեղծագործությունների անվանումները՝ «Գանձասար», «Գեղարդ», «Ամարաս», Ղարաբաղյան սյուիտ», «Աստվածամայր», «Քրիստոս», «Հրեշտակ», «Խաչելություն» և այլն:

Մասնավորապես «Ղարաբաղյան սյուիտ»ձում մենք հանդիպում ենք վերացական արվեստի նշանակալի մի օրինակի: Պատկերում գրեթե ամբողջովին պասիվ հարթության վր կենտրոնացած են կտրուկ երկրաչափական ձևերը, ինչպես նաև գեղանկարչական ազատ ձևագոյացումները: Կոմպոզիցիան ունի ներքի ամբողջականություն, որը արտաքինից ներդաշնակեցվում է քսվածքների, ձևային զարգացումների փոխակտիվացվող հարաբերություններով: Կառուցվածքում ստատիկ կենտրոնացումը միաձուլվում է արթնացումի հնչողությամբ արտահայտվող գեղանկարչական լուծումների հետ:

Մեկ այլ հիշարժան օրինակ է «կոմպոզիցիա» անվանումով աշխատանքների շարքը: Այստեղ հարթությանն ասես դրվագված տոնային զանգվածներից

³ *Մարիամ Այվազյան* - «Մտորումներ ցուցահանդեսում» - «Երեկոյան Երևան» - էջ 3, 1989թ:

⁴ *Պողոս Հայթայան* - «Հայ կերպարվեստի կեսդարյա քրոնիկոն. 1962 – 2014», 56, 2014, Երևան:

⁵ *Դավիթ Միքայելյան* - «Ճշմարիտ արվեստի և երևակայության ճանապարհին» - «Հայաստանի Հանրապետություն» - N7, 2001թ:

դուրս են գալիս նուրբ լարային գծանկար կամ ջրաներկային արտահայտչակա-
նության հնչյունները: Երբեմն գուտ վերացական կոմպոզիցիայում կարելի է հան-
դիպել լուսանկարչական փաստագրման ճշմարտացիությանն աստիճանի տե-
սանելի դիմապատկերներ, ինչպես օրինակ իր հայտնի «Ինքնանկարում»
(1974թ.):

Ավելի ուշ փուլում հանդիպում ենք արդեն ամբողջովին վերացարկված
կոմպոզիցիաների: «Օպուս N1» (1974թ.), «Հոգևարք» (1969թ.) «Ռեքվիեմ» (1973թ.)
և այլ ստեղծագործություններում հանդիպում ենք սովորաբար սև ֆոնի վրա
կարմիր ջրածիզ գծախազեր, որոնք աշխատանքին օժտում են դրամատիկ էներ-
գիայով:

Արկոյի արվեստում հանդիպում ենք նեոռեալիզմի որոշակի տարրերի
համադրությամբ վերացարկված ձևերի ներդաշակ միաձուլման: Երբեմն ավտո-
մատիզմի հասնող այս արտահայտչաձևը արվեստագետին թույլ են տալիս ազա-
տորեն փոխանելու զգացմունքի և մտքի ամբողջական հոսքեր՝ միաժամանակ
խստորեն պահպանելով կերպավորման սկզբունքի, չափ և կշռույթի, գունամա-
կերեսների ներդաշնակության ընդհանուր կանոնները: Այս գեղարվեստական
նորարարությունները թափանցիկ, խաղաղ և անվրդով հնչյունների և մյուս
կողմից հակադիր բևեռից առաջացող դինամիկայի դրամատիկ բախման հարա-
բերություն է, որով Արկոն փոխանցում է վերացական արվեստի իր արտահայտ-
չականության բազմազանությունը:

Այս առումով հատկանշական է իր 1987թ-ի «Հայեցողության լուսամուտը»
ստեղծագործությունը, որն իրենից ներկայացնում է միջին չափի բնանկար, որի
սահմանները, սակայն, ընդլայնվում են՝ իրենց մեջ ներառելով պատկերային այլ
դրսևորումներ: Այստեղ արդեն փոխվում է բնանկարի ավանդական կերպը. Ուս-
տի փոխվում է նաև արվեստագետի՝ ժամանակաի և տարածության ընդգրկումը
և դրանց չափումը, որն իրագործվում է արդեն արվեստագետի ներհայեցողության
մասշտաբներով:

Ըստ Ադալյանի, ինչպես նաև վերացական ձևամտածողության զգալի
օրինակների պես Արկոյի արվեստը ևս անքակտելիորեն կապվում է հնչյունայ-
նության և մեղեդայնության հետ: Այս առումով հետաքրքրական է արվեստագե-
տի 2002-2005թ-երի «Մեղեդի» շարքը: Այստեղ մենք տեսնում ենք ձևային շեշ-
տադրումների և անցումների լայն հնարավորությունների, որոնք դիտողի հետ
հարաբերման յուրահատուկ լեզու են, ինչը անվանել ենք որպես ձևապատում:

Արկոյի նոր որոնումները, իչպես նշեցինք առավել են ընդլայնում ավան-
դական թեմատիկայի շրջանակները: 2003թ-ի իր «Միայնակ եկեղեցի.կեսո»
ստեղծագործությամբ նա փոխանցում է իրեն հատուկ ձևային արտահայտչակա-
նություն ուղղահայաց, եռաշերտ կոմպոզիցիոն կառուցվածք ունեցող պայմանա-
կան բնանկարի շնորհիվ: Բնանկարի վերին շերտը կապույտ է, միջին հատվա-
ծում՝ դեղին ֆոնին հազիվ ուրվագծվող եկեղեցու պատկերը, իսկ ներքևի գոտին
եզրում է մշուշի մեջ թաքնված քաղաքի հեռապատկերը: Այստեղ իրականությու-
նը որքան իրական, միննույն ժամանակ այնքան էլ եթերային և անվավեր է մնում,
դառնում երազ: Այս աշխատանքի է հետ կարելի է նշել նաև 2005թ-ի «Օրվա շեր-
տեր» ստեղծագործությունը: Այստեղ ևս հանդիպում ենք թափանցիկ կառուց-
վածքայության: Կապույտի, նարնջագույնի, կանաչի և սպիտակի հերթականու-

թյունները ստեղծում են օրվա «հավաքական կերպարի» տպավորություն, խորը քնարականություն, կոնկրետի և անսահմանի համադրում⁶:

Ինչպես նշում էր հենց ինքը նկարիչը. «Չէ՞ որ ապացուցված է, որ հոգեկան ստեղծագործության բնույթը հիմնվում է մարդու արդյունավետ մտային գործունեության վրա: Եվ, իրոք, գեղարվեստական նոր լեզվի, նկարչական լեզվի որոնումներում՝ թափանցելով իրերի էության մեջ, տեղի է ունենում ամբողջ կյանքիդ ներքին տեսածների կախարհական ընկալումը՝ իր ողջ դրամատիկ ապրումներով: Իսկ դրա ակունքը ընկալման անատարկայական միջավայրն է և նորոտող գուգադրումները: Այսպիսով՝ ստեղծագործական գործընթացը հետաքրքիր է և բարդ, այն հարստացնում է գեղարվեստաան երկերը և բնական օրգանիզմը: Ահա թե Կանտոն ինչպես է բնութագրում համադրությունը. «Չանագան պատկերացումների միահյուսումը և իմացության մեկ գործողության մեջ նրանց տարակերպության գիտակցումը»⁷:

Այստեղից երևում է Արկոյի գեղարվեստական-փիլիսոփայական որոնումների էսթետիկ աղբյուրները: Կանտոյան էսթետիկական ենթադրում էր ներհայեցողական ստեղծագործելակերպ: Այն թույլ էր տալիս ժամանակի միջից դուրս հանել և առանձնացել նրա ներքին շերտը, այսինքն՝ բացահայտել դրա ներքին

անշարժությունը, գտնել ժամանակը մարդու գիտակցության մեխանիզմների մեջ կամ ժամանակը ենթադրել մարդու ներքին կառուցվածքին և կերտվածքին⁸: Այս հարաբերությունն այնքանով է հետաքրքրական, որ ներքինը դարձնում է արտաքին և հակառակը: Այսպիսի սահմանների խախտումը, ներքին ներդաշնակությունն ու սիմետրիան հանդիսանում է հենց արվեստի օբյեկտը իր գործողությունների ձևով հանդերձ: Վերացական ձևամտածողության մեջ այսպիսով շարժումը դառնում է ժամանակային կատեգորիա և նկարչության կողմից ստանում տարածական կառուցվածք, որի հատկանիշը ոչ թե շարժումն է, այլ չափումը⁹:

Այստեղ արդեն ձևն իբրև տարածական պատկեր ստանում է իր յուրահատուկ նկարագիրը՝ դրվեշով ընդհանուր կառուցվածքի մեջ: Արվեստագետի էմոցիոնալ շարժումը փնտրում է իր առարկան և այն գտնելով գույերի և ֆիգուրների աշխարհում, ստեղծում է աշխարհի մի նոր մարմնավորում՝ վերակենդանացնելով այն պահը, որն իր երկու շերտերի մեջ իրար է միաձուլում արտաքուստ հակադիր թվացող երկու բևեռները՝ մարդուն և աշխարհը: Պատկերի մեջ անշարժացած և բյուրեղացված պահը՝ ժամանակը, ստեղծագործողի այն դիրքորոշումն է, որով նա կողմնորոշվում է առարկայական աշխարհում՝ գտնելով նրա մտոցան իր յուրահատուկ կերպը: Արկոն այստեղ հանդես է գալիս որպես ներհայեցողականներոն ընկալող և ստեղծագործող վարպետ: Եթե դիմանկարներում ավանդական մեթոդով նա ի հայտ է բերում օբյեկտի հոգեկան աշխարհի կենտրոնական պահը գտնելու և այն մարդկային դեմքի առանձնահատուկ բնույթին համապատասխան դարձնելու հնարավորությունը, ապա վերացարկված պատ-

⁶ Պողոս Հայթայան - «Հայ կերպարվեստի կետարյա քրոնիկոն. 1962 – 2014», 58, 2014, Երևան:

⁷ Արկադի Բադալադյան - «Նկարիչն իր մասին. Շարունակելով ճանապարհը»: - Ավանգարդ N156, էջ 4, 1985թ:

⁸ Հենրիկ Էդոյան - «Ներքին լուսանկարման պահերը» - «Գարուն» N6, էջ 79-81, 1975թ:

⁹ Նույն տեղում:

կերներում դիմանկարները մնում են որպես ոչ առարկայականից մեզ մնացած հայելային, կոլաժային պայմանական միավորներ:

Դիմանկարներն աչքի են ընկնում իրենց խորությամբ և հոգեբանական սրությամբ՝ լինելով տրամադրությամբ հաստատուն և որոշակի լիրիզմի առկայությամբ:

Իր այնպիսի ախատանքներում, ինչպիսին են «Հիշողության հանգույցները» կամ «Կոմպոզիցիա»-ն Արկուն ստեղծում է գունային ռելիեֆ, ուր տարբեր գույներով տալիս է զգայական ասոցիատիվ ամբողջություն, արտահայտչականություն: Եվ եթե առաջինում դա հղում է դեպի հիշողությանը, ապա երկրորդում հանդիպում ենք սյուռռեալիստական աղերսներով կոմպոզիցիայի: Այն բաշխված է երեք հորիզոնական շերտերով և վերևում արևի պայմանական պատկերով: Այս կոմպոզիցիան Արկույի արվեստի համար տիպային է, քանի որ բացահայտում է իր արվեստում վերացրկման գալու հիմնական միտումները: Դրանք կարելի է ընդհանրանել սյուռռեալիզմի, մետաֆիզիկական նկարչության և նեոռեալիզմի համադրությունների աստիճանական զարգացմամբ:

Այսպիսով Արկույի արվեստը հատկանշական է լիրիկական-զգայական նկարագրով վերացրկման ներկայացման համար, որին արվեստագետը հասնում է արդի մի շարք ուղղությունների աստիճանական փորձառությամբ:

Վերացական լիրիզմի մեկ այլ հետաքրքրական օրինակ է Արշակ Գառնիկյանի արվեստը: Արվեստագետը ապրելով Փարիզում՝ իր արվեստում հասավ նուրբ և զգայական բարձր արտահայտչականության: Ծնված լինելով Բեյրություն (1931թ) և 1960թ-ին վերջնականապես տեղափոխվելով Փարիզ՝ արվեստագետը ծանոթանում փ վերացական ձևամտածողության տարբեր հոսանքներին: 1967թ-ին նա հիմնում է «Յանս Ակումբը», որն իրենից ներկայացնում էր մշակութային ծրագրերի իրականացման կենտրոն: Իր վաղ աշխատանքներում զգացվում է Մեզանի և Պիսակոյի ծանրակշիռ ազդեցությունը, որը և որոշակիորեն պայմանավորում է իր հետագա գեղարվեստական արտահայտչաձևը:

Մեզանի և Պիկասոյի ազդեցությունը Արշակ Գառնիի (ինչպես կարճ անվանում էին արվեստագետին, իսկ երբեմն հանդիպում է նաև Արշակ Գ.) արվեստում ակնհայտ է դեռ իր թեմատիկ աշխատանքներում՝ օրինակ իր 1959թ-ի «Տղայի դիմանկարում» մենք հանդիպում ենք կանաչի, դարչնագույնի, տեղ տեղ մաստեխինով արված ձևերի որոնք և՛ շեշտվում են իրենց առարկայությամբ (Մեզան), և միևնույն ժամանակ ներկայացվում կուբիստական կամ ձևային շերտավոր բաժանումներով: Այդպիսի աշխատանքներ են վաղ շրջանի իր նատյուրմորտները: Մենք տեսնում ենք պայմանական առարկայական ուրվագծերի, որոնք ամբողջանում են ընդհանուր տոնայնության մեջ: Նատյուրմորտներում առկա է որոշակի թափանցիկություն: Այն փոպանցվում է առարկաների հարթապատկերայնության միջով, ինչը ինքնատիպ հնար է դառնալու Արշակ Գառնիի ուշ շրջանի ստեղծագործություններում:

1981թ-ին իր «Նկարիչը» աշխատանքում մենք արդեն հանդիպում ենք վերը նշված արտահայտչականության առավել լայն և հետևողական իրագործմանը, որն աստիճանաբար և կրերի արվեստագետին դեպի վերացական ձևամտածողություն: Նկարու պատկերված է նկարչի պատկերը, որը դուրս է գալիս ընդ-

հանուր հարթության ձևային լուծումներից և ներդաշնակորեն ամբողջանում մակերեսի հետ իր գունային հարաբերություններով:

1984թ-ի «Զվարթնոց» կտավում արդեն ասես նախորդ ստեղծագործությունից մնացել է միայն հարթության ձևավորումը, որը կառուցված է քիչ երկրաչափական ձևերով, որոնք կրում են դեղինի, կանաչի և կապույտի ըղնահնուր տրամադրությունը:

Արշակ Գառնի վերացականությունը, այսպիսով, առաջանալով հարթության թափանցիկության կամ գունային նուրբ երանգների առաջնայնացմամբ, կրում է որոշակի քնարականություն: Երանգների նուրբ գամմաները, ձևային մակերեսները ընդհանուր մեղմ և ներդաշնակ մեղեդայնությամբ են հանդես գալիս արվեստագետի տարբեր աշխատանքներում:

Առավել և հախուռն գույներով, ակտիվ կոլորիտայնությամբ է տեսնում վերացականությունն իր արվեստում մեկ այլ հատկանշական արվեստագետ, որի ստեղծագործունեությունը որոշակի հատվածում հասնում է վերացական ձևամտածողության: Հենրի Էլիբեկյանը ծնվել է 1936թ-ին Թիֆլիսում, այնուհետև սովորել Թբիլիսի թատերական և ռեժիորական, ապա Երևանի գեղարվեստ-թատերական ինստիտուտներում: Էլիբեկյանը հաղնես է եկել նաև արվեստաբանությամբ՝ մինևույն ժամանակ հետաքրքրված լինելով հոգեվերլուծությամբ և փիլիսոփայությամբ:

Էլիբեկյանի արվեստը վաղ շրջանում առանձնանում է հարթության և քսվածքի, երբեմն մաստեխինով արված ձևերի հետաքրքիր հարաբերություններով: Մենք հաղիպում ենք մեկ ընդհանուր գունային տրամադրությամբ լցված դիմանկարների, որտեղ դիմագծերը արված են ընդհանրացված ուրվապատկերայնությամբ կամ երբեմն քսվածքներով կազմվող պայամանական ձևերով:

«Մինասի դիմանկարում» Էլիբեկյանը օգտագործում է նաև նկարի շրջանակը՝ ամբողջ հարթության վար պատկերելով հայտնի արվեստագետի դիմանկարը: Դիմագծայնությունը նկարիչը տալիս է տարբե տոնների ազատ քսվածքներով: Որպես արտահայտչականության հիմնական տարրեր՝ գերիշխում են կարմիր և կապույտ վառ լուկալ գույները:

«Ապարան» կամ «Հանգիստ» ստեղծագործություններում մենք հանդիպում ենք կենցաղային գեղջկական պատկերների, որոնք արված են հազիվ ճանաչելի ընդհանրացումներով: Առաջինում գյուական տնակը գրեթե չի տարբերում ընդհանուր հարթությունից և ձգտում է ձուլվելու երանգային ամբողջությանը, երկրորդում հանիդպում ենք արդեն երկու կանանց ֆիգուրների տան առջև, որտեղ կոմպոզիցիան կառուցվում է լայն վրձնահարվածներով արված ֆորմաներով:

Հետագա աշխատանքներում ձևերն ազատագրվում են ֆիգուրատիվությունից և հարաբերում դիտողի հետ ֆուտուրիստական արտահայտչականության էլեմենտներով հանդես եկող վերացականությամբ: Այսպիսի աշխատանքներ են «Նատյուրմորտը», «Ճիչ տարբեր ռեգիստրներում, II», «Մետաֆիզիկական տարածություն» և այլ ստեղծագործությունները:

«Սարեր» կտավն այս առումով մեզ համար հատկանշական պետք է լինի, քանի որ այն արտահայտում է Էլիբեկյանի վերացական աղերսների ողջ ընդհանրությունը: Կարելի է տեսնել ուրվագծվող սարերի պատկերները, որոնք կառուցվում են գունաձևային կուռ կառուցվածքայնություն ունեցող ֆորմաներով:

Մպիտակի հակադրությունը կապույտին կամ կարմիրին դառնում է հարացուցային Էլիբեկյանի գունազգայական ընկալման համար և հնչում իր ողջ արտահայտչականությամբ իր տարբեր շրջանների ստեղծագործություններում:

Էլիբեկյանի հստակ գույնի առանձնացումը, մասի շեշտարում ու յուրաքանչյուր ձևի անհատական ձայնը ամբողջի մեջ ամողջացնում է արվեստագետի վերացականության որոնումները:

Այսպիսով վերացական արվեստը Հայաստանում, ինչպես հնարավոր է դիտարկել վերը նշած արվեստագետների ստեղծագործական որոնումներում, ձևավորվեց տարբեր գեղարվեստական հավատամքների և արտահայտությունների տրամաբանական զարգացմամբ՝ չլինելով մի տեսական ընկալման արտահայտություն և հանդես եկավ առանձին արվեստագետների մոտ գեղանկարչական կամ ծավալային արտահայտչականության ներքին ձևագոյացման պահանջի արդյունքում:

Арман Агламазян - *Некоторые особенности перехода от живописе и скульптуры в абстракцию в армянском искусстве* – В Армении абстрактное искусство получает оригинальные интерпретации в зависимости от художника. Артистические формы постепенно переходят к абстракции. Иногда это несет абсолютность из возникновения картин, иногда акцент на выразительность в отношениях между формой и цветом. В искусствяе архитектора, скульптора, живописца Ван Хачатура, а также Арко и Элибекьяна, могут наблюдаться главные всеобщености артистических поисков, которые возникают во время перехода в абсолютную абстракцию.

Arman Aghlamazyan- *Some specialities of transition from painting and sculpture into abstraction in armenian art of* – In Armenia abstract art gets various original interpretations depending on the artist. Artistic forms gradually of abstraction. Sometimes it carries the uttermost of occurrence of the imaginary figures, sometimes the emphasis of expressivnenes in relations between from and color. In the art of the architect, sculptor, painter Van Khachatur, as well as Arko and Elibekyan, main commonalities of artistic searches, that turn out during the transition into absolute abstraction, can be observed.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹՈՒՐԿԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԻԲԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԺԱՄԱՆԱԿ

ԱՐՄԵՆ ԺԱՄՀԱՐՅԱՆ

Լիբիայում հուզումները սկսելուց հետո Թուրքիան, ինչպես և Մադրիդի մյուս երկրների պարագայում, որևէ կերպ չփորձեց աջակցել լիբիական ընդդիմությանը: Ռազմական գործողությունները սկսելուց հետո Թուրքիան հանդես եկավ գործողությունների հրամանատարությունը ՆԱՏՕ-ին հանձնելուն դեմ, իսկ 2011 թ. մարտի 20-ին ՆԱՏՕ-ի խորհուրդում արգելափակեց Լիբիայի տարածքում անթռիչք գոտի ստեղծելու որոշումը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով նոր զարգացումները՝ Թուրքիան մարտի 24-ին հայտարարեց, որ գործողությունների ղեկավարումը կանցնի ՆԱՏՕ-ի ենթակայության տակ: Թուրքիան նաև համաձայնեց մասնակցելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդի 1973 բանաձևի իրականացմանը՝ առանց զենք գործադրելու:

Ռազմական գործողությունների սկսվելուց որոշ ժամանակ անց Թուրքիան սկսեց ֆինանսական օգնություն տրամադրել լիբիական ապստամբներին, և փորձում էր հանդես գալ որպես միջնորդ Կադաֆիի և ընդդիմության միջև: Պատերազմի վերջին շրջանում Թուրքիան զգալի աջակցություն ցուցաբերեց Լիբիայի նոր իշխանություններին:

Ներկայացնելով և վերլուծելով Թուրքիայի գործողությունները այս և այլ զարգացումների ժամանակ՝ հողվածում փորձ է արվել մանրակրկիտ կերպով վերլուծել Թուրքիայի քաղաքականությունը Լիբիական ճգնաժամի ժամանակ:

Բանալի բառեր. Թուրքիա, հեղափոխություն, Արևածագ-ողիսական, ընդդիմություն, պատերազմ, ռմբակոծություն, օգնություն, ֆինանսական, Կադաֆի, ծրագիր, անվտանգություն, աջակցություն

Թունիսում և Ալժիրում սկիզբ առած ժողովրդավարական շարժումների ալիքները կարճատև ժամանակում հասան նաև Լիբիա: Մադրիդի տարբեր երկրներում հեղափոխական շարումները տարբեր ազդեցություն գործեցին՝ սկսած ուղղակի հակակառավարական ցույցերից՝ ընդհուպ մինչև իշխանափոխություն: Սակայն Լիբիայում իրադրությունը այլ կերպ դասավորվեց:

Լիբիայում հուզումները սկսելուց հետո Թուրքիան, ինչպես և Մադրիդի մյուս երկրների պարագայում, որևէ կերպ չփորձեց աջակցել լիբիական ընդդիմությանը: Ավելին՝ 2011 թ. փետրվարի 23-ին՝ հեղափոխության սկզբնական շրջանում, Ռեջեյի Թայիբ Էրդոդանը անգամ դատապարտեց ԱՄՆ-ի և ԵՄ-ի կողմից Լիբիայի նկատմամբ պատժամիջոցներ սահմանելու ուղղությամբ տարվող քննարկումները, ինչպես նաև հանդես եկավ հնարավոր որևէ օտարերկրյա միջամտության դեմ¹: Թուրքիայի այսպիսի քաղաքականությունը կարելի է բացատրել Լիբիայում շուրջ 15 մլրդ դոլարի հասնող թուրքական խոշոր ներդ-

¹ Turkey opposes sanction against Libya, 24 Feb 2011, <http://www.presstv.ir/detail/166814.html>.

րումների առկայությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ մինչև հուզումների սկսվելը Թուրքիայի շուրջ 25000 քաղաքացի էր ապրում և աշխատում այստեղ²: Բացի այս, հեղափոխական շարժումների սկսվելուց հետո ակնհայտ դարձավ, որ հեղափոխության հաղթանակի դեպքում վտանգ կա, որ Թուրքիան կարող է կորցնել Լիբիայում ունեցած իր առավելությունները: Միաժամանակ հուզումների սկսվելուց կարճ ժամանակ անց Թուրքիան ձեռնամուխ եղավ իր քաղաքացիների տարահանմանը Լիբիայից և ավարտին հասցրեց այս գործընթացը փետրվարի 28-ին՝ ընդհանուր առմամբ երկրից տարահանելով շուրջ 17,000 Թուրքիայի քաղաքացու:

Իր քաղաքացիներին տարահանելուց հետո էլ Թուրքիան, չնայած Լիբիայում ստեղծված անկայուն իրադրությանը, շարունակեց միջազգային հնարավոր պատժամիջոցներին, ինչպես նաև հնարավոր միջամտություններին դեմ հանդես գալը: Սա կապված էր այն բանի հետ, որ Կադաֆիի գորքերը արագորեն առավելության հասան ապստամբների նկատմամբ, և ակնհայտ էր, որ ապստամբների վերջնական ջախջախումը կարճատև ժամանակի հարց է, որից հետո Լիբիայում իրադրության կայունացումը հնարավոր կլիներ, ինչը դրական էր Թուրքիայի համար: Թուրքիայի այսպիսի քաղաքականության մի օրինակ է այն հանգամանքը, որ 2011 թ. մարտի 14-ին Ստամբուլում տեղի ունեցած խորհրդաժողովի ժամանակ Ահմեդ Դավութօղլուն դեմ արտահայտվեց միջազգային հանրության կողմից Լիբիայի օդային տարածությունը անթռիչք գոտի դարձնելու վերաբերյալ պահանջներին՝ հայտարարելով, որ այդպիսի քայլը կլինի անօգուտ և չափից դուրս ռիսկային³:

Սակայն երբ արտաքին միջամտության գործողությունները սկսվեցին, Թուրքիան գերադասեց իր մասնակացությունը ցուցաբերել դրանց՝ նպատակ ունենալով ընթացքում ազդել զարգացումների վրա և ոչ թե հետագայում համակերպվել հետևանքների հետ: Այդ հարցում Թուրքիայի դիրքորոշման վրա բավական ուժեղ կերպով ազդեց 2011 թ. մարտի 17-ին ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից 1973-րդ բանաձևի ընդունումը, որը կոչված էր պաշտպանելու խաղաղ լիբիացիներին⁴: Այս բանաձևի համաձայն, որի նախաձեռնողները դարձան Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, Ֆրանսիան և Լիբանանը, Լիբիայի օդային տարածքը հայտարարվում էր անթռիչք գոտի, ինչպես նաև թույլ էր տրվում միջազգային հանրությանը իրականացնել ցանկացած գործողություններ՝ խաղաղ բնակչությանը պաշտպանելու համար: Արգելքի տակ դրվեց միայն Լիբիայի տարածքի կամ տարածքի որևէ մասի բռնազավթումը արտաքին ուժերի կողմից⁵: Թուրքիան, որպեսզի հանդես չգա ավելի արմատական դիրքերից, չհայտնվի մեկուսացման մեջ և չսրի հարաբե-

² *Kadıoğlu A.*, “The role of Islam in the democratic transformation of Arab countries: can Turkish laicism be a model?” In “Democracy on the precipice: Council of Europe Democracy Debates 2011-12”, *Council of Europe Publishing, Strasbourg* 2012, p. 45.

³ *Unver A.*, Turkey’s position on Libya, 19 March 2011, <http://foreignpolicyblogs.com/2011/03/19/turkeys-position-on-libya/>.

⁴ *Vira V. and Cordesman A. H.*, The Libyan Uprising: An Uncertain Trajectory, Center for Strategic and International Studies, Burke Chair in Strategy, Washington 2011, p. 10-11.

⁵ *Солодовников М.*, Резолюция СБ ООН по Ливии дает возможность военной интервенции, 18.03.2011 <http://www.vesti.ru/doc.html?id=437306>; *Снежанова Л.Н.*, Война в Ливии как очередной этап передела мира, *Национальный институт развития современной идеологии*, Москва 2011, с. 2.

րությունները Արևմուտքի հետ, բանաձևի ընդունումից հետո ստիպված էր իր աջակցությունը հայտնել բանաձևին: Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն հույս հայտնեց, որ ՄԱԿ-ի այս բանաձևը կհանգեցնի կառավարության և ընդդիմության միջև ռազմական գործողությունների դադարեցմանը և կնպաստի ընդդիմության և իշխանության միջև երկխոսություն սկսելուն: Պետք է նշել, որ բանաձևի ընդունման նախօրեին Թուրքիան ակտիվ դիվանագիտական գործունեություն ծավալեց Լիբիայի նկատմամբ զինված ուժ գործադրելը կանխելու ուղղությամբ, ինչպես նաև իր ամբողջ ջանքերը գործադրեց, որ ռազմական գործողությունները Լիբիայում չունենան այնպիսի երկարատև բնույթ, ինչպիսին դրանք եղան Աֆղանստանում և Իրաքում⁶:

Բանաձևի ընդունումից երկու օր անց՝ 2011 թ. մարտի 19-ին, Փարիզում տեղի ունեցավ 22 երկրների խորհրդաժողով, որը պետք է քննարկեր Լիբիայում առկա իրադրությունը: Դիվանագիտական որոշակի աշխատանքների արդյունքում Թուրքիային այս խորհրդաժողովին չէին հրավիրել⁷: Հենց 22 երկրների խորհրդաժողովի գումարման նույն օրը՝ մարտի 19-ին, Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին հայտարարեց ռազմական գործողությունների սկսելու մասին, որին հաջորդեց Լիբիայի ցամաքային, հակաօդային ուժերի և ռազմավարական օբյեկտների ռմբակոծումը ՆԱՏՕ-ի անդամ մի քանի երկրների օդուժի կողմից (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա), որոնց աստիճանաբար միացան նաև այլ երկրներ՝ ստեղծելով հակակադաֆիական միջազգային կոալիցիա: Մարտի 19-ին մեկնարկած գործողությունը ստացավ «Արևածագ. Ուղիսական» անվանումը⁸:

Սրան ի պատասխան՝ Թուրքիան հանդես եկավ գործողությունների հրամանատարությունը ՆԱՏՕ-ին հանձնելուն դեմ, իսկ ավելի ստույգ՝ մարտի 20-ին Թուրքիան ՆԱՏՕ-ի խորհուրդում արգելափակեց Լիբիայի տարածքում անթռիչք գոտի ստեղծելու որոշումը: Այս ժամանակ Ֆրանսիան, որը ձգտում էր Թուրքիային մեկուսացնել ռազմական գործողություններից, նույնպես հանդես եկավ գործողությունների հրամանատարությունը ՆԱՏՕ-ին հանձնելուն դեմ: Սրանով փաստորեն Թուրքիան դուրս մնաց ռազմական գործողություններին որևէ կերպ մասնակցելուց և դրանով իսկ՝ դեպքերի հետագա զարգացումների վրա ազդելուց: Դեպքերի այդպիսի զարգացման դեպքում նույնիսկ էթե Թուրքիան հետագայում ինչ-որ քայլեր ձեռնարկեր, դրանք պակաս արդյունավետ կլինեին, քան էթե Թուրքիան այդ քայլերը ձեռնարկեր ՆԱՏՕ-ի գործողությունների շրջանակում, որտեղ նա առանցքային երկրներից մեկն էր և վետոյի իրավունք ուներ:

Իրավիճակի վրա որոշակի ազդեց մարտի 21-ին կայացած Օբամա-Էրդոհան հեռախոսազրույցը, որի ժամանակ կողմերը ապագա գործողությունների վերաբերյալ մի շարք առանցքային հարցերում միասնական դիրքորոշում արտահայտեցին: Հասկանալով, որ ռազմական գործողությունների՝ ՆԱՏՕ-ին անցնելու դեմ դուրս գալով՝ Թուրքիան հայտնվում է մեկուսացված վիճակում, ինչ-

⁶ *Волович А. А.*, Турция и «арабские революции» 2011 года, <http://maof.rjews.net/actual/13-2009-07-21-16-52-07/26403--1-r-2011->.

⁷ *Lindström M. and Zetterlund K.*, Setting the Stage for the Military Intervention in Libya, Decisions Made and Their Implications for the EU and NATO, Swedish Defence Research Agency (FOI) 2012, p. 18.

⁸ *Campbell H. G.*, NATO's failure in Libya: Lessons for Africa, Africa Institute of South Africa, Pretoria 2012, p. 64.

պես նաև հաշվի առնելով ԱՄՆ-ի կողմից առկա ճնշումը՝ Թուրքիայի ղեկավարությունը փոխեց իր դիրքորոշումը:

Որպես լիբիական ճգնաժամի նկատմամբ Թուրքիայի նոր դիրքորոշման արտահայտություն՝ Ռեջեփ Թայիփ Էրդողանը մարտի 21-ին հայտարարեց, որ Անկարան կաջակցի ՆԱՏՕ-ի գործողություններին Լիբիայում՝ պայմանով, որ դրանք կավարտվեն հնարավորինս սեղմ ժամկետներում և չեն վերածվի այդ արաբական երկրի բռնազավթման: Սակայն հաջորդ օրը Լիբիայից ոմբահարումների հետևանքների վերաբերյալ ստացվող լուրերի համատեքստում խորհրդարանում պատգամավորներին ուղղված իր ամենշաբաթյա ուղերձի շրջանակներում Թուրքիայի վարչապետը խիստ քննադատության արժանացրեց Լիբիայում իրականացվող օդային հարձակումները և կասկածի տակ դրեց գործողությունների մարդասիրական բնույթը: Ամենայն հավանականությամբ Թուրքիան, որի կառավարությունը ամեն կերպ փորձում էր ամրապնդել պետության դիրքերը մուսուլմանական աշխարհում, ստիպված է եղել այսպիսի կոշտ հայտարարություններ անել, քանի որ ոմբակոծություններից հետո Լիբիան հայտարարել էր, որ օդային հարձակումների հետևանքով զոհվել է ավելի քան 60 մարդ: Վարչապետը հայտարարեց նաև, որ. «Թուրքիան ոչ մի պարագայում չի դառնա այն կողմը, որը կողդի իր գեներլ Լիբիայի ժողովրդի դեմ»⁹: Նույն օրը Լիբիայի դեմ ռազմական գործողությունները քննադատեց նաև Ահմեդ Դավութօղլուն¹⁰: Պետք է նշել, որ Արևմուտքի գործողությունները դատապարտող Թուրքիայի այսպիսի կեցվածքը սկզբունքային չէր և նպատակ ուներ Թուրքիային ներկայացնել Լիբիայի ժողովրդին աջակցող դիրքերից, ինչի վկայությունն է այն, որ ռազմական գործողությունները քննադատելու ժամանակ Լիբիայում ԱՄՆ շահերը ներկայացնելու հարցում Թուրքիան արդեն սովել էր իր համաձայնությունը: Այս մասին մարտի 22-ին հայտարարեց ԱՄՆ պետքարտուղարության ներկայացուցիչ Մարկ Տոները¹¹:

Մեկ օր անց՝ մարտի 23-ին՝ ՆԱՏՕ-ի՝ Եվրոպայում տեղակայված ուժերի գերագույն հրամանատար Ջեյմս Մտավրիդիսի՝ Թուրքիա ժամանելու նախօրեին, Թուրքիան հայտարարեց, որ ՆԱՏՕ-ի գործողությունների համար Թուրքիան կտրամադրի ռազմական նավեր: Բանակցությունների արդյունքում, ինչպես նաև ԱՄՆ-ի պետքարտուղարի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ԱԳ նախարարների հետ ունեցած քառակողմ տեսախորհրդակցության արդյունքում Թուրքիայի ԱԳ ղեկավար Ահմեդ Դավութօղլուն մարտի 24-ին հայտարարեց, որ կողմերը փոխզիջման են հասել, և գործողությունների ղեկավարումը կանցնի ՆԱՏՕ-ի ենթակայության տակ: Նախատեսվում էր, որ Թուրքիայի ուժերը այս գործողությունների ժամանակ կմասնակցեն միայն հումանիտար գործողություն-

⁹ Турция посылает военные корабли к берегам Ливии, 24 марта 2011, http://www.basenews.ru/drugie/news_2011-03-24-12-45-06-231.html.

¹⁰ МИД Турции раскритиковал удары сил международной коалиции по Ливии. 22.03.2011 http://www.armtoday.info/default.asp?Lang=_Ru&NewsID=40822&SectionID=1&RegionID=0&Date=03/23/2011&PagePosition=1.

¹¹ Turkey to represent US interests in Libya, Mar 22, 2011, <http://www.turkishnews.com/en/content/2011/03/23/turkey-to-represent-us-interests-in-libya/>.

ներին և Լիբիայի ծովային շրջափակման աջակցմանը¹²: Նույն օրը՝ մարտի 24-ին, Թուրքիայի պառլամենտը հավանության արժանացրեց Թուրքիայի բանակի՝ Լիբիայում իրականացվող գործողություններին մասնակցելու որոշումը, որով, սակայն, հստակ որոշված չէր, թե թուրքական զինված ուժերը ինչ ձևաչափով կմասնակցեն միջազգային կռիվների գործողություններին¹³: Այսպիսով՝ Թուրքիան ի վերջո համաձայնեց մասնակցել ՄԱԿ-ի ԱԽ-ի 1973-րդ բանաձևի իրականացման՝ առանց զենք գործադրելու: Հատկանշական է, որ Թուրքիայի՝ Կադաֆիի գորքերի դեմ զենք կիրառելուց և ընդդմությանը զենք մատակարարելուց հրաժարվելը Թուրքիայի հանդեպ դժգոհությունն առաջացրեց ապստամբների մոտ¹⁴: Ուշագրավ է, որ ազգային ժողովի այս որոշումը ընդունելու պահին Թուրքիան արդեն ՆԱՏՕ-ի ենթակայության տակ էր հանձնել չորս հետախուզանավ, մեկ սուզանավ և մեկ տեխնիկական սպասարկման նավ: Սա բացատրվում է թուրքական խորհրդարանի որոշումը կանխատեսելի լինելու հանգամանքով, և թուրքական նավերի՝ Լիբիայի ափերին հայտնվելը թուրքական հասարակության զարմանքը չհարուցեց: Նավերը հիմական առաջադրանք ունեին՝ պարեկություն իրականացնել Լիբիայի ափերի մոտ՝ այս երկիր զենքի ներկրումը բացառելու համար՝ համաձայն ՄԱԿ-ի բանաձևի: Թուրքիան ՆԱՏՕ-ի տրամադրության տակ դրեց նաև 7 ռազմական ինքնաթիռներ¹⁵:

Թուրքիայի համաձայնությունը ստանալուց և փոխզիջման հասնելուց մեկ օր անց՝ մարտի 25-ին, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսսենը տեղեկացրեց, որ դաշինքի ուժերը կգործեն ԱՄՆ-ի գլխավորությամբ միջազգային կռիվների ուժերի հետ՝ սրանով փաստորեն հերքելով Թուրքիայի ԱԳ նախարարության այն հայտարարությունը, համաձայն որի՝ ՆԱՏՕ-ն ամբողջությամբ կվերահսկի գործողությունները Լիբիայում: Նա նաև տեղեկացրեց, որ ՆԱՏՕ-ի անդամ երկրները համաձայնության են եկել Լիբիայի երկնքում անթռիչք գոտի մտցնելու հարցում: Այդ օրը ՆԱՏՕ-ն մեկ այլ հայտարարությամբ տեղեկացրեց, որ իր օդային ուժերի հրահանգման և վերահսկման կենտրոնը կտեղակայվի Իզմիրում, որտեղից կիրականացվի Լիբիայի տարածքում անթռիչք գոտի ստեղծելու առաքելությունը¹⁶: Սա մի կողմից կապված էր Թուրքիայի աշխարհագրական դիրքի հետ, մյուս կողմից ընդգծում էր այն կարևոր դերը, որը Թուրքիան ուներ ՆԱՏՕ-ի գործողությունների շրջանակում:

Հատկանշական է, որ ռազմական գործողությունների սկզբնական շրջանում արդեն ակնհայտ էր, որ ռազմական գործողությունների հետևանքով հնա-

¹² Командование операцией в Ливии перейдет к НАТО **24.03.2011**, <http://newsland.com/news/detail/id/662553/>

¹³ Այդ ժամանակ ենթադրվում էր, որ թուրքական ռազմաօդային ուժերը կաջակցեն Լիբիայիայի երկնքում անթռիչք գոտու պահպանմանը: Տե՛ս՝ *Турция присоединилась к военной операции в Ливии*, <http://top.rbc.ru/special/libya/25/03/2011/565597.shtml>.

¹⁴ 2011 թ. ապրիլի սկզբին 400 հոգուց բաղկացած ընդդիմադիրների խումը հարձակում գործեց Բեն-գազիում գտնվող Թուրքիայի դեսպանատան շենքի վրա: Հարձակման ենթարկվեց նաև մարդասիրական օգնությամբ բեռնավորված թուրքական նավը: Տե՛ս՝ *Волович А. А.*, Турция и «арабские революции», 2011 года, <http://maof.rjews.net/actual/13-2009-07-21-16-52-07/26403---l-r-2011->.

¹⁵ Ливийский кризис НАТО: без Норвегии и Италии, <http://www.pravda.ru/world/europe/02-08-2011/1086166-nordital-0/>.

¹⁶ Operasyonun komuta merkezi İzmir, 25 Mart 2011, «Sabah».

րավոր է Լիբիայի բաժանում մասերի, ինչը խիստ հակասում էր Թուրքիայի շահերին, քանի որ այդ դեպքում Լիբիայի արևելքը կհայտնվեր Եգիպտոսի ազդեցության տակ, իսկ արևմուտքը՝ Ալժիրի: Նման զարգացումների դեպքում կյուլանային Թուրքիայի դիրքերը ոչ միայն Լիբիայում, այլև ողջ Հյուսիսային Աֆրիկայում և արաբական աշխարհում: Ուստի պատահական չէ, որ Լիբիական ճգնաժամի ողջ ընթացքում և նաև դրանից հետո Թուրքիայի հիմնական նպատակներից մեկը ոչ միայն Լիբիայում իր դիրքերի, այլև ընդհանրապես Լիբիայի տարածքային ամբողջականության պահպանումն էր, ինչին հասնելու համար պետք էր հնարավորինս արագ երկրում խաղաղության և կայունության հաստատել: Ուստի Լիբիայում ռազմական գործողությունները սահմանափակելու, ինչպես նաև ռազմական գործողությունների ժամանակ լիբիական ժողովրդի շահերը պաշտպանելու Թուրքիայի դիրքորոշումը պայմանավորված էր ոչ միայն լիբիական ժողովրդի շահերը պաշտպանող պետության դիրքերից հանդես գալու ձգտումներով, այլև բխում էր Լիբիայում կայունություն հաստատելու միջոցով Լիբիայի տարածքային ամբողջականությունը պահպանելու Թուրքիայի շահերից:

Մարտի 27-ին հայտարարվեց, որ ՆԱՏՕ-ն պատաստակամություն է հայտնել իր վրա վերցնել «Արևածագ. Ողիսական» գործողության հրամանատարությունը՝ փոխարինելով ԱՄՆ-ին: Արդեն այդ ժամանակ ՆԱՏՕ-ի 28 անդամ երկրների պաշտպանության նախարարները, այս թվում նաև Թուրքիայի պաշտպանության նախարարը, ստացել էին գործողություններին մասնակցելու հրաման¹⁷: Հաջորդ օրը վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ Թուրքիան իր հսկողության տակ կվերցնի Բեն Գազիի օդանավակայանը՝ իրականացնելով հումանիտար բեռների ընդունումը: Այս որոշումը թուրքական կառավարությունը ընդունել էր ընդդիմադիրների ներկայացուցիչների հետ բանակցելուց հետո: Նախատեսվում էր նաև, որ Թուրքիան Բեն Գազի կուղարկի զինվորական և քաղաքացիական մասնագետներ, որոնք կիրականացնեն բեռների ընդունումը և բաշխումը բնակչությանը: Հայտարարվեց նաև, որ Թուրքիան չի մասնակցի հնարավոր ցամաքային գործողություններին:

Միջազգային ուժերի՝ «Արևածագ. Ողիսական» գործողության ռազմական հրամանատարությունը ՆԱՏՕ-ին հանձնելու գործընթացը տևեց մինչև մարտի 30-ը, երբ տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի անդամ երկրների դեսպանների հանդիպում, որի ժամանակ վերջնականապես որոշվեց հանձնել հրամանատարությունը ՆԱՏՕ-ին, ինչը և իրականացվեց հաջորդ օրը՝ մարտի 31-ին¹⁸:

Ռազմական գործողություններին Թուրքիան ուղղակիորեն չէր մասնակցում, սակայն բավական ակտիվ կերպով լիբիացիներին հումանիտար աջակցություն էր ցուցաբերում: Մասնավորապես ապրիլի սկզբին թուրքական «Անկարա» նավը, որը 4 օր սպասել էր Միսուրատ քաղաքի նավահանգիստ մրտնելու համար, ի վերջո, ավիին մոտենալով, կարողացավ շրջապատված քաղաքից դուրս բերել ավելի քան 250 վիրավոր: «Անկարա»-ն Միսուրատի ավիին էր

¹⁷ НАТО возглавила военную операцию в Ливии, 28/03/11, <http://ru.euronews.com/2011/03/28/nato-takes-major-libya-role/>.

¹⁸ *Vira V. and Cordesman A. H.*, op. cit., p. 49.

գտնվում թուրքական 10 F-16 կործանիչների և 2 ռազմանավերի պաշտպանության տակ¹⁹:

Թուրքիան նաև փորձում էր միջնորդի դերում հանդես գալ Կադաֆիի իշխանության և ընդդիմության միջև՝ որպես նպատակ նշելով ռազմական գործողությունների դադարեցումը և խաղաղության հաստատումը: Ապրիլի 6-ին Դավութլույուն Թուրքիայի նման քաղաքականությունը բնորոշեց որպես երեք աստիճան ունեցող ռազմավարություն:

1. դրդել ԱՄՆ-ին և Կադաֆիին հաշտության հասնելու,

2. աջակցել քաղաքական երկխոսությանը իշխանությունների և ապստամբ ուժերի միջև,

3. ապահովել իշխանության անցումը ժողովրդավարական ճանապարհով ընտրված իշխանությանը²⁰:

Իր հերթին Էրդողանը ապրիլի 7-ին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ Թուրքիան ճանապարհային քարտեզի վրա է աշխատում: Վարչապետը նշեց, որ ստեղծվելիք ճանապարհային քարտեզը նախատեսում է կրակի դադարեցում և Կադաֆիի զորքերի դուրս բերում մի շարք քաղաքներից: Նշվեց նաև, որ այդ նպատակով Թուրքիան բանակցություններ էր վարում Լիբիայի կառավարության պատվիրակության և ընդդիմության ներկայացուցիչների հետ: Մամուլի ասուլիսի ժամանակ Էրդողանը նաև առաջ քաշեց անվտանգ մարդասիրական միջանցքների ստեղծման խնդիրը, ինչը հնարավորություն կտար օգնություն փոխանցել լիբիացի ժողովրդին²¹: Պետք է նաև նշել, որ չնայած Անկարայի՝ միջնորդի դերում հանդես գալու և խաղաղության հասնելու դիվանագիտական ջանքերը քիչ արդյունավետ էին, այնուամենայնիվ դրական էին Թուրքիայի խաղաղասեր դիրքորոշումը շեշտելու տեսանկյունից:

Ընդհանուր առմամբ Թուրքիայի այս քայլի նպատակն էր խաղաղասիրական դիրքերից հանդես գալը, ինչպես նաև Լիբիայում իր հեղինակության բարձրացումն էր, քանի որ ակնհայտ էր, որ ռազմական գործողությունների ժամանակ միջազգային հակակադաֆիական կոալիցիայի աջակցությունը ստացող ընդդիմության ներկայացուցիչները չէին համաձայնվի դադարեցնել ռազմական գործողությունները և հաշտություն կնքել Կադաֆիի հետ:

Հատկանշական է, որ Թուրքիայի դեսպանատունը Տրիպոլիում իր վրա վերցրեց ոչ միայն ԱՄՆ-ի, այլև Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Ավստրալիայի շահերը ներկայացնելը: Թուրքական դեսպանատան միջնորդությամբ լիբիական իշխանությունները ազատ արձակեցին ավելի վաղ ձերբակալված հինգ ամերիկացի և բրիտանացի լրագրողներին: Սակայն 2011 թ. մայիսի 2-ին թուրքական դիվանագետների անվտանգությունն ապահովվելու նպատակով Թուրքիան որոշում ընդունեց թուրք դիվանագետների՝ ժամանակավորապես Թունիս տարհանելու վերաբերյալ: Մինչդեռ թուրք դիվանագետների տարհանման իրական պատճառը հասկանալի եղավ միայն մայիսի 3-ին, երբ Թուրքիան առաջին ան-

¹⁹ Ливия: турецкий паром вывез раненых из Мисураты, <http://ukrainepress.ru/archives/14200>.

²⁰ O'Brien E. and Sinclair A., The Libyan War: A Diplomatic History, February - August 2011, Center on International Cooperation, New York 2011, p. 14.0

²¹ Erdog'an: Libya'da akan kana sessiz kalamayız, 07 Nisan 2011, «Milliyet».

զամ պաշտոնապես կոչ արեց Կադաֆիին հրաժարվել իշխանությունից²²: Իսկ ավելի ստույգ՝ մայիսի 3-ին Էրդողանը Ստամբուլում մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց. «Լիբիայի պատմության մեջ սկսվեց նոր ժամանակաշրջան: Լիբիական առաջնորդը պետք է անհապաղ հրաժարվի իշխանությունից և լքի երկիրը: Մուամար Կադաֆին պետք է անի այդ պատմական քայլը հանուն խաղաղության և Լիբիայի տարածքային ամբողջականության»: Փաստորեն այս հայտարարությամբ Էրդողանը ցուցադրեց Լիբիայի նկատմամբ իրականացվող Թուրքիայի քաղաքականության մեջ ի հայտ եկած զգալի փոփոխությունները, և դրանից հետո դեսպանատան աշխատակիցներին Տրիպոլիում թողնելը կարող էր սպառնալ նրանց անվտանգությանը, ինչի հավանականություն ավելի էր մեծանում, եթե հաշվի առնենք այն փաստը, որ հայտարարության նախօրեին Լիբիայի մայրաքաղաքի բնակիչները ավերել էին արևմտյան երկրների մի քանի դեսպանատներ: Լիբիայի նկատմամբ իրականացվող Թուրքիայի քաղաքականության մեջ այս փոփոխությունները կանխատեսելի էին, եթե հաշվի առնենք, որ այդ ժամանակ արդեն ակնհայտ էր, որ ընդդիմադիրների հաղթանակը ժամանակի հարց է, իսկ Թուրքիային անհրաժեշտ էր հնարավորինս արագ Լիբիայում խաղաղություն հաստատել:

Սակայն սա բավական չէր, և Թուրքիան իր դիրքերը Լիբիայում ամրապնդելու և ընդդիմադիրների հետ հարաբերությունները սերտացնելու համար պետք է պաշտոնապես ճանաչեր վերջիններին: Սա տեղի ունեցավ մայիսի 23-ին, երբ Անկարայում Դավութօղլուն հանդիպում ունեցավ ԱԱԽ-ի ղեկավար Մուսթաֆա Աբդուլ Ջալիլի հետ, որի ժամանակ էլ և ճանաչեց ԱԱԽ-ին: Չնայած դրան՝ Թուրքիան դեռևս շարունակում էր պահպանել իր հարաբերությունները Կադաֆիի հետ: Միայն հուլիսի 3-ին, երբ Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուն, որը ժամանել էր Լիբիայի գրոհայինների կենտրոն համարվող Բեն Գազի, հայտարարեց, որ Թուրքիան ԱԱԽ-ին ճանաչում է որպես լիբիական ժողովրդի օրինական ներկայացուցիչ²³: Բացի այդ, այցելության ընթացքում Դավութօղլուն հայտարարեց, որ Թուրքիան ԱԱԽ-ին կհատկացնի 300 մլն դոլար²⁴: Թուրքական կողմը նաև հայտարարեց, որ հետ է կանչում իր դեսպանին և փակում է իր դեսպանատունը Տրիպոլիում՝ սրանով իսկ դադարեցնելով իր դիվանագիտական հարաբերությունները Կադաֆիի վարչակարգի հետ: Թուրքիայի դեսպանը դեռևս մայիսին էր լքել Տրիպոլին՝ անվտանգության նկատառումներով, սակայն պաշտոնապես պահպանում էր Լիբիայում Թուրքիայի դեսպանի իր լիազորությունները և միայն հուլիսի 4-ին պաշտոնապես դադարեց Լիբիայում Թուրքիայի դեսպան համարվելուց²⁵:

Չնայած Կադաֆիի հետ դիվանագիտական հարաբերությունների խզմանը՝ որոշ ժամանակ անց՝ հունիսի 10-ին, Էրդողանը հայտարարություն է անում,

²² *Tocci N.*, “The Turkish Model and its Applicability” In “Turkey and the Arab Spring: Implications for Turkish Foreign Policy from a Transatlantic Perspective”, (Mediterranean Paper Series), The German Marshall Fund of the United States, Washington 2011, p. 3.

²³ *Hale W.*, Turkish Foreign Policy since 1774, Third edition, Routledge, Abingdon 2013, p. 244.

²⁴ Турция разорвала дипломатические отношения с режимом Каддафи, 05 Июля 2011, <http://www.liveinternet.ru/journalshowcomments.php?jpostid=174498042&journalid=2122631&go=next&categ=0>.

²⁵ Turkey officially recalls ambassador to Libya, cuts ties with Gaddafi, 04/07/2011, <http://en.ria.ru/world/20110704/165007685.html>.

որում երաշխավորում է Կադաֆիի անվտանգությունը՝ վերջինիս երկիրը լքելու դեպքում²⁶:

Թուրքիան ակտիվ դերակատարություն ուներ նաև Լիբիայի հարցերով շփման խմբում, որտեղ ներկայացված էին Աֆրիկյան միությունը, ՄԱԿ-ը ԱԵԼ-ն և շուրջ քառասուն երկրներ, ինչպես նաև Լիբիայի ԱԱԽ-ն²⁷: Հունիսի 5-ին Հռոմում կայացած նրա 2-րդ նիստից հետո Իտալիայի ԱԳ նախարար Ֆրանկո Ֆրատտինին հայտարարեց, որ Դավութոլին շատ հավակնոտ նպատակներ է հետապնդում՝ ցանկանալով հասնել խաղաղության մեկ շաբաթվա ընթացքում²⁸, իսկ 4-րդ նիստը կայացավ Մտամբուլում՝ հուլիսի 15-ին, որի ընթացքում էլ խորհրդի մասնակիցները ճանաչեցին ԱԱԽ-ին՝ իբրև միակ օրինական իշխանություն Լիբիայում²⁹: Հանդիպման ընթացքում Անկարան ներկայացրեց կոնֆլիկտի լուծման իր ծրագիրը, որի հիմնական կետերն էին կրակի դադարեցումը, ՄԱԿ-ի ղեկավարությամբ հումանիտար օգնության տրամադրումը Լիբիայի բոլոր շրջաններին: Կադաֆիին առաջարկվում էր գտնել անվտանգ ապաստարան, որտեղ նա կմնար իշխանությունը կորցնելուց հետո: Թուրքիայի ԱԳ նախարարը հայտարարեց, որ այս նպատակին հասնելու համար Թուրքիան նպատակահարմար է համարում գործել Կադաֆիի շրջապատի միջոցով³⁰: Այս ամենից բացի, թուրքական կողմը ԱԱԽ-ին աջակցելու նպատակով առաջարկեց մեխանիզմներ մշակել, որոնք թույլ կտան ԱԱԽ-ին օգտագործել լիբիական սառեցված հաշիվները, ինչպես նաև նրան հատկացնել ամենաքիչը 1.5 մլրդ դոլար³¹:

Այս խորհրդածոգովի ժամանակ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսսենը, հանդիպումներ ունենալով վարչապետ Էրդողանի և ԱԳ նախարար Դավութոլուի հետ, հավանության արժանացրեց Թուրքիայի ջանքերը կոնֆլիկտի այնպիսի քաղաքական լուծմանը հասնելու ուղղությամբ, որը ի վիճակի է բավարարել Լիբիայի ժողովրդի օրինական ձգտումները³²:

Հուլիսի վերջին և ողջ օգոստոսի ընթացքում Թուրքիան բավականին ակտիվորեն ֆինանսական օգնություն էր ցուցաբերում ապստամբներին, ինչը զարմանալի չէր, քանի որ Թուրքիան ձգտում էր ռազմական գործողությունների հնարավորինս արագ ավարտմանը, իսկ արևմուտքի ռազմական օգնությունը ստացող ապստամբների հաղթանակը արդեն կասկած չէր հարուցում: Մասնավորապես հուլիսի վերջին Թուրքիան 10 մլն դոլար ուղարկեց ապստամբների հենա-

²⁶ Война в Ливии. Ливийцы сообщают о сбитом вертолете НАТО, а Турция дает "гарантии" Каддафи в обмен на отъезд из Ливии, 13 июня 2011, <http://topwar.ru/5112-voyna-v-livii-livicy-soobschayut-o-sbitom-vertolete-nato-a-turciya-daet-garantii-kaddafi-v-obmen-na-otezd-iz-livii.html>.

²⁷ *Снежанова Л.Н.*, Указ. Соч., Москва 2011, с. 18.

²⁸ Турция призвала прекратить военную операцию в Ливии в течение семи дней, <http://www.km.ru/v-mire/2011/05/05/voennaya-operatsiya-v-livii/turtsiya-prizvala-prekratit-voennuyu-operatsiyu-v-livi>.

²⁹ UK-Turkey relations and Turkey's regional role, House of Commons Foreign Affairs Committee, Twelfth Report of Session 2010-12, The Stationery Office Limited, London 2012, p. 51.

³⁰ Турция против войны с Муамаром Каддафи, страна предлагает прекращения огня, Запад - усиление военного давление на Триполи, 15 июля 2011, <http://izvestia.ru/news/494757>.

³¹ Турция призывает выделить ливийским повстанцам \$1,5 млрд. <http://www.rusorient.ru/page.php?vrub=rm&vparid=20&vid=3270&lang=rus>.

³² Генеральный секретарь НАТО на заседании Международной контактной группы в Стамбуле: НАТО остается приверженной защите народа Ливии, 15 Jul. 2011 http://www.nato.int/cps/ru/natolive/news_76455.htm.

կետ հանդիսացող Բենգազի, իսկ երեքական 30 մլն դոլար տրամադրեց օգոստոսի 8-ին, 10-ին և 21-ին Անկարա այցելած ապստամբների պատվիրակություններին: Այս 100 մլն դոլարը հուլիսի սկզբներին Բենգազի այցելության ժամանակ Դավութօղլուի՝ ապստամբներին խոստացած 300 մլն դոլար օգնության մի մասն էր կազմում և օգտագործվեց ապստամբների կողմից տարբեր նպատակներով՝ այդ թվում նաև զինվորականների աշխատավարձերը վճարելու նպատակով³³:

Թուրքիան շարունակում էր նաև լիբիական ժողովրդին աջակցող պետության դիրքերից հանդես գալու իր քաղաքականությունը՝ միաժամանակ փորձելով հասնել Լիբիայում իրավիճակի կայունացմանը: Հատկապես հիշատակության է արժանի Դավութօղլուի երկրորդ այցելությունը Բենգազի, որը կատարվեց Տրիպոլիի՝ ապստամբների ձեռքը անցնելուց անմիջապես հետո՝ օգոստոսի 23-ին: Մրանով Դավութօղլուն դարձավ օտարերկրյա առաջին բարձրաստիճան պաշտոնյան, որը Տրիպոլիի՝ ապստամբների ձեռքն անցնելուց հետո այցելել էր Լիբիա՝ մեծ չափով նպաստելով ԱԱԽ-ի լեգիտիմության ամրապնդմանը: Այցելության ընթացքում Թուրքիայի ԱԳ նախարարը միջազգային հանրությանը կոչ արեց նաև ապաստանեցնել լիբիական ակտիվները մինչև Ռամադան ամսի ավարտը (օգոստոսի 29-ը): Ակնհայտ է, որ ապաստանեցնելու դեպքում այդ ակտիվները կանցնեին ԱԱԽ-ի ձեռքը և կնպաստեին ռազմական գործողությունների արագ ավարտին՝ հոգուտ ապստամբների: Միաժամանակ պաշտոնական աղբյուրները նշում էին, որ միայն Թուրքիայում լիբիական խնայողությունների թիվը հասնում էր 11 մլրդ դոլարի: Դավութօղլուի այցելությունից կարճ ժամանակ անց՝ սեպտեմբերի 2-ին, Թուրքիան նաև վերաբացեց իր դեսպանատունը Տրիպոլիում:

Լիբիայի նոր կառավարության հետ բանակցելու համար սեպտեմբերի 16-ին Թունիսից Լիբիա ժամանեց Թուրքիայի վարչապետը: Նա Տրիպոլիում հանդիպեց ԱԱԽ-ի ղեկավար Մուստաֆա Աբդուլ Ջալիլի հետ: Հանդիպման ընթացքում Էրդողանը ընդգծեց տարածաշրջանում խաղաղություն հաստատելու և բարեփոխումներ իրականացնելու կարևորությունը: Էրդողանը նաև Կադաֆիի կողմնակիցներին կոչ արեց մյուս լիբիացիների այրունը չթափել, այլ միասնաբար մասնակցել երկրի զարգացմանը³⁴: Էրդողանը այդ ժամանակ այցելություններ էր կատարում հեղափոխությունների ենթարկված արաբական երկրներում, որի նպատակը Թուրքիայի ազդեցության ընդլայնում էր մուսուլմանական աշխարհում: Լիբիան Թուրքիայի վարչապետի այցելած վերջին երկիրն էր Արաբական գարնան շրջագայության ընթացքում³⁵:

Էրդողանի այցելությունից մեկ օր անց՝ սեպտեմբերի 17-ին, թուրքական ռազմաքաղաքացիական ինքնաթիռները անկարգելներով Լիբիական Բանի Վալիի քաղաքի բնակիչների համար նետեցին 22 տոննա մարդասիրական օգնություն, որը նախատեսված էր շրջափակված քաղաքի՝ ծանր վիճակում գտնվող բնակչության համար: Բանի Վալիդը այդ ժամանակ Կադաֆիի կողմնակիցների վերջին հենակետերից էր և դիմադրում էր ԱԱԽ-ի զորքերի գրոհներին:

³³ Turkey handed out \$100 million to Libyan rebels since July, 25 August 2011, «Today's Zaman».

³⁴ Реджеп Тайип Эрдоган в Ливии: «Тоталитаризм изжил себя», 17.09.2011, «Regnum», <http://www.regnum.ru/news/1446375.html>.

³⁵ Turkish Prime Minister Erdogan arrives in Libyan capital, 16 September 2011, <http://www.alarabiya.net/articles/2011/09/16/167146.html>.

Լիբիական ճգնաժամը իր հանգուցալուծումն է ստանում հոկտեմբերի 20-ին Կադաֆիի սպանվելուց հետո, երբ Լիբիայի տարածքի ամբողջ հսկողությունը անցնում է ընդդիմադիրների ձեռքը, և ՆԱՏՕ-ն պաշտոնապես հայտարարում է, որ հոկտեմբերի 31-ին դադարեցնում է ռազմական գործողությունները³⁶:

Թուրքիայի այսպիսի պասիվ (պասիվ, բայց ոչ չեզոք) դիրքը միջազգային ուժերի ձեռնարկած գործողություններում կարելի է բացատրել մի շարք գործոններով: Դրանցից ամենակարևորը միջազգային ուժերի գործողությունների համապատասխանությունն է միջազգային իրավունքին, որը ընդունում է նույնիսկ Թուրքիան: Սակայան չնայած որ ՄԱԿ-ի, ԱԽ-ի 1973-րդ բանաձևը իրավունք էր տալիս իրականացնել վերը նշված գործողությունները, այնուամենայնիվ Թուրքիան չէր կարող լինել այն երկիրը, որը զենք կբարձարացներ լիբիացի ժողովրդի վրա: Մրանով կարելի է բացատրել Թուրքիայի՝ ռազմական գործողություններին ուղղակի չմասնակցելը: Մինևույն ժամանակ, հաշվի առնելով Թուրքիայի պատմական կապերը Լիբիայի հետ, պետք է շեշտել, որ Թուրքիան չէր կարող լինել այն երկիրը, որը կարող էր անտարբեր նայել ռազմական գործողություններին Լիբիայում: Բացի այդ, ռազմական գործողությունների հետևանքով Լիբիայի հնարավոր բաժանումը հակասում էր Թուրքիայի ռազմավարական շահերին, և սա ևս նպաստեց, որ հեղափոխական շարժումների սկզբնական շրջանում Թուրքիան հնարավոր ռազմական գործողությունների դեմ հանդես գա: Սակայն, ինչպես նկատեցինք, միջազգային ուժերի գործողությունները ուղղակիորեն դիպչում էին Թուրքիայի տնտեսական և քաղաքական շահերին, ուստի զարմանալի չէ, որ Թուրքիան նախընտրել էր ակտիվ միջամտողի դերում հանդես գալ և ոչ թե դիտորդի: Թուրքիայի քաղաքական ակտիվությունը նույնպես հասկանալի է, քանի որ Թուրքիան ամեն առիթով ձգտում է բարձրացնել իր հեղինակությունը տարածաշրջանում և հանդես գալ որպես տարածաշրջանի պետությունների առաջնորդ, որպես երկիր, որի կառավարման համակարգը և ժողովրդավարության ինստիտուտները ենթակա են ընդօրինակման:

Армен Жамгарян - Политика Турции во время Ливийского кризиса - В статье представлен политика Турции во время Ливийского кризиса. В частности, внимание было уделено стремлениям Турции ограничить военные действия и оказать помощь ливийским оппозиционерам. Также представлены стремления Турции стать посредником между ливийской оппозицией и властями. Представляя эти и другие особенности турецкой политики, в статье сделан вывод, что такая политика Турции исходила из ее политических и экономических интересов и имела целью усилить позиции Турции в регионе.

Armen Zhamharyan - Turkey's policy during Libyan Crisis - The article presents Turkey's policy during Libyan crisis. Particularly the attention was paid to the Turkey's policy to restrict military operations, as well as to support the Libyan opposition. Also Turkey's efforts to become intermediary between the Libyan opposition and govern-

³⁶ Operation in Libya, House of Commons Defence Committee, Ninth Report of Session 2010-2012, The Stationery Office Limited, London 2012, p. 15.

ment were presented. Representing these and other characteristics of Turkey's policy, in article the conclusion was made that during Libyan crisis such policy of Turkey proceeded from Turkey's political and economic interests and aimed to strengthen Turkey's positions in region.

ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՆՁԵՌՆՄԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԻ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆԻ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Սույն աշխատանքը նվիրված է սեփականության անձեռնմխելիության ինստիտուտի էությանն ու արդիականությանը: Աշխատանքում ներկայացվել է սեփականության իրավունքի չորս հիմնական ձևերը, անձեռնմխելիության՝ որպես սեփականության կարևորագույն հատկություններից մեկի հասկացությունը և սեփականության իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը՝ սեփականության անձեռնմխելիության սկզբունքը:

Բանալի բառեր. Սեփականության անձեռնմխելիություն, գույք, իրավունք, Սահմանադրություն, քաղաքացիական իրավունք, իրավական հարաբերություններ

Պատմությանը հայտնի են սեփականության իրավունքի չորս հիմնական տիպեր՝ ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական և սոցիալիստական: Յուրաքանչյուր հասարակական-տնտեսական ֆորմացիա բնութագրվում է իրեն հատուկ սեփականության ձևերով: Ստրկատիրական համակարգը պատմությանը հայտնի է որպես մարդու կողմից մարդու շահագործման վրա հիմնված առաջին դասակարգային հասարակություն: Այս շրջանում անհրաժեշտություն է առաջացել օգտագործել մարդու աշխատանքը ավելի շատ մթերք արտադրելու և հասարակության աճող պահանջարկը բավարարելու համար: Առաջացել է արտադրական միջոցների մասնավոր սեփականություն՝ սկզբում աշխատանքի գործիքների, ապա նաև ստրուկների և մասամբ նաև հողի նկատմամբ: Գույքային անհավասարությունը և մասնավոր սեփականատիրական հարաբերությունները դարձան դասակարգերի առաջացման կարևորագույն գործոն: Այս շրջանում հողի նկատմամբ մասնավոր սեփականության իրավունքը դեռևս թույլ էր զարգացած:

Ի տարբերություն ստրկատիրական կարգի, երբ նյութական բարիքների ստեղծողը ստրուկներն էին և շահագրգռված չէին իրենց աշխատանքի արդյունքներով, ֆեոդալիզմի հիմնական արտադրողական ուժը ֆեոդալական /ավատատիրական/ կախման մեջ գտնվող գյուղացիներն էին: Նրանք չունեին սեփական հող, ասկայն ունեին տուն, աշխատանքի գործիքներ և դրանք նպաստում էին գյուղացիների՝ իրենց աշխատանքի արդյունքներով շահագրգռվածությանը: Այս շրջանին բնորոշ է հողի նկատմամբ առանձին անձի ոչ բացառիկ սեփականությունը:

Արտադրողական ուժերի և ապրանքային արտադրության զարգացմամբ առաջացել է կապիտալիստական կամ բուրժուական մասնավոր սեփականությունը: Սրա հետ մեկտեղ առաջանում է նաև ձևականորեն ազատ սակայն ամեն ինչից զուրկ, միայն սեփական աշխատուժը տնօրինող մարդկանց զանգվածը՝ վարձու բանվորների դասակարգը:

Կապիտալիստական մասնավոր սեփականության հիմքը ուրիշի աշխատանքի արդյունքների անհատույց յուրացումն է: Ժամանակի ընթացքում կապի-

տալիզմը առաջ է բերում պետական մոնոպոլիա. տեղի է ունենում սեփականության ազգայնացում:

Ուժեղացնելով արտադրության հանրայնացումը՝ այդ գործընթացը միաժամանակ նեղացնում է մոնոպոլիաների տիրապետման ոլորտը, ստեղծում սոցիալիզմին անցնելու նյութական նախադրյալներ: Սոցիալիստական հեղափոխության ընթացքում առաջանում է սոցիալիստական սեփականությունը: Այս շրջանում արդեն իսկ սեփականությունը համարվում էր անձեռնմխելի:

Անձեռնմխելիությունը հանդիսանում է սեփականության կարևորաույն հատկություններից մեկն, առանց որի չի կարելի խոսել այնպիսի երևույթի մասին, ինչպիսին սեփականությունն է: Դա երևում է հենց սեփականության իրավունքի կառուցվածքից, որպես գույքային իրավունքներից ամենաբացարձակ իրավունքի, որը որպես իր էական հատկանիշները մեկը ենթադրում է ցանկացած անձի համար սեփականության օբյեկտի վրա սեփականատիրոջ կամքին հակառակ ազդելու արգելք: Սեփականության անձեռնմխելիության սկզբունքի հետազոտման ժամանակ «սեփականություն» տերմինի տակ մենք հասկանում ենք «սեփականության իրավունք»: Ինչպես նշում է Ի.Կ. Սկլովսկին «Սեփականությունն և սեփականության իրավունքը կարելի է օգտագործել որպես հոմանիշներ»¹: Սեփականության իրավունքը հանդիսանում է քաղաքացիական շրջանառության սուբյեկտների գույքային ինքնուրույնության հիմքը: Ազատ գույքային շրջանառության շահերին հիմնականում համապատասխանում է այն իրավիճակը, երբ նրա յուրաքանչյուր մասնակցի սեփականության իրավունքը պաշտպանված է այլ անձանց և պետության կամայական միջամտությունից: Այս իրավիճակն էլ կոչվում է սեփականության անձեռնմխելիություն, որի հիմնական նպատակը գույքային շրջանառության կազմակերպման համար հանդիսանում է վերջինիս կայունության ապահովումը²:

Սեփականության անձեռնմխելիությունն ունի հիմնարար նշանակություն ինչպես քաղաքացիական իրավունքի, այնպես էլ ամբողջ իրավական համակարգի համար: Սեփականության անձեռնմխելիության հետ կապված հարցերը բավականին արդիական են: Այս թեման բազմակողմանիորեն քննության է առնվել ինչպես հայ, այնպես էլ օտար մի շարք հեղինակների աշխատություններում: Սեփականության անձեռնմխելիություն կատեգորիայի բովանդակությունը կարելի է տալ միայն սեփականության իրավահարաբերությունների վերլուծության ճանապարհով: Իսկ այդ իրավահարաբերությունների առաջացման նախադրյալ է հանդիսանում սեփականության իրավունքը, որը հանդիսանում է «իրավաբանորեն ապահովված հնարավորություն»՝ բոլոր 3-րդ անձանցից օրենքով նախատեսված սահմաններում պահանջել ձեռնպահ մնալու սեփականատիրոջ գույքի նկատմամբ նրա կամքին հակառակ ցանկացած ազդեցությունից, ինչպես նաև կատարել այնպիսի գործողություններ, որոնք սեփականատիրոջը խոչընդոտում են տիրապետել, օգտագործել և տնօրինել իրեն պատկանող գույքը³: Կարծում ենք, որ սեփականության անձեռնմխելիության ակունքները պետք է փնտրել

¹ St 'u *Скловский К. И.* Собственность в гражданском праве. – М.: Дело, 2000, էջ 13:

² St 'u *Гражданское право. Том 1. Учебник 1.0тв. ред. проф. Е. А. Суханов.* – М.: Бек, 1998, չջ 39:

³ St 'u *Егоров Н.Д.* Проблемы общего учения о праве собственности: Дисс. канд. юр. наук, 1978, էջ 96-97:

հատկապես սեփականության իրավունքի բացառիկության մեջ: Միայն սեփականատիրոջն է պատկանում գույքի վրա ցանկացած ներգործության, դրա իրավական և փաստացի ճակատագիրն որոշելու իրավունքը: Եվ եթե սեփականությունն անձեռնմխելի չլիներ, ապա այս իրավական կառույցը գոյություն չէր ունենա: Այսպիսով, սեփականության անձեռնմխելիության գաղափարը մարդկանց գիտակցության մեջ ծագել և զարգացել է անմիջապես հենց սեփականության ծագման պահից: Իրավունքի զարգացման հետ, երբ սեփականության տնտեսական հարաբերությունները սկսել են գտնել իրենց իրավական ամրագրումը, սեփականության անձեռնմխելիության գաղափարը դարձել է իրավական գաղափար, այսինքն գաղափար այն մասին, ինչպես իրավունքը պետք է կարգավորի սեփականության հարաբերությունները, որպեսզի ապահովի գույքային շրջանառության կայունությունը, որն անիմաստ է առանց սեփականատիրոջը տված՝ իր իրավունքի կայունության ամուր երաշխիքների: Այսպիսով, սեփականության անձեռնմխելիությունը սեփականության անհրաժեշտ տարրն է և բխում է սեփականության իրավունքի էությունից: Սեփականության բնույթն այնպիսին է, որ յուրաքանչյուր ոք ոչ միայն կարող է խոչընդոտել ուրիշի սեփականության իրավունքի իրականացմանը, այլև խախտել սեփականատիրոջ իրավունքները: Այս սկզբունքը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը համընթաց գնալով ամրապնդվում է և նրա գործնական կիրառումը հիմնականում արտահայտում է այդ սկզբունքի էությունը: Սակայն միշտ չէ, որ մեզանում պահպանվում է այդ սկզբունքից բխող իրավական պահանջները: Դրանք կարող են դրսևորվել ինչպես օրենքի ամբողջական շրջանցման կամ դրա ոտնահարման, այնպես էլ այդ օրենքի մասնակի խախտումների կամ չարաշահումների տեսքով: Քիչ չեն դեպքերը, երբ ՀՀ-ում քաղաքացին ապօրինաբար զրկվել է իրեն պատկանող սեփականությունից, այլ խոսքով խախտվել է նրա սեփականության իրավունքը: «Սեփականության իրավունքի խախտումը երկարատև իրավախախտում է, որը հանգեցնում է նրան, որ սեփականատիրոջ սեփականության իրավունքը պաշտպանվում է և միննույն ժամանակ նա զրկված է հնարավորությունից իրականացնելու սեփականության իրավունքն ինչպես ամբողջությամբ, այնպես էլ դրա մեջ մտնող առանձին իրավագործությունները»⁴:

Սեփականության անձեռնմխելիությունը կարելի է դիտարկել նեղ և լայն իմաստով: Լայն իմաստով սեփականության անձեռնմխելիության տակ կարելի է հասկանալ սեփականության իրավունքը կարգավորող գրեթե բոլոր նորմերը, օրինակ՝ սեփականության սահմանափակման կամ սեփականության դադարման հիմքերը: Հետևություն կարելի է անել վերը շարադրվածից, որ հենց սեփականության իրավական կարգավորման նպատակը սեփականության անձեռնմխելիության ապահովումն է: Իսկ նեղ իմաստով՝ սեփականության անձեռնմխելիության երաշխիքներ ասելով հասկացվում է նորմատիվ կարգավորման համակարգը, որն ապահովում է քաղաքացիական օրենսգրքում ամրագրված համապատասխան սկզբունքի պահանջների իրականացումը: Սեփականատերերի շահերը պաշտպանելուն ուղղված քաղաքացիական իրավունքի նոր-

⁴ Տե՛ս *Тархов В. А.* Некоторые вопросы охраны имущественных прав трудящихся по советскому гражданскому законодательству. մեջբերումն ըստ *Савельев В. А.* Германское гражданское уложение, 1983, էջ 42:

մերն ամրագրված են սեփականության անձեռնմխելիության քաղաքացիաիրավական սկզբունքն ապահովելու նպատակով⁵:

Սեփականության անձեռնմխելիությունն ապահովող այդպիսի իրավական միջոցների մեջ կարևոր դեր է կատարում սեփականության անձեռնմխելիության սկզբունքը: Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ իրավունքի սկզբունքները բնորոշվում են որպես դեկավար գաղափարներ, որոնք բնութագրում են իրավունքի բովանդակությունը, նրա էությունը, նշանակությունը հասարակության մեջ, կամ որպես ինպերատիվ պահանջներ, որոնք որոշում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ընդհանուր ուղղվածությունը⁶: Իրավական սկզբունքներն ունեն նաև կարևոր դաստիարակչական նշանակություն: Ա.Մ.Վասիլևը, նշում է, որ «Իրավական գաղափար-սկզբունքները ծառայում են որպես նպատակաուղղված իրավական կարգավորման, անհատների իրավագիտակցության ձևավորման սկիզբ, որում ի հայտ է գալիս դրանց ընդհանուր նշանակությունը, որը կայանում է օրենքի և նրա պահանջների հանդեպ հարգանքի ամրապնդման, իրավակարգի հաստատման, նպատակների և պայմանների բացահայտման մեջ, ինչպես նաև սկզբունքներն օժտված են հատուկ նշանակությամբ, որն արտացոլվում է օրինաստեղծ, իրավակիրառ գործընթացների և իրավունքի գիտական ճանաչման գաղափարական հիմքի ստեղծման մեջ»⁷: Քաղաքացիական իրավունքի սկզբունքներից մեկը՝ սեփականության անձեռնմխելիության սկզբունքը, նշանակում է սեփականատերերին ապահովել սեփական հայեցողությամբ օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու իրենց պատկանող գույքը՝ չվախենալով դրանց կամայական օտարումից կամ օգտագործման սահմանափակումից: Այն կոչված է ապահովելու սեփականության հարաբերությունների կայունությունը, որը հիմք է հանդիսանում գույքային շրջանառության համար: Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը առանց սեփականատիրոջ կամահայտնության նրա սեփականության նկատմամբ ոչ իրավական հարաբերությունների առաջացման, փոփոխման կամ դադարեցման բացառումն է⁸: Անձեռնմխելիության սկզբունքի գործողությունը բացառում է ուրիշի գույքի չհիմնավորված յուրացումը⁹: Շնորհիվ այս սկզբունքի իրավական համակարգն «ադապտացվում է հասարակության կարևորագույն շահերին և պահանջունքներին, համատեղելի է դառնում նրանց հետ»¹¹: Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը հանդիսանում է գաղափար այն մասին, որ սեփականությունը անձեռնմխելի է: Սկզբունքի մակարդակի բարձրացված սեփականության անձեռնմխելիությունն արտահայտում է այն վիճակը, որին պետք է ձգտի տվյալ ճյուղը, այսինքն որոշակի գաղափար է հանդիսանում այն մասին, թե ինչպես պետք է կառուցվի սեփականության հարաբերություն-

⁵ Տե՛ս Գարապետյան Ն. Ա. Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում, 2010, էջ 17::

⁶ Տե՛ս Теория государства и права. Учебник Под редакцией В. М. Карельского, В. Перепалева, Москва 1957, էջ 237:

⁷ Տե՛ս *Васильев А.М.* О правовых идеях - принципах, 1975, չջ 17-18:

⁸ Տե՛ս Ն. Ա. *Գարապետյան*, Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում, Երևան 2010, էջ 16::

⁹ Տե՛ս *Суханов Е. А., Маттеи И., Суханов Е. А.,* Маттеи И. Основные положения право собственности М. 1999г, էջ 31-42: Толстой Принципы гражданского права М., 1992г:

¹¹ Տե՛ս *Спирядонов Л. И.* Теория государства и права. Учебник. – М: Проспект, 1997, ¾с 173:

ների իրավական կանոնակարգումը և ինչպիսի սոցիալական կարևոր արդյունք է անհրաժեշտ ստանալ այդ կանոնակարգման շնորհիվ: Սեփականության անձեռնմխելիությունն էլ այն է, որը միավորում է բոլոր այդ հակասող շահերի ամբողջությունը: Կարծում ենք, որ քիչ հավանական է, որ սեփականատիրոջը շրջապատող անձինք չեն խախտի սեփականատիրոջ իրավագործություններն՝ էլնելով միայն նրան սեփականատեր ճանաչելու հանգամանքից: Համաձայն ենք Ա. Խ. Մալախովի այն կարծիքի հետ, որ սեփականության անձեռնմխելիությունն է հենց սեփականության հիմնական հատկանիշը, նրա գրեթե ամբողջ սահմանումը: Ըստ նրա սեփականության անձեռնմխելիությունը բնութագրվում է որպես իշխանությունից մասնավոր սեփականության անկախության ճանաչում¹²: Նշված գաղափարը արտացոլում է հազարամյակների ընթացքում մշակված պատկերացումը սեփականության իրավունքի և նրա հատկանիշների մասին, որոնցից մեկը հանդիսանում է ցանկացած անօրինական ոտնձգությունից սեփականության անձեռնմխելիությունը:

Ինչպես արդեն նշվել է, սեփականության անձեռնմխելիության կատեգորիան չափազանց կարևոր կատեգորիա է, որը մեծ մասամբ որոշում է ամբողջ քաղաքացիական շրջանառության կայունությունը և վերջին հաշվով, ամբողջ հասարակության կայունությունը: Ներպետական իրավական կարգավորման ոլորտում սեփականության անձեռնմխելիության երաշխիքները նախատեսված են ամենաբարձր օրենսդրական մակարդակով՝ ՀՀ սահմանադրությամբ, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրով, որտեղ որպես հասարակական հարաբերությունների քաղաքացիաիրավական կարգավորման հիմքերից մեկը հանդիսանում է սեփականության անձեռնմխելիությունը: Սա վկայում է այն մասին, թե ինչպիսի մեծ նշանակություն է տալիս օրենսդիրն այս կատեգորիային: Պարզ է, որ գործող օրենսդրության մեջ սեփականության անձեռնմխելիության սկզբունքի հայտնվելը բոլորովին պատահականություն չէ: Խորհրդային ժամանակահատվածի ընթացքում սեփականության անձեռնմխելիությունը չէր կարող ընդգրկվել քաղաքացիական իրավունքի սկզբունքների մեջ, քանի որ սեփականության տարբեր ձևերը հավասարաբարժեք չէին, և փաստորեն ոչ թե սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանություն էր, այլ պետական սեփականության գերակայություն անձնականի հանդեպ, և առավել ևս մասնավորի, որն ընդհանրապես չէր ընդունվում, բացառվում էր որպես իրավական երևույթ: Իսկ սեփականության անձեռնմխելիության սկզբունքն ենթադրում է հավասար չափով անձեռնմխելիություն և պաշտպանություն սեփականության բոլոր ձևերի համար: Պաշտպանելով սեփականության հարաբերությունները, պետությունը հետապնդում է 2 հիմնական նպատակ՝

Առաջին՝ ամրապնդել տվյալ հասարակագում ձևավորված սեփականության տնտեսական հարաբերությունները, դրանք գերծ պահել հնարավոր ոտնձգություններից,

Երկրորդ՝ ապահովել խախտված հարաբերությունների վերականգնումը և սեփականատիրոջ կրած վնասների փոխհատուցումը¹³:

¹²Տե՛ս *Малахов А. И.* Частная собственность. <http://www.acconcept.ru/publish/publications.php?id.=&num=133>

¹³ Տե՛ս *Քարաբեյան Տ. Կ.* ՀՀ Քաղաքացիական իրավունք. Առաջին մաս, 2006, էջ 380::

Սեփականության իրավունքը կարգավորված է ՀՀ սահմանադրության 31-րդ հոդվածով, որի համաձայն յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի: Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

ՀՀ Սահմանադրության նախկին խմբագրությամբ սեփականության իրավունքի պաշտպանությանը նվիրված էին սահմանադրության 8 և 28-րդ հոդվածները, որոնք նախատեսված էին «Սահմանադրական կարգի հիմունքներ» բաժնում: 8-րդ հոդվածը սահմանում էր, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը: Սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը: Պետությունն երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը, տնտեսական գործունեության ազատությունը, ազատ տնտեսական մրցակցությունը: Իսկ 28-րդ հոդվածը ամրագրում էր յուրաքանչյուրի սեփականության և ժառանգման իրավունքը, նաև սահմանում էր, որ սեփականությունից կարող է զրկել միայն դատարանն՝ օրենքով նախատեսված դեպքերում: Սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող էր կատարվել միայն բացառիկ դեպքերում, օրենքի հիման վրա՝ նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Փաստորեն ներկայումս սահմանադրությամբ նախատեսված է սեփականության ավելի թույլ պաշտպանություն՝ համեմատած նախկին խմբագրության հետ, չնկատելով, որ մեր երկրում զարգացող շուկայական հարաբերությունների արդյունքում իրականացվող քաղաքաշինական ծրարներն ավելի շատ են շեշտը դնում սեփականության անձեռնմխելիության ապահովման կարևորության վրա:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածում «սեփականության անձեռնմխելիությունը» հիշատակվում է ոչ թե որպես պարզ դեկլարացիա, այլ օրենսդիրի ընդհանուր մտադրության տեսքով, որը հետագայում կոնկրետացվում է քաղաքացիական օրենսգրքի տարբեր նորմերում: Այսպես, օրինակ, քաղաքացիական օրենսգրքի 274 հոդվածը նախատեսում է գույքն ուրիշի ապօրինի տիրապետությունից հետ պահանջելու հնարավորություն, իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան սեփականության անձեռնմխելիության սկզբունքի կոնկրետ մարմնացում: Տվյալ դեպքում սեփականատիրոջն իրավունք է տրված հետ պահանջել իր գույքը ցանկացած ապօրինի տիրապետողից, այն ուժով, որ սեփականությունն անձեռնմխելի է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում այդ սկզբունքի ներմուծումը վկայում է այն մասին, որ իրականության մեջ տեղի են ունեցել հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափություններն արտացոլող իրական փոփոխություններ:

Այս սկզբունքը իր արտահայտումն է գտել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի փոփոխված 11-րդ արձանագրության մեջ, անդրադառնալով սեփականության իրավունքի անձեռնմխելիությանը, ազդարարում է. «Յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից՝ բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի սկզբունքներով: Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»¹⁴:

Խոսելով իրավունքի սկզբունքների մասին ամբողջությամբ և սեփականության անձեռնմխելիության մասին առանձին վերցրած, երբեք չի կարելի տեսադաշտից բաց թողնել այն նպատակը, որի համար նրանք ներկա են գտնվում իրավական իրականության մեջ: Իսկ նպատակն այդ բոլորովին էլ ամբողջ իրավունքի և նրա առանձին ճյուղերի տեսական միասնությունը չէ: «Իրավական գաղափար-սկզբունքներն իրենց մեջ կրում են իրենց մեջ դրված գաղափարը պրակտիկապես կյանքի կոչելու ուղղվածությունը»¹⁵:

Բանավեճերի տեղիք տված այս թեման տարբեր կերպ է մեկնաբանվում հեղինակների կողմից: Օրինակ՝ ըստ Ե.Ա. Սուխանովի խմբագրած «Քաղաքացիական իրավունք» դասագրքի հեղինակների՝ «Սեփականության (ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային) անձեռնմխելիության սկզբունքը նշանակում է սեփականատերերին ապահովել իրենց պատկանող գույքն ըստ իրենց շահերի օգտագործելու հնարավորությամբ՝ չվախենալով, որ այն կարող է կամայականորեն առգրավվել կամ նրա օգտագործումը կարող է դադարեցվել կամ սահմանափակվել»¹⁶: Այսինքն, այս դասագրքում չկա սեփականության անձեռնմխելիության սկզբունքի բնորոշում: Այն սահմանվում է որպես «հնարավորության ապահովում», որը մեր կարծիքով չի կարող բավարար համարվել: Սկզբունքի սահմանումը «հնարավորության ապահովում» կատեգորիայի միջոցով ոչ մի կերպ չի կարող բավարար ճանաչվել, քանի որ «ապահովում» բառն ենթադրում է, որ իրականացվում են ինչ-որ գաղափար կյանքի կոչելու որոշակի միջոցառումներ: Փաստացի «ապահովում» հասկացությունը կարելի է փոխարինել «իրականացման երաշխիք» հասկացությամբ: Այսպիսով, սեփականության անձեռնմխելիության սկզբունքի բնորոշումն որպես գույքի անարգել օգտագործման հնարավորության ապահովում չի կարելի ընդունել ճիշտ: Քանի որ սեփականության անձեռնմխելիությունն առավել ցանկալի վիճակ է հանդիսանում գույքային շրջանառության համար, ապա անձեռնմխելիության՝ որպես իրավական սկզբունքի մասին գաղափարն արտահայտում է սեփականության հարաբերությունների իրավական կարգավորման օբյեկտիվ օրինաչափությունները, քանի որ «գաղափարները քաղված են փորձից, դրանք իրականության արտա-

¹⁴ Տե՛ս, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիա, փոփոխված 11-րդ արձանագրություն, 1-ին հոդված /20 մարտի 1952թ., Փարիզ/:

¹⁵ Տե՛ս *Васильев А. М.* О правовых идеях - принципах, 1975, N 3, էջ 14:

¹⁶ Տե՛ս *Гражданское право. Том 1. Учебник под ред. Е. А. Суханова, М., 1998, էջ 39:*

ցուում են՝ ճիշտ կամ խեղաթյուրված»¹⁷: Մեփականության անձեռնմխելիությունը թելադրված է սեփականության իրավունքին, իսկ նրա միջոցով՝ նաև սեփականության իրավահարաբերություններին կայունություն և որոշակիություն տալու անհրաժեշտությամբ: Ի.Պ.Կուլիկովան, սեփականության անձեռնմխելիությունը բնութագրում է որպես իրավիճակ, երբ ազատ ապրանքային շրջանառության յուրաքանչյուր մասնակցի սեփականության իրավունքը պաշտպանված է այլ անձանց և պետության կամայական միջամտությունից: Նրա կարծիքով սեփականության անձեռնմխելիությունն իրենից ներկայացնում է այն արդյունքը, որին հասնում ենք սեփականության հարաբերությունների իրավական կարգավորման միջոցով, յուրաքանչյուր սեփականատիրոջ համար ապահովելով գործողությունների ազատության կայուն իրավունք¹⁸: Մենք կիսում ենք այն տեսակետը, որ սեփականության անձեռնմխելիությունն իրենից ներկայացնում է արդյունք, որին հասնում են սեփականության հարաբերությունների իրավական կարգավորման գործընթացում, այն է՝ սեփական գործողությունների նկատմամբ յուրաքանչյուր սեփականատիրոջ իրավունքի կայունությունը: Իսկ մնացած բոլոր անձանց նկատմամբ պահանջի իրավագործությունը՝ տվյալ արդյունքին հասնելու միջոցն է¹⁹:

Մեփականության անձեռնմխելիությունն այնպիսի վիճակ է, որի դեպքում սեփականատերն իրեն պատկանող գույքի նկատմամբ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործություններն իրականացնելիս չի հանդիպում որևէ խոչընդոտի: Այդպիսի արդյունքը հասանելի է սեփականության հարաբերությունների բացարձակության շնորհիվ: Եթե այս վերջնական նպատակն իրագործված չէ, ապա գործում են իրավունքի նորմերը, որոնք կոչված են նպաստելու հասնել անձեռնմխելիության: Մեփականության անձեռնմխելիությունը ենթադրում է ոչ միայն սեփականատիրոջ իրավունքների ճանաչում և դրանց իրականացման համար երաշխիքների ապահովում, այլև այդ իրավունքների հուսալի և համակողմանի պաշտպանություն:

Մեփականության անձեռնմխելիությունն ուսումնասիրելիս հնարավոր չէ շրջանցել այնպիսի հարց, ինչպիսին սեփականացումն է: Ոչ մի սեփականություն չի կարող գոյություն ունենալ, եթե որևէ անձ որևէ իր չհամարի իրենը և համապատասխանաբար մնացած բոլոր անձինք չհամարեն այն ուրիշին պատկանող: Մեփականության հետ այս կամ այն կերպ կապված հարաբերությունների հիմքը հանդիսանում է անձի կամքը, ով սեփականացնում է: Բանն այն է, որ սեփականության իրավունքն առաջացնում է սեփականության իրավահարաբերություններ, որոնք ունեն բացարձակ բնույթ, այսինքն սեփականատիրոջ դեմ կանգնած է պարտավոր անձանց անորոշ շրջանակ: Սակայն այդպիսի իրավահարաբերությունների առաջացման նախադրյալը հանդիսանում է ոչ այլ ինչ, քան անձի վերաբերմունքը տվյալ իրին որպես իր սեփականի, իրեն պատկանողի: Մա էլ նախադրյալ է հանդիսանում տվյալ իրի՝ բոլոր այլ անձանցից ցանկացած ոտնձգությունից պաշտպանության անհրաժեշտության առաջացման: Մեփականության

¹⁷ Տե՛ս *Куликова И. П.*, նշված աշխատությունը, էջ 59:

¹⁸ Տե՛ս *Куликова И. П.*, նշված աշխատությունը, 2003թ., էջ 3:

¹⁹ Տե՛ս *Куликова И. П.* Право собственности: вопросы соотношения неприкосновенности и ограничений

հարաբերություններն այնպիսի հարաբերություններ են, որոնք կարծես թե 2 կողմեր ունեն՝ սեփականատերը և նրան հակադրվող անձինք: Դրանցից առաջինը իր գույքի նկատմամբ ունի հնարավոր իրավագործություններից առավելագույնը, իսկ մյուսում՝ մյուս անձինք, որոնք այդ գույքի նկատմամբ չունեն ոչ մի իրավունք, այլ միայն սեփականատիրոջ կամքից անկախ և նրա կամքին հակառակ այդ գույքի վրա որևէ կերպ չազդելու պարտականություն: Բավականին հաճախ գրականության մեջ հարց է բարձրացվում այն մասին, թե ինչպիսին է այդպիսի պարտավոր սուբյեկտների շրջանակը: Պետք է արդյոք այդպիսիք համարել երկրի բացարձակապես ողջ մարդկությանը, թե միայն այն անձանց, որոնք սեփականատիրոջ հետ գտնվում են շատ թե քիչ սերտ փոխազդեցության մեջ: Մենք համաձայն ենք այն տեսակետին, որ սեփականության իրավահարաբերությունների պասիվ մասնակիցների շրջանակի կոնկրետացման փորձերը կարող են բերել ավելի շուտ վնաս, քան գիտական օգուտ, քանի որ սեփականության իրավունքը սկզբնապես արձանագրվում է որպես ամենատիպիկ բացարձակ իրավունք: Եթե ընդունենք սեփականության իրավահարաբերությունների պասիվ մասնակիցների քանակի սահմանափակման հնարավորությունն, ապա, փաստորեն, ստիպված կլինենք վերանայել բոլոր տրամաբանական եզրահանգումները, որոնք կապված են իրավահարաբերությունները բացարձակի և հարաբերականի բաժանելու հետ՝ փաստորեն ուղղակի հրաժարվելով այդպիսի բաժանումից. բացի այդ, դա կհանգեցնի սեփականության իրավունքի, որպես միակ բացարձակ սուբյեկտիվ գույքային իրավունքի, դերի նսեմացման: Պարտավոր անձանց շրջանակը բավական լայն է, բայց ընդհանուր առմամբ կոնկրետացված է որպես «բոլորը և յուրաքանչյուրը»:

Սեփականության բնույթն այնպիսին է, որ յուրաքանչյուր ոք ոչ միայն կարող է խոչընդոտել ուրիշի սեփականության իրավունքի իրականացմանը, այլև խախտել սեփականատիրոջ իրավունքները: Այս սկզբունքը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը համընթաց գնալով ամրապնդվում է և նրա գործնական կիրառումը հիմնականում արտահայտում է այդ սկզբունքի էությունը: Սակայն միշտ չէ, որ մեզանում պահպանվում է այդ սկզբունքից բխող իրավական պահանջները: Դրանք կարող են դրսևորվել ինչպես օրենքի ամբողջական շրջանցման կամ դրա ոտնահարման, այնպես էլ այդ օրենքի մասնակի խախտումների կամ չարաշահումների տեսքով: Քիչ չեն դեպքերը, երբ ՀՀ-ում քաղաքացին ապօրինաբար զրկվել է իրեն պատկանող սեփականությունից, այլ խոսքով խախտվել է նրա սեփականության իրավունքը: Որոշ դեպքերում պահպանելով այդ սկզբունքը՝ խախտվում են վերջինիս իրացման գործառնությունները կարգավորող օրենսդրական կամ ենթաօրենսդրական նորմերը: «Սեփականության իրավունքի խախտումը երկարատև իրավախախտում է, որը հանգեցնում է նրան, որ սեփականատիրոջ սեփականության իրավունքը պաշտպանվում է և միննույն ժամանակ նա զրկված է հնարավորությունից իրականացնելու սեփականության իրավունքն ինչպես ամբողջությամբ, այնպես էլ դրա մեջ մտնող առանձին իրավագործությունները»²⁰:

²⁰ St' u Tarxov B. A. Некоторые вопросы охраны имущественных прав трудящихся по советскому гражданскому законодательству. У»с»и»а»о»У» А»е»и Савельев В. А. Германское гражданское уложение, 1983, էջ 42:

Այսպիսով, մեր աշխատանքում փորձել ենք ներկայացնել սեփականության անձեռնմխելիության ինստիտուտի էությունը, հանգելով այն եզրահանգման, որ սեփականության անձեռնմխելիության սկզբունքը հանդիսանում է սեփա-կա-նության իրավունքի հիմնարար սկզբունք: Այս սկզբունքի և նրա դրսևորման առանձնահատկությունների վերահանումը շուկայական հարաբերությունների պայմաններում ձեռք են բերել արդիական նշանակություն: Սեփականության անձեռնմխելիությունը հանդիսանում է ոչ միայն քաղաքացիական իրավահարա-բերությունների, այլ նաև ամբողջ հասարակության կայուն զարգացման նա-խադրյալը, քանի որ հասարակության յուրաքանչյուր անդամ որպես սեփակա-նատեր հետաքրքրված է նրանում, որպեսզի կարողանա անխոչընդոտ տիրապե-տել, տնօրինել և օգտագործել իր սեփականությունը: Սակայն, պարզ է, որ սեփա-կանության լրիվ անձեռնմխելիությունն անհասանելի է, քանի որ ոսկե միջինը պետք է փնտրել մի կողմից սեփականատերերի շահերի, մյուս կողմից այլ սուբ-յեկտների շահերի օպտիմալ համատեղման մեջ:

Գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք
3. Բարսեղյան Տ.Կ. Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, Երևան 2009
4. Կարապետյան Ն.Ս. Սեփականության անձեռնմխելիության սկզբունքը քաղաքացիական իրավունքում, Երևան 2010 Մարդու իրավունքների և հիմնա-րար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիա, փո-փոխված 11-րդ արձանագրություն, 1-ին հոդված /20 մարտի 1952թ., Փարիզ/:
5. Скловский К. И. Собственность в гражданском праве. – М.: Дело, 2000
6. Суханов Е. А., Маттеи И. Основные положение право собственности М. 1999г
7. Гражданское право. Том 1. Учебник 1.0тв. ред. проф. Е. А. Суханов. – М.: Бек, 1998г.
8. Теория государства и права. Учебник Под редакции В. М. Карельского, В. Перепалева, Москва 1957г.
9. Спиридонов Л. И. Теория государства и права. Учебник. – М: Проспект, 1997г.
10. Малахов А. И. Частная собственность. <http://www.accqnccept.ru/publish/publicatiqns.php?id=&num=133>
11. Куликова И.П. П раво собственности: вопросы соотношения неприкосно-венности и ограничения, Рязань, 2003 г.
12. Тархов В. А. Некоторые вопросы охраны имущественных прав трудя-щихся по советскому гражданскому законодательству 1983г.
13. Егоров Н.Д. Проблемы общего учения о праве собственности: Дисс. канд. юр. наук, 1978,
14. Васильев А. М. О правовых идеях - принципах, 1975, N 3

Ани Зограбян - *Понятие и значение принципа неприкосновенности права собственности* - Данная работа посвящена институту неприкосновенности собственности, ее сущности и актуальности. В работе представлены 4 основные виды прав собственности, понятие неприкосновенности, как об одном из важнейших свойств собственности, и принцип неприкосновенности собственности, как один из основных принципов права собственности.

Ani Zohrabyan - *The concept and meaning of the principle of the immunity of the property rights* - The work is dedicated to the essence and modernity of the institute of property immunity. The four essential types of property are presented in the current work: the concept of the immunity as one of the most important characteristics of the property, and one of the inherent principles of the property right, the principle of property immunity.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՐ

ՎՈՒՈՂՅԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Տնտեսական աճը հասարակության և տնտեսական զարգացման գլխավոր ցուցանիշն է: Այս տեսակետից առաջին պլան է մղվում կապիտալ ներդրումների օպտիմալ մակարդակի որոշումը: Հողվածում քննրկվում են կապիտալ ներդրումների և տնտեսական աճի առնչությունները նկատարվում առաջարկություններ կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործման հիման վրա կայուն և բարձր տնտեսական աճի ապահովման համար:

Բանալի բառեր. Ներդրումներ, տնտեսական աճ, տեսություններ, պետություն, շուկայական հարաբերություններ, գների ազատականացում, եկամուտ

Տնտեսական աճը հասարակության և տնտեսության զարգացման գլխավոր ցուցանիշն է: Դա միաժամանակ պետության տնտեսական գործունեության գնահատման ինքնատիպ, յուրահատուկ ցուցանիշ է, տնտեսության անվտանգության և անկախության երաշխիք է: Կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճը արտահայտում է հասարակության տնտեսական «առողջության» վիճակը:

Չնայած տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն տնտեսական աճի վերաբերյալ բազմաթիվ տեսություններ, սակայն դրանցից առանձնանում են նոր քեյնսական և նոր դասական ուղղությունները: Մեծ դեպրեսիայի ներքո ծնված քեյնսյան տեսությունը ստատիկ տվյալների հիման վրա վերլուծելով ստեղծված իրավիճակը՝ «հավասարակշռությունը ռեսուրսների ոչ լրիվ (թերի) զբաղվածության պայմաններում» հանգեց այնպիսի եզրակացության, որ տնտեսական աճի տեմպերի կրճատումը կապված է տնտեսության մեջ կապիտալ ներդրումների և տեխնիկական առաջադիմության խթանման բացակայության հետ: Այդ պատճառով էլ քեյնսյան տեսության մեջ տնտեսությունում պետական միջամտության նպատակը ներդրումների խթանումն է: Այնուհետև նոր քեյնսականները իրենց հետազոտությունները ծավալելով դինամիկ տնտեսության պայմաններում, ուշադրությունը կենտրոնացրեցին այնպիսի պայմանների պարզաբանման հարցերին, որոնք անհրաժեշտ են կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ ապահովելու և պահպանելու համար՝ բնակչության զբաղվածության բարձր մակարդակի և արտադրական հզորությունների լրիվ բեռնվածության պարագայում:

20-րդ դարի 50-ական թվականների կեսերին տնտեսական աճի տեմպերի և գործոնների որոշիչ հնարավոր ներուժի խնդիրներով սկսեց զբաղվել նաև նոր դասական ուղղությունը: Ի տարբերություն նոր քեյնսականների նոր դասականները ուշադրությունը սևեռեցին արտադրանքի իրացման պայմանների և արդյունավետ պահանջարկի ստեղծման վրա: Այնուհետև նոր դասական ուղղությունը աջաջին պլան մղեց արտադրական սկզբունքը՝ տնտեսական աճի այնպի-

սի գործոնների վերլուծությանը, ինչպիսիք են հիմնական կապիտալը, աշխատուժի արտադրողականության մակարդակը, գիտատեխնիկական առաջադիմությունը և այլն: Այս տեսակետից էական ներդրում կատարեց Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռոբերտ Սոլոման: Նա առաջարկեց «կուտակման ոսկյա կանոնի» բանաձևը, որը ցույց է տալիս կապիտալի սպառման համար կապիտալազինվածության օպտիմալ մակարդակը: Ռոբերտ Սոլոմայի «ոսկյա կանոնը» որոշում է կապիտալի այն պաշարը, որն անհրաժեշտ է կայուն տնտեսության համար կապիտալի ամենաբարձր սպառման մակարդակում: Մակայն ի տարբերություն ավանդույթների մոտեցման եղանակի, ըստ որի կապիտալի ամենաբարձր սպառումը որոշվում է ոչ տեղրա մեծությամբ՝ «ինչքան շատ, այնքան լավ», այլ կապիտալի օպտիմալ չափով և տնտեսական արդյունավետությամբ, որն արտահայտվում է միավոր արտադրանքի կապիտալահատույցով: Ըստ Սոլոմայի մոդելի արտադրության թողարկման ծավալը ֆունկցիա է աշխատուժից, կապիտալից և տեխնոլոգիայից: Այսպիսով կարելի է ենթադրել, որ տնտեսական աճի հիմնական գործոններից մեկը կապիտալ ներդրումներն են: Տնտեսական աճի և ներդրումների փոխառնչություններն ավելի արդիական է դարձել պլանային համակարգից շուկայականին անցնող երկրների համար:

Որպեսզի լավ պատկերում ունենան ներդրումային ոլորտի աղբյուրների և ներդրումային գործընթացի առանձնահատկությունների մասին անհրաժեշտ է վերլուծել նախ դրա ելակետային վիճակը: Միաժամանակ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որը պլանային տնտեսությունում փաստորեն բացակայում է ներդրումների գործիքակազմի և պայմանների խորը վերլուծությունը հետևյալ պատճառներով.

- բացակայում էր ներդրող սուբյեկտը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նպատակը պետք է լիներ շահույթի ստացումը

- ներդրումային օբյեկտի ընտրության պլաններում առկա իր որոշակի սահմանափակումներ, մասնավորապես գույքը, որը գտնվում էր պետության այլընտրանքային սեփականության ձևերում, ինչպես նաև բացակայում էին արժեթղթերը և արժույթները:

Պլանային տնտեսությունում հիմնական ներդնողը պետությունն էր: Պետությունն էր որոշում երկրի զարգացման սցիալ-տնտեսական ուղղությունները և առանձնահատկությունները: Պետությունն էր սահմանում առանձին ձեռնարկության «ինվեստիցիոն պորտֆելը»:

Անցումը շուկայական հարաբերություններին ուղեկցվեց ներդրումային ճգնաժամով: Անցումային ժամանակաշրջանի սկզբից ներդրումները կրճատվեցին երեք քառորդով: Ներդրումների ծավալի կրճատումը հիմնականում պայմանավորված էր ներքին խնայողությունների սահմանափակությամբ: Մասնավոր ներդրումները չէին կարող ապահովել անհրաժեշտ քանակի ներդրումներ ճգնաժամը հաղթահարելու համար: Այդ երևույթի առկայությունը ամենից առաջ կախված էր երկրում ծավալվող ինֆլյացիայի աճի տեմպերի արագացումից: Բացի այդ բացակայում էր նաև խնայողությունների և ներդրումների տրանսֆորմացիայի աշխատունակ մեխանիզմը: Գների ազատակայնացումը նոր թափ հաղոր-

դեց ինֆլյացիայի աճի տեմպերի արագացմանը, որն էլ իր հերթին կրճատեց ներդրումների զարգացման համար ֆինանսական բազան:

Ներդրումների ոլորտի վրա բացասական ազդեցություն է թողնում նաև բարձր տոկոսի նորման (20-24%):

Ներդրումների սահմանափակման լուրջ գործոն դարձավ նաև սովետային տնտեսության առկայությունը և դրա բարձր տեսակարար կշիռը: Սովորաբար սովետային տնտեսության գերաճի պայմաններում փորձել տնտեսության իրական հատվածը հագեցնելու փողով և կրճատել ֆինանսական դիֆիցիտի սրությունը դառնում է վճարային միջոցների իրացվելիության վերացում և դրանով իսկ հանգեցնում փողով և կրճատել ֆինանսական դիֆիցիտի սրությունը դառնում է վճարային միջոցների իրացվելիության վերացում և դրանով իսկ հանգեցնում է ներդրումների կրճատմանը: Այսպիսով շուկայական հարաբերությունների ձևավորման ընթացքում ներդրումների կիրառումը հանդիպեց լուրջ դժվարությունների և, խոչընդոտների, որոնք թույլ չէին տալիս կիրառելու խթանիչ գործիքակազմը:

Սրանց թվին կարելի է դասել.

- երկրի սուղ ֆինանսական ներուժը

- ձեռնարկությունների աղքատիկ եկամուտը և բնակչության խնայողությունների փոքր ծավալը:

- անցումը ինդուստրիալ զարգացման նոր մոդելին, որը պահանջում էր ֆինանսական ռեսուրսների մեծ ծավալ

- տնտեսական աճի ձևախախտումը, որը խոչընդոտում էր կապիտալի ներհոսքը արտադրության մեջ և դրա մուտքի պատնեշների ստեղծումը, մասնավորապես արտադրության մոնոպոլացման բարձր մակարդակը, քրեական ուժերի ակտիվացումը, ինֆլյացիան միջոցների երկարատև ներդրման շահավետության նվազումը և այլն:

- շուկայական տնտեսության զարգացման անբավարար մակարդակը և շուկայական կառուցվածքի շարժունակության հակազդեցվածությունը: Այլ կերպ ասած, անկատար շուկայական գործիքակազմը թույլ չէր տալիս ռեսուրսները տեղաբաշխել տնտեսական աճը ապահովող անհրաժեշտ «կետը», որն էլ հանգեցրեց ներդրումների պահանջարկի նվազում:

Այսպիսով, Հայաստանում ներքին խնայողությունների և տնտեսության ներքին հատվածում առկա եկամուտների ցածր մակարդակը, (բնականաբար) գրեթե անհնարին են դարձնում տնտեսական աճի ներդրումային գործոնի ֆինանսավորումը միայն ներքին ռեսուրսների հաշվին, հետևաբար ներդրումների լրացուցիչ աղբյուր են ծառայել օտարերկրյա փոխառությունները (վարկերը): Օտարերկրյա ներդրումների հետ հույսեր էին կապում ֆինանսական կայունությունից անցում կատարել տնտեսական աճի տեմպերի բարձրացմանը: Սակայն օտարերկրյա ներդրումները, ինչպես յուրաքանչյուր այլ գործոն ունի «մեղալի հակառակ կողմը»: Դրանք իրականում կարող են ինտենսիվ տնտեսական աճի բացառիկ կարևոր գործոն լինել, բայց և չի բացառվում վտանգավորությունը տնտեսական զարգացման համար: Հետևաբար կարևոր նշանակություն ունի օտարերկրյա ներդրումների ներգրավման ձևերի, չափերի ու պայմանների ճշգրիտ որոշումը, որոնց միջոցով դրանք պետք է դառնան տնտեսական աճի ու

զարգացման գործոն: Այս տեսակետից անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին:

Առաջին. ինչպիսի՞ ձևով կատարել օտարերկրյա ներդրումները (ուղղակի թե փոխառությունների ձևով),

Երկրորդ. ինչպիսի՞ մեծություն պետք է ունենա օտարերկրյա ներդրումները,

Երրորդ. որտե՞ղ պետք է օգտագործել օտարերկրյա ներդրումները, որպեսզի ապահովվեն տնտեսական աճի արագացված և բարձր տեմպեր:

Ներկայումս Հայաստանում տարածված է այնպիսի տեսակետ, թե որքան շատ օտարերկրյա ներդրումներ, այնքան լավ: Սակայն, ինչպես ցույց է տալիս գործնականում առկա վիճակագրական տվյալները, տնտեսական աճի և օտարերկրյա ներդրումների աճի տեմպերը խիստ տատանվում են: Այսպես ինչպես հայտնի է 1994թ. հաջողվեց կանխել տնտեսական անկումը (մինչ այդ ՀՆԱ կրճատվել էր 59%) և ապահովել մակրոտնտեսական որոշակի կայունություն և տնտեսական աճ: Սակայն 1999թ. տնտեսական աճի տեմպերը դանդաղեցին: Եթե 1998թ. ՀՆԱ-ի աճը կազմում էր 7.2%, ապա 1999թ. այն կազմեց ընդամենը 3.3%¹:

2000թ. տնտեսական աճի տեմպերը կրկին բարձրացավ և կազմեց 9.6%: 1995-1998թթ. կապված տնտեսության կայունացման գործընթացների հետ, երկրում աճեց օտարերկրյա ներդրումները և 1998թ. կազմեց 232.4 միլ. ԱՄՆ դոլար²: Սակայն 1999թ. օտարերկրյա ներդրումների կտրուկ նվազում արձանագրվեց: 2000թ. մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը պաշտոնական տվյալներով տնտեսական աճը կազմեց 9.6-13.9%: Սակայն օտարերկրյա ներդրումների զգալի աճ չարձանագրվեց: Եվ վերջապես 2012թ. երկրում տնտեսական աճը կազմեց մոտ 6%, սակայն 40%-ով կրճատվել էր օտարերկրյա ներդրումները: Հետևաբար ամենից առաջ պետք է ճիշտ կողմնորոշվել օտարերկրյա ներդրումների չափի նկատմամբ: Իսկ իրական չափը ճշգրիտ գնահատելու համար անհրաժեշտ է նաև որոշել (սահմանել) տնտեսական աճի հնարավոր և անհրաժեշտ տեմպը: Այն պետք է ապահովի անցում տնտեսության զարգացման ցածր մակարդակից՝ բարձր մակարդակ և այդ հիմքի վրա կրճատի աղքատության տեսակարար կշիռը (35.1%), ապա նպաստի բնակչության միջին խավի ձևավորմանը և բարեկեցության աճին:

Տնտեսական աճի հնարավոր և անհրաժեշտ տեմպի գնահատման համար կարելի է օգտագործել Ֆոն Լոյմանի դինամիկ մոդելը³:

Այսպես, եթե երկրի ներուժը ավելի ցածր է քան տնտեսական աճի անհրաժեշտ տեմպն է, ապա տվյալ երկիրը «դալիսիզմ», այսինքն լրացուցիչ արտաքին (էկզոգեն) օտարերկրյա ներդրումների կարիք ունի: Իսկ տնտեսական աճի ավելի ցածր մակարդակը ցույց է տալիս, որ երկրի տնտեսության ներածին (էնդոգեն) ներուժը անբավարար է և չի համապատասխանում նրա արագացված զարգացմանը:

¹ Տե՛ս «Մոցիլա տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբեր» վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Երևան 2000թ. էջ 108

² Տե՛ս տնտեսական բարեփոխումների առանձնահատկությունները ու փուլերը Հայաստանում 1991-1998թթ. Երևան 1999թ., էջ 11

³ Տե՛ս Реформы в постсоциалистическом обществе . М. экономика 2000г. с. 269

Այսպիսով, զարգացման հնարավոր և անհրաժեշտ տեմպերի միջև տարբերությունը ոչ այլ ինչ է, քան օտարերկրյա ներդրումների ներգրավման (օգտագործման) չափը: Հենց դա պետք է դառնա անհրաժեշտ «դոպինգի» չափը (մեծությունը), այսինքն էգզոգեն լրաչուցիչ «ուժը»: Սակայն, ինչպես փորձը ցույց տալիս «դոպինգի» թափի գերազանցումը կարող է պատճառել բացասական հետևանքներ և ավելորդ կորուստներ:

Օտարերկրյա ներդրումների մեծության որոշումը կապված է նաև այն պայմանների հետ, որոնց դեպքում այդ ներդրումները կվերածվեն տնտեսական աճի իրական գործոնի: Պրակտիկան ցույց է տալիս, որ օտարերկրյա ներդրումների աճը տնտեսապես արդյունավետ կլինի այն դեպքում, երբ նման կերպով հնարավորություն է ստեղծվում ֆինասավորել անցումը տնտեսական զարգացման բարձր մակարդակի:

Ներդրումային քաղաքականության կարևոր խնդիրներից է նաև թե օտարերկրյա ներդրումների, որ ձևն է ընդունելի տնտեսական զարգացման համար՝ ուղղակի ներդրումները, թե վարկերը: Այս երկու ձևերն էլ ունեն և առավելություններ և թերություններ: Ուղղակի ներդրումները քաղաքական տեսակետից ավելի վտանգավոր են, քանի որ դրանք կապված են երկրում արտադրության միջոցների օտարերկրյա սեփականության ստեղծման և տարածման հետ և հետևաբար վտանգ ներկայացնում տնտեսական անկախության համար: Վարկավորումը նման վտանգ չի պարունակում: Սակայն դրանք ավելի պակաս հրապուրիչ են քան ուղղակի ներդրումները: Եթե ուղղակի ներդրումների դեպքում արտադրության տեխնոլոգիայի կատարելագործումը և վաճառահանման շուկաների ձեռք բերման խնդիրը լուծում են օտարերկրյա ներդրումները, ապա վարկավորման դեպքում այն ամբողջությամբ վերապահվում է երկրի ներքին գործարաններին:

Ուղղակի ներդրումների և վարկավորումների ներգրավման առավելությունների գնահատման ցուցանիշ կարող է լինել ներդրումների օգտագործման արդյունավետության աստիճանը:

Այս տեսակետից ուշագրաֆ է Շվեյցարական բանկերի կոնֆերերացիայի մեթոդիակն⁶: Այդ գնահատման մեթոդի հիմքում ընկած է տվյալ երկրի վճարունակությունը բնութագրող հետևյալ հարաբերակցությունները:

Առաջին, արտաքին պարտքի մեծության և ապրանքիների ու ծառայությունների արտահանման արդյունքում ստացված տարեկան արժույթի հարաբերությունը: Այդ հարաբերությունից էլնելով երկրը ընդունվում է (գնահատվում է) դրական, երբ արտահանումից ստացված արժույթը ծածկում է արտաքին պարտքը: Այդ պատճառով որակապես այդպիսի հարաբերության սահմանային արժեքը որոշվում է (100 %):

Երկրորդ, երկրի արժույթի պահուստի չափի և արտաքին պարտքի հարաբերությունն է: Համաձայն այդ հարաբերության երկիրը գնահատվում է դրական (լավ վիճակում), երբ արժույթային պահուստի մինիմումը հավասար է արտաքին պարտքի 20%-ին: Երբ արժույթային պահուստը 20%-ի մակարդակից ցածր է, գնահատվում է, որ երկիրը չունի անհրաժեշտ երաշխիք իր պարտքի մարելու

⁶ St ' u Реформи в постсоциалистическом обществе, экономика м. 2000г. с 273

համար: Այդ պատճառով այդ հարաբերության համար սահմանային արժեքը որոշվում է ($\leq 20\%$):

Երրորդ, երկրի վճարային հաշվեկշռի դեֆիցիտի և արժույթային պաշարի հարաբերությանն է, որի համաձայն վճարային հաշվեկշռի դեֆիցիտը չպետք է գերազանցի երկրի արժույթի պաշարը ավելի քան 1,5 անգամ: Երբ այդ հարաբերության արժեքը ավելին է նշանակում երկիրը չունի արտաքին պարտքի պարտավորությունները կատարելու հնարավորություն: Այդ հարաբերության արժեքը կազմում է $\leq 1,5\%$:

Հայաստանը վերը նշված բարդ ցուցանիշներով համարվում է ոչ այդքան գրավիչ կամ էլ միջին պարտավորությունների երկիր:

Շվեյցարական բանկերի կոնֆեդերացիայի հարաբերությունների մեթոդին կարելի է ավելացնել նաև Արժույթների միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) կողմից մշակված հարաբերությունը: Դա ամենից առաջ վերաբերվում է երկրի արտաքին պարտքին և ՀՆԱ-ի հարաբերությանը: Համաձայն այդ հարաբերության օտարերկրյա ներդնողները երկիրը գնահատում են դրական այն դեպքում, երբ երկրի արտաքին պարտքի մեծությունը չի գերազանցում ՀՆԱ-ի մեծությունը, կամ էլ չի գերազանցում ՀՆԱ-ն ավելի քան 10%:

Այդ ամենի կողքին օտարերկրյա ներդնողները մեծ ուշադրություն են դարձնում նաև երկրի քաղաքական ու սոցիալական կայունության վրա:

Այսուհանդերձ վերոհիշյալ հարաբերությունները չպետք է դիտարկել, որպես երկրի արտաքին պարտքի մարման կարողությունները գնահատելու անվիճելի միջոցներ: Սակայն դրանք տալիս են անհրաժեշտ մակարդակի պատկերումներ օտարերկրյա ներդրումների ներգրավման մասին՝ տվյալ երկրի առկա կարողությունների մասին: Հասկանալի է, որ այդ ցուցանիշները տվյալ երկրի տնտեսության արդյունավետության գնահատման ուղղակի ցուցանիշներ չեն, սակայն բարձր արդյունավետություն ունեցող տնտեսությունը միայն կարող է բավարարել այդ հարաբերությունների պահանջները:

Քանի որ օտարերկրյա վարկերը պետք է վերադարձնել նախորդ կրողին՝ տոկոսներով հանդերձ, հետևաբար անհրաժեշտ է ապահովել դրանց օգտագործման բացառիկ արտադրողական և արդյունավետության բարձր մակարդակ: Այլ կերպ ասած տվյալ երկիրը կարող է ապավինել օտարերկրյա ներդնումների օգտագործում, քանի դեռ դրա կապիտալի սահմանային արդյունավետությունը մեծ է փոխառության սահմանային արժեքից (այսինքն այն տոկոսադրույթից, որի դեպքում միջազգային կապիտալի շուկայից կարելի է վերցնել ֆինանսական միջոցներ ներառյալ միջազգային շուկայի տոկոսադրույթի և տվյալ երկրում գործող տոկոսադրույթի տարբերությունը): Որքան արդյունավետ օգտագործվեն այդ ներդրումները, այնքան մեծ կլինի տարբերության արժեքը:

Սակայն օտարերկրյա ներդրումները ևս չի կարելի համարել բացարձակ «բարիք»: Դեռևս Միլտոն Ֆրեդմանը նկատի ունենալով այդ հանգամանքը բազմիցս գգուշացնում էր, որ ձեռնարկությունները օտարերկրացիներին վաճառելը չի կարող երկրում ապահովել համապատասխան ֆինանսական միջոցներ, որովհետև օտարերկրյա կապիտալի նպատակը շահույթի ստացումն է, հետևաբար յուրաքանչյուր երկիր պետք է թույլատրի ազատ ներդրումների հոսք միայն մեկ

սլաքմանը, որքանը է այն նսլաստուր տնտեսական աճին ու տնտեսական գար-
գաքմանը:

Володя Овсеян - *Инвестиции и экономический рост* - Экономический
рост является главным показателем развития общества и экономики . С этой точки
зрения на первом плане – решения оптимального уровня инвестиций в основной
капитал. В статье рассматриваются проблемы взаимосвязи экономического роста и
капитальных инвестиции и даются рекомендации для обеспечения высоких тем-
пов экономического роста на основе устойчивого и эффективного использования
капитальных инвестиции.

Volodya Hovsepyan – *Investement and ekonoic growth*- Ekonoic growth is the
main indicator of the development of society and economy. From point of view in the
foreground is a solution of the optimal level of investment in fixed assets. The article
discusses the relationship between economic growts and capital investment and gives
recommendations to ensure high rates of economic growth based on susaintable and
efficient use of capital investment.

ԱՌԵՎՏՐԱՑԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄՄԻԿ ԱԼԻԻՆՅԱՆ

Բանկային համակարգի անխափան գործունեությունից և արդյունավետությունից են կախված երկրի տնտեսական զարգացման տեմպերը: Բանկերի գործունեության արդյունավետ գնահատման համար կարևոր է ճիշտ ժամանակին իրականացնել շահույթ ապահովող գործունեների վերլուծություն, շահույթի և շահութաբերության վրա ազդող գործոնների բացահայտում:

Հոդվածում ներկայացված են բանկային գործունեության գնահատման հիմնական մեթոդները, շահութաբերության մակարդակը բնութագրող ցուցանիշներից միջին ակտիվների շահութաբերության (ROA), սեփական կապիտալի շահութաբերության (ROE) գործակիցները: Վերլուծությունը կատարվել է Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ, ՎՏԲ-Հայաստան, Արդշինինվեստ բանկերի տվյալների հիման վրա: Արդյունքներով իրականացվել է SWOT վերլուծություն:

Բանայի բառեր. Բանկային համակարգը, շահույթի, միջին ակտիվների շահութաբերության գործակից (ROA), սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), իրացվելիություն, ֆինանսական արդյունք, զուտ շահույթ մեկ բաժնետոմսի հաշվով, կապիտալի տեսակարար կշիռը, բանկերի ուժեղ և թույլ կողմերը, SWOT վերլուծություն:

Բանկային համակարգը, հանդիսանալով երկրի տնտեսության կարևորագույն օղակներից մեկը, առանձնահատուկ ուշադրության կարիք ունի, քանի որ բանկային համակարգի անխափան գործունեությունից և արդյունավետությունից են կախված երկրի տնտեսական զարգացման տեմպերը:

Ինչպես գիտենք, շուկայական տնտեսության պայմաններում ցանկացած տնտեսվարող սուբյեկտի, այդ թվում՝ առևտրային բանկերի գործունեության հիմնական նպատակը շահույթի ստացումն է, որն իրենից ներկայացնում է առևտրային բանկերի տնտեսաֆինանսական գործունեության վերջնական ֆինանսական արդյունքը:

Այս առումով կարելի է ասել, որ բանկերի գործունեության գնահատման ամենատարածված և արդյունավետ միջոցը բանկի շահույթի և շահութաբերության վերլուծությունն է: Եվ պետք է նշել, որ այն բանկերն են կարողանում դիմանալ մրցակցությանը և խուսափել ֆինանսական անկայուն վիճակից, որոնք պարբերաբար կատարում են բանկի գործունեության գնահատում ստորև նշված ցուցանիշների միջոցով:

Շահութաբերության մակարդակը գնահատելու ամենատարածված ցուցանիշներից է միջին ակտիվների շահութաբերության գործակիցը (ROA): Բանկերի համար շատ կարևոր է շահութաբերության գնահատման մի գործակից ևս՝ սեփական կապիտալի շահութաբերությունը (ROE-ն), որը համարվում է ուղեցույց է բանկի ներդրողների համար և որպես կանոն, զարգացած երկրներում այն կազմում է 15-20%:

Այսպիսով իրականացնենք Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծություն¹.

Աղյուսակ 1.

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի հիմնական ցուցանիշների համեմատություն

| 01.01.12 դրությամբ, միլիոն ՀՀ դրամ | | 01.01.13 դրությամբ, միլիոն ՀՀ դրամ | | Շեղում |
|---------------------------------------|--------|---------------------------------------|--------|--------|
| Ակտիվներ | 247412 | Ակտիվներ | 260926 | 13514 |
| Պարտավորություններ | 198550 | Պարտավորություններ | 209534 | 10984 |
| Սեփական կապիտալ | 48862 | Սեփական կապիտալ | 51392 | 2530 |
| ROA | 3.6% | ROA | 2.88% | -0.72% |
| ROE | 10.34% | ROE | 12.96% | 2.62% |
| Սեփական կապիտալ/Ակտիվներ | 18.12% | Սեփական կապիտալ/Ակտիվներ | 17.76% | -0.36% |

Աղյուսակ 1-ի տվյալներից երևում է, որ 01.01.13 դրությամբ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի ROE ցուցանիշը կազմում է 12.96%, ընդ որում՝ նախորդ տարվա 10.34%-ի համեմատ նկատվում է ROE ցուցանիշի, հետևաբար նաև պոտենցյալ դիվիդենտների աճ 2.62%-ով: Այստեղից հետևում է, որ ներդրողները շահագրգռված են, որ բանկն ունակ լինի ներգրավել զգալի միջոցներ, քանի որ այս դեպքում, չնայած նվազում է բանկի ROA-ն, սակայն աճում է ROE-ն և, բնականաբար, նաև պոտենցյալ դիվիդենտները: Բայց մյուս կողմից էլ դա բացասաբար է ազդում բանկի կապիտալի համարժեքության մակարդակի, հետևաբար, նաև նրա հուսալիության վրա:

Ներկայացնենք նաև Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի շահութաբերության ցուցանիշները 2011-ից 2013 թվականն ընկած ժամանակահատվածում:

Աղյուսակ 2

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի շահութաբերության ցուցանիշները²

| | ROE | ROA |
|------------|-------|------|
| 01.01.2011 | 11.16 | 3.29 |
| 01.04.2011 | 12.47 | 2.88 |
| 01.07.2011 | 12.01 | 2.89 |


¹ Տվյալները վերցված են «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի պաշտոնական www.acba.am ինտերնետային կայքից

² Տվյալները վերցված են «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի պաշտոնական www.acba.am ինտերնետային կայքից

| | | |
|------------|-------|------|
| 01.10.2011 | 10.86 | 3.2 |
| 01.01.2012 | 10.34 | 3.6 |
| 01.04.2012 | 10.35 | 3.19 |
| 01.07.2012 | 10.74 | 2.82 |
| 01.10.2012 | 11.96 | 2.61 |
| 01.01.2013 | 12.96 | 2.88 |

Այս ցուցանիշների մեծությունների փոփոխությունները ցույց տանք նաև գրաֆիկի միջոցով.

Գծապատկեր 1



Ինչպես երևում է գծապատկերից, 2011թ-ին ROE-ն ունեցել է մի փոքր աճ, ապա՝ նվազման միտում մինչև 01.05.2012-ը ընկած ժամանակահատվածը, որից հետո կրկին սկսել է աճել, իսկ ROA ցուցանիշը լուրջ շեղումներ չի գրանցել:

Այժմ ցույց տանք ՀՀ ռեզիդենտ երեք բանկերի հիմնական ցուցանիշները և գործունեության արդյունավետությունը՝ ըստ ROA և ROE գործակիցների, 01.01.2013 դրությամբ³.

Աղյուսակ 3.

Բանկի հիմնական ցուցանիշների հաշվարկ 01.01.2013

| Բանկի անվանումը | Ակտիվներ (մլն ՀՀ դրամ) | Սեփական կապիտալ (մլն ՀՀ դրամ) | Զուտ շահույթ հարկումից հետո (մլն ՀՀ դրամ) | Տեսակարար կշիռ | |
|-----------------|------------------------|-------------------------------|---|----------------|--------|
| | | | | ROA, % | ROE, % |
| Արդշինինվեստ | 233482 | 13802 | 2057 | 2.56 | 11.74 |
| Ակբակբեդիտ | 260926 | 15536 | 2393 | 2.88 | 12.96 |
| ՎՏԲ-Հայաստան | 259952 | 13776 | 2157 | 4.67 | 17.05 |


³ www.banker.am

Ինչպես տեսնում ենք, գործունեության արդյունավետության ցուցանիշներն ավելի բարձր են ՎՏԲ-Հայաստան և Ակբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկերում, քանի որ վերջիններս աշխատում են բավականին շահութաբեր, մինչդեռ դրանք համեմատաբար ցածր են Արդշինինվեստ բանկում, որը դեռևս պետք է բարձրացնի իր գործունեության արդյունավետությունը, որպեսզի ապահովի բաժնետերերին ցանկալի շահութաբերության մակարդակ:

Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի արդյունքներով բանկային համակարգի ընդհանուր շահույթը կազմել է 42.7 մլրդ դրամ, տարեկան աճը՝ 15%: Կապիտալի եկամտաբերության մակարդակը (ROE) կազմել է 11.2%, նախորդ տարվա 12.55%-ի փոխարեն: Իսկ ակտիվների եկամտաբերության մակարդակը (ROA) մոտ 2.56%, նախորդ տարվա 2.73%-ի փոխարեն:

Ներկայացնենք գրաֆիկի միջոցով.

Գծապատկեր 2



Այս ցուցանիշների վրա բացասական ազդեցություն են ունեցել ավանդների տոկոսադրույքների աճի արդյունքում տոկոսային ծախս / ընդհանուր ակտիվներ հարաբերակցության 0.6 տոկոսային կետով աճը, ինչպես նաև ոչ տոկոսային եկամուտ/ընդհանուր ակտիվներ հարաբերակցության 1.9 տոկոսային կետով նվազումը:

Վերը թվարկված գործակիցներից զուտ շահույթի մարժան, զուտ տոկոսային մարժան և ոչ տոկոսային մարժան ինչպես արդյունավետության, այնպես էլ շահութաբերության գնահատման ցուցանիշներ են, որոնք վկայում են այն մասին, թե բանկի կառավարիչները և աշխատակիցները որքան հաջող են ապահովել եկամուտների աճի առաջանցիկ տեմպը՝ ծախսերի համեմատությամբ: Մեկ բաժնետոմսի հաշվով զուտ շահույթի (EPS) ցուցանիշը բանկի բաժնետերերին ներկայացնում է վճարումների ճշգրիտ գնահատականը: Մաքրեղի միջոցով գնահատվում է բանկի ավանդատուների և փոխառուների միջև իրականացրած միջորդական գործունեության հաջողության աստիճանը:

Վերը նշված ցուցանիշների միջոցով կատարենք Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկի գործունեության գնահատում:


Աղյուսակ 4⁴

| Ցուցանիշի անվանումը | Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ | |
|-------------------------------------|--------------------------|--------------------|
| | 01.01.12 դրությամբ | 01.01.13 դրությամբ |
| Զուտ տոկոսային մարժա, %-ով | 4.9 | 3.21 |
| Զուտ շահույթի մարժա, %-ով | 15.1 | 14 |
| Զուտ ոչ տոկոսային մարժա, %-ով | -3.5 | -2.9 |
| Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով | 1646 | 2047 |
| Սպրեդ | 6.6 | 5.13 |

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով ունի աճման միտում՝ ի շնորհիվ զուտ շահույթի աճի: Սպրեդը փոքրացել է, ինչը խոսում է բանկերի միջև մրցակցության սրվելու մասին, քանի որ վերջինիս պայմաններում սովորական ակտիվների միջին եկամուտների և պասիվների միջին ծախսերի տարբերությունը պակասում է:

Ներկայացնենք նաև գրաֆիկի միջոցով.

Գծապատկեր 2.11



⁴ www.acba.am

Այստեղից երևում է, որ զուտ տոկոսային մարժան, զուտ շահույթի մարժան, 2013թ-ին 2012թ-ի համեմատությամբ նվազել են:

Այս դինամիկան նույնպես խոսում է սուր մրցակցության մասին, ինչը բանկերի կառավարիչներին ստիպում է փնտրել եկամուտների /շահույթի/ այլ աղբյուրներ: Զուտ ոչ տոկոսային մարժան բացասական է, քանի որ բանկի ոչ տոկոսային ծախսերը գերազանցում են ոչ տոկոսային եկամուտներին, իսկ զուտ ոչ տոկոսային մարժան աճել է:

Առևտրային բանկերի գործունեության վերլուծության ժամանակ շատ կարևոր է նաև նրա իրացվելիության գնահատումը, որը վերջինիս ունակությունն է ժամանակին և առանց կորուստների իրականացնել իր պարտավորությունները ավանդատուների և վարկատուների և այլ հաճախորդների նկատմամբ: Այժմ դիտարկենք Կենտրոնական բանկի կողմից սահմանված ՎՏԲ – Հայաստան, Ակբա – Կրեդիտ Ագրիկոլ և Արդշինինվեստ բանկերի իրացվելիության նորմատիվները⁵:

Աղյուսակ 5

$$\mathcal{L}_2^1 = \text{բարձր իրացվելի ակտիվներ} / \text{ընդհանուր ակտիվներ}(\%)$$

| | 31/03/ 2013 | 31/12/ 2012 | 30/09/ 2012 | 30/06/ 2012 | 31/03/ 2012 | 31/12/ 2010 |
|--------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|
| Արդշինինվեստ | 33.67 | 35.61 | 38.20 | 43.05 | 50.23 | 48.35 |
| Ակբակրեդիտ | 20.06 | 28.14 | 32.79 | 32.70 | 33.94 | 31.17 |
| ՎՏԲ-Հայաստան | 21.57 | 25.84 | 26.88 | 25.40 | 32.65 | 29.61 |

Աղյուսակ 6

$$\mathcal{L}_2^2 = \text{բարձր իրացվելի ակտիվներ} / \text{ցպահանջ պարտավորություններ}(\%)$$

| | 31/03/ 2013 | 31/12/ 2012 | 30/09/ 2012 | 30/06/ 2012 | 31/03/ 2012 | 31/12/ 2010 |
|--------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|----------------|
| Արդշինինվեստ | 141.12 | 144.09 | 150.41 | 165.79 | 211.79 | 205.61 |
| Ակբակրեդիտ | 231.70 | 289.91 | 347.06 | 396.06 | 383.19 | 339.24 |
| ՎՏԲ-Հայաստան | 101.55 | 103.99 | 94.39 | 100.67 | 119.66 | 100.33 |

⁵ <http://www.banker.am/>

Աղյուսակներից երևում է, որ բանկերը պահպանում են իրացվելիության թույլատրելի մակարդակները՝ ի շնորհիվ բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆելների, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Պետք է նշել, որ բանկերն ունեն ավելցուկային իրացվելիություն, իսկ վերջինս զսպող ազդեցություն է ունենում բանկային համակարգի ակտիվային գործառնությունների վրա՝ բացասաբար անդրադառնալով բանկային համակարգի եկամտաբերության վրա, սակայն պետք է նկատել նաև, որ բարձր իրացվելի ակտիվների մասնաբաժինը ընդհանուր ակտիվների մեջ, ինչպես նաև բարձր իրացվելի ակտիվները՝ համեմատած ցպահանջ պարտավորությունների հետ, ունեցել են նվազման միտում, հետևաբար կարելի է ասել, որ բանկերն իրենց ակտիվները սկսել են ավելի ռազիոնալ օգտագործել:

Այսպիսով բանկերը անհրաժեշտ է վարեն ակտիվների առավել ռացիոնալ օգտագործման քաղաքականություն, քանի որ ավելցուկային իրացվելիությունը զսպող ազդեցություն է ունենում նրանց ակտիվային գործառնությունների վրա՝ բացասաբար անդրադառնալով բանկային համակարգի եկամտաբերության վրա:

2011-2013 թթ-ին Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ, ՎՏԲ-Հայաստան և Արդշինինվեստ բանկերը ապահովել են կայուն և շահութաբեր գործունեություն: 2013թ-ին նշված բանկերի ընդհանուր կապիտալի տեսակարար կշիռը բանկային համակարգի ընդհանուր կապիտալում կազմում է համապատասխանաբար 11.59%, 8.85% և 8.64%:

Վերը շարադրված հետազոտությունների հիման վրա SWOT վերլուծության միջոցով ցույց տանք առանձնացված բանկերի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները հետևյալ խմբավորմամբ:

Աղյուսակ 7

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Զուտ տոկոսային եկամուտների բարձր մակարդակ, 2. բարձր շահութաբերություն, 3.եկամուտների և ծախսերի օպտիմալ կառուցվածք, 4. իրացվելիության բարձր մակարդակ, 5. ծառայությունների ընդգրկուն փաթեթի տրամադրում, 6. մասնաձյուղերի լայն ցանց, 7. ամուր մրցակցային դիրք տարածաշրջանում, 8. հաճախորդների հաստատուն բազայի և բանկի նկատմամբ նրանց վստահության առկայություն | <ol style="list-style-type: none"> 1. Զուտ ոչ տոկոսային եկամտի բացասական լինելը, 2. հիմնական ավանդների համեմատաբար ցածր տեսակարար կշիռը պարտավորությունների կազմում, 3. ավանդներին տրամադրվող տոկոսադրույքները, 4. միջին տարիքից բարձր բնակչության անվստահությունը բանկային համակարգի նկատմամբ |

| Հնարավորություններ | Մպտոնալիքներ |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Վարկերի նկատմամբ առկա (աճող) պահանջարկ, 2. Ֆինանսական համակարգում իրականացվող բարեփոխումներ (կենսաթոշակային ռեֆորմ, պարտադիր ապահովագրատեսակների ներդրում), 3. հուսալի հաճախորդների առկայություն, 4. ավանդների երաշխավորման գումարների ավելացում | <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ տնտեսական աճի դանդաղում կամ աճի ցածր տեմպեր, 2. Գործընկեր երկրներում առկա տնտեսական և քաղաքական խնդիրներ, 3. գնաճի բարձր մակարդակ (սպասումներ), 4. տնտեսությունում առկա սոցիալական խնդիրներ (բնակչության ցածր կենսամակարդակ), 5. գործազրկության աճ, 6. ստվերային տնտեսության մեծ ծավալներ |

Гайане Аветисян, Асмик Алиханян - Сравнительная оценка деятельности коммерческих банков - Темпы экономического развития страны зависят от бесперебойной и эффективной деятельности банковской системы. Для эффективной оценки деятельности банков важно вовремя осуществлять анализ факторов, обеспечивающих прибыль и раскрытие факторов, влияющих на прибыльность.

В статье представлены основные методы оценки банковской деятельности, показатель средних активов из показателей, характеризующих уровень прибыльности, коэффициенты прибыльности частного капитала. Анализ был проведён на основе данных Акба-Кредит-Агриколь, ВТБ-Армения, Ардшининвест банков. По результатам был произведён анализ SWOT.

Gayane Avetisyan, Hasmik Alikhanyan - Comparative Assessment of Trading Banks Activity - The rates of a country's economic development depends on the activity and efficiency of the banking system. In order to have efficient assessment of banks activity it is important to implement analysis of factors providing profit and reveal the factors influencing on profit and profitability in time. The article discusses the principal methods of assessment of bank activity, the coefficients of ROA and ROE from the indexes, characterizing the level of profitability. The analysis has been done on the basis of data of the following banks: Acba-Credit Agricole, VTB-Armenia and Ardshininvest-bank. The results have been used while implementing SWOT analysis.

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Մ Ե Թ Ո Ղ Ա Կ Ա Ն

«ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻ ՔՆՆԱՂԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

ՎԱԶԱԳԱՆ ԱՎԱԳՑԱՆ

Հոդվածում հիմնավորում է Արշակ Զոպանյանի քննադատական հայացքների ուսուցման անհրաժեշտությունը, հակիրճ ներկայացվում է դասընթացի բովանդակությունը, դասընթացի կազմակերպման ու անցկացման նախագիծը, հարցադրումների շրջանակը:

Բանալի բառեր- Արշակ Զոպանյան, Իպոլիտ Տեն, Դ. Վարուժան, Սիամանթո, Համաստեղ, Շ. Շահնուր, Ե. Չարենց, Հ. Շիրազ, գրականություն, գրաքննադատ, գրականագետ, ուսուցում, դասավանդում, դասընթաց, մեթոդ, կուլտուր-պատմական դպրոց, իրապաշտություն, Մփյուռք:

Մեծ է Արշակ Զոպանյանի դերը հայ մշակույթի պատմության մեջ: Նրա բազմաբովանդակ գործունեության լայնատարած տիրույթում իրար կողք կողքի բարձրանում են բանաստեղծը, գեղագետ-արվեստաբանն ու բանասերը, գրաքննադատն ու գրականագետը, հասարակական գործիչն ու քաղաքական մտավորականը: Զոպանյանի վաստակը նշանակալից է հատկապես քննադատության ու բանասիրության ասպարեզներում: Նրա հզոր գրչով կյանքի կոչվեցին հայ հին մշակույթի շատ մոռացված արժեքներ, արևմտահայ գրականության մեջ նա հիմք դրեց գիտական քննադատությանը, սկզբնավորեց մենագրության ժանրը՝ տալով դասական գրողների ստեղծագործությունների ուսումնասիրության ինքնատիպ ու հիանալի օրինակներ: Բազմաթիվ արձարծումներ ու մեկնաբանություններ, որ Զոպանյանը սովեց շատ գրողների կյանքի ու ստեղծագործության կապակցությամբ, մեզանում եղան նրանց մասին առաջին առավել ամբողջական բանասիրական խոսքը: Նրա շատ եզրահանգումներ, գնահատականներ, ճշգրտումներ էլակետային են դարձել գրական ամենատարբեր հարցերով զբաղվող մասնագետների համար, շատերն էլ թեև արդեն պատկանում են անցյալին և վերանայվել են արդի գրականագիտության կողմից, սակայն ուսանելի են որպես գիտական մտքի որոնումներ:

Ահա այս պատճառներով էլ Զոպանյանի գրաքննադատական գործունեության ու հայացքների ուսուցումը և՛ անհրաժեշտ է, և՛ արդիական: Արդիական է նաև այն տեսակետից, որ 19-րդ դարի 90-ական թվականների արևմտահայ իրականության մեջ Ա. Զոպանյանի գրականագիտական-տեսական ժառանգության ուսումնասիրությունը նպաստում է ազգային գրական գործընթացում ռեալիզմի՝ որպես ստեղծագործական մեթոդի առանձնահատկությունների լուսաբանմանը:

«Արշակ Զոպանյանի քննադատական հայացքները» դասընթացի ուսուցմամբ մենք նպատակ ունենք ամփոփ և համակարգված ներկայացնելու Զոպանյանի քննադատական գործունեությունը, բացահայտելու 19-րդ դարի 90-ական թվականների, ապա 20-րդ դարասկզբի և մինչև 40-ական թվականներն ընկած

Ժամանակահատվածի ազգային գրական գործընթացի զանազան հարցերի նկատմամբ նրա հետաքրքրությունների աճը, ցույց տալու Չոպանյանի քննադատական, գրական-տեսական հայացքների ձևավորման և զարգացման ընթացքը, ներկայացնելու գրական ուղղությունների հերթափոխի, գրական ազդեցության, դասական ռեալիզմի գեղագիտական սկզբունքների, գեղարվեստական մեթոդների միաժամանակյա գոյակցության, ազգային գրականության զարգացման մասին պատկերացումները, և վերջապես, Չոպանյանի քննադատական դիմանկարի բնութագրման համար վերլուծելու և արժևորելու նրա առավել կարևոր ուսումնասիրություններն ու հողվածները:

Դասընթացում կարևորում ենք նաև Ա. Չոպանյանի՝ հայ գրականությունը համաշխարհային գեղարվեստական մշակույթի համապատկերում գնահատելու ու քննելու սկզբունքը՝ նկատելով, որ գրաքննադատը այդ սկզբունքի հետևությամբ ոչ միայն գեղագիտական բարձր չափանիշներ է առաջադրում ժամանակի մեր գրականությանը, այլև մեթոդաբանական ուղեցույցներ է տալիս հայ գրականության համաշխարհային կապերի և փոխազդեցությունների ուսումնասիրության համար:

Տարբեր խնդիրների քննության առնչությամբ նպատակ ենք դրել հատուկ ընդգծելու, թե Չոպանյանի քննադատական գործունեության մեջ ինչպես է արտացոլվել ժամանակի գրական ու գրականագիտական մտքի շարժումը, ինչպես է նա լուծել հատկապես քննադատության բնագավառի սկզբունքային հարցերը և ինչով է հարստացրել հայ գրաքննադատական մշակույթը:

Ուսուցումը նպատակահարմար ենք գտնում կազմակերպել հետևյալ նախագծով և հարցադրումներով:

1. Կուլտուր-պատմական գրականագիտական դպրոցի հետևորդը: 2. Իրապաշտության հաստատման ճանապարհին: 3. Ընթացիկ գրականության շրջագծում: 4. Բանաստեղծական նոր սերնդի քննադատ-ուղեկիցը: 6. Ա. Չոպանյանը հայության երկու հատվածների հոգևոր մերձեցման կամուրջ:

Դասախոսությունը նպատակահարմար ենք գտնում վարել բանավոր՝ ուսանողներին գրի առնելու հնարավորություն տալով, հեղինակային վերլուծությունները համադրելով բնագրային մեջբերումներով:

Չոպանյանի գրաքննադատական ժառանգությունն ուսումնասիրելիս նախ անհրաժեշտ է քննության առնել նրա մեթոդաբանական սկզբունքները, գրական հայացքները, որոնք օգնում են ճիշտ հասկանալու գրական ստեղծագործությունների վերլուծման և գնահատման՝ քննադատի հետևողական ելակետերը: Այս հարցերի քննարկմանն է նվիրվում դասընթացի առաջին՝ «Կուլտուր-պատմական գրականագիտական դպրոցի հետևորդը» թեման:

Թեման մատուցելիս կարևորում ենք, որ Չոպանյանը իր գրական-քննադատական գործունեությունը, սկսած առաջին իսկ քայլերից, ծավալեց՝ հետևելով կուլտուր-պատմական դպրոցի սկզբունքներին: Այդ կապակցությամբ անհրաժեշտորեն ներկայացնում ենք Իպոլիտ Տենի ուսմունքի բովանդակությունը և ապա ցույց տալիս, որ սկզբից նեթ, պահպանելով քննադատի սեփական մտա-ծողության ինքնությունն ու ինքնատիպությունը, Չոպանյանը քննեց ու գնահատեց Տենի հայացքները, ու թեև բարձր գնահատեց վերջինիս ուսմունքը, սակայն նրանում տեսավ և ընդգծեց նաև առանձին անընդունելի դրույթներ: Հակառակ Տենին՝ Չո-

պանյանը առաջ քաշեց ստեղծագործող անհատի անձնականության խնդիրը՝ ցույց տալով, որ որքան էլ մեծ լինեն արտաքին ազդեցությունները, այնուամենայնիվ ամենակարևորը ստեղծագործողի անհատականությունն է, որը հաճախ շրջանցում է արտաքին ազդեցությունները, և ինքն է ազդում իր միջավայրի ու ցեղի վրա:

Այս կերպ բացատրում ենք, որ Չոպանյանը առաջադրեց գրականության գնահատման գրական-պատմական այնպիսի սկզբունքներ, որոնք միջավայրի, ցեղի ու ժամանակի օբյեկտիվ տվյալներին համադրում են նաև հեղինակի անհատականության սուբյեկտիվ գործոնը:

«Իրապաշտության հաստատման ճանապարհին» վերնագրված թեման ուսուցանելիս նախ հակիրճ ներկայացնում ենք 19-րդ դարի 80-ական թվականների արևմտահայ գրական կյանքը, երբ գրական նոր սերնդի՝ հայտնի ութսունականների իրապաշտական գրական շարժման ջանքերով արմատական փոփոխություններ տեղի ունեցան գրականության թեմատիկայի, գրականության գաղափարական նպատակաւազության ու պատկերավորման բնագավառներում, և որտեղ հաղէս եկավ Ա. Չոպանյանը՝ ինքն էլ դառնալով գրական նոր սերնդի գլխավոր ու եռանդուն ղեկավարից մեկը: Քննադատի տարբեր հոդվածներից մեջ բերված անհրաժեշտ հատվածների վերլուծությամբ ցույց ենք տալիս, որ այս շրջանում գրաքննադատության էության և հասարակական նշանակության մասին Չոպանյանի պատկերացումները որքան էլ թեև սերտորեն կապված էին դասական ռեալիզմի գեղարվեստական-գեղագիտական սկզբունքների հաստատման, քննադատությունն ու գրականությունը ժողովրդի լայն զանգվածների շահերին ծառայեցնելու՝ արևմտահայ ութսունականների որդեգրած շահագրգիռ ու նպատակամետ սկզբունքների հետ, այնուհանդերձ նա երբեք անհանդուրժողական վերաբերմունք չունեցավ տարբեր ուղղությունների ու ոճերի նկատմամբ: Հաստատելով իրականության մեջ հասարակական և գեղագիտական երևույթների բազմազանությունն ու հարստությունը՝ քննադատը լավագույնն է համարում գեղարվեստական բազմազան մոտեցումների և հնարավորությունների կիրառումը: Նման մտածելակերպով Չոպանյանը մի էական խնդրում արդեն տարբերվում է 80-ականներից, նրանց՝ ռեալիզմի վերաբերյալ ունեցած միակողմանի պատկերացումներից, որոնք հատկապես տիրապետող էին նրանց գործունեության առաջին շրջանում: Ուսանողներին բացատրում ենք, որ այս հանգամանքը, սակայն, չպետք է դիտել որպես հեռացում գրական սերնդակիցներից, այլև իբրև քննադատի՝ կյանքը, մարդկային հարաբերություններն ու հոգեբանությունը ճշմարիտ և օբյեկտիվորեն պատկերելու հետևողական և արդարացի ձգտում, որն իր հիմքում նաև նպատակ ուներ ազգային գրականությանը հաղորդելու ժամանակակից բովանդակություն և հասարակական հնչեղություն:

Չոպանյանի գեղարվեստական և հասարակական դիրքորոշումների համար կարևոր է ընդգծել այն փաստը, որ նա բավական մեծ կարևորություն էր տալիս հասարակության գեղագիտական ճաշակի զարգացմանը, հոգևոր կյանքի կազմակերպմանը: Արվեստը դիտվում է այն լավագույն միջոցը, որը կարող էր բարձրացնել ու զարգացնել հասարակության՝ գեղեցիկի զգացման զգացողությունը, որն էլ իր հերթին բարերար ազդեցություն պետք է թողներ նրա բարոյական նկարագրի վրա, գեղեցկացներ նրա բարքերը:

Այս ամենից հետո բացատրվում է, որ հարցի այսպիսի դրվածքն արդեն նորություն էր ութսունականների օգտապաշտական մտածողության համեմատ: Եթե 80-ական թվականներին Արփիարյանը, պաշտպանելով իրապաշտության սկզբունքները, գեղագիտական չափանիշի էր հասցրել գրական երկի գաղափարայնության, կենսական խնդիրներ արծարծելով՝ օգտակար լինելու պահանջը, ապա Չոպանյանը լայնացնում է գրականությանը ներկայացրած իր պահանջների ուղեծիրը՝ գործառնական դերից առավել կարևորություն տալով գրական երկի գեղարվեստական հավերժական հատկանիշներին:

«Ընթացիկ գրականության շրջագծում» թեմայի շրջանակում ցույց ենք տալիս, թե ինչպես երիտասարդ քննադատը իր գործունեության հենց սկզբից, ելնելով ազգային գրականության կենդանի ընթացքի կազմակերպման, նաև զարգացման հեռանկարի դիրքերից, ինչ մեծ կարևորություն էր տալիս օրվա նորահայտ գրողների և ստեղծագործությունների քննությանն ու գնահատմանը: Հատկապես «Հայրենիք» օրաթերթից՝ «Վերջին հրատարակութիւններ» ընդհանուր խորագրի տակ հրատարկված հոդվածներից բերելով օրինակներ՝ բացատրում ենք, որ Չոպանյանը, երիտասարդ գրողներին կոչ անելով ուսումնասիրել «գավառական» բանաստեղծությունը, գտնել աղբյուրները և պարզել ժողովրդական կյանքի վրա ունեցած ազդեցությունը, զարգացնում էր մի տեսություն, որը հիմքում ծրագրային նշանակություն ուներ ընդհանրապես ազգային գրականության զարգացման համար և առնչվում էր 19-րդ դարի վերջին տասնամյակում արևմտահայ գրական կյանքում ծառայած մի այնպիսի կենսական խնդրի, ինչպիսին էր գրականության մեջ ազգային ոգու, ազգային ինքնությունության ու նկարագրի հայտնաբերումն ու հաստատումը:

Այստեղ պետք է ուսանողներին բացատրել, որ գավառական գրականության զարգացման, ինքնությունության մղման իր գաղափարներով Չոպանյանը հետապնդում էր ինչպես մշակութային, սոցիալական, այնպես էլ ակներևորեն քաղաքական նպատակներ. անհրաժեշտ էր ժողովրդի և նրա մտավորականության մեջ արմատավորել այն գիտակցությունը, թե ազգի գոյության գլխավոր երաշխիքը, նրա հոգևոր կյանքը սնուցող ամենակարևոր աղբյուրը սեփական հողն է, հայրենի բնաշխարհը՝ իր ժողովրդով, նրա կեցությամբ և վարք ու բարքով:

«Բանաստեղծական նոր սերնդի քննադատ-ուղեկիցը» թեման ուսուցանելիս նախ նշում ենք, որ 20-րդ դարի սկիզբը դարձավ ողջ հայ գրականության թերևս ամենաբեղուն շրջանը: Մեկը մյուսի հետևից ի հայտ եկան արևմտահայ և արևելահայ բազմաթիվ դասական գրողներ: Չոպանյանն իր գրական փորձառության, գեղագիտական ճաշակի ու հեղինակության շնորհիվ նկատում, գնահատում և խրախուսում էր մեծ գրականություն մուտք գործող մասնավորապես արևմտահայ տաղանդավոր գրողներին: Նկատել ենք տալիս, որ 20-րդ դարասկզբի արևմտահայ բանաստեղծության աննախադեպ ծաղկումը կանխորոշող համարյա բոլոր մեծ դեմքերը իրենց հենց առաջին ստեղծագործական քայլերից արժանացել են նրա ուշադրությանը: Նրանց նախափորձերի մեջ արդեն քննադատ Չոպանյանը կարողացել է հայտնաբերել մեծ տաղանդի նախադրյալները: Այդ տեսակետից առանձնացնում և ուսանողներին ուսումնասիրել ենք տալիս հատկապես Ա. Չոպանյանի՝ Վ. Թեքեյանի «Հոգեր», Միամանթոյի (Ա. Յարձանյան) «Դյուցազնորեն», «Հոգեվարքի և հույսի ջահեր» Դ. Վարուժանի «Մարտու-

ներ» գրքերի վերաբերյալ ուսումնասիրությունները: Համեմատություն ենք անցկացնում հետագա քննադատների, ինչպես, օրինակ, Հրանտ Թամրազյանի, Վազգեն Գաբրիելյանի, Գեղամ Սևանի՝ հիշյալ բանաստեղծներին նվիրված ուսումնասիրությունների և Չոպանյանի գրախոսականների միջև և ցույց տալիս, թե ինչպես մեր հետագա նշանավոր գրականագետները հաստատում և վկայակոչում են Չոպանյանի տված շատ գնահատականներ՝ զուգահեռաբար նրա ուսումնասիրություններից կատարելով անհրաժեշտ մեջբերումներ:

Այնուհետև բացատրում ենք, որ Չոպանյանը ոչ միայն առաջինը բացահայտեց հիշյալ արևմտահայ հեղինակների բանաստեղծական խառնվածքի ինքնատիպ կողմերը, այլև ամեն մի առանձին երևույթի գնահատմամբ զուգահեռաբար բարձրացրեց գրականության զարգացման հեռանկարներին վերաբերող այնպիսի խնդիրներ, որոնք կենսական նշանակություն ունեին ընթացիկ գրական կյանքում:

Այդ ուսումնասիրությունների շարքում ուսանողների ուշադրությունը առանձնապես բևեռում ենք Միամանթոյի բանաստեղծական ժողովածուներին վերաբերող հոդվածների վրա: Լսարանն արդեն գիտի, որ Միամանթոյի առաջին գրքերը իրենց պայքարի ու կռիվի առնական շնչով նոր էջ էին բացում արևմտահայ պոեզիայի մեջ՝ Ալիշանից ու Պեշիկշյանից հետո կրկին հնչեցնելով սուրբ ընդվզումի երգը: Նկատել ենք տալիս, որ Չոպանյանը առաջիններից էր, եթե ոչ առաջինը, որ անմիջապես նկատեց երիտասարդ բանաստեղծի գրական նորարարությունը և շտապեց ըստ արժանվույն գնահատելու այն: Տարբերվելով ժամանակի շատ գրախոսներից, որոնք, նկատի ունենալով միայն Միամանթոյի ոճական «տարօրինակությունները», փորձում էին գրողի ստեղծագործությունը ներկայացնել սոսկ որպես ֆրանսիական սիմվոլիզմի կույր հետևողություն՝ մերժողական այդ և նման տրամադրությունների ընդհանուր վարակի մեջ չտեսնելով անգամ գրողի բերած գաղափարների նորարարությունն ու կենսական ուժը, Չոպանյանը Միամանթոյի ստեղծագործության արժևորման չափանիշները փոխադրեց նոր՝ նախորդներից տարբեր հարթության վրա: Քննադատը շեշտը հատկապես դնում է գրողի այն գաղափարների վրա, որոնք նոր ուժով ու բովանդակությամբ էին հնչեցնում անձնագոհության, վրիժառության, ազատագրական պայքարի թեման, որը և իրականում կազմում է բանաստեղծի ստեղծագործության գնահատման գլխավոր առանցքը: Այդ կերպ Չոպանյանը ի հայտ է բերում գրականագիտական խորաթափանցություն, գլխավորը երկրորդականից տարբերակելու նուրբ զգացողություն:

“Ա. Չոպանյանը հայության երկու հատվածների հոգևոր մերձեցման կամուրջ» թեմայի ուսուցումը կատարում ենք՝ նախ ասելով, որ մեր ազգային ճակատագրի համար բախտորոշ իրադարձություններից հետո Չոպանյանը միասնության մեջ դիտեց ու գնահատեց Խորհրդային Հայաստանի ու Սփյուռքի գոյությունը՝ որպես մեր ժողովրդի տարբեր հատվածների նորօրյա իրողություններ: Այնուհետև բացատրում ենք, թե ինչպես, ելնելով պատմական ներկա կացությունից, նա ծրագրեր էր մշակում ազգային գրական կյանքի կազմակերպման ու զարգացման համար, առանձնացնում էր այն որոշակի նախադրայիները, որոնց ակտիվացումը խորհրդահայ ու սփյուռքահայ գրականություններին երկուստեք հնարավորություն կտար ավելի զորեղ և կատարյալ դառնալու՝ միաժամանակ ապահո-

վելով նրանց արագ միավորումը: Երկու գրականությունների համադրամբ, բայց ոչ երբեք, գրականագետի խոստովանությամբ՝ հակադրամբ, բացահայտվում են նրանց զարգացման տվյալ պահի առավելություններն ու թերությունները, ընդգրկումները, որոնց իմացությունը խիստ անհրաժեշտ է ուսանողներին՝ երկու հատվածների գրական արժեքների գնահատման համար:

Այնուհետև բացատրում ենք, որ ազգային գրականության մեջ առանցքային տեղը Չոպանյանը հատկացնում է բուն հայրենիքում ստեղծվող գրականությամբ՝ համոզված, որ արտասահմանում ստեղծվող գրական գործերը չեն կարող ունենալ հայրենի հողի հետ անմիջականորեն կապված գրականության կենսունակությունը և նրա՝ ազգի ներկա պատմական պահի հոգեբանության ուղղակի արտացոլման հնարավորությունը: Անշուշտ, սա չի նշանակում, թե Չոպանյանը Մփյուռքի գրականությունը զուրկ է համարում ազգային բովանդակությունից: Ավելին, նա նկատում է, որ ազգային կյանքի հետ անմիջականորեն առնչվող շատ կարևոր և անհրաժեշտ հարցերի արծարծման մենաշնորհը ներկա պահին վերապահված է միայն սփյուռքահայ գրականությանը: Դրանք եղեռնի, պապենական հողի կորստյան ցավագին հիշատակների, արդարության ապագա հաղթանակի նկատմամբ անդրդվելի հավատի թեմաներն էին, որոնք հասկանալի պատճառներով չէին կարող բարձրացվել Խորհրդային Հայաստանում: Չոպանյանը Մփյուռքի գրականության համար կենսական անհրաժեշտություն է համարում նաև արևմտահայ գրական ավանդույթների պահպանումն ու զարգացումը, արևմտահայ լեզվի կենսունակության ապահովումը:

Այնուհետև թեմայի ուսուցումը կատարում ենք հետևյալ բովանդակությամբ. 1) «Համաստեղը և գյուղը հայ գրականության մեջ» հոդվածը. հայ գյուղագրության ավանդներին հավատարիմ մնալու և նոր ժամանակներում, նոր կացության մեջ դրանք զարգացնելու մղումները: 2) Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպը. օտար, անհարազատ միջավայրի մեջ ընկած հայի՝ բարոյապես կործանվող կամ լավագույն դեպքում ֆիզիկական քայքայման հասած, ազգային դիմագիծը կորցնող կերպարների փոխարեն գորեղ, իրենց ազգի պահպանման, իրենց ցեղի վարկի համար պայքարող հպարտ հերոսների ստեղծման պահանջ: 3) Խորհրդահայ գրականության գնահատում. Եղիշե Չարենց, Վահան Տերյան, Վաղարշակ Նորենց, Ալազան, Մկրտիչ Արմեն, Ակսել Բակունց, Հովհաննես Շիրազ. զգուշացում հանուն նորության դասական, ազգային ավանդներից հրաժարվելու համար, գաղափարական միտումնավորության և քարոզչականության քննադատում:

Խիստ հետաքրքրություն ներկայացնող այս նյութերի ուսուցումը կատարում ենք գրապատմական մոտեցումով, պատմության և արվեստի փիլիսոփայության քննարկումներով:

Որպես ամփոփում՝ գնահատում ենք Արշակ Չոպանյանի գրաքննադատական գործունեությունն ու ժառանգությունը:

Вачаган Авагян - „Изучение курса „Критические взгляды Аршака Чопаняна“. - В статье обосновывается необходимость изучения критических взглядов Аршака Чопаняна, кратко излагается содержание курса, план формирования и проведения курса, круг поставленных вопросов.

Vachagan Avagyan - "Training Course of "Arshak Chopanyan's Critical Views". -
In the article it is substantiated the teaching necessity of Arshak Chopanyan's critical views: in brief the content of the course, the draft of organizing and conducting the course, the framework of inquiries are presented.

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ «ՎԻԿՏՈՐ
ՀՅՈՒԳՈՅԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ»
ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ**

ՆՈՒՆԵ ԴԱՎԹՅԱՆ

Մշակույթի և տեխնոլոգիայի առաջընթացին զուգընթաց զարգանում ու կատարելագործվում են ուսուցման մեթոդները: Վերակառուցումը կապված է ուսուցման բովանդակության արդիականացման պահանջի հետ, որը իր հետ բերում է ուսուցման ձևերի ու մեթոդների փոփոխում: Դասավանդման համար անհրաժեշտ է ոչ միայն առարկայի խոր իմացություն, այլ նաև նյութը հեշտ ընկալելի դարձնելու համար տարբեր հնարների, միջոցների կիրառություն: Նորարարությունը պահանջում է ուսուցման նոր մեթոդներ կիրառել, որոնցով էլ առաջնորդվում ենք մեծ ժողովրդասեր, հումանիստ, արդարության ջատագով Վ. Հյուգոյի կյանքն ու գործն ուսուցանելիս:

Բանալի բաներ. Վիկտոր Հյուգո, Մեթոդ Ուսուցում, Իմացություն, Գիտություն

Կյանքի, գիտության, մշակույթի զարգացմանը զուգընթաց ուսուցման մեթոդները ևս անընդհատ զարգանում ու կատարելագործվում են: Առաջադրվող վերակառուցումը հիմնականում կապված է ուսուցման բովանդակության արդիականացման պահանջի կենսագործման հետ, որը իր հետ բերում է ուսուցման ձևերի ու մեթոդների փոփոխում:

Թեմայի հաջող ուսուցման գրավականներից է նրա մուտքը: Առաջին հերթին սա ավելի ընդգրկուն է՝ թե՛ սովորողների, թե՛ ժամկետների առումով, ինչպես նաև ավելի հոգեհարազատ է ու հետաքրքիր, ստեղծագործելու և տարածվելու ավելի լայն ասպարեզ է բացում: Նախագծով աշխատելը բավական բարդ, բայց նաև հետաքրքիր և արդյունավետ գործընթաց է: Հետաքրքիր է նրանով, որ սովորողները, ինչու չէ՛ նաև դասավանդողը, կենտրոնանալով մի որևէ բնագավառի, կոնկրետ դեպքում՝ գրողի կյանքի և ստեղծագործության վրա, սկսում են բազմակողմանի և խորքային ուսումնասիրություն կատարել: Արդյունավետ է, որովհետև միևնույն թեմային բազմիցս անդրադառնալու արդյունքում մեծանում է որևէ նոր ու հետաքրքիր բացահայտում անելու հնարավորությունը: Իսկ թեման ժամանակային առումով այդպիսի հնարավորություն տալիս է: Վիկտոր Հյուգոն, Ֆրանսիայում որպես բանաստեղծ, սակայն ամբողջ աշխարհում որպես վիպասան, հիշարժան շատ տվյալներ ունի, որոնք հնարավորություն են տալիս մուտքի դասը հետաքրքիր ու նպատակային կազմակերպել:

Արդյունավերտ դասավանդման համար անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլ նաև նյութը հեշտ ընկալելի դարձնելու համար տարբեր մեթոդների, հնարների, միջոցների ու վարժությունների կիրառություն: Քանի որ ինքը դասընթացը բավականին տարրաբնույթ ու բազմատարր է, ապա այն ուսուցանելու համար կարելի է դիմել բազմաթիվ մեթոդների՝ անհրաժեշտ արդյունքին հասնելու համար: Խթանման փուլի հիմնական նպատակներից են՝ Նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորող-

ների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել ուսանողին, ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում: Որոշ մեթոդներ կիրառվում են դասի խթանման փուլում՝ Մտագրոհ, խմբավորում: Իմաստի ընկալման փուլի նպատակներից են՝ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը: Իհարկե, մեթոդներ կիրառվում են դասի իմաստի ընկալման փուլում՝ գաղափարների քարտեզ, ֆիլմի ցուցադրություն: Կշռադատման փուլի նպատակներից է այն, որ ուսանողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքներ միաձուլի ունեցածին և դրանք հասցնի աստիճանական ինտեգրացման: Ի վերջո, մեթոդներ, որոնք հարմար են կիրառելու դասի կշռադատման փուլում՝ քառաբաժան, խորանարդում:

Հյուզոյի կենսագրության ուսուցման արդյունավետ միջոց է նրան ներկայացնել որպես ռոմանտիզմի խոշոր դեմք, ով մուտք է գործել գրականություն որպես դեմոկրատ և հումանիստ, բարու և արդարության ջատագով, ճնշվածների պաշտպան:

Ցանկացած բնույթի ուսումնական գործընթացի հիմնական նպատակներից մեկը սովորողների մեջ այնպիսի հոգեվիճակի ստեղծումն է, որոնք կապահովեն նոր ու կայուն որակների ձևավորումը և դրանց կիրառումը տարբեր ոլորտներում: Վիկտոր Հյուզոն եղել է երեք եղբայրներից կրտսերը: Գրողի հայրը Ժոզեֆ Լեոպոլդ Սիգիսմունդ Հյուզոն (1773—1828 թթ.), նապոլեոնյան բանակի գեներալ էր, իսկ մայրը Սոֆի Թդեբյուշեն՝ դաշնակահարուհի: Հյուզոյի վաղ մանկությունն անցել է Մարսելում, Կորսիկայում, Իտալիայում (1807 թ.), Մադրիդում (1811 թ.), ուր ընտանիքը տեղափոխվում էր հոր աշխատանքի բերումով և կրկին վերադառնում Փարիզ: Ճանապարհորդությունները խորը տպավորություններ են թողել գրողի հոգում, որոնք էլ արտահայտվեցին իր ստեղծագործություններում: 1813 թ.-ին Հյուզոյի մայրը՝ Սոֆի Թդեբյուշեն, սիրային կապ ունենալով գեներալ Լագորիի հետ, ամուսնալուծվում է և որդու հետ հաստատվում Փարիզում: 1814-1818 թթ. Հյուզոն սովորել է Լյուդովիկոս Մեծի անվան լիցեոն: 14 տարեկան հասակում նա սկսում է իր գրական գործունեությունը: Գրում է իր չտպագրված ողբերգությունները՝ «Athelie ou les scandinaves» և մորը նվիրված «Yrtatine» ողբերգությունները, և «Louis de Castro» դրաման: 15 տարեկան հասակում Ակադեմիայի մրցույթում արժանանում է պատվավոր մեկնաբանությանը «Les avantages des études» բանաստեղծության համար, իսկ 1819 թ.-ին «Jeux Floraux» մրցույթում «Vierges de Verdun» և «Rétablissement de la statue de Henri III» պոեմների համար ստանում է երկու մրցանակ: 1822 թ. հոկտեմբերին Հյուզոն ամուսնանում է Ադել Ֆուսեի հետ (1803—1868 թթ.): Նրանք ունենում են հինգ երեխաներ՝ Լեոպոլդ (1823—1823 թթ.) Լեոպոլդինա (1824—1843 թթ.) Շառլ (1826—1871 թթ.) Ֆրանսուա-Վիկտոր (1828—1873 թթ.) Ադել (1830—1915 թթ.)

Մուտքի դասահատվածում գերադասելի է խոսել նաև այն ազդեցությունների մասին, որ մեծ դեր են խաղացել նրա անհատականության ձևավորման գործում: Օգտագործվում են նաև ժամանակակիցների հուշերը, մեծությունների բնութագրումները և գնահատականները գրողին:

1823 թ.-ին տպագրվում է «Իսլանդացի Հանը» (Han d'Islande) վեպը: Շառլ Նոդյեի հիմնավորված քննադատությունները հիմք հանդիսացան Հյուզոյի և Նոդյեի

յեի հետագա ընկերության համար, որը շարունակվեց մինչև 1827—1830 թթ.: Հենց այս ժամանակահատվածում Հյուգոն վերսկսում է իր հարաբերությունները հոր հետ և գրում է «Գովք հորս» (Odes à mon père, 1823 թ.), «Երկու կղզի» (1825 թ.) և «Պայքարից հետո» (Après la bataille) պոեմները: Հյուգոյի հայրը մահացավ 1828 թ.-ին: Հյուգոյի «Կրոմվել» (Cromwell) պիեսը, որը գրված է ֆրանսիական հեղափոխության հռչակավոր դերասան Ֆրանսուա-ժոզեֆ Տալմայի համար, տպագրվել է 1827 թ.-ին: Սակայն ստեղծագործությունը մեծ վեճեր առաջացրեց: Դրամայի նախերգանքում հեղինակը հերքում է կլասիցիզմի պայմանականությունները՝ հատկապես տեղի և ժամանակի միասնությունը՝ ներմուծելով ռոմանտիկ դրամայի նշույլներ: 1829 թ.-ին լույս են տեսնում «Մահվան դատապարտվածի վերջին օրը» (Dernier Jour d'un condamné), իսկ 1834 թ.-ին «Կլոդ Գյո» (Claude Gueux) ստեղծագործությունները: Այս երկու կարճ վեպերում Հյուգոն ներկայացնում է իր բացասական վերաբերմունքը մահապատժի նկատմամբ: «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպը տպագրվել է 1831 թ.-ին:

Հյուգոն մահացել է թոքերի բորբոքումից 1885 թ. մայիսի 22-ին 83 տարեկանում: Թաղման արարողությունը տևել է 10 օր: Մասնակցել է մոտ մեկ միլիոն մարդ: Թաղված է Պանթեոնում:

Այն, ինչ մեկ անգամ կյանքի է կոչվել, շարունակում է ապրել նաև ֆիզիկապես, քանի որ մահին է տրվում նրանց ֆիզիկական պատյանի վերջին հատվածը միայն: Այլապես ինչն*վ բացատրել այն հանգամանքը, որ Հյուգոյի գործի հետևորդներն ավելի հաճախ, ավելի իրական են հանդիպում, գրուցում նրա հետ, քան՝ շատերի, որոնք ֆիզիկապես ապրում են, բայց չկան ավելի, քան նա՝ Հյուգոն:

Հյուգոյի առաջին ստեղծագործությունները իրեն հաջողություն և հայտնություն 66 իր կյանքի առաջին տարիներին: Իր առաջին բանաստեղծական ժողովածուն՝ «Գովքեր և զանազան բանաստեղծություններ» (Odes et poésies diverses), տպագրվել է 1822 թ.-ին, երբ Հյուգոն 20 տարեկան էր: Լյուդովիկոս XVIII թագավորը գրողին տարեկան գումար էր տրամադրում: 1826 թ.-ին լույս տեսավ «Գովքեր և բալլադներ» ժողովածուն: Վիկտոր Հյուգոյի առաջին հասուն ստեղծագործությունը «Մահապատժի դատապարտվածի վերջին օրը» (Le Dernier Jour d'un condamné) երկն է, որը գրվել է 1829 թ.: «Կլոդ Գյո» (Claude Gueux)-ն կարճ, իրական հենք ունեցող վավերագրական պատմություն է մարդասպանի մասին, ով Ֆրանսիայում մահապատժի է ենթարկվել: Այն լույս է տեսել 1834 թ.: Սակայն Հյուգոյի առաջին լիարժեք վեպը համարվում է «Փարիզի Աստվածամոր տաճարը» (Notre-Dame de Paris), որը տպագրվել է 1831 թ.:

Նորարությունը դարի պահանջ է: Նորարարական մոտեցումներն այսօր բացում են զարգացման հեռանկարներ բոլոր բնագավառներում: Իսկ կրթական ոլորտը պետք է միշտ առաջատար դիրքերում լինի: Լիրիկական նախաբան կամ կինոպոեզիայի՝ իբրև հետազոտական-ուսումնական նախագծի ստեղծման նախադրյալներ են: Գրականությունը հենց գրական ստեղծագործությունն է: Գեղեցիկ ու գրագետ շարադրված կենսագրականը, դասագրքային գովեստի խոսքերն այս կամ այն գրական ստեղծագործության մասին չեն կարող համեմատվել ստեղծագործության ընթերցման հետ: Եվ գրականության դասն աշխատանք է հենց տեքստի հետ: Զարմանալի էներգետիկ դաշտ ունի յուրաքանչյուր լավ գրա-

կան ստեղծագործություն... Հետաքրքրություն կարելի է առաջացնել միայն խրմ-
բային-հետազոտական նախագծի միջոցով. նախագիծ, որը հնարավորություն
կտա օգտագործելու համակարգիչն ու թվային տեխնիկան: Կարողանան ուրա-
խանալ իրենց ստեղծածով, ոգևորվել և անընդհատ կատարելագործել իրենց աշ-
խատանքները՝ ստեղծելով նոր, ինքնատիպ ու որակապես ավելի լավ կինոպոե-
զիա:

Հյուզոն բազմաթիվ բանաստեղծությունների և պոեմների հեղինակ է:
Միայն իր կյանքի ընթացքում հրատարակվել է նրա չափածո ստեղծագործու-
թյունների 21 ժողովածու, իսկ մահից հետո ևս 8-ը:

Պոեզիայի զարգացման ուղու, շարժման և հայացքի ուղղության, նրան
սնող կենսական արմատների որոնման հարցերը միշտ էլ եղել են և մնում են
ուշադրության կենտրոնում: Երբեք և երբևիցե պոեզիան չի դոփել տեղում, կանգ
չի առել միննույն մակարդակի վրա և, ինչպես որ աշխարհում, Հերակլիտի խոս-
քերով ասած, «ամեն ինչ ընթանում, ամեն ինչ հոսում է»:¹

Աշխատանքի հաջորդ փուլը բանաստեղծության գեղարվեստական վերլու-
ծությունն է, ձևի և բովանդակության ներդաշնակության բացահայտումը: Հյուզոյի
բալլադները, նրանց խայտաբղետությունը և գեղատեսիլությունը, ազատ չափերն
ու ռիթմը, ապշեցուցիչ հանգերը, ձայնաներդաշնակությունը, բառապաշարի հան-
դուզն ազատությունը հավասար էին գրական հեղափոխության:

Կատարվում է բանաստեղծությունների վերլուծություն համադրման մե-
թոդով, որին հաջորդում է բանաստեղծությունների կառուցվածքային ուսումնա-
սիրություն, որի ընթացքում բացահայտվում է նաև հիմնական գաղափարը, նրա
նպատակաուղղվածությունը:

Ինքը՝ բանաստեղծը, հետագայում այսպես է գնահատում այդ տարիների
իր գործունեությունը.

Ես հեղափոխությունս ինքնական ուղղեցի
Ալեքսանդրյան ոտանավորի հոծ շարքերին,
Մեր գառամյալ բառագրքին կարմիր թասակ հագցրի
Չկան բառեր-ազնվածին և բառեր-պլեբեյներ:
«Պատասխան մեղադրանքին»

Բնագրի բովանդակության վերարտադրումը աշխատանքի հիմնական
ձևերից մեկն է: Չպետք է մոռանալ, որ միանգամայն այլ բան է, երբ պատմելը
դիտվում է որպես ուսուցման միջոց կամ ուսուցվածի ստուգման միջոց և բոլորո-
վին այլ, երբ այն դիտվում է որպես ուսուցման նպատակ:

«Արևելյան մեղեդիներում» միջնադարի տարաշխարհիկությանը փոխարի-
նում է ռոմանտիկական Արևելքի տարաշխարհիկությունը : Հյուզոյի ժողովա-
ծուում առաջնային տեղ են գրավում այն բանաստեղծությունները, որոնցում հե-
ղինակը գովերգում է թուրքական լծի դեմ ուղղված հունական ազատագրական
պատերազմները:

«Երեք փառահեղ օրերը» Հյուզոն դիմավորեց հիացմունքով:
Այո, մուսան պետք է որ նվիրի իրեն ժողովրդին,
Եվ մոռանում եմ ես սեր, ընտանիք, բնություն:

¹ Ն. Դավթյան, Պարույր Սևակի գրականագիտական հայացքները, Երևան, 2002, էջ 3:

Եվ հայտնվում է քնարի ամենագոր ու ահեղ
Պղնձյա շառաչուն լարը:
«Բարեկամներ, կասեմ ես երկու խոսք...»:

Հերոսի պրոբլեմը հիմնականում կապված է ժամանակի սոցիալ-քաղաքական իրադրության հետ: Իրականությունը վերարտադրելու համար անհրաժեշտ է գտնել ժամանակի էությունն ու ոգին իր մեջ խտացնող հերոսին, որի հայտնաբերումը չի սպառում ժամանակի համար կարևորություն ունեցող խնդիրները: Վ. Հյուգոյի բանաստեղծությունների հերոսներ են դառնում ժողովրդի ներկայացուցիչները, մարտերի հերոսները, աշխատավորներն ու մուրացիկները, երեխաներն ու կանայք: Համեմատելով բանաստեղծությունները՝ անհրաժեշտ է հիմնավորված ձևով ամփոփել գաղափարը՝ ժամանակի իրականության դեմ մեծ հոգու և մտքի տեր անհատի անհաշտ մարտահրավերները, տրամադրությունները:²

Կինոպոեզիան հնարավորություն է տալիս ոչ միայն հետաքրքիր և բովանդակային խմբային աշխատանք կազմակերպել, այլև ինքնադրսևորվել: Կինոպոեզիան դառնում է ստեղծագործական, որոնողական աշխատանք ոչ միայն սովորողների, այլ նաև ուսուցանողի համար: Հնարավորություն է տալիս ստեղծելու, մտածելու, փորձարկելու ու սովորելու: Կարողանում ենք գույն, ձայն, ձև տալ անոթսալիին, բերել, տեղավորել ժամանակի մեջ ու դարձնել մերը: Իհարկե, դժվար է նյութականացնել աննյութականը, բայց հետաքրքիր է ու գրավիչ...

Գաղափարի բացահայտումից և կառուցվածքային վերլուծությունից հետո կարելի է անցնել գրողի ռոմանտիկական դրամաներին:

Հյուգոյի դրամատուրգիան՝ ներծծված քաղաքական ազատամտությամբ և դեմոկրատականությամբ, աճել է Հուլիսյան հեղափոխության իրադարձությունների հողի վրա:

«Մարիոն դե Լորմ կամ մենամարտ Ռիշելյեի դարաշրջանում» (1829) դրաման, արգելվեց գրաքննության կողմից, որը տկարամիտ Լյուդովիկոս XIII կերպարում տեսավ այն տարիներին կառավարող Կարլ X-ին ուղղված ակնարկ: Դրաման բեմադրվեց 1831-ին, Բուրբոնների գահընկեցությունից հետո: Այս պատճառով ռոմանտիկական թատրոնի ձևավորման գործում վճռական դեր կատարեց երկրորդ դրաման՝ «Էրնանին», որի բեմադրությունը հեղափոխության նախօրեի շիկացած մթնոլորտում յուրօրինակ քաղաքացիական ցույց էր: Պիեռի առաջաբանում Հյուգոն ազդարարում է, որ իր «ռոմանտիզմը լիբերալիզմ է գրա-կանության ասպարեզում», իսկ դրամայում հասարակության կողմից մերժված մարդուն պատկերեց որպես ողբերգական հերոս և թագավորի ախոյան: Անհրաժեշտ է ընդգծել, որ կլասիկից դարավոր ավանդույթներով սրբագործված «Ֆրանսիական կոմեդիայի» բեմում այդպիսի պիեռի առկայությունը նշանակում էր գրական հարցերում հասարակական կարծիքին ուղղված մարտահրավեր: «Էրնանիի», առաջին բեմադրությունը վեր ածվեց դասականների և ռոմանտիկների միջև պայքարի, որն ավարտվեց ռոմանտիկների հաղթանակով:

Նոր գաղափարների գրոհի ներքո փլուզվեց հին դասական ձևը: Ինչպե՞ս կարելի է խոսել բարձր և ստորին ժանրերի բաժանման մասին, երբ թագավորը մրցում է «ավազակի» հետ, թագուհին պատասխանում է սպասավորի զգաց-

² Ն. Դավթյան, Պարույր Սևակի գրականագիտական հայացքները, Երևան, 2002, էջ 3:

մունքներին, իսկ խղճուկ խեղկատակը ոտնահարում է հզոր միապետի կարծեցյալ դիակը, եթե դրական հերոսը թշվառության³ հատակը նետված անձն է, իսկ բացասական հերոսները՝ ընչաքաղց ապաշնորհ մեծատոհմիկները և տխմար, դաժան ու անբարոյական թագավորները:

Պատմական այդ դիմակահանդեսը ոչ մեկին չէր կարող մոլորեցնել: Հյուզոյի ժամանակակիցները այդ դրաման անվանեցին «ժամանակակից», ի տարբերություն դասական ողբերգության: «Թագավորը զվարճանում է» պիեսը 1832-ի հունիսի 5-6-ին Փարիզի հանրապետական ապստամբության անմիջական արձագանքն էր: Այստեղ անհրաժեշտ է ուսանողների ուշադրությունը կենտրոնացնել հին դասական ձևերի և նորի, դասականների և ռոմանտիկների միջև ծագած պայքարի և հաղթանակի և մարտահրավերների մասին, քանի որ պատմության ռոմանտիկական իդեալի զգացումը, ինչպես նաև իդեալի և իրականության միջև գոյություն ունեցող հակասությունը յուրովի են բեկվում Հյուզոյի ստեղծագործության և աշխարհըմբռնման մեջ:

Քանի որ նյութի հաղորդման հիմնական միջոցներից մեկը հենց պատմելն է, հաճախ դրանով կարող է փակվել ինքնուրույն աշխատանքի ճանապարհը: Այդ բացը լրացվում է միայն նախապես հանձնարարված ընթերցանության շնորհիվ:

Հուլիսյան հեղափոխություն (1830), հեղափոխություն Ֆրանսիայում, որը տապալեց Բուրբոնների միապետությունը, սկսվել է հուլիսի 27-ին, Փարիզում: Անմիջական առիթ է ծառայել հուլիսի 25-ին Կարլոս X թագավորի դեպուտատների պալատը ցրելու, ընտրական իրավունքը հողային ցենզով սահմանափակելու, առաջադիմական մամուլի նկատմամբ հետապնդումները խստացնելու մասին հրամանների ստորագրումը: Փարիզում (հուլիսի 27-ին) բռնկվեց զինված ապստամբություն, որի գլխավոր շարժիչ ուժն էին բանվորներն ու արհեստավորները և նրանց աջակցող մանր ու միջին բուրժուական տարրերը, որոշ առաջադեմ մտավորականներ: Ապստամբները, որոնք հանդես էին գալիս ի պաշտպանություն 1814-ի սահմանադրության և ընդդեմ Պոլինյակի հետադեմ կառավարության, հուլիսի 29-ին գրավեցին Թյուլիլրին և կառավարական այլ շենքեր: Կարլոս X հրաժարվեց գահից և փախավ Անգլիա: Հեղափոխությունը հաղթեց: Օգտվելով բանվոր դասակարգի անկազմակերպվածությունից և անփորձությունից, մանր բուրժուական դեմոկրատիայի թուլությունից բուրժուական վերնախավը իր ձեռքը վերցրեց իշխանությունը և դեպուտատների պալատում, չնայած հանրապետականների ընդդիմությանը, որոշեց թագը հանձնել Լուի Ֆիլիպ Օռլեանցուն, որը օգոստոսի 7-ին հռչակվեց «ֆրանսիացիների թագավոր»: Հուլիսյան հեղափոխությամբ Ֆրանսիայում հաստատվեց բուրժուական միապետություն: Չնայած ժողովրդական զանգվածների հեղափոխական ակտիվությանը, նրանք չկարողացան ձեռք բերել դեմոկրատական ազատություններ, քաղաքական իրավահավասարություն և այլն: Սակայն Հուլիսյան հեղափոխությունը ունեցավ առաջադիմական նշանակություն, քանի որ վերջ տվեց ազնվականության քաղաքական տիրապետությանն ու ֆեոդալական-միապետական կարգերը վերականգնելու

³ XIX դարի Արտասահմանյան գրականություն, Երևան, 1980, էջ 135-136:

բոլոր փորձերին: Մեծ էր Հուլիսյան հեղափոխության միջազգային նշանակությունը, այն հարված հասցրեց Սրբազան դաշինք-ի հետադեմ համակարգին, նպաստեց ազգային-ազատագրական շարժման վերելքին Եվրոպայում⁴:

Հուլիսյան հեղափոխության նախօրեին Հյուգոն ձեռնամուխ եղավ «Փարիզի աստվածամոր տաճարը» վեպի ստեղծմանը: Գիրքը լույս տեսավ 1831-ի մարտին: Վեպում մենք տեսնում ենք ճնշողների աշխարհ՝ նաև թագավորի ապարանք Բաստիլը, Գոնդեվորյե ազնվական տունը և մինևույն ժամանակ փարիզյան հրապարակները, «հրաշքների բակի» ետնախորշերը, որտեղ բնակվում են թշվառները:

Վեպի կենտրոնը ֆրանսիական ժողովրդի հոգևոր կյանքի խորհրդանիշ՝ Փարիզի աստվածամոր տաճարն է, կառուցված հարյուրավոր անհայտ վարպետների կողմից: Նրա կրոնական հենքը անհետանում է ժողովրդական բուռն երևակայության ներքո: Տաճարի նկարագրությունը ֆրանսիական ազգային ճարտարապետության ոգեշունչ մի պոեմ է: Հյուգոյի սահմանմամբ՝ գոթական եկեղեցիները «միջնադարի քարե գրքերն են»: Նրանց արձաններով, հարթաքանդակներով անգրագետ մարդիկ կարդում էին Սուրբ գիրքը: Եկեղեցիները այլևս անհրաժեշտ չեն լինի, երբ տարածվի լուսավորությունը. տպագիր գիրքը կհաղթի կրոնական գիտակցությանը: Տաճարը օթևան է տալիս Հյուգոյի ժողովրդական հերոսներին, նրա հետ է սերտորեն կապված նրանց ճակատագիրը, տաճարի շուրջն է համախմբվում կենդանի պայքարող ժողովուրդը:

Սրա հետ միասին տաճարը ժողովրդի ճնշման, ֆեոդալական լծի, սնահավատության և նախապաշարումների խորհրդանիշ է, գերության մեջ է պահում մարդկանց ոգին: Պատահական չէ, որ տաճարի խավարում, նրա կամարների ներքո, ձուլված մտահնար Քիմեոների ու զանգերի դողանջին, միայնության մեջ ապրում է Քվազիմոդոն՝ «տաճարի ոգին», որի գրոտեսկային կերպարում անձնավորված է միջնադարը: Ի տարբերություն Քվազիմոդոյի, Էսմերալդայի կերպարը իր մեջ մարմնավորում է հողեղեն կյանքի գեղեցկությունը և խինդը, մարմնի և ոգու ներդաշնակությունը, այսինքն՝ վերածննդի դարաշրջանի կատարելատիպը որ գալիս է փոխարինելու միջնադարին: Պարուհի Էսմերալդան ապրում է փարիզյան ամբոխի⁵ միջավայրում, մարդկանց պարզում իր արվեստը, խինդն ու բարությունը:

«Թշվառներ» (1862) վեպին Հյուգոն նվիրեց աշխատանքի երեսուն տարիներ: Վեպը մտահղացվել է դեռևս 1840-ական թվականներին, և դրա առաջին տարբերակն իր կենտրոնում ունեցել է եպիսկոպոս Միքիելի բարոյախոսական պատմությունը: Վեպին անդրադառնալով տարագրության տարիներին, հանուն ճնշված ժողովուրդների ազատագրված մղված ակտիվ պայքարի տարիներին, գրողն իր ստեղծագործության մեջ մտցրել է 1832թ. փարիզյան բարիկադների նկարագրությունը:

«Թշվառները» կյանքի պրոբլեմների ընդգրկումով և սոցիալական քննադատության թափով գրողի ամենանշանավոր վեպ-էպոպեան է, որտեղ տրված է

⁴ XIX դարի Արտասահմանյան գրականություն, Երևան, 1980, էջ 135-136:

⁵ *С.Брахман* "Виктор Гюго-наш современник", М., 1979г.

ժողովրդական կյանքի ողջ պատկերը: Գրքի մտահաղացումը՝ ժողովրդի զանգվածների ճակատագիրը, որոնց բուրժուական հասարակության անհեթեթ կառուցվածքը դարձել էր «Թշվառներ»:

Վեպի սյուժեի ուրվագծերը ի հայտ են գալիս հեղինակի բազմաժանր երկերում: Բայց «Թշվառներում» է միայն ժողովրդական կյանքը պատկերված ռոմանտիկական այլաբանություններից գերծ: Հյուգոն միջնադարյան տաճարներից, իսպանական դրամաներից կյանքը համարձակորեն տեղափոխում է Փարիզ, առաջադրում սոցիալական հարցեր, ցուցադրում տիպական ճակատագրեր և բնավորություններ, հասարակ մարդկանց ու բուրժուազիայի կենցաղը, փարիզյան հետնախորշերի կյանքը, մի կտոր հացի համար աղքատ մարդու պայքարը, թշնամանքը բուրժուազիայի և բանվորների միջև, ժողովրդական ապստամբությունը:

Հյուգոն իր «Թշվառները» գրել է ի պաշտպանություն ժողովրդի: Այդ մասին նա հայտարարում է վեպի ներածականում. «Այնքան ժամանակ, ինչքան օրենքների ու բարքերի հիման վրա գոյություն կունենա սոցիալական այն դատապարտությունը, որ ներկա քաղաքակրթության մեջ դժոխքներ է ստեղծում և մարդկությանը շեղում է իր գեղեցիկ ճանապարհից, այնքան ժամանակ, ինչքան չեն լուծվել մեր դարի երեք պրոբլեմները՝ մարդու նվաստացումը պրոլետար դառնալով, կնոջ անկումը քաղցի պատճառով, երեխայի հյուծումը սոցիալության պատճառով, այնքան ժամանակ, ինչքան որոշ շերտերում սոցիալական շնչահեղձությունը հնարավոր կլինի,՝ այլ խոսքով և ավելի լայն տեսակետով՝ ինչքան որ երկրի վրա գոյություն կունենան սոցիալությունն ու թշվառությունը՝ այս տեսակ գրքերը չեն կարող անօգուտ լինել»:

Պատմական կարևոր իրադարձությունների ֆոնին, ինչպիսիք են Վաթեռլոյի աղետը, Ռեստավրացիայի վախճանը, 1830-ական և 1848 թվականների հեղափոխական մարտերը, «Թշվառների» հեղինակը պատկերում է աղքատների ճակատագիրը, նրանց վիճակը, որը հավասարապես դժբախտ էր թե՛ Նապոլեոնի դիկտատուրայի, թե՛ Բուրբոնների և թե՛ Հուլիսյան միապետության օրոք:

Սկզբնական դիտավորության համաձայն, գրքի երեք հերոսների՝ Ժան Վալժանի, Ֆանտինի, Կոզետի ճակատագրի օրինակով պետք է բացահայտվեին բուրժուական հասարակության երեք անլուծելի պրոբլեմները՝ գործազրկությունը, պոռնկությունը, անապաստանությունը: Կոչելով իր տաղանդի ողջ ուժն ու սերը առ մարդը, Հյուգոն ձգտում է իր հերոսների կյանքի աղետալի պատմության շարադրանքով ցնցել ընթերցողներին: Հիմա էլ անհնար է անտարբեր ընթերցել «հասարակության կողմից հետապնդվող բարի, դժբախտ զազանի» (Ա. Հերցեն) Ժան Վալժանի, Ֆանտինի՝ անարգված սիրտ, ողբերգական մայրության և բանտի հիվանդանոցում նրա մահվան պատմությունը: Գործազուրկ աշխատավոր Ժան Վալժան, որին ողջ կյանքում հետապնդում են այն բանի համար, որ նա ստիպված է եղել հաց գողանալ իր սոված ընտանիքի համար, աշխատավորուհի Ֆանտին, որը հարկադրված էր վաճառել մագերը, ատամները, իսկ ապա նաև մարմինը՝ իր երեխային կերակրելու համար, որբուկ Կոզետ, որը մանուկ հասակից դարձել է պանդոկապան Թենարդիեի ստրկուհին, անապաստան մանչուկ Գավրոշ, որը փողոցում է ապրուստ ու օթևան հայթայթում և զոհվում 1832թ բարիկադի վրա՝ այս բոլոր կերպարները և ժողովրդի ծո-

ցից ելած մարդկանց ողբերգական ճակատագրերն ասեղ մեղադրանք են, որ Հյուգոն նետում է իր ժամանակի սոցիալական հասարակարգի երեսին:

Գրողը բուրժուական օրինականությունը մերկացնում է ոստիկանանան խուզարկու ժավերի՝ այդ «շղթայակապ շան» կերպարում, որը կանգնած է բուրժուական սեփականության ու բարոյականության պահպանության դիրքերում և հանդիսանում է Վալժանի հետապնդողը ու Ֆանտինի դահիճը: Մնանկացած պանդոկապան, արկածախնդիր ու ավազակ Թենարդիեի կերպարով գրողը պատկերում է բուրժուական աշխարհի «հերոսներին» հատուկ՝ իր համար ատելի ընչաքաղցության և դաժանության գծերը: Դաժան ճշմարտությամբ են շնչում վեպի այն էջերը, որտեղ պատկերված է Թենարդիայի տունը և փոքրիկ Կոզետի «տնային անգութ ստրկությունը», որին «ասի դարձել է ստախոս, իսկ չքավորությունը՝ այլանդակ»: Հյուգոյի մեթոդին հատուկ առանձնահատկությունները՝ կերպարների խիստ հակադիր պատկերումը, խտացած գույները, որոնց դիմում է գրողը՝ պատկերելով ինչպես բուրժուական, այնպես էլ թշվառների աշխարհի ներկայացուցիչներին, ամենին էլ չեն հակասում կյանքի ճշմարտությանը, դրանք միայն երանգավորում են հակասությունները, առավել ցայտուն դարձնում ժամանակաշրջանի հիմնական կոնֆլիկտը՝ աղքատության ու հարստության, չքավորի բնական բարոյականության և սեփականատեր-բուրժուայի եսապաշտական բարոյականության միջև եղած աճող հակադրությունը:

Այս հերոսների շուրջը համախմբված է մարդկանց հոծ ամբոխ՝ անօթևան ծերեր, քաղցած դեռահասներ, մոայլ հետնախորշերի բնակիչներ, գողեր, - որոնց հեղինակը անվանում է «Թշվառներ»: Ինչպե՞ս օգնել այդ մարդկանց, ինչպե՞ս թեթևացնել նրանց վիճակը: Հենց այս հարցին է ձգտում պատասխանել Հյուգոն: Նա իր առջև դրել է կրկնակի նպատակ՝ դատապարտել սոցիալական չարիքը և այն հաղթահարելու ուղիներ գտնել: «Թշվառների» ներածականի տարբերակներից մեկում Հյուգոն գրել է. «Այն հասարակարգը, որ չի ցանկանում իրեն քննադատել, նման է հիվանդի, որ թույլ չի տալիս իրեն բուժել»: Ուտոպիստ-սոցիալիստների նման նա ևս ձգտում էր բուրժուական հասարակությունը ապաքինելու դեղատոմս գտնել: Հյուգոն իր գիրքը դիտում էր ապագայի համար պայքարի գործուն գենք, նա իր վեպը անվանել է մինչև անգամ «Ժամանակակից ավետարան»:

Կոնկրետ կենսական հարցերը, մարդկանց կենդանի կերպարները, գրավիչ սյուժեն նրա վեպերի միայն մեկ յուրահատկությունն են: Ինչպես նրա պոեզիայում, այս ամենի ետևում էլ կանգնած են ժողովրդի ճակատագիրը, մարդկության հարցը, բարոյափիլիսոփայակն պրոբլեմները, կեցության ընդհանուր հարցերը: Եվ եթե «Թշվառներում» չենք տեսնում Բալզակին հատուկ սոցիալական անողոք վերլուծությունը և հանճարեղ խորաթափանցությունը, ապա Հյուգոյի վեպի անկրկնելի յուրօրինակությունը նրա էպիկական վեստիությունն ու կրակոտ մարդասիրությունն են, որ վեպի բոլոր էջերը գունավորում են քնարական հուզականությամբ, յուրաքանչյուր կերպարին օժտում նշանակալիությամբ և ժողովրդական կյանքի պատկերը բարձրացնում ռոմանտիկական բարձունքների:

Հասարակության «վատ կառուցվածքը» Հյուգոն դատապարտում է իր վեպի առաջին տողից մինչև վերջինը: Աշխարհը, որ կառուցված է այնպիսի մարդկանց կարիքի ու դժբախտության վրա, ինչպիսիք են Ժան Վալժանը և Ֆանտինը, հար-

կավոր է արմատապես վերակառուցել, վերափոխել: Այսպիսին է այն բնական եզրակացությունը, որին հանդիպում է ընթերցողը:

Վեպի մյուս գիծը, որն իր յուրահատուկ տեղն է զբաղեցնում «Թշվառների» էջերում, ակտիվ բողոքի գիծն է, պայքարի ու հեղափոխության գիծը, որը հեղինակը բանաստեղծականացրել է հեղափոխական Անժոլրասի և փոքրիկ Գավրոշի կերպարներում:

ԻՆչպիսի՞ն են աշխարհի վերակառուցման ուղիները: Այս հարցի մեջ են սկսում դրսևորվել գրողի գաղափարական խոր հակասությունները: Երկու ուղիները ակնհայտ մարմնավորված են Հյուգոյի դրական կերպարների երկու տիպի մեջ: Մի կողմից, դա իդեալական քրիստոնեական արդարակյաց մարդն է՝ եպիսկոպոս Միրիելը, մյուս կողմից, 1793թվականի հին յակոբինյանը: Հյուգոյի համակրանքը կարծես թե տատանվում է այս երկու խառնվածքների միջև:

Մի կողմից, իրականության դասերը նրան հանգեցնում են հեղափոխական եզրակացությունների, նրան մղում ստեղծելու ավելի ակտիվ հեղափոխական հերոսների կերպարներ, իսկ մյուս կողմից, դասակարգային պայքարի օրենքները չիմանալը, ուտոպիկ սոցիալիզմի գաղափարները, որն այլասերվել էր օպորտունիստական գաղափարախոսության, շարունակում են ազդել Հյուգոյի վրա և նա փորձում է իր վեպով ապացուցելու, որ մարդու բարոյական ինքնակատարելագործումը միայն իր բարերար օրինակով կարող է աշխարհի փրկության միջոց հանդիսանալ:

Ժողովրդական ճշմարտության բարձր բարոյական, բայց պասիվ ազդարար Ժան Վալժանը և հեղափոխական Անժոլրասը հանդիպում են 1832թ հունիսյան ապստամբության պահին, բայց իրենց պահում էին միանգամայն տարբեր ձևով: Անժոլրասը գլխավորում է բարիկադային կռիվը, իսկ Վալժանը թեև հայտնվում է նույն բարիկադի վրա, բայց չի կրակում, այլ միայն պաշտպանում է մարտնչողներին. իր ձեռքում է պահում մշտապես իրեն հետապնդող Ժավերին, որը ոստիկանական լրտես է: Վալժանը չի սպանում նրան, այլ ազատ է թողնում՝ շարունակելով հավատալ, որ բարությանը պետք է ներգործել անուղղելի սրիկայի հոգու վրա:

Հյուգոն ոչ միայն Անժոլրասի բերանն է դրել հեղափոխության ոգեշունչ գովաբանությունը, այլև ցույց է տվել, որ իսկական հեղափոխականի հերոսական անձնավորությունն անխզելիորեն կապված է ժողովրդի հետ, որի անունից նա խոսում է և որին պայքարի է հանում իր կրակոտ ճառերով: Վեպում ցույց է տրված 1832 թ. հանրապետական ապստամբությունում հանդես եկած հեղափոխական այդ զանգվածը. հանրապետական գաղտնի ընկերության ուսանողները, ընկերություն, որին են պատկանում Անժոլրասը և նրա ընկերները, բլուզավոր բանվորները՝ պատկերված թռուցիկ, բայց համակրանքով լի բառերով:

Հրաշալի է փարիզյան գամեն Գավրոշի կերպարը: Գավրոշը Փարիզի իսկական զավակն է՝ ազգային կենսուրախ բնավորության բոլոր գծերով և փողոցի մանչուկի բոլոր արարքներով: ՌԻ-րախ, երբեք չվիատվող, սուր լեզվի տեր Գավրոշը, լինելով քաջարի մարտիկ և բարի ընկեր, ջերմ սրտի ամբողջ ուժով ատում է կուշտ կերած բուրժուազիային: «Ինչքան ճարպակալած են՝ այդ ունայեները: ՌԻ-տում են, հա ուտում: Մինչև վերջ լցնում են իրենց որկորը: Հապա մի հարցրեք նրանց, թե ինչ են անում իրենց փողերը...Նրանք դրանք խժռում են,

ահա թե ինչ: Խժռում են, որքան տեղավորում է իրենց որովայնը»,- արհամարանքով ասում է նա հաստափոր տան տերերի ետևից: «Դիմացեք, բուրժուաներ, դուք դեռ կփռոշտաք իմ բոցաշունչ երգերից»,-բացականչում է ուղևորվելով դեպի բարիկադ:

Փոքրիկ Գավրոշն ապստամբ Փարիզի բարիկադի վրա իրեն զգում է ինչպես ձուկը ջրում: Նա «դրա հոգին է»: Դա «ասես մրրիկ լինի,-նրա մասին ասում է գրողը՝ ցույց տալով, թե ինչպես մանչուկը մինչև իր կյանքի վերջին պահը կատակներով և ուրախ երգերով քաջալերում էր մարտիկներին,օգնում բարիկադ կառուցել և համառորեն իր համար հրացան էր պահանջում: «Հսկայական բարիկադը նրան զգում էր իր կատարին: Նա կայչում էր անբաններին, խրախուսում ծուլերին, աշխուժացնում հոգնածներին, հանդիմանում դանդաղկոտներին, ուրախացնում ոմանց, ոգեշնչում մյուսներին, բարկացնում երրորդներին»: Եվ կյանքի իսկական ճշմարիտ պատկերման ուժը՝ կենտրոնացված Գավրոշի կերպարում, այնպիսին է, որ հենց այստեղ է, որ ժամանակի գրողը, որը սովորաբար հակված է մի քիչ իդեալականորեն պատկերելու հեղափոխությունը, հանգում է դրա իսկական պատճառների միանգամայն մատերիալիստական սահմանը... արդյոք ք նա դրա համար որևէ դրդապատճառ ուներ: Այո, անշուշտ՝ նրա աղքատությունը»,- ասում է նա ապստամբությանը Գավրոշի մասնակցության մասին:

Գավրոշի մահը բարիկադի վրա, նրա հերոսական մահը՝ ուրախ երգը շուրթերին և փանփուշտներով լի պայուսակով, որ նա հավաքել էր մարտադաշտում բարիկադի իր ընկերների համար, ամբողջ համաշխարհային գրական-նություն լավագույն տեսարաններից է: Փոքրիկ Գավրոշի կերպարը Հյուգոյի ստեղծագործական երևակայության առավել ռեալիստական և միաժամանակ առավել վեհ ու հուզիչ ստեղծագործությունն է:

«Թշվառներ» վեպը, հատկապես Գավրոշի կերպարը, մոտիկ ու թանկ է դարձել ֆրանսիական ժողովրդին: Հյուգոյի «Թշվառներով», իր իսկ խոստովանությամբ, դաստիարակվել է ֆրանսիական աշխատավորության առաջնորդ Մորիս Թորեզը: «Թշվառների» հերոսական կերպարները վերակենդանանում էին ֆրանսիական բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի բոլոր փուլերում: «Ինչպիսի հրահրող ուժ կա բարիկադների նրա Էպոպեայում, հերոսության ինչպիսի օրինակ է նա առաջարկում հեղափոխական բանվորներին...ինչպես է նա հասկացել ժողովրդական պայքարի վեհությունը...ապստամբությունների վսեմ գոհաբերությունը, որոնք հանուն ապագայի մեռնում են այն բանի հանգիստ գիտակցությամբ,որ իրենց գործը կհաղթի»,-«Թշվառների» հեղինակի մասին գրել է «Յումանիտե» թերթը 1935թ. մայիսին, այն բանից անմիջապես հետո, երբ ֆրանսիական հեղափոխական պրոլետարիատն իր կրծքով ետ էր մղում ֆաշիստական հրոսակախմբերի գրոհը Փարիզի փողոցներում. հիշելով Գավրոշին, «Յումանիտեն» նրա սխրագործության հետ համեմատել է երիտասարդ բանվոր Անրի Վիլեմենի սխրագործությունը, որը գոհվել է 1934թ. ֆաշիստական խռովության ժամանակ:

Հյուգոն ձգտում էր իր վեպերը միավորել: Երբ 1860-ին նա սկսեց գրել «Թշվառները», այն ծրագրեց որպես եռերգության երկրորդ մասը, որի առաջին գիրքը պետք լիներ «Փարիզի աստվածամոր տաճարը», իսկ «Ծովի մշակները» (1866)՝ վերջինը: Ըստ Հյուգոյի, այս երեք վեպը ցուցադրում են մարդու պայքարը

ճակատագրի դեմ նրա եռակի կերպարանքով՝ կրոնական սնտիապաշտությամբ, սոցիալական անարդարությամբ և բնության անհնազանդությամբ:

Ուսումնական պրոցեսի վերջում «Թշվառները» ֆիլմի դիտումը ևս հետաքրքիր և բովանդակային խմբային աշխատանքի կազմակերպում է:

Ֆիլմի էկրանավորումներն արդեն չափից ավելի են, գրեթե բոլոր ֆրանսիացի մեծերը տարբեր տարիների խաղացել են Ժան Վալժան՝ Գաբեն, Դեպարդյո, Բելմոնդո, իսկ Բիլե Աուգուստի վերջին աստղառատ էկրանավորումը (Լիամ Նիսոն, Ջեֆրի Ռաշ, Ումա Թուրման) այնքան հանճարեղ են, որ ըստ էության կարող են «Թշվառների» կինոշարքի արժանի վերջակետը դառնալ: Նորարարությունը դարի պահանջ է: Նորարարական մոտեցումներն այսօր բացում են զարգացման հեռանկարներ բոլոր բնագավառներում: Իսկ կրթական ոլորտը պետք է միշտ առաջատար դիրքերում լինի:

Нуне Давтян - Применение новых методов преподавания в процессе изучения темы „Жизнь и творчество В. Гюго” - Параллельно с культурным и техническим прогрессом, все более растущей роли социума в формировании личности, также изменяются и методы преподавания в ВУЗах. С течением времени изменения претерпел и метод изучения содержания предмета. Скажем так, что преподавателю одного лишь глубокого и всестороннего знания своего предмета оказывается не достаточно для донесения его сути, до понимая студента. Современность требует от нас повсеместного внедрения новых методов преподавания. Исходя из всего вышесказанного, жизнь и творчество великого демократа, гуманиста, доброго защитника справедливости Виктора Гюго, несомненно, нуждается в новых современных методах преподавания и изучения.

Nune Davtyan - Application of New Methods of Teaching during Studying the Topic “Life and Works of Victor Hugo” - In addition to cultural and technological development and growth of society and increase of its role in personality formation, teaching methods in high schools change as well. In course of time, method of subject matter study has undergone some changes. Let's say that the only deep and in-depth subject knowledge appears insufficient for a teacher to send a message across to students. Modern times demand our extensive introduction of new teaching methods. Based on the above stated, life and creativity of a great democrat, humanitarian, big hearted defender of fairness Victor Hugo undoubtedly require application of new modern teaching and studying methods.

**ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ «ՓՈՍՍԱԼ» ԵՎ «ՄԱԳԹԱՂԻՆԵ»
ՆՈՐԱՎԵՊԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԲՈՒՀՈՒՄ**

ՆԱԻՐԱ ԲԱԼԱՅԱՆ

Կրթական ոլորտում գրական որոշ ստեղծագործությունների լուսաբանման ու մատուցման մեջ դեռ առկա են խնդիրներ: Դրանք առավելապես աղերսվում են այնպիսի թեմաների հետ, որոնք կապված են բարոյականության, սեռի և սիրո ընկալումների հետ: Այս առումով առանձնանում են Գր. Զոհրապի «Փոստալ», «Մագթաղինե» նովելները, որոնք, արտահայտելով հեղինակի իրապաշտական գաղափարները, դժվարություն են ներկայացնում ուսուցման և ուսանողի կողմից ինքնուրույն վերլուծելու տեսանկյունից, քանի որ դրանց համար նախևառաջ պայքարը կարևորվում է մի կողմից հասարակական ու ընտանեկան դաստիարակությամբ ամրագրված կեղծ բարոյականության չափանիշների, մյուս կողմից՝ տաբու համարվող բառերի, սեռի մասին չարտաբերելու թյուր պատկերացումների կազմալուծմամբ, ինչի արդյունքում աստիճանաբար ձևավորվում են ուսանողի՝ գրական գործը վերլուծելու և անկաշկանդ խոսելու ունակությունները: Նման գրական գործերի ուսումնառությունը այսօր էլ հրատապ ու արդիական է բուհական կրթական գործընթացում:

Բանալի բառեր. Գրիգոր Զոհրապի Փոստալ՝ և «Մագթաղինե» նովելներ, գրականագիտական վերլուծություն, սեռ և բարոյականություն, կեղծ բարեպաշտություն, արհեստածին ամոթխածության պատնեշ, արդիական ու հրատապ խնդիր:

«Մեր ըմբռնումովը...ուսուցչությունը որեւէ մասնագիտութենէ աւելի բան մըն է, ինքնիրմեն բան մըն է ան, այլ նաև զարգացումի հատուկ մթնոլորտի մը, բարոյական ու իմացական մասնաւոր միջավայրի մը անհրաժեշտ ենթական...¹»:

20-րդ դարի սկզբին գրած այս տողերը «հայ նորավելայի իշխան» Գրիգոր Զոհրապը հասցեագրել է ժամանակի կրթության և ուսուցման խնդիրներին: Դեռևս մեկ դար առաջ ծառացած խնդիրները արդիական են և հրատապ նաև այսօր: Նրա ժողովածուներում կան մի քանի նովելներ, որոնք առ այսօր ուսուցման և լիարժեք վերլուծման առումով խնդրահարույց են: Մրանք այն նովելներն են («Փոստալ», «Մագթաղինե», «Թեֆարիկ», «Մառա» և այլք), որոնցում հեղինակը պատկերել է մարդկային փոխհարաբերությունները խաթարող բարքերը, դրանցից ծնվող մարդկային հակասությունները, քաղքենի ընկալումների ու կեղծ բարոյականության ուժը ժամանակի իրականության մեջ: Պատահական չէ, որ նման խնդիրները սերտորեն աղերսակից են սեռի, սիրո, ազատ կենակցության գաղափարներին:

Դարերով ամրագրված քրիստոնեական պատգամները հայ ընտանիքերի դաստիարակության վրա, իհարկե, թողել են իրենց կնիքը. սեռի ու բարոյականության, սիրո բազմաշերտ երևույթների քննաբանման գործընթացը կաղում է ոչ միայն ավանդապաշտ ընտանիքներում, որտեղ ամոթխածությունն ու պարկեշ-

¹ Գրիգոր Զոհրապ, Երկերի ժողովածու, 4 հատորով՝ Ա, Բ, Գ, Դ, (հավելյալ հատոր 2 գրքով՝ Ե, Զ), Երևան, 2001-2004, Գ հատոր, էջ 289:

տությունը բարձր անջրպետ են ստեղծում դեռևս վաղ տարիքից: Ավելորդ չէ նշել, որ գոհրապյան նորավեպերի լուսաբանման, գրականագիտական վերլուծման ուսանողների մոտ առկա բացը գալիս է դեռ դպրոցից. չնայած դասագրքերում արծարծվում են ստեղծագործությունների վերոնշյալ խնդիրների պարզաբանումներ, այդուհանդերձ սույն հարցերի շուրջ ուսուցիչը կա մ պահպանում է լուրջություն, կա մ հմտորեն շրջանցում է նմանատիպ ստեղծագործությունները, կա մ վերլուծում ծանծաղ քննությամբ: Այդ պատճառով այս ստեղծագործությունների քննման թերությունները առավել ակնբախ են դառնում բուհական կրթական ոլորտում: Ընտանիքում ամրագրված բարոյական խիստ նորմերով սահմանափակ մտածելակերպը բուհում սովորելու ժամանակ արդեն ձեռք է բերում կեղծ երանգներ. այն այլևս համատեղելի չէ անձի չափահաս տարիքից, կրթությունից անսանձվող ու հետզհետե ընդարձակվող որակական մտածողությանը: Այս շրջանում է, որ պայքարը, ուղղվելով նախևառաջ ընտանեկան դաստիարակության հոգեբանորեն թերի կողմերի վրա, համատեղվում է մի կողմից ընտանիքում կառուցած կեղծ պարկեշտության, ամոթխածությամբ պայմանավորված որոշակի բառերի արտասանության արգելքի վերացմամբ և տաբու համարվող թեմաների ազատ քննարկման իրացմամբ, մյուս կողմից՝ գրական երկի՝ աստիճանաբար ձևավորվող, ազատ, առանց կաշկանդումների վերլուծություններով: Այս առումով առավել բարդ են մի քանի նորավեպերի՝ «Փոստալ», «Մագրադինե» գործերի ուսուցումը և դասի շրջանակներում սրանց գրականագիտական վերլուծությունը:

Ձոհրապյան նորավեպերը ուսուցանելուց առաջ, իհարկե, ուսանողին պետք մասամբ ծանոթացնել նովելագրի աշխարհայացքին, այն ձևավորած գրական ուղղություններին, գրական ազդեցություններին ու մանավանդ կրթության հանդեպ ունեցած նրա դատողություններին: Արևմտահայ իրականության մեջ Ձոհրապյան առաջին այն մտածողներից էր, որ ցույց տվեցին կրթության և դաստիարակության հարցի մարդաբանական գործոնները հաշվի առնելու հրամայականը: Ըստ նրա՝ ուսուցանման գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն տարիքային յուրահատկությունները, այլև սեռերի բնականոն տարբերության գործոնը և ըստ այդմ՝ սուբյեկտիվ ընկալունակության սահմանները: Այս միտքը լրացնում է Կ. Դ. Ուշինսկու եզրահանգումը. «Եթե մանկավարժությունը ուզում է դաստիարակել մարդուն բոլոր տեսակետերից, ապա նախ նա պետք է ձանաչի նրան նույնպես բոլոր տեսակետերից»²:

Ձոհրապի աշխարհայացքի վրա առավելապես ազդել են 19-րդ դարի վերջին Եվրոպայում և ԱՄՆ-ում մեծ տարածում գտած իրապաշտությունը, այնուհետև բնապաշտությունը (նատուրալիզմ): Նովելագրի ժողովածուների վերնագրերը ևս ինքնանպատակ չեն ընտրվել՝ «Խղճմտանքի ձայներ», «Կյանքը ինչպես որ է», «Լուռ ցավեր», որոնք հեղինակը բացառապես իրապաշտության թելադրանքով է ընտրել: Նրա մտասևեռման մեջ հիմնարար նշանակություն են ստացել, նովելների ջիղ են դարձել մարդկային կարեկցանքը, պարզ, առանց կաշկանդումների խղճահարությունը իր նմանի հանդեպ: «Խղճմտանքը Ձոհրապի բարոյագիտական առանցքային կարգն է...Իր մի շարք հողվածներում գրողն առաջադ-

² Կ. Դ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1981, էջ 55:

րում է կարեկցանքը և ներողամտությունը որպես մարդկանց ու կյանքին ուղղված մենաբարոյական պահվածք»³:

Զոհրապյան նովելներում խղճմտանքը իրապաշտական ուղղության տեսանկյունից դառնում է իմացաբանական հիմք՝ կանգ չառնելով սեռի և դրանից ածանցվող բարոյականության քննման առաջ: Դա է պատճառը, որ հայ իրականության մեջ այս ուղղության գրական ստեղծագործությունները հաճախ անվանում էին անբարոյական: 1892 թվականին հրատարակած «Անբարոյական գրականություն» հոդվածում հեղինակն ինքը գտնում էր, որ գրական ստեղծագործություններում նկարագրվող տեսարանները, մարդիկ, հոգեկանը չեն կարող բարոյական կամ անբարոյական համարվել: «Գրականութիւնը իր նպատակովը միայն կրնայ բարոյական կամ անբարոյական հռչակուիլ. Նկարագրութիւնները արուեստական խնդիրներ են, որոնք չեն կրնար երբեք անբարոյականութեան համար իբրև փաստ յառաջ բերուիլ...»⁴, գրում է Զոհրապյան և եզրափակում, որ գրականությունը այն ժամանակ կարող է բարոյական համարվել, երբ «առաջադրած նպատակն ըլլայ ընթերցողներ ցանկութեամբ ու տարփանոք վարակել...»⁵: Նովելագրի խնդիրն էր ցույց տալ, թե կեղծ բարեպաշտությունն ու սին բարոյականությունը ինչքան խոր արմատներ են գցել հասարակության մեջ: Քաղքենի մտածելակերպը համակել է առանձնապես հարուստ դասի ընտանիքներին՝ մեծից փոքր, ու այն կործանիչ ազդեցություն է ունենում այդ առումով խոցելի աղքատ դասի մարդկանց հոգեբանության վրա: Հեղինակը հատկապես շեշտում է այդ չարիքի արատավոր գաղափարախոսությունը, դրանով ներծծված դաստիարակության կործանիչ բնույթը: Ուսուցանման առարկա «Փոստալ», «Մագթադիներ» նորավեպերը աղերսակից են: Երկուսում էլ ստեղծված են հակոտնյաներ, երկու ծայրաբևեռ, որոնք ընդունակ չեն միմյանց հասկանալու, փոխզիջումային ելքի հանգելու: Երկի գրականագիտական վերլուծումից առաջ հարկ է ուսանողին հաղթահարել տալ վերնագրից հղվող բառի, ինչպես նաև նրանց կողմից լսարանում երբեք չարտասանվող, կեղծ բարեպաշտությամբ սքողված նման այլ բառերի՝ կենակցել, սեռական հարաբերություն, հղիանալ, մարմնավաճառ և այլն, արտաբերման բարդույթը: Ուսանողին պետք է ապացուցել, որ փոստալ, այն է պոռնիկ բառը գրական հայերենի բառաֆոնդից է, և, անշուշտ, զագրելի չէ կոնկրետ դեպքերի՝ գրական վերլուծությունների ժամանակ այս և նման բառեր արտաբերելը հորդորելով չկաղապարվել սին պարկեշտության սահմաններում:

Ըստ էության՝ երկու նորավեպերն էլ այս կամ այն կերպ առնչվում են փոստալության՝ մարմնավաճառության հետ: «Փոստալ» ստեղծագործությունը կառուցված է կեղծ ու իրական բարոյական ըմբռնումների հակասությունների հենքի վրա: Նովելի գրական ուսուցման ելակետը պիտի կառուցել հենց վերոնշյալ հայեցակարգով: Գրական այս երկում իբրև փոստալ առաջին հայացքից ներկայացված է Տիգրանուհին, որ հաշմանդամ ամուսնուն խնամելու համար աշխատանքի է անցել հարուստ Մուրբիկ հանրմի տանը, խուսանավումներից հետո ի վերջո ընդունել վերջինիս տղայի սիրահետումները, կենակցել նրա հետ ու հղիացել: Մակայն իրական փոստալը, ըստ հեղինակի, ուրիշն է, անգամ նրան աջակ-

³ *Արամ Ալեքսանյան*, Գրիգոր Զոհրապի կենսափիլիսոփայությունը, Երևան, 1997, էջ 49:

⁴ Գրիգոր Զոհրապ, Երկերի ժողովածու, 4 հատորով՝ Ա, Բ, Գ, Դ, Երևան, 2001-2004, Գ հատոր, էջ 103:

⁵ Նույն տեղում, էջ 106:

ցող մի ողջ հասարակարգ: Այդ ուրիշը Մուրբիկ հանրմ էր. «Հիվանդանոցի խնամակալուհի էր ու իր ամուսնին պես սրբասեր ու աստվածավախ կնոջ համբավը կվայելեր»⁶: Ջոհրապի հեզնանքը առավել քան ցցուն է. նա գտնում է, որ իրական փոստալի՝ Մուրբիկ հանրմի համար սեռը և սերը փոխարինելի են, չտարբերակված. նա չի տատամսում սեփական զավակին այլասերության ճահիճն առաջնորդել: Հաջորդիվ երևան է գալիս այս նովելի ուսուցման գործընթացում մյուս կարևոր հակասության բացահայտման անհրաժեշտությունը: Այն Մուրբիկ հանրմի և Տիգրանուհու մայրական սիրո և նվիրումի ըմբռնումների հակասական տարբերության մեջ է: Հիմնական գաղափարն արդեն իսկ պարզ է ուսանողի համար, «արգելված» թեմայով չխոսելու պատնեշները հրնթացս վերացվում են, և նա ինքնուրույն կարող է եզրահանգումներ անել: Մի դեպքում հասարակության կողմից ընդունված «բարոյական» մայրն է՝ Մուրբիկ հանրմը, որը իրական փոստալն է, մյուս կողմից՝ «փոստալը»՝ Տիգրանուհին՝ իրական մայրը, ում ողջ կյանքը հետագայում պարփակվում է իր միակ զավակի գերեզմանի խնամքով:

«Մագթադինե» նովելը ևս կառուցված է հակասություններ առաջադրող հենքի վրա: 17-ամյա մարմնավաճառ Մագթադինեի և եկեղեցու սպասավորի միջև հակասությունը արտաքուստ է միայն հասկանալի ու արդարորեն պատճառաբանված: Խորաքնին ընթերցումը, կերպարների հոգեբանական բնավորությունների աստիճանական բացահայտումը, սակայն, պարտադրում են այլ հայացք քննման աղբյուր նորավեպի համար: Ջոհրապը նշում է, որ մարմնավաճառն ընդունում է հաճախորդներ (ակնարկը թափանցիկ է. եկեղեցին ևս ընդունում է հաճախորդներ). «Իր սիրողներուն թիվը չկար. ամեն ազգե, ամեն տարիքե ու դասակարգե մարդիկ մոլորած կու գային հոս. ալեւորածները, ինչպես հազիվ պեխերը բուսած տղաքը, կու գային ամենքը իր սիրովը հափշտակված»⁷: Աղջիկը հաղորդություն ստանալուն երբեք չէր հավակնել իր գործած մեղքերի պատճառով. չնայած հավատացյալ քրիստոնյա լինելուն՝ գիտակցել էր, որ փոքր քրոջն ու եղբորը, տատին պահելու համար պիտի գոհեր «շարունակ իր մարմնին ճոխությունները, առանց գոհողութիւն մը ըրած ըլլալու գաղափարը մտքեն մազի չափ անցընելու»⁸:

Դարերով ամրագրված քրիստոնեության դավանած բարոյականության օրենքները խարխլվում են մարմնավաճառ աղջկա անկեղծ ու նվիրական, աստվածայինի հանդեպ ջերմեռանդությունից: Անհամատեղելի թվացող այդ երևույթներն առավել ընդգծելու և խնդրահարույց հարցերի բանալիները գտնելու համար հարկ է լինում, ինչպես այս դեպքում, գրականության պատմության՝ ուսանողին առավելապես ծանոթ գրական ստեղծագործություններից որոնել նման գրական-զեղարվեստական պատկերներ և համադրել «գտածոները» զոհրապյան պատկերների հետ. այսպիսի աշխատանքն էլ իր հերթին կնպաստի համակողմանի քննությանը: Իհարկե, մերժելի չէ նաև անդրադարձ կատարել այսօրվա իրականության նման երևույթներին, սակայն այնպես, որ ուսանողի միտքը կապակցված մնա «Մագթադինե» նորավեպին, և սոցիալ-հասարակական խնդիրները կարողանա ազուցել նովելագրի գործի ժամանակաշրջանից բխող հանգամանքներին՝

⁶ Գրիգոր Ջոհրապ, Երկերի ժողովածու 2 հատորով, Երևան, 1962, հատոր 1, էջ 6:

⁷ Նույն տեղում, էջ 50-51:

⁸ Նույն տեղում:

միննույն ժամանակ կարողանալով ընկալել հիշյալ նովելի արդիականությունն իր ժամանակում: Ինչու չէ, երբեմն Մագթադինե» նովելի գրականագիտական քննությունը առաջ է բերում հակասություն՝ նովելի հերոսուհու և աստվածաշնչյան, Քրիստոսի ուրբերը յուղով օծած, նրա ներմանն արժանացած Մարիամ Մագթադինացու միջև, ինչը չպետք է ուսանողին դրդի սխալ եզրահանգումների: Արդյո՞ք պոռնկությունը, որ դարեր ի վեր այպանվել է եկեղեցու կողմից, արժանի է ներման, որի օրինակ է Քրիստոսի աստվածաշնչյան հայտնի արարքը, թե՞ հենց հասարակության օրենքներն են վերահսկում՝ որն է բարոյականը, որը՝ անբարոն: Ո՞վ է իրական մարմնավաճառը, նա՞, ով մարմնի վաճառքով առած դրամները շնորհում է եկեղեցուն, թե՞ հոգևորականը, որ, ընդունելով այդ դրամները, հետագայում՝ մարմնավաճառ աղջկա հոգեվարքի ժամին, մերժում է նրա վերջին ցանկությունը կատարել՝ սուրբ հաղորդություն ստանալ: Գրական վերլուծության ամփոփումից առաջ ծառացած այս հարցերին ուսանողը արդեն իսկ չի դժվարանում պատասխաններ գտնել. նա հաղթահարել է դժվար խոչընդոտները և երբեմնի «խորշելի» բառեր օգտագործելով՝ գրական գործի քննությունը բարեհաջող ավարտին է հասցնում:

Իրական ու կեղծ բարոյականության վեճը, որ երևան է գալիս նովելներում, շարունակում է պարզաբանման առումով արդիական ու ցավոտ խնդիր մնալ առ այսօր: Կրթության մերօրյա մեթոդները ունակ են լուծելու այս խնդիրները՝ հանուն իրական լուսավորության, հանուն գեղեցիկ գեղարվեստի ճիշտ ընկալման և, իհարկե, մարդկային ճիշտ դաստիարակության պարբերական ընթացքի համար:

Наира Балаян - Цели обучения новелл Г. Зограпа “Постал” и “Магтахине” в вузе - В сфере образования все еще существует проблемы подачи и анализа некоторых литературных произведений. Они в большей степени соприкасаются с такими темами, которые связаны с восприятием нравственности, отношения полов и любви. В этом контексте замечательны новеллы Г. Зограпа “Постал” и “Магтахине”, которые, выражая реалистические идеи автора, представляют некоторую сложность с точки зрения преподавания и самостоятельного анализа произведений студентами, так как при освоении в первую очередь имеется противоречие с одной стороны между псевдоморалью, внушенной обществом и семейным воспитанием, с другой - распадом искаженных представлений о гендере, являющимся табу и постепенным формированием ценностей, обусловленных аналитической мыслью. Исследование подобных произведений все еще остается актуальной проблемой в процессе обучения.

Naira Balayan - Teaching issues of G. Zohrap's “Postal” and “Magtaghine” novellas in University - In the sphere of education the analysis and presentation of certain literary works are a pure necessity and are mostly associated with the topics that are related to the perceptions of morality, sex and love. In this regard, two novellas by G. Zohrap “Postal” and “Magtaghine” are worth mentioning. Students come across some difficulties with studying and presenting ideas of the authors. To digest this kind of works, a struggle revolves between false morality, which is the reflection of social norms

and family upbringing, on the one hand, and the disruption of the false perception of sex and of words considered a taboo and the gradual formation of values based on analytic mind, on the other hand. The latter is, of course, a pressing and up-to-date issue for the study of similar literary works.

**ՈՒՆԿՆԴՐՄԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ՄԻՐԱ ԿԱՐԱՊԵՏՑԱՆ

Հողվածում քննարկվում է դասավանդման ժամանակակից մեթոդիկայում առկա արդիական թեմաներից մեկը՝ ունկնդրումը, որի չիմացությունը խոչընդոտում է հաղորդակցությանը: Ունկնդրման ուսուցումը իրականանում է իրար հետ փոխկապակցված երեք փուլերով՝ տարրական, միջանկյալ և ավարտական, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդող փուլ ընդգրկում է նախորդ փուլի որակական հատկանիշները: Տրվում են նաև գործնական առաջադրանքների մի շարք տեսակներ, որոնք նպատակաուղղված են ձևավորելու օտարալեզու տեքստեր ունկնդրելու և հասկանալու հաստատուն կարողություններ և ունակություններ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ ունկնդրման ուսուցումը պետք է իրականացվի հետևողականորեն, փուլ առ փուլ, իսկ ողջ ուսումնական գործընթացը պետք է ունենա հաղորդակցական ուղղվածություն:

Բանալի բառեր. Դասավանդման մեթոդիկա, ունկնդրում, ուսուցում, օտար լեզուներ, տարրական, միջանկյալ, ավարտական, ուսումնական գործընթաց

Ունկնդրումը՝ (խոսքը լսելով հասկանալը) օտար լեզվի ուսուցման ժամանակակից մեթոդիկայում, ամենաարդիական թեմաներից մեկն է, քանի որ առանց ունկնդրման հնարավոր չէ խոսքային հաղորդակցություն:

Խոսքային այս գործունեությունը ուսուցման մեթոդիկայում խորապես ուսումնասիրված չէ, իսկ «ունկնդրում» տերմինը մեթոդական գրականության մեջ համեմատաբար վերջերս է կիրառություն ստացել: Հայտնի է, որ ունկնդրումը շատ բարդ խոսքային գործունեություն է և գաղտնիք չէ, որ դպրոցների բազմաթիվ շրջանավարտներ գործնականորեն չեն տիրապետում տվյալ կարողությանը: Մինչդեռ ունկնդրման անհրաժեշտ ունակություններին չտիրապետող անձի համար լեզվի՝ որպես հաղորդակցության միջոցի գործածումը դառնում է խիստ սահմանափակ, երբեմն՝ անհնար, չնայած լեզվական գիտելիքների առկայությանը: Թեև օտար լեզվով տեքստեր հասկանալու պահանջը ընդգրկված է բուհական հարցաշարերում, սակայն ունկնդրման հմտություններին չտիրապետելը հաճախ խանգարում է հաղորդակցությանը: Մովորողները չեն հասկանում իրենց ուղղված խոսքը:

Այսպիսով, ունկնդրումը բանավոր հաղորդակցական գործունեության մի մասն է, որը կիրառվում է ցանկացած բանավոր հաղորդակցության մեջ: Առանց այս գործունեության տիրապետման, հնարավոր չէ հաղորդակցվել այնպիսի մակարդակով, ինչպիսին անհրաժեշտ է հասարակության զարգացման ժամանակակից փուլում:

Ունկնդրումն իր մեջ ներառում է երկու գործընթաց՝ ունկնդրվող խոսքի ընկալում և ըմբռնում: Իրականության մեջ ունկնդրումը իրականանում է՝

1. հաղորդակցությանը մասնակից գուզընկերների շփման միջոցով, երբ նրանք տեսնում և լսում են միմյանց: Հաղորդակցության ընթացքում խոսողի ար-

տասանության տեսալսողական ընկալումը օգնում է գրուցակցին լիարժեք և արագ հասկանալու ասվածը:

2. հեռավորության վրա, երբ գուզընկերները հաղորդակցվում են՝ չտեսնելով միմյանց, օրինակ հեռախոսով: Այսպիսի խոսքն ավելի դժվար է ընկալման համար և լսողից պահանջում է լրացուցիչ ջանքեր՝ ինֆորմացիան հասկանալու համար:

Օտար լեզվով ձայնագրված տեքստերի ընկալման գործընթացի ուսուցումը իրականանում է փոխկապակցված երեք փուլով, ընդ որում յուրաքանչյուր փուլ ընդգրկում է նախորդ փուլի որակական հատկանիշները: Ունկնդրման ունակություններին, ունկնդրվող տեքստերին ներկայացվող պահանջները փուլ առ փուլ տարբերվում են լեզվական նյութի բարդությամբ և ընկալման պահանջներով: Ելուխինան առանձնացնում է հետևյալ փուլերը.

Առաջին փուլը տարրական փուլն է, որը ենթադրում է ընկալման ճանաչողական բազայի ձևավորում, ունկնդրվող ձայնագրված խոսքի ընկալման մեխանիզմի զարգացում: Այս փուլում ունկնդրումը ներկայանում է լեզվական ունակությունների և պարզունակ խոսքային կարողությունների տարրական մակարդակում:

Երկրորդը՝ միջանկյալ փուլն է, որը ենթադրում է որոշակի տևողություն և բարդություն ունեցող օտարալեզու տեքստերի ընկալման և ըմբռնման ունակությունների ձևավորում, այսինքն՝ ունկնդրման ավելի բարդ կարողությունների զարգացում:

Երրորդը՝ ավարտական փուլն է, որը ենթադրում է ունկնդրման տիրապետում, երբ լսողը գիտակցաբար ձեռք է բերում օտար լեզվով բանավոր հաղորդակցությանը մասնակից դառնալու ունակություններ:

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանին, որ քանի որ ընկալման հաղորդակցական ուղղվածությունը հատուկ է ողջ ուսումնական գործընթացին, ուստի հաղորդակցության ուսուցումը ամբողջովին, իսկ ունկնդրումը՝ մասնավորապես, պետք է իրականացվի բոլոր փուլերում:

Բերենք ուսումնական գործընթացի և գործնական առաջադրանքների տեսակների մի քանի օրինակ, որոնց նպատակն է օտար լեզվով տեքստերի ունկնդրման կարողությունների և հմտությունների ձևավորում նրա զարգացման բոլոր երեք փուլերում:

Առաջին փուլում օգտագործվում են առաջադրանքներ, որոնք ուղղված են սովորողների արտասանական հմտությունների և խոսքային լսողության ձևավորմանը, նպատակ ունենալով նախապատրաստել նրանց ընկալելու և հասկանալու ձայնագրված տեքստը՝ թեմատիկ և լեզվաբանական կանխատեսման եղանակով: Սա տարրական մակարդակի առաջադրանք է, որը նախորդում է նախնական ունկնդրմանը:

Մինչ ունկնդրումը պարտադիր է սովորողներին ծանոթացնել առաջադրանքի, իրավիճակի, պայմանների և պահանջի հետ, տեղեկություն տալ տեքստի հենքային ինֆորմացիայի մասին, օրինակ՝ սա հարցազրույց է... մասին, նրանք խոսում են... մասին, այս իրադրությունը ձեզ ծանոթ է և այլն: Այնուհետև առաջարկվում է դիտել պատկերային նյութը (լուսանկարներ, նկարներ և այլն), որն օգնում է հասկանալու ձայնագրության մեջ առկա տեղեկատվությունը:

Ունկնդրումից առաջ ուսանողներին առաջարկվում է նաև քննարկել որոշակի թեմա, որը հեշտացնում է ձայնագրված ինֆորմացիայի բանավոր ընկալումն ու ըմբռնումը:

Երկրորդ փուլի ուսուցումը նպատակաուղղված է ունկնդրման հիմնական կարողությունների ձևավորմանը: Դրանք են՝

- ✓ դուրս գրել իմաստային հիմքերը, որոշել նախադասության իմաստային կենտրոնը
- ✓ տարանջատել առաջնային ինֆորմացիան երկրորդականից և հիշողության մեջ պահել նախադասության հիմնական մասը
- ✓ որոշել ինֆորմացիայի թեման
- ✓ տեքստը բաժանել իմաստային հատվածների, գտնել տեղեկատվություն արտահայտող փաստերը
- ✓ գտնել փաստերի միջև գոյություն ունեցող տրամաբանական կապերը
- ✓ առանձնացնել ձայնագրված նյութի գլխավոր իմաստը
- ✓ որոշել խոսողի, հեղինակի վերաբերմունքը շարադրված փաստերի, գործող անձանց նկատմամբ, այսինքն՝ ներթափանցել ենթատեքստի մեջ
- ✓ լրացնել բացթողնված ինֆորմացիան տրամաբանական կոահումների միջոցով՝ հիմնվելով համատեքստի վրա
- ✓ ձայնագրությունն ընկալել որոշակի արագության և տևողության մեջ, առանց ինֆորմացիայի կորստի

Ուսուցման երկրորդ մակարդակի շրջանակներում ուսանողները պետք է ճշգրիտ հասկանան պարզունակ տեսողական և ոչ տեսողական բնույթի մենախոսություններ և երկխոսություններ, ընդ որում հաղորդակցության մասնակիցները կարող են լինել նաև լեզվակիր ժողովրդի ներկայացուցիչներ: Տեքստի տևողությունը չպետք է գերազանցի 2,5 - 3 րոպեն, պետք է ձայնարված լինի միջին արագությամբ, իսկ երբեմն նույնիսկ դանդաղ:

Ունկնդրման կարողությունները և ձայնագրված տեքստերի ինֆորմացիան ընկալելու և ըմբռնելու ունակությունները զարգացնելու նպատակով, ուսանողներին առաջարկվում են հետևյալ առաջադրանքները.

- ✓ որոշել ձայնագրված տեքստի ժանրը (հարցազրույց, գովազդ, հաղորդագրություն, պատմվածք և այլն)
- ✓ համադրել ձայնագրված տեքստի երկխոսությունը նկարաշարի նկարի հետ
- ✓ համադրել առաջարկվող խոսակցությունը ձայնագրված տեքստի խոսակցության հետ (ով, ինչ է ասում)
- ✓ կատարել գործողություններ ձայնագրված տեքստի հրահանգով՝ հավաքել և քանդել պատկերները, դասավորել նկարները և այլն
- ✓ լրացնել ձևաթղթեր՝ լրացնելով ձայնագրված տեքստի տվյալները
- ✓ ձայնագրված ինֆորմացիան պատկերել գրաֆիկական եղանակով, օգտագործել սխեմաներ, բանաձևեր, նշաններ
- ✓ ձայնագրված տեքստի մեջ տեղադրել իմաստային առումով բացակա ինֆորմացիան

- ✓ ավարտել երկխոսությունը (ուսանողը լսում է խոսողին հեռախոսով և կատարում է գրուցակցի դերը)

Ամենակարևոր հատկանիշը, որն անհրաժեշտ է ձևավորել ուսուցման երրորդ փուլում, խոսողի հաղորդակցության միտումը որոշելու կարողությունն է: Ուստի, հարկավոր է տեքստերի որոշակի տեսակների միջոցով սովորողներին ծանոթացնել հաղորդակցական իրական գործառնությունների և ամենատարածված հաղորդակցական միտումների հետ, ցույց տալով նրանց լեզվաբանական կիրառելիությունը: Դրանց շարքին են դասվում՝ տեղեկացնել/տեղեկություն հայտնել; խնդրել/հրամայնել; մերժել/համաձայնել; առաջարկել, ապացուցել, համոզել/ հորդորել, ենթադրություն անել, նախագգուշացնել, խորհուրդ տալ, իր վերաբերմունքն արտահայտել, իր կարծիքը հայտնել, հավանություն տալ/դատապարտել, առարկել, խոստանալ/մերժել; հրավիրել/շնորհավորել; ծանոթացնել/ ծանոթանալ և այլն:

Հաղորդակցության տարբեր միտումները և նրանց լեզվաբանական գործածությունը սովորողներին ներկայացնելու համար անհրաժեշտ է կատարել մի շարք վարժություններ: Օրինակ, լսեք տեքստը և որոշեք, թե ինչպես է խոսողը փորձում համոզել ունկնդրին կատարելու այս կամ այն արարքը, ինչպես է նա արտահայտում իր կարծիքը, ինչպես է ծանոթանում ֆրանսիացի իր հասակակցի հետ և այլն: Տվյալ իրադրության մեջ ունկնդրի խնդիրն է որոշել հաղորդակցության միտման իմաստային և լեզվական իրացումը: Այնուհետև, սովորողներին առաջարկել հաղորդակցության տարբեր միտումներ և առաջարկել գտնել տեքստում ներկայացվածը: Այսպես՝ լսեք տեքստը/երկխոսությունը և ասացեք, թե հեղինակը ի՞նչ նպատակ է հետապնդում, ուզում է խորհուրդ տալ, թե՞ ոչ, հաստատեք ձեր կարծիքը՝ հիմնվելով տեքստի բովանդակության վրա: Կարելի է նաև սովորողներին առաջարկել ժխտելու խոսողի մոտ հաղորդակցության միտման առկայությունը: Օրինակ՝ ասացուցեք, որ խոսողը չի փորձում համոզել գրուցակցին, ասացեք, թե ինչ նպատակ է նա հետապնդում այս խոսակցության մեջ: Եվ վերջապես, կարելի է առաջարկել ինքնուրույնաբար որոշել խոսողի հաղորդակցության միտումը և ցույց տալ նրա իրականացման միջոցները:

Աշխատանքի հաջորդ փուլը, որն համապատասխանում է իրական հաղորդակցությանը, կայանում է նրանում, որ սովորողները ոչ միայն ճիշտ որոշում են խոսողի հաղորդակցության միտումը, այլև համապատասխան վերաբերմունք են ցույց տալիս: Օրինակ, լսեք տեքստը և ասացեք, համաձայն էք դուք հեղինակի կարծիքի հետ, համոզի՞չ էր հեղինակը, կհետևե՞ք նրա խորհրդին և այլն: Այս կապակցությամբ պետք լայնորեն օգտագործել ինֆորմացիայի լսա-տեսողական աղբյուրներ, ամենից առաջ տեսաֆիլմեր, որոնք ավելի պակերավոր և լիարժեք են ներկայացնում բնական հաղորդակցությունը: Սովորողները տեսնում են հաղորդակցվողների գործողության տեղը և ժամանակը, որոշում են նրանց սոցիալական դերերը և հեշտությամբ են ընկալում նրանց խոսքային և ոչ խոսքային վարքագիծը, ինչպես նաև ապրում են հուզական ներգործություն: Հաղորդակցությունը հեշտանում է, իսկ խոսքի ըմբռնումը դառնում է ավելի ճշգրիտ, քանի որ խոսքային ինֆորմացիան համարվում և հարստանում է ոչ խոսքայինով:

Այսպիսով, ունկնդրման ուսուցումը պետք է իրականացվի հետևողականորեն: Ունկնդրվող տեքստերի ընտրությունը և դրանց հետ աշխատելու եղանակ-

ներք պետք է համապատասխանեն սովորողների նախապատրաստվածության մակարդակին: Կարևոր է, որ ողջ ուսումնական գործընթացը ունենա հաղորդակցական ուղղվածություն և հաղորդակցության ուսուցումը իրականացվի ուսուցման բոլոր փուլերում՝ օտարալեզու խոսքը լսելով ընկալելու և ըմբռնելու համար:

Օգնագործված գրականություն

1. Елухина Н.В, Обучение аудированию в русле коммуникативно-ориентированной методики, Иностранные языки в школе, 1989.- N 2.
2. Методика, под ред. А.А. Леонтьева.-М.,1988.
3. Иванченко А., Практика французского языка, Санкт-Петербург, 2000.
4. Լեզուների իմացության/ իրազեկության համաեվրոպական համակարգ, Ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Երևան, 2005:

Мира Карапетян – Обучение аудированию в процессе преподавания иностранных языков. – В статье рассматривается одна из актуальных тем в методике преподавания иностранных языков – аудирование, незнание которой препятствует коммуникации. Обучения аудированию проходит в три взаимосвязанных этапа: элементарный, продвинутый и завершающий. Особое внимание следует обратить на то, что обучение аудированию должно проводиться на всех этапах, при этом каждый последующий этап предполагает качественно пройденный предыдущий. Приводятся также некоторые виды практических заданий, целью которых является формирование прочных навыков и умений аудирования иноязычных текстов. Важно то, что обучение аудированию должно проводиться последовательно, поэтапно, и коммуникативная направленность должна быть присуща всему учебному процессу.

Myra Karapetyan - Teaching of listening skills in FLT (Foreign Language Teaching) - The current article examines one of the most vital themes in the methodology of FLT – the listening skill, and the absence of its command hinders or makes the communication impossible. Teaching of listening skills is realized in three phases: elementary, middle and final, so that each progressing phase includes the characteristic features of the proceeding phase. Examples of types of practical exercises are given, which tend in the creation and the progression of listening abilities and skills. Teaching listening skills is granted great importance for it should be done profoundly and step by step and should have a communicative intent.

THE IMPORTANCE OF EXTRA-CURRICULAR WORK IN TEACHING A FOREIGN LANGUAGE

CHRISTINE CHARCHYAN

The article presents the importance of extra-curricular work in teaching foreign language. It's necessary follow some rules planning extra-curricular work. a) Extra-curricular work must be conducted in different ways, it should be interesting and developing. b) Each of the activity must pursue certain goals. c) Student's age and psychological peculiarities must be taken into planning extracurricular-work. d) Lots of pupils must be involved in extra-curricular work and not only bright one's. e) Here pupils don't get marks. Teacher must use training assessment (encouragement, stimulation). Extra-curricular work helps pupil to communicate easily and develops creative abilities.

Key words: extra-curricular activities, individual work, group and mass work, teacher, school, collaborate, drama, music, band, volunteer work.

Extra-curricular work in foreign languages become more and more popular. This work is carried out both in town and village schools. Various books and articles on the subject recently published are a proof of the popularity of this work among foreign language teachers and its importance in attaining the aims and objectives set by the syllabus. However there are many schools where teachers either do not carry out extra-curricular work at all, or do it occasionally and monotonously. They probably think that work of this kind is not obligatory, it is just additional, therefore they may do it only if time permits. These teachers do not realize that their success in foreign language teaching depends to a great extent on what interest they can evoke in their pupils. Youth problem behaviors, such as truancy, violence, and substance use, are alarming to parents, teachers and youth alike. These behaviors disrupt the learning environment and lead to serious social and economic problems. Researchers and teachers have long suggested that extracurricular activity participation can be an important source of positive influence in the lives of youth¹. Practice proves that extra-curricular work helps the teacher to promote greater interest in learning the language. It is necessary to bear in mind that extra-curricular work in our schools must be an integral part of the educational process. It is a mistake to consider this work as optional, additional. Extra-curricular activities are programs which fulfill two basic conditions: 1) they are not part of the regular school, curricular program; and 2) they are structured in some way (not just socializing, but working towards some prosocial mission or goal)². Extracurricular activities are simply anything you do that is not a high school course or paid employment (but note that paid work experience is of interest to colleges and can substitute for some extracurricular activities). You should define your extracurricular activities in broad terms-many applicants make the mistake of thinking of them solely as school-sponsored groups such as yearbook, band or football. Not so. Most community and family activities are also extracurricular. Refers to any activity taking up a student's

¹ **Randy Brown, Ph.D.** Area Extension Specialist Children, Youth, and Family Team

² Holland & Andre, 1987

time outside of school hours. Athletics is the most popular extracurricular activity. Other extracurricular activities include drama, music/band, art, FFA, various clubs, volunteer work, etc. These activities are designed to enhance the educational experience. Students often participate in a particular activity because they are highly skilled in that area and/or because they enjoy that activity.

